Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

[illegible]

[illegible]
[illegible]

Г

1906 р

491.99-5
Д-13

Հրատարակութիւն Գ. Գալստեանի

491.99-5

Ս. ՊԱԼԱՍԱՆԵԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

(ՄԱՍՆ Ա., Բ. և Գ.)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԻՊ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Մ. Ռոտինեանցի
1906

Дозволено цензурою, Тифлисъ, 6 Октября 1905 г.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ.

17 JUL 2013

2906
40

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Շատ հեռու չեն մեզանից այն ժամանակները, երբ հայերէն լեզուի ուսումը գրաբարով սկսվում ու գրաբարով աւարտվում էր, երբ ամէն բան հիմնվում էր լոկ մեքենայականութեան վրայ, երբ յիշողութիւնը ամենամեծ դերն էր խաղում մեր ուսումնարաններում, իսկ մտաւոր զարգացում բառերը դատարկ ու աննշանակ հնչիւններ էին։ Երկար տարիների փորձը և արեւմտեան մանկավարժների լուսաւոր մտքերը արմատական փոփոխութիւններ մտցրին մեր բանիմաց ուսուցիչների դասատուութեան եղանակի մէջ. նոքա պարզ կերպով հասկացան, որ ինչպէս մեր հին կամ գրոց լեզուի, այնպէս և լեզուների ուսման և առհասարակ դաստիարակութեան գործի մէջ արդիւնաւոր հետեւանքների հասնելու համար՝ լեզուի դասատուութիւնը սկսելու է անշուշտ մայրենի խօսուն բարբառով, և թէ կենդանի լեզուն պիտի համարուի միակ հաստատ հիմ, որի վրայ պիտի բարձրանայ կանոնաւոր դաստիարակութեան շէնքը։

Եւ ահա հետզհետէ լոյս են տեսնում կենդանի լեզուով գրած այբբենարաններ և սկզբնական ընթերցանութեան գրքեր մանուկների ամենօրեայ կեանքից, նոցա շրջապատող բնութիւնից առած նիւթերի վրայ, որոնք նոր սերունդի կրթութեան առաջին քայլը ապահովացնում են։ Բայց ինչպէս ամեն մի գործի մէջ, այնպէս և այստեղ մի կէտի վրայ անշարժ մնալով մեծ վնասների պատճառ կարող ենք դառնալ. պէտք է քաջութիւն ունենանք սկսածներս գլուխ տանելու, որպէս զի մեր յաջորդների արդարացի դատապարտութեանը չենթարկուինք թէ հետեւաբար չենք վարուել, թէ եւրոպական գիտութեան պահանջողութիւնները կատարելապէս չենք ըմբռնել ու սեպհականել, այլ միայն իբրև մի նորաձևութիւն ընդունել ենք նոր ուղղութիւնը, որ ցոյց տանք թէ մենք ընդունակ ենք ժամանակի հետ ընթանալու։ Առաջին ընթերցանութեան գրքից յետոյ ուղղակի գրաբար լեզուի քերականութեան դիմել, ինչպէս որ մինչև հիմայ անում ենք, այնքան անբնական՝ հետեւաբար

և վնասակար է, որքան եթէ նոր ոտք ելած երեխայից պահանջէինք չափահաս մարդու պէս հաստատ քայլերով շրջել ու վազել...

Վերջին ժամանակներս սկսում են առանձին ուշադրութիւն դարձնել մեր ուսումնարանների այս կենսական հարցի վրայ. կազմվում և առաջարկվում են նոր նախագծեր հայերէն լեզուի ուսման համար, որոնց նպատակն է որոշել հին ու նոր հայերէնի սահմանները դասատուութեան մէջ։ Այս նախագծերի պահանջողութիւնները ընդհանրապէս միևնոյնն են, խորշել անբնական ցայտումներից և աշխատել միշտ հեշտից դժուարը անցնել և հասկանալիից անհասկանալին։ Սկզբնական ուսումը մայրենի խօսուն լեզուով աւանդելուց յետոյ, չդիմել ուղղակի գրաբար լեզուի քերականութեանը, որ միայն զզուանք է յարուցանում աշակերտների մէջ, այլ նախ կենդանի լեզուի քերականութիւնը ուսուցանել, յետոյ անցնել գրաբար լեզուին, որ եթէ աշխարհաբարի հետ համեմատելով աւանդուի աշակերտներին, կը թեթևանայ ու կեանք կը ստանայ։

Այս կողմից մեր աշխատութիւնը, համարձակվում ենք ասել, մի փոքրիկ ծառայութիւն կարող է մատուցանել ազգային ուսումնարաններին։ Այս գրքով մայրենի խօսուն լեզուի քերականութիւնը աւանդելուց յետոյ, կը մնայ գրաբար լեզուի հոլովմունքը, խոնարհմունքը և բաղդատութեան առանձնութիւնները ուսուցանել, որի համար անտարակոյս առաջուանից շատ քիչ ժամանակ ու աշխատանք պիտի գործ դրուի թէ ուսուցչի և թէ ուսանողի կողմից։

Աւելորդ է ասել որ մեր աշխատութիւնը, իբրև փորձ, թերութիւններից ազատ չէ։ Այսքան կասենք միայն որ մենք աշխատել ենք, որքան հնար էր, ընտրել լեզուի հիմնական օրէնքները և գրականութեան մէջ ընդհանրացած ձևերը, և խ ո ր շ ե լ ե ն ք ա յ ն ա մ ե ն բ ա ն ե ր ի ց, ո ր կ ա ր ո ղ է մ ա ս ն ա ւ ո ր ա ն ձ ի ճ ա շ ա կ ի ա ր գ ա ս ի ք հ ա մ ա ր ո ւ ի լ։ Այս է մեր պատասխանը պարոններին, որոնք կարծում են թէ վաղ է աշխարհաբար լեզուի քերականութիւնը գրել։

Ս. Պալասանեան

Թիֆլիս, Յունիսի 15, 1874։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԲԱՆԻ

§ 1. ԻՆՉԻՑ Է ԿԱԶՄՎՈՒՄ ԲԱՆԸ ԿԱՄ ԽՕՍՔԸ.

Մարդս միւս արարածներից զանազանվում է գլխաւորապէս խօսելու ընդունակութիւնով կամ լեզուով։ Խօսքը մեզ նորա համար է տուած՝ որ մեր մտքերը ուրիշներին հաղորդենք, մերձաւորներին խօսելով, իսկ հեռաւորներին գրելով։

Ուրեմն ամէն խօսք, բանաւոր լինի կամ գրաւոր, բաղկանում է մեր ունեցած մտքերից զանազան առարկաների վրայ։

Խօսակցութեան մէջ մեր մտքերը միմեանց հետ չխառնելու համար՝ յաճախ կանգ ենք առնում, իսկ գրութեան մէջ միևնոյն նպատակով գործ ենք ածում այլևայլ կէտադրութեան նշաններ—*բութ* (՝), *ստորակէտ* (,), *միջակէտ* (.), *վերջակէտ* (։)։ Իսկ ուր որ խօսելիս կամ կարդալիս առանձին կերպով շեշտում ենք, գործ ենք դնում հետևեալ արտասանութեան նշանները. *շեշտ* (՛), *հարցական նշան* (՞) և *զարմացական նշան* (՜)։

Ա. Նախադասութեան կազմութիւնը։

§ 2 ԻՆՉ Է ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆԸ.

Արեգակը փայլում է։ Սոխակն երգում է։ Խոտը հնձած է։ Մշակները բանում են։ Ձիւնը սպիտակ է։ Ոսկին մետաղ է։

Քանի առանձին միտք կայ այստեղ։ Ո՞րն է առաջինը։ (Պատասխան. արեգակը փայլում է։) Ո՞րն է երկրորդը, երրորդը, չորրորդը, հինգերորդը, վեցերորդը։ Ինչով են բաժանուած միմեանցից այդ մտքերը։ Ի՞նչ տառով է սկսվում իւրաքանչիւր միտքը։

Իւրաքանչիւր առանձին միտք, որ արտայայտում ենք բառերով, կոչվում է նախադասութիւն։—Արեգակը փայլում է նախադասութիւն է։

Իւրաքանչիւր նախադասութիւնից յետոյ դրվում է երկու կէտ կամ վերջակէտ։

Եթէ նախադասութիւնը խօսքի սկզբումն է գտնվում կամ վերջակէտից յետոյ, գլխատառով է սկսվում։

Համարեցէք թէ քանի նախադասութիւն կայ հետեւեալ օրինակների մէջ։ Դրէք, ուր հարկաւոր է, վերջակէտեր ու գլխատառեր։

ուսումը հարկաւոր է մարդուս մենք սովորում ենք գրել ծառերը ծաղկում են գարնանը ամառը շատ շոգ է լինում պղինձը օգտակար մետաղ է չունը հաւատարիմ անասուն է վարդը հոտաւէտ ծաղիկ է ձմեռը ձիւն է գալիս։

§ 3. ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ—ԵՆԹԱԿԱՅ ԵՒ ՍՏՈՐՈԳԵԱԼ։

Արեգակը տաքացնում է։ Վարդը բացվում է։ Երեխան խաղում է։ Կատուն մլաւում է։ Մեղուն աշխատասէր է։

Քանի առանձին միտք կայ այս օրինակների մէջ։ Քանի նախադասութիւն կայ։ Ինչ առարկայի վրայ է խօսվում առաջին նախադասութեան մէջ։ (Պատասխան. առաջին նախադասութեան մէջ խօսվում է արեգակի վրայ։) Ի՞նչ է ասվում այդ առարկայի վրայ։ (Պատասխան. թէ նա տաքացնում է։) Ի՞նչ առարկայի վրայ է խօսվում երկրորդ նախադասութեան մէջ։ Ի՞նչ է ասվում այդ առարկայի վրայ։ Աշխատեցէք գտնել և յաջորդ նախադասութիւնների մէջ՝ թէ ինչ առարկաների վրայ է խօսվում և ինչ է ասվում այդ առարկաների վրայ։

Իւրաքանչիւր նախադասութեան մէջ երկու գլխաւոր անդամ կայ. 1) առարկան որի վերայ խօսվում է, որ կոչվում է ենթակայ, և 2) այն, ինչոր ասվում է առարկայի վրայ, որ կոչվում է ստորոգեալ։—Վարդը բացվում է նախադասութեան մէջ վարդը ենթակայ է, իսկ բացվում է—ստորոգեալ։

Ենթական և ստորոգեալը նախադասութեան գլխաւոր անդամներն են, որովհետև առանց նոցա ոչ մէկ նախադասութիւն չէ կարող կազմուիլ։

Նախադասութեան մէջ ենթական կարելի է գտնել ո՞վ կամ ի՞նչ հարցը անելով ստորոգեալի հետ։ Ո՞վ է խաղում։—Երեխան։ Ի՞նչ է բացվում.—Վարդը։

Գրութեան մէջ ենթական ստորոգեալից ոչ մէկ կէտադրութեան նշանով չէ բաժանվում։

---

1. Հետեւեալ հարցերի պատասխանները գրեցէք ձեր տետրակների մէջ, այնպէս որ առանձին նախադասութիւններ կազմուին, և պէտք եղած տեղը գլխատառ ու վերջակէտ դրէք։ Յետոյ դրէք իւրաքանչիւր նախադասութեան ենթական ու ստորոգեալը։

Ի՞նչ է վարդը։ (Վարդը ծաղիկ է։) Ի՞նչ է արծաթը։ Ի՞նչ է թուփը։ Ե՞րբ են կանաչում ծառերը։ Ե՞րբ են թափվում տերևները։ Ի՞նչ է անում դերձակը։ Ի՞նչ է անում աշակերտը։ Ի՞նչ է անում վարժապետը։

2. Կազմեցէք ինքներդ առանձին նախադասութիւններ, որոնց մէջ ենթակայ լինին հետեւեալ բառերը, և գրեցէք ձեր տետրակների մէջ։

Երկաթ — շաքար — քացախ — ճրագ — թռչուն — մեղու — գայլ — աքաղաղ — հաւ — հողագործ — ջաղացպան — վաճառական։

3. Կազմեցէք նախադասութիւններ, որոնց մէջ ստորոգեալ լինին հետեւեալ բառերը։

Գրում է—կարդում է—երգում է—խօսում է—մտածում է—սողում է—լողում է—բառաչում է—մայում է—հաչում է—ռռնում է—մռնչում է—խրխնջում է—համեղ է—զօրեղ է—սողուն է—թռչուն է—բոյս է։

4. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ դասատան մէջ գտնուած առարկաներով։

§ 4. ՀԱՄԱՌՕՏ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ։

Գիւղացիք հնձում են։

Ո՞րն է այս նախադասութեան մէջ ենթակայ և որը ստորոգեալ։

Աշխատասէր գիւղացիք ամառը խոտ են հնձում դաշտում։

Այս վերջին նախադասութեան մէջ բացի ենթակայից ու ստորոգեալից կան ուրիշ բառեր էլ, որոնք պարզում, մեկնում են թէ գիւղացիք ինչ են հնձում (խոտ), որտեղ են հնձում (դաշտում), երբ են հնձում (ամառը), ո՞ր գիւղացիք հնձում են (աշխատասէր)։ Այս հարցերին պատասխանող բառերը կոչվում են երկրորդական անդամներ, որովհետեւ կարող են լինել ու չլինել նախադասութեան մէջ, և միայն պարզում, ամբողջացնում են նորա միտքը։ Որո՞նք են նախադասութեան գլխաւոր անդամները։

Այն նախադասութիւնը, որի մէջ միայն գլխաւոր անդամները կան, կոչվում է համառօտ.—Գիւղացիք հնձում են համառօտ նախադասութիւն է։

Այն նախադասութիւնը, որի մէջ երկրորդական անդամներ էլ կան, ասվում է ընդարձակ։—Աշխատասէր գիւղացիք ամառը խոտ են հնձում դաշտում ընդարձակ նախադասութիւն է։

Նախադասութեան երկրորդական անդամները կարելի է գտնել զանազան հարցեր անելով ստորոգեալի հետ։

1. Հետեւեալ օրինակների մէջ ցոյց տուէք նախադասութեան գլխաւոր և երկրորդական անդամները.

Քոյրս գիրք է կարդում։—Մեծ մայրս եկեղեցի է գնում։—Պառաւ կինը կտաւ է գործում։—Երեխայքը խաղում են ուսումնարանի բակում։—Մեր պարտէզի ծառերը լաւ պտուղներ են տալիս։—Գարնան ու աշնան օրերում շատ անձրեւներ են գալիս։—Փոթորկից յետոյ միշտ խաղաղ եղանակ է լինում։

2. Հետեւեալ օրինակների մէջ այլեայլ հարցերի պատասխանները այնպէս դասաւորեցէք, որ կարգաւորեալ նախադասութիւններ կազմուին։

Սովորում են։ Ո՞վ է սովորում։ (Աշակերտները սովորում են։) Ի՞նչ են սովորում (դասերը)։ Ո՞ւմ դասերը սովորում են (իրանց)։ Ե՞րբ են սովորում (միշտ)։ Ո՞ր աշակերտները սովորում են (աշխատասէր)։

Շինում են։ Ո՞վ է շինում։ (Մեղուները շինում են)։ Ի՞նչ են շինում (մեղր)։ Ի՞նչպիսի մեղր (քաղցր)։ Ո՞րտեղ (փեթակում)։

Փայլում է։ Ի՞նչ է փայլում։ (Լուսինը փայլում է)։ Ե՞րբ է փայլում (գիշերները). ո՞րտեղ (երկնքում). ի՞նչպիսի լուսին (գեղեցիկ)։

Կտրում են։ Ո՞վ է կտրում։ (Գիւղացիք կտրում են)։ Ի՞նչ են կտրում (փայտ), երբ (ձմեռը), ո՞րտեղ (անտառում)։

Բարեկամ է։ Ո՞վ է բարեկամ։ (Շունը բարեկամ է)։ Ո՞ւմ (մարդու)։ Ի՞նչպիսի բարեկամ (հաւատարիմ)։

§ 5. ՑԱՑԿԱՑՈՒՑԻՉ ԲԱՌԵՐ։

Հայկի որդիքը երկար ժամանակ հովուական կեանք են վարել։

Ի՞նչպիսի նախադասութիւն է այս, համառօտ թէ ընդարձակ։ Որո՞նք են գլխաւոր անդամները և որոնք երկրորդական։ Ի՞նչ հարց պիտի անենք որ գտնենք Հայկի բառը։ (Ո՞ւմ որդիքը հովուական կեանք են վարել)։ Ի՞նչ հարց պիտի անենք որ գտնենք Հովուական բառը։ (Ի՞նչպիսի կեանք են վարել Հայկի որդիքը)։ Ուրեմն Հայկի բառը դրուելով որդիք բառի մօտ՝ ցոյց է տալիս թէ ում որդոց

վրայ է խօսքը, և զանազանում է նոցա ուրիշ անձի պատկանող որդիներից։ Այսպէս և Հովուական բառը որոշում է թէ ինչպիսի կեանքի վրայ է խօսքը,—Հովուական և ոչ ուրիշ որևիցէ կեանքի վրայ։

Այն բառերը, որոնք որոշում են մի առարկայ ուրիշ իւր նման առարկաներից, ցոյց տալով նորա որպիսութիւնը կամ պատկանելութիւնը, կոչվում են *յատկացուցիչ*։ Հայկի որդիքը երկար ժամանակ հովուական կեանք են վարել նախադասութեան մէջ Հայկի և հովուական յատկացուցիչ են որդիքը և կեանք բառերի, որոնք այս պատճառով կոչվում են *յատկացեալ*։ Յատկացուցիչը պատասխանում է հետևեալ հարցերին. ո՞վ, ո՞ւմ կամ ինչի՞, ո՞րպիսի կամ ի՞նչպիսի։

Յատկացուցիչը յատկացեալից ոչ մի կէտադրութեան նշանով չէ բաժանվում։

---

1. Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք յատկացուցիչ բառերը։

Գիշատիչ գազանները ուրիշ կենդանիների մսով են կերակրվում։ Բարձր լեռների գագաթները ծածկուած են ձիւնով։—Ձմեռուան գիշերները երկար են։—Գարնան օրերը զուարճալի են։—Վահագն Երուանդեան Տիգրանի որդին էր։—Հայկական գրականութիւնը շատ հարուստ է պատմական գրուածներով։

2. Հետևեալ նախադասութիւնների մէջ իւրաքանչիւր ենթակայի մօտ մի յարմար յատկացուցիչ գրէք.

—(որպիսի) Ջուրը պղտոր է։—Ջուրը պարզ է։— մրգերը հա-սակար են։—(որ) օրերը կարճ են։—օրերը երկար են,—մարդը չէ տեսնում։—մարդը չէ լսում։—մարդը չէ խօսում։—մարդը չէ կարող մանգալ։—(ինչի) հոտը ախորժելի է։ - համը քաղցր է. գոյնը կանաչ է։—(Ո՞ւմ) ականջները երկար են։—միտքը սուր է։—տետրակը մաքուր է։

3. Հետևեալ նախադասութիւնների մէջ իւրաքանչիւր ստորոգեալի մօտ մի յատկացուցիչ գրէք։

Ձին—կենդանի է։—Ոչխարը— անասուն է։—Սիրամարգը—թռչուն է։—Օձը—սողուն է։—Մեղուն— միջատ է։—Մանուշակը—ծաղիկ է։—Ադամանդը—քար է։

§ 6. ԲԱՑԱՅԱՅՏԻՉ ԲԱՌԵՐ։

Արտաշիրս *կուսակալը* շինեց Արտաշատ *քաղաքը* Երասխի եզերքի վրայ։

Այս նախադասութեան մէջ նշանակուած բառերը իսկապէս աւելորդ են, և միայն աւելի մեկնում, *բացայայտում* են այն առարկաները, որոնց մօտ դրուած են։ *Կուսակալ* դրուելով *Արտաշիրս* անուան մօտ ցոյց է տալիս թէ ով էր Արտաշիրսը.—կուսակալ, և ոչ հասարակ մարդ։ Նոյնպէս և *քաղաք* դրուելով *Արտաշատ* անուան մօտ՝ մեկնում է թէ ինչ է Արտաշատ.—քաղաք, և ոչ մի ուրիշ բան։

Այն բառերը, որոնք մեկնում են մէկ առարկայի ով կամ ինչ լինելը, կոչվում են *բացայայտիչ*։ *Արտաշիրս կուսակալը շինեց Արտաշատ քաղաքը Երասխի ձախ եզերքի վրայ* նախադասութեան մէջ *կուսակալը* և *քաղաքը* բացայայտիչ են *Արտաշիրս* և *Արտաշատ* բառերի, որոնք այս պատճառով ասվում են *բացայայտեալ*։

Բացայայտիչ լինում է առհասարակ ընդհանուր հասկացութիւնը մասնաւորի մօտ, ինչպէս. բազէ *թռչունը*, բոա *օձը*, տառեխ *ձուկը*, գայլ *գազանը*, թզենի *ծառ*, մարտ *ամիս*, ուրբաթ *օր*։

Բացայայտիչը եթէ մէկ բառով է արտայայտուած, ոչ մի կէտադրութեան նշանով չէ բաժանվում բացայայտեալից. իսկ եթէ մի քանի բառից է կազմուած, բութով է բաժանվում եթէ բացայայտեալից յետոյ է դրուած, կամ երկու ստորակէտի մէջ է դրվում, եթէ նախադասութեան մէջ է ընկած. ինչպէս. Սուրէն *զօրավարը* Կրասոսի գլուխն ուղարկեց Տիգրանին՝ *Հռոմայեցոց ոխերիմ թշնամուն* (կամ *Հռոմայեցոց ոխերիմ թշնամի* Տիգրանին)։ Յազկերտ Պարսից *թագաւորը*

(կամ Պարսից Յազկերտ թագաւորը) մեծամեծ հալածանքներ հանեց քրիստոնեաների դէմ։

1. Հետեւեալ նախադասութիւնների մէջ գտէք բացայայտիչ բառերը և, ուր հարկաւոր է, բութ և ստորակէտներ դրէք։

Արամ նահապետը յաղթեց Ասորեստանցոց Բարշամ իշխանին —Արա գեղեցիկը Արամ նահապետի որդին էր։—Պարոյր իշխանը թագաւորական թագը ստացաւ Մարաց Կիաքսար թագաւորից։ Արտաւազդը Տիգրան Բ-ի որդին գերի տարուեցաւ Եգիպտոս։—Սաթենիկը Արտաշէս Բ-ի կինը Ալանաց թագաւորի աղջիկն էր։—Յուսուփ Արաբացոց ոստիկանը մեծ վնասներ հասցրեց Հայոց։—Կիրակոս Գանձակեցին ԺԲ դարու պատմիչը հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում Թաթարաց վրայ։—Աղեքսանդր Մակեդոնացին բարկութեան ժամանակ սպանեց Կլիտոսին իր հաւատարիմ զօրավարին։

2. Հետեւեալ նախադասութիւնների մէջ բացայայտիչ բառեր աւելացրէք։

Անի—նշանաւոր էր իր ճարտարապետութեամբ։—Վոլգա—թափվում է Կասպից ծովը։—Արմաւիր—շինուեցաւ Երասխ (ի)—վրայ. Տրդատ քրիստոնեայ մկրտուեցաւ սուրբ Գրիգորի ձեռով։—Վաղարշակ—քաղաքական և զինուորական օրէնքներ տուաւ Հայոց։—Վահէ—մեռաւ Արբելայի պատերազմում։

§ 7. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԲԱՌԵՐ

Հողագործները *երկիրը* վարում են *գութանով*:

Այս նախադասութեան միտքը բոլորովին ամբողջ է։ Եթէ ասէինք միայն *հողագործները վարում են*, միտքը թերի կը մնէր։ Մեզ կը հարցնէին թէ «ինչ են վարում հողագործները» և «ինչով են վարում»։ Այս պատճառով այստեղ աւելացրած են *երկիրը* և *գութանով* բառերը, որոնք ստորոգեալի միտքը *լրացնում են*: *Երկիրը* ցոյց է տալիս թէ ինչի վրայ է անցնում հողագործների գործողութիւնը. իսկ *գութանով* ցոյց է տալիս թէ ինչ գործիքով հողագործները կատարում են իրանց գործը։

Այն բառերը, որոնք ստորոգեալի միտքը լրացնում են,

կոչվում են *լրացուցիչ*.—*Հողագործները երկիրը վարում են գութանով* նախադասութեան մէջ *երկիրը* և *գութանով* լրացուցիչ բառեր են։

Ենթական նախադասութեան մէջ գլխաւոր առարկան է, իսկ լրացուցիչ բառերը երկրորդական առարկաներ են, որոնց վրայ անցնում է ենթակայի գործողութիւնը, կամ մօտիկ յարաբերութիւն ունի նորա գործողութեան հետ։

Լրացուցիչ բառերը պատասխանում են հետեւեալ գլխաւոր հարցերին։

1. *Ո՞ւմ, ի՞նչ*։ Հայերն *Վահագնին* Աստուծոյ տեղ էին պաշտում։ Քրիստափոր Կոլոմբոսը գտաւ *Ամերիկան*։

2. *Ո՞ւմ, ինչի՞*։ Հարուստները օգնում են *աղքատներին*։—Այս աշակերտը արժանի է *վարձատրութեան*։

3. *Ո՞ւմից, ի՞նչից*։ Պարոյրը իւր թագը ստացաւ Կիաքսարից։ Քաջասիրտ մարդը *վտանգից* երկիւղ չունի։

4. *Ումո՞վ, ինչո՞վ*։ Յովսէփը եղբայրների հետ *թարգմանով* էր խօսում։—Մասիսի գագաթը ամբողջ տարին պատած է *ձիւնով*։

Լրացուցիչ բառերը ստորոգեալից ոչ մի կէտադրութեան նշանով չեն բաժանվում

---

1. Հետեւեալ նախադասութիւնների մէջ գտէք լրացուցիչ բառերը։

Մեղուն մեղր է շինում։—Որթը խաղող է բերում։—Լուսինը իւր լոյսը ստանում է արեգակից։—Փիւնիկեցիք գտան ապակին։—Ազգերը զանազանվում են միմեանցից լեզուով, վարք ու բարքով, երբեմն նաև կրօնով. Անձնասէր մարդը ատելի է ամէնին։—Արաբացիք հնարել են թուանշանները։—Աբգարը խորհուրդ տուաւ Պարսից և Ասորեստանցոց թագաւորներին ընդունել քրիստոնէական հաւատը։

2. Հետեւեալ նախադասութիւնների մէջ իւրաքանչիւր ստորոգեալի մօտ լրացուցիչ բառեր դրէք։

Գիւղացին մշակում է (ինչ) —Ոսկերիչը շինում է—Ջաղացպանը աղում է—Պատկերահանը նկարում է—Կատուն բռնում է—Շունը պահպանում է—Մեսրոպ Մաշտոցը հնարեց—Բժիշկը լաւացնում է (ում)․ Վարդան Մամիկոնեանը մի քանի անգամ ջարդեց—Ես ամէն օր տեսնում եմ—Հայրը սիրում է—Ոչ ոք չէ սիրում—Ջանասէր աշակերտը արժանի է (ինչի)—Ծոյլ աշակերտը արժանի է—Զինուորը հպատակում է (ում)—Մենք պարտական ենք օգնել—Ամէն քաղաքացի պարտական է հնազանդել (ինչին)—Ով որ աշխատում է, հասնում է—Այսօր նամակ ստացայ (ումից)—Ընդունէք այս փոքրիկ ընծան—Աշակերտները գրում են (ինչով)—Մարդիկ կերակրվում են—Փայտը կտրում են—Ցորենը հնձում են։

§ 8. ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ԲԱՌԵՐ․

Կապիկները բնակում են տաք երկրներում։—Մարդիկ ցերեկը աշխատում են և գիշերը հանգստանում։—Արծիւը շատ բարձր է թռչում։—Մարդս անգործութիւնից ձանձրանում է։

Այս օրինակների մէջ ստորոգեալից առաջ կամ յետոյ զանազան բառեր կան դրած, որոնք ենթակաների գործողութեան կամ դրութեան այլ և այլ հանգամանքներն են ցոյց տալիս։ Առաջին օրինակի մէջ տաք երկրներում դրուելով բնակում են ստորոգեալի մօտ՝ ցոյց են տալիս թէ ո՞րտեղ են բնակում կապիկները։ Երկրորդ օրինակի մէջ ցերեկը և գիշերը բառերը ցոյց են տալիս թէ ե՞րբ աշխատում են մարդիկ և ե՞րբ հանգստանում։ Երրորդ օրինակի մէջ շատ բարձր բառերը ցոյց են տալիս թէ ինչպէս են թռչում արծիւները։ Չորրորդի մէջ անգործութիւնից բառը ցոյց է տալիս թէ ինչից կամ ինչ պատճառից ձանձրանում է մարդս։

Այն բառերը, որոնք ենթակայի գործողութեան կամ դրութեան այլ և այլ հանգամանքներն են ցոյց տալիս, կոչվում են պարագայական բառեր։—Մարդիկ ցերեկը աշխատում են և գիշերը հանգստանում նախադասութեան մէջ ցերեկը և գիշերը պարագայական բառեր են։

Պարագայական բառերը ցոյց են տալիս.

1. Գործողութեան տեղը, և պատասխանում են այս հարցերին. ո՞րտեղ, ո՞րտեղից, ո՞ւր. զոր օրինակ. Ձկները լողում են ջրում։
2. Գործողութեան ժամանակը, և պատասխանում են այս հարցերին. ե՞րբ, ո՞րքան ժամանակ, ո՞ր ժամանակից և մինչև ո՞ր ժամանակ. ինչպէս. Արշակունեաց թագաւորութիւնը տևեց վեց հարիւր տարի։
3. Գործողութեան որպիսութիւնը, և պատասխանում են այս հարցերին. ինչպէս, ի՞նչ կերպով. զոր օրինակ. Օրերը անըզգալի կերպով անցնում են։
4. Գործողութեան պատճառն ու նպատակը, և պատասխանում են այս հարցերին. ինչի՞ց, ի՞նչ պատճառով, ինչի՞ համար. զոր օրինակ. Ձիւնը հալվում է տաքութիւնից։

Պարագայական բառերը ոչ մէկ կէտով չեն բաժանվում նախադասութեան միւս բառերից։

Պարագայական բառերը մեծ նմանութիւն ունին լրացուցիչ բառերի հետ․ երկուսն էլ ամբողջացնում են ստորոգեալի միտքը. բայց զանազանութեամբ միայն որ լրացուցիչ բառերը աւելի կարևոր են և աւելի մօտիկ կապակցութիւն ունին ստորոգեալի հետ քան թէ պարագայական բառերը։ Այսպէս. երբոր ասում ենք աշակերտը պատրաստում է, պատրաստում է ստորոգեալի միտքը անկատար է, և պահանջում է բացատրել, թէ ի՞նչ է պատրաստում աշակերտը.—իւր դասերը։ Իսկ երբ որ ասում ենք աշակերտը նստած է, հարկ չէ անպատճառ մեկնել թէ ո՞րտեղ է նստած աշակերտը, դասատան մէջ, թէ աթոռի վրայ և այլն։ Ուրեմն իւր դասերը լրացուցիչ կը լինի, իսկ դասատան մէջ աթոռի վրայ պարագայական բառեր։

1. Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք պարագայական բառերը։

Ծառերը ձմեռը հանգստանում են, գարնանը ծաղկում են, ամառը պտուղ են տալիս և աշնանը հասնում։—Աշնանը ծիծեռնակները թռչում են տաք երկիրներ և գարնանը կրկին վերադառնում են մեր կողմերը։—Օրը տևում է 24 ժամ, ժամը 60 րոպէ և րոպէն 60 վայրկեան։—Ծաղիկները սառել են ցրտից։—Սահակ Պարթևը նստաւ կաթուղիկոս 390-ից մինչև 440։—Երեխանց պատժում են իրանց ծա-

9906 40

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐ...

լութեան համար։—Աշխատասէր աշակերտը իւր դասերը միշտ լաւ է պատրաստում։—Ուշադրութեամբ կարդացէք ձեր դասը, որ բան հասկանաք։—Մարդիկ տներ են շինում ցրտից ու տաքութիւնից պաշտպանուելու համար։—Հայաստանում երեք լիճ կայ, որոնք իրանց մեծութեան պատճառով ծով են կոչվում։

2. Հետևեալ նախադասութիւնների մէջ աւելացրէք յարմար պարագայական բառեր։

Մարդիկ բնակում են (որտեղ)—Գիւղացիքը աշխատում են—Ծառերը տնկում են—Այն մարդիկ որ—են բնակում, կոչվում են Եւրոպացիք, նոքա որ—են բնակում, կոչվում են Ասիացիք։—Մեղուները թռչում են (որտեղից)—Տերևները թափվում են—Հանքերը հանում են—Մենք շատ օգտակար բաներ ենք սովորում—Քրիստոնեայք կիրակի և տօն օրերը գնում են (ուր)—Մենք ամեն օր գնում ենք—Կուր գետը թափվում է—Բոյսերը սկսում են ծլիլ (երբ)—Արեգակը մայր է մտնում—տաք է լինում—ցուրտ է լինում։—Հայերը քրիստոնէութիւնը ընդունեցին—Տարին տևում է (որքան ժամանակ)—Ամիսը տևում է—Շաբաթը տևում է—Բարի երեխան (ինչպէս)—լսում է մեծերի ասածները։ Ուսուցիչը պատժում է ծոյլ աշակերտներին—Ջուրը սառում է (ինչից)—Մոմը հալվում է—Օդը մաքրվում է—Ջուրը գոլորշի է դառնում—Բերանս պապակում է—Մըշակը յոգնեցաւ—Գիրքը տպում են (ինչի համար)—Ճանապարհները շինում են—Տները շինում են—Զօրքը պահում են։

§ 9. ԿՈՉԱԿԱՆ ԲԱՌԵՐ։

Դու, Տէր, ճանաչում ես մեր սրտի գաղտնիքը։

Այս նախադասութեան մէջ ճանաչում ես ստորոգեալ է, դու ենթակայ, իսկ Տէր կոչական բառ է, որով խօսողը Աստուծոյ է դառնում և նախադասութեան մէջ ոչ մէկ բառից կախում չունի։

Այն բառերը, որոնք ցոյց են տալիս թէ խօսողը ում է դառնում իւր խօսքովը, ասում են կոչական բառեր։ Դու, Տէր, ճանաչում ես մեր սրտի գաղտնիքը նախադասութեան մէջ Տէր կոչական բառ է։

Եթէ կոչական բառը նախադասութեան մէջ է ընկած, երկու ստորակէտի մէջ է գրվում. իսկ եթէ նախադասութեան սկիզբը կամ վերջն է գտնվում, ստորակէտով է բաժանվում նորանից։ Կոչական բառի վրայ շեշտ է գրվում, եթէ իրանից առաջ շեշտուած բառ չկայ. շեշտ չէ գրվում, եթէ իրանից առաջ շեշտած բառ կայ. ինչպէս. Հա՛յր, ներէ ինձ իմ յանցանքը։ Սիրելի հա՛յր, ներէ ինձ իմ յանցանքը։

Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք կոչական բառերը և դրէք, ուր հարկաւոր է, շեշտ ու ստորակէտ։

Տիգրան ուր ես գնում։—Արշակ գնանք պարտէզ զբօսնելու։—Շնորհակալ եմ քեզ սիրելի բարեկամ քո տուած յիշատակի համար։—Ընդունէ ինձանից այս փոքրիկ ընծան սիրելի մայր։—Աշակերտը ասաց ուսուցչին. «Մեկնեցէք ինձ այս բառը վարժապետ։—Յիսուս ասաց խաչի վրայ «Աստուած իմ Աստուած իմ ինչի թողիր ինձ»։

Կրկնութիւն.—Ի՞նչ է նախադասութիւնը։ Ո՞րոնք են նախադասութեան գլխաւոր անդամները։ Ո՞ր նախադասութիւնը կոչվում է համառօտ և որը ընդարձակ. Ի՞նչ է յատկացուցիչը։ Ի՞նչ է բացայայտիչը։ Ո՞ր բառերը կոչվում են լրացուցիչ։ Ի՞նչ են ցոյց տալիս պարագայական բառերը։ Իւրաքանչիւր առանձին նախադասութիւնից յետոյ, ինչ կէտեր են գրվում. Իւրաքանչիւր առանձին նախադասութիւն ինչ տառով է սկսվում։ Ի՞նչ կէտադրութեան նշանով բաժանվում է ենթական ստորոգեալից, յատկացուցիչը յատկացեալից, լրացուցիչ և պարագայական բառերը նախադասութեան միւս բառերից. Ե՞րբ և ինչ կէտերով բաժանվում է բացայայտիչը բացայայտեալից։ Ի՞նչ կէտերով բաժանվում է կոչական բառը նախադասութեան միւս բառերից։

Կարդացէք մի հատուած ձեր ընթերցարանից և իւրաքանչիւր

նախադասութիւնը առանձին լուծեցէք, ցոյց տալով որոշակի նախադասութեան գլխաւոր և երկրորդական անդամները:

Բ. Նախադասութեան տեսակները:

§ 10. ԴԻՄԱՒՈՐ ԵՒ ԱՆԴԷՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ.

Արամը հայրենասէր ու քաջ մարդ էր։—Արշակ, խրիկուն մեզ մօտ արի:

Առաջին օրինակի մէջ ենթական որոշ յիշվում է, որ և պատասխանում է ո՞վ հարցմանը: Ո՞վ էր հայրենասէր ու քաջ մարդ:— Արամը: Երկրորդ օրինակի մէջ թէև ենթական չէ յիշվում, բայց յայտնի իմացվում է կոչական բառից. արի, ի հարկէ դու, Արշակ: Բայց կայ նախադասութիւն, որի մէջ ենթական որոշ յայտնի չէ, կամ բոլորովին անյայտ է. օրօրինակ. որոտում է—ինչ է որոտում—անյայտ է: Ասում են, պատմում են—բայց ո՞վ է ասում, պատմում, որոշ յայտնի չէ:

Այն նախադասութիւնը, որի մէջ ենթական յիշվում է կամ մտքով իմացվում է, կոչվում է դիմաւոր: Արամը հայրենասէր և քաջ մարդ էր, և Արշա՛կ, այս իրիկուն մեզ մօտ արի՛ նախադասութիւնները դիմաւոր են:

Այն նախադասութիւնը, որի մէջ ենթական որոշ յայտնի չէ կամ բոլորովին անյայտ է, կոչվում է անդէմ:—Որոտում է, ասում են նախադասութիւնները անդէմ են:

Հետևեալ հարցերի պատասխաններից կազմեցէք անդէմ նախադասութիւններ:

Ի՞նչ է լինում առաւօտեան վաղ:—Ի՞նչ է լինում երեկոյեան:—Ի՞նչ է լինում ամառը:—Ի՞նչ է լինում ձմեռը:—Ի՞նչ է լինում

աշնանը: Ի՞նչ է պատահում, երբ ամպերը միմեանց զխվում են:— Ի՞նչ է լինում, երբ երկինքը ամպում է:—(Վերջին հարցման պատասխանը կարող է անդէմ նախադասութիւնից դիմաւորի փոխուել. անձրևում է կամ անձրև է գալիս. վերջին ձևը աւելի գործածական է մեր լեզւում: Այսպէս ասում են նաև ձիւն է գալիս, անձրև է գալիս, և այլն):

§ 11. ԳԼԽԱՒՈՐ ԵՒ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ.

Վասակ Սիւնին, որ իր ազգը դաւաճանեց, բանտի մէջ մեռաւ:

Այս նախադասութիւնը կազմուած է երկու նախադասութիւնից. 1) Վասակ Սիւնին բանտի մէջ մեռաւ, 2) որ իր ազգը դաւաճանեց: Առաջին նախադասութիւնը բոլորովին անկախ է, իսկ երկրորդը առաջինից կախում ունի և նորա հետ կապուած է:

Այն նախադասութիւնը, որ կախում չունի ուրիշ նախադասութիւնից, կոչվում է գլխաւոր: Իսկ այն նախադասութիւնը, որ գլխաւորից կախում ունի և պարզելու համար է գործ դրվում, կոչվում է երկրորդական:—Վասակ Սիւնին բանտի մէջ մեռաւ նախադասութիւնը գլխաւոր է, որ իր ազգը դաւաճանեց երկրորդական:

Հետևեալ նախադասութիւնների մէջ զանազանեցէք միմեանցից գլխաւոր և երկրորդական նախադասութիւնները, և ցոյց տուէք թէ երկրորդականները ինչ բառերով կապուած են գլխաւորների հետ:

Վարդան Մամիկոնեանը, որ իր կեանքը ազգի անկախութեան համար նուիրեց, յաւիտենական երախտագիտութեան արժանի է:— Տիգրան Բ. որ Ասիայ մեծ մասի տէր էր դարձել, թշուառ ծերութիւն ունեցաւ: Հարկաւոր է որ փոքր ժամանակներս սովորենք, որպէս զի յետոյ մեզ էլ, ուրիշներին էլ օգտակար լինինք: Մեծ բաղդաւորութիւն է երեխաների համար որ ուսումնարաններ կան:—Մենք գիտենք որ արեգակը լուսաւորում և տաքացնում է

երկիրը։—Կոլոմբոսից առաջ չէին իմանում թէ Ամերիկան կայ։—Պէտք է խօսել այնպէս, որ մեզ հասկանան։

§ 12. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ։

Ով որ շատ բան է իմանում, պարտական է իր գիտութիւնը ուրիշների օգտի համար գործ դնել։—Յայտնի է որ երկիրս պտըտում է արեգակի շուրջը։

Որո՞նք են այս օրինակների մէջ գլխաւոր նախադասութիւնները և որո՞նք երկրորդական։ Ի՞նչ հարցման է պատասխանում *ով որ շատ բան է իմանում* երկրորդական նախադասութիւնը։ (Ո՞վ պարտական է իր գիտութիւնը ուրիշների օգտի համար գործ դնել։) Ի՞նչ հարցման է պատասխանում *որ երկիրս պտըտում է արեգակի շուրջը* երկրորդական նախադասութիւնը։ (Ի՞նչ յայտնի է։) Ուրեմն այս երկրորդական նախադասութիւնները գլխաւոր նախադասութիւնների *ենթակաների* տեղ են բռնում։

Եթէ երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան ենթակայի տեղ է բռնում, կոչվում է *երկրորդական ենթակայ նախադասութիւն։—Ով որ շատ բան է իմանում և որ երկիրս պտըտում է արեգակի շուրջը* երկրորդական ենթակայ նախադասութիւններ են։

Եթէ երկրորդական ենթակայ նախադասութիւնը գլխաւորից առաջ է դասուած, ստորակէտով է բաժանվում նորանից. իսկ եթէ յետոյ՝ ոչ մէկ կէտով չէ բաժանվում. ինչպէս. *Ով կը խաղայ*, նա կը կաղայ։ Յայտնի է *որ երկիրս պտըտում է արեգակի շուրջը*։ Բայց եթէ ասենք՝ *թէ երկիրս պտըտում է արեգակի շուրջը*, (ստորակէտ դնելու է, որովհետև. երկ. ենթ. նխդ. գլխաւորից նախադաս է). այդ վաղուց յայտնի է։

---

1. Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք երկրորդական ենթակայ նախադասութիւնները և, ուր հարկաւոր է, ստորակէտ դրէք։

Ով ալարի ոչ դալարի։—Ով չուսա նա կուչա։—Ով որ փքանայ չուտով չքանայ։— Ով որ փող ունի խելք չունի ով որ խելք ունի փող չունի։—Պէտք է հիւանդը ճշգութեամբ կատարէ բժշկի խորհուրդները։— Կարելի է թէ անձրև գայ։— Լաւ է որ ժամանակին տուն հասանք։

2. Հետևեալ նախադասութիւնների մօտ աւելացրէք երկրորդական ենթակայ նախադասութիւններ։

(ո՞վ)—բաղդաւոր է։—միշտ անբաղդ է։—վարձատրութեան արժանի է։ —պատժի արժանի է։ —Կարելի է (ի՞նչ)—Հաւանական է։—Կասկածելի է։—Յայտնի է.—

§ 13. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Այն մարդիկը, որոնք Ամերիկայումն են բնակվում, կոչվում են Ամերիկացիք։

Ո՞րն է այս օրինակի մէջ գլխաւոր նախադասութիւն և ո՞րը երկրորդական։ Ի՞նչ հարցման է պատասխանում *Որոնք Ամերիկայումն են բնակվում* երկրորդական նախադասութիւնը։ (*Ո՞ր կամ ո՞րպիսի* մարդիկը կոչվում են Ամերիկացիք։) Ուրեմն այստեղ երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան ենթակայի *որպիսութիւնն* է ցոյց տալիս։

Եթէ երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան մէկ որևիցէ անդամի որպիսութիւնն է ցոյց տալիս, կոչվում է *երկրորդական յատկացուցիչ նախադասութիւն։—Որոնք Ամերիկայումն են բնակվում* երկրորդական յատկացուցիչ նախադասութիւն է։

Եթէ երկրորդական յատկացուցիչ նախադասութիւնը գլխաւորից յետոյ է դասուած, ստորակէտով է բաժանվում նորանից, եթէ գլխաւոր նախադասութիւնը քիչ շատ երկար է, և չէ բա-

ժանվում, եթէ կարճ է, ինչպէս. Կղզի կոչվում է այն ցամաք երկիրը, որի շուրջը ջրով պատած է։ Կայ ծառ որ պտուղ է տալիս, կայ էլ որ պտուղ չէ տալիս։

Իսկ եթէ երկրորդական յատկացուցիչ նախադասութիւնը գլխաւորի մէջ է ընկած, բաժանվում է նորանից երկու ստորակէտով կամ բութով և ստորակէտով, եթէ ընդհանուր կամ սովորական որպիսութիւնն է ցոյց տալի. իսկ եթէ մասնաւոր կամ էական որպիսութիւնն է ցոյց տալիս, յատկացուցիչ նախադասութիւնը չէ բաժանվում իր յատկացեալից, և միայն ստորակէտ է դրվում այնտեղ, ուր վերջանում է երկրորդական նախադասութիւնը. ինչպէս—Մարդս, (կամ մարդս՝) որ սխալական է, չէ սիրում իր յանցանքը խոստովանել։

Այն մարդը որ ուրիշներին օգնում է, երախտագիտութեան արժանի է։

Առաջին օրինակի մէջ ընդհանրապէս բոլոր մարդկանց սխալականութեան վրայ է խօսքը, երկրորդի մէջ մասնաւորապէս մի կարգի (ուրիշներին օգնող) մարդկանց վրայ։

Բայց շատերը հետևելով ռուս ու գերմ. կէտադրութեան, ամէն յատկացուցիչ նախադասութիւն անխտիր բաժանում են երկու ստորակէտով։

---

1. Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք երկրորդական յատկացուցիչ նախադասութիւնները, և պէտք եղած տեղը բութ ու ստորակէտ դրէք.

Շունը որ հաւատարիմ անասուն է ճանաչում է իր տիրոջ ձայնը։—Ձանձրութիւնը մի հիւանդութիւն է որի դեղը աշխատութիւնն է։ Սոկրատը որ դատապարտուեցաւ թոյն խմելու առաքինի քաղաքացի էր։—Երկիրս որի վրայ մենք ապրում ենք տիեզերքի ամենափոքր մասն է։—Մարդս որ մահկանացու է մեծամեծ գործերի ձեռնամուխ է լինում։—Ժամանակը որ ամեն բան փոխում է փոխում է և մարդկանց բնաւորութիւնը։—Ինչպէս է կոչվում այն ջուրը որ ամեն կողմից ցամաքով պատած է։—Կայ գետ որ գետի մէջ է թափվում, կայ էլ որ ծովն է թափվում։

2. Հետևեալ նախադասութիւնների մէջ ենթակաների լրացուցիչ կամ պարագայական բառերի մօտ աւելացրէ՛ք երկրորդական յատկացուցիչ նախադասութիւններ։

Այն թռչունը—չէ կարող թռչել։—Այն ցամաքը—կոչվում է թերակղզի։—Այն անասունը—կոչվում է չորքոտանի։—Այն ժամացոյցը—չէ կարող բանել։—Մարդս—կարող է շատ բաներ ստեղծել—Անասունը—չէ կարող խօսել—Կարելի է ուտել այն մրգերը—Պէտք է հնձել այն ցորենը—Շինեցէք մէկ մէկ փունջ այն ծաղիկներից—Գնանք զբօսնելու այն պարտէզը—Կարելի է հանդանալ այն սենեակում—

§ 14. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ.

Կարծում են թէ լուսնի վրայ բնակիչներ կան։

Ո՞րն է այստեղ գլխաւոր նախադասութիւնը և ո՞րը երկրորդական։ Ի՞նչ հարցման է պատասխանում լուսնի վրայ բնակիչներ կան, երկրորդական նախադասութիւնը։ (Ի՞նչ են կարծում։) Ուրեմն այստեղ երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան ստորոգեալի միտքը լրացնում, ամբողջացնում է։

Եթէ երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան միտքը լրացնում է, կոչվում է երկրորդական լրացուցիչ նախադասութիւն։—Թէ լուսնի վրայ բնակիչներ կան երկրորդական լրացուցիչ նախադասութիւն է։

Եթէ երկրորդական լրացուցիչ նախադասութիւնը գլխաւորից նախադաս է, ստորակէտով է բաժանվում նորանից. ինչպէս. Ինչ որ ցանես, այն կը հնձես։ Իսկ եթէ լրացուցիչ նախադասութիւնը գլխաւորից յետոյ է դասուած, սովորաբար չէ

բաժանվում նորանից, մանաւանդ եթէ գլխաւոր նախադասութիւնը համառօտ է. բայց կարող է բաժանուել բութով կամ ստորակէտով, եթէ գլխաւոր նախադասութիւնը քիչ շատ ընդարձակ է, ուրեմն և մեկնութեան կարօտ չէ։ Զօրօրինակ. Կարծեմ թէ չեմ սխալվում։ Պարսից թագաւորների գիտաւորութիւնն այն էր, (կամ այն էր՝) որ քրիստոնէութեան հետ հայոց ազգութիւնն էլ ոչնչացնեն։

I. Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք երկրորդական լրացուցիչ նախադասութիւնները և, ուր հարկաւոր է, բութով կամ ստորակէտով բաժանեցէք գլխաւորներից։

1. Ինչ կասես այն կը լսես։—Ինչ կը բրթես այն կը խըրթես։—Դուք գիտէք որ ես հիւանդ եմ։—Յուսամ թէ ասածս հասկացաք։—Տիգրան Բ կամենում էր որ բոլոր Ասիան իրան տէր ճանաչէ։—Վահան Մամիկոնեանի դիտաւորութիւնն այն էր որ մանր կռիւներով Պարսից զօրութիւնը տկարացնէ։—Վռամշապուհ թագաւորի ցանկութիւնն այն էր որ գիտութիւններն ու արուեստները ծաղկեն հայոց մէջ։

3. Հետևեալ նախադասութիւնների մէջ իւրաքանչիւր ստորոգեալի մօտ աւելացրէ՛ք երկրորդական լրացուցիչ նախադասութիւններ։

Աշխատասէր աշակերտը յոյս ունի—Քրիստոնէական կրօնը պատուիրում է մեզ—Հողագործը աշխատում է—Բժիշկը կարծում է— Վաճառականի բանը գործը այն է—Գիտէք—Մենք չգիտենք—Կարող էք ասել—Ասացէք ինձ—

§ 15. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Ինչ տեղ հաց, այնտեղ կաց։

Ո՞րն է այս առածի մէջ գլխաւոր նախադասութիւնը և ո՞րը երկրորդական։ Ի՞նչ հարցման է պատասխանում *ինչ տեղ հաց* երկրորդական նախադասութիւնը։ (Ո՞րտեղ կաց).—ինչ տեղ հաց (կայ).—Ուրեմն այստեղ երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան դրութեան *պարագան* է ցոյց տալիս։

Եթէ երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան ենթակայի գործողութեան կամ դրութեան պարագաներն է ցոյց տալիս, կոչվում է *երկրորդական պարագայական նախադասութիւն*։ *Ինչտեղ հաց (կայ)* երկրորդական նախադասութիւն է։

Երկրորդական պարագայական նախադասութիւնների կէտադրութեան կանոնը այս է. եթէ պարագայական նախադասութիւնը գլխաւորից նախադաս է, ընդհանրապէս ստորակէտով բաժանվում է նորանից. *Երբոր լուսինը գտնվում է արեգակի ու երկրի մէջ, արևը խաւարում է։* Իսկ եթէ պարագայական նախադասութիւնը գլխաւորից յետոյ է դասաւած, սովորաբար չէ բաժանվում նորանից. ինչպէս. *Բանդ այնպէս բռնէ որ յետոյ չզղջաս։* Բայց երբեմն կարող է բաժանուել ստորակէտով, մանաւանդ եթէ գլխաւոր նախադասութիւնը ընդարձակ և ամբողջ է. *Ես ձեզ տալիս եմ այս գիրքը, որպէս զի կարդաք և ձեր կարծիքը յայտնէք։*

---

1. Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէ՛ք երկրորդական պարագայական նախադասութիւնները և, ուր հարկաւոր է, ստորակէտներ դրէք։

Որտեղ գնաս այնտեղի գդակը ծածկիր։—Ինչ տեղ պանիր այնտեղ բանիր։—Ինչ տեղ վէրք կայ դէրք չկայ, ինչ տեղ դէրք կայ վէրք չկայ։—Արևմուտքն այնտեղ է որտեղ արևը մայր է մտնում։—Երբ որ մարդ քաղցած է ուտել է կամենում, երբ որ ծարաւ է խմել է կամենում։—Ջուրը գոլորշիանում է երբ որ կրակի վրայ տաքացնում են։—Սառոյցը ջուր է կտրվում երբ որ տաք տեղ է լինում։—Լոյսը այնպիսի արագութեամբ է տարածվում որ մենք

չենք կարող երևակայել:—Ինչպէս գիտես այնպէս արա:—Ինչպէս որ արեգակը ցրւում է երկնքի ամպերը այնպէս և ճշմարտութիւնը ցրւում է ստութիւնը:—Ձմեռը անձրևի տեղ ձիւն է գալիս որովհետև գոլորշիները չափազանց ցրտից ոչ միայն ջուր են կըտրւում, այլ և սառչում են:

2. Հետևեալ նախադասութիւնների մէջ աւելացրէք երկրորդական պարագայական նախադասութիւններ:

Բրինձը ցանում են այնտեղ—Գետնախնձորը աւելի լաւ է բուսնում այնտեղ—Առհասարակ գիւղերը շինվում են այնտեղ—Մենք ուրախութեամբ գնում ենք այնտեղ—Լուսանում է (ե՞րբ)—Մթնում է—Գիշերը լոյս է լինում—Ծառերը ծաղկում են—Տերևները թափվում են—Պէտք է կարդալ այնպէս—Աշակերտը սովորում (ի՞նչի համար)—Մեղուն ծաղիկների վրայ թռչկոտում է—Հաւը թուխս է նստում—Աշոտ Գ. Ողորմած կոչուեցաւ—

§ 16. ՄԻՋԱՆԿԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ.

Հայկ նահապետը, ասում են ազգային պատմիչները, շատ որդիք ու թոռներ ունեցաւ.

Այս օրինակի մէջ Հայկ նահապետը շատ որդիք ու թոռներ ունեցաւ անկախ, ուրեմն և գլխաւոր նախադասութիւն է. իսկ ասում են ազգային պատմիչները նախադասութիւնը գլխաւորի մէջ ընկած է և ոչինչ կախում չունի նորանից, ուստի և կարող է դուրս թողուիլ, առանց գլխաւոր նախադասութեան մտքին մթութիւն պատճառելու.

Այն նախադասութիւնը որ ուրիշ նախադասութեան մէջ է ընկած և ոչ մէկ բառից կախում չունի, կոչվում է միջանկեալ: Ասում են ազգային պատմիչները միջանկեալ նախադասութիւն է:

Միջանկեալ նախադասութիւնը գլխաւորից բաժանվում է երկու ստորակէտով, ուրեմն նաև երկու գծով կամ փակագծով. ինչպէս, Լուսնի վրայ—ինչպէս կարծում են—բնակիչներ կան.

Տրդատի յաջորդ բարտուղար Ագաթանգեղոսը (այսպէս է անուանում նորան Խորենացին) ազգով հռովմայեցի էր:

Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք միջանկեալ նախադասութիւնները և գլխաւորներից բաժանեցէք ստորակէտներով, երկու գծով կամ փակագծով:

Գնացէք պատուիրեց Յիսուս իւր աշակերտներին քարոզեցէք հեթանոսներին և մկրտեցէք նոցա:—Արամը ասում է պատմութիւնը աւելի լաւ էր համարում մեռնել քան թէ իւր ազգը օտարի լծի տակ ընկած տեսնել: Բէլը կարծում է Աբիւդենոս մատենագիրը սպանուեցաւ Արմենակի և ոչ Հայկի ձեռով:—Նինոսն ու Շամիրամը ինչպէս կարծում են մի քանի պատմաբաններ առասպելական անձեր են:—Ուրացող Վասակը այսպէս է անուանում նորան Եղիշէն միայն իւր անձի համար էր աշխատում:

§ 17. ԿՐՃԱՏԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ:

Ով որ իմ յանձնարարութիւնը կը կատարէ, վարձատրութիւն կը ստանայ:	Իմ յանձնարարութիւնը կատարողը վարձատրութիւն կը ստանայ:
Այն աշակերտը, որ դասը իմանում է, կարող է խաղալ:	Դասը իմացող աշակերտը կարող է խաղալ:
Ինչ կը ցանես, այն կը հնձես:	Ցանածդ կը հնձես:
Երբ որ մէկի հետ խօսում ես, մտածէ թէ ինչ ես խօսում:	Մէկի հետ խօսելիս, մտածէ թէ ինչ ես խօսում:
Տրդատ թագաւորը, ասում են մեր պատմիչները, զարմանալի ուժի տէր մարդ էր:	Տրդատ թագաւորը, մեր պատմիչների խօսքովը, զարմանալի ուժի տէր մարդ էր:

Այս օրինակի մէջ երկրորդական նախադասութիւնները երկու ձևով են գործ դրուած.—կատարեալ և կրճատեալ ձևերով։ Առաջին օրինակի մէջ Ով որ իմ յանձնարարութիւնը կը կատարէ ենթակայ նախադասութիւնը կրճատուելով՝ պարզ ենթակայի է փոխուել. Ո՞վ վարձատրութիւն կը ստանայ—Իմ յանձնարարութիւնը կատարողը։ Երկրորդ օրինակի մէջ՝ Որ դասը իմանում է երկրորդական յատկացուցիչ նախադասութիւնը կրճատուելով՝ պարզ յատկացուցչի է փոխուել։ Ո՞ր աշակերտը կարող է խաղալ։ Իր դասը իմացող աշակերտը։ Երրորդ օրինակի մէջ Ինչ կը ցանես լրացուցիչ նախադասութիւնը կրճատուելով՝ պարզ լրացուցչի է փոխուել։ Ի՞նչ կը հնձես.—Ցանածդ։ Չորրորդ օրինակի մէջ Երբ մէկի հետ խօսում ես պարագայական նախադասութիւնը կրճատեալ նախադասութեան ձև է ստացել։ Ե՞րբ մտածէ թէ ինչ ես անում.—Ուրիշի հետ խօսելիս։ Հինգերորդ օրինակի մէջ Ասում են մեր պատմիչները միջանկեալ նախադասութիւնը կրճատեալ ու միջանկեալ բառերի է փոխուել։—Մեր պատմիչների խօսքովը կամ ասելովը։

Եթէ երկրորդական նախադասութիւնը իւր առանձին ենթական ու ստորոգեալը ունի, կոչվում է կատարեալ նախադասութիւն, իսկ եթէ երկրորդական նախադասութիւնը կրճատուելով՝ պարզ ենթակայի, յատկացուցչի, պարագայական կամ միջանկեալ բառերի պաշտօն է վարում, կոչվում է կրճատեալ։

Երկրորդական կրճատեալ նախադասութիւնները գլխաւորից ոչ մի կէտով չեն բաժանվում։ Միայն պարագայական նախադասութիւնները, եթէ քիչ շատ ընդարձակ են և կրճատուելուց յետոյ կանոնաւոր նախադասութեան ձևը պահպանում են, սովորաբար բաժանվում են բութով կամ ստորակէտով. Հիւանդ լինելով՝ (փոխանակ՝ որովհետև ես հիւանդ էի), չկարողացայ հանդէսին ներկայ գտնուիլ։ Իսկ միջանկեալ բառերը միջանկեալ նախադասութիւնների պէս՝ երկու ստորակէտի մէջ են գրվում։

1. Հետևեալ առածների մէջ կրճատեալ նախադասութիւնները կատարեալ նախադասութիւնների փոխեցէք։

Ջուրը ընկնողը անձրևից չի վախենայ։—Մեղրը ծախողը մատը կը լպստի (կը լզէ)։—Երազումը սովածը հաց կը տեսնի (կը տեսնէ), ծարաւը ջուր։—Դեռ չծնած երեխին շոր մի կտրիլ։—Տուն քանդողի տունն Աստուած կը քանդի (կը քանդէ)։—Ձու ածան հաւը կչկչան կը լի (կըլինի)։—Քամու բերածը քամին կը տանի։—Մինչև հաստի բարակիլը, բարակի հոգին դուրս եկաւ։

2. Հետևեալ նախադասութիւնների մէջ երկրորդական նախադասութիւնները կրճատեցէք։

Ով որ երաժշտութեան ընդունակութիւն ունի, պէտք է շատ աշխատի որ լաւ երաժիշտ դառնայ։—Ով որ նկարելու սէր ունի, պէտք է համբերութեամբ պարապի, որ լաւ նկարիչ դառնայ։—Ով որ կը խաղայ, նա կը կաղայ։—Ով որ փող ունի, խելք չունի. ով որ խելք ունի, փող չունի։—Այն ցամաքը, որ երկու ծով միմեանցից բաժանում և երկու ցամաք իրարու հետ կապում է, կոչվում է պարանոց։—Այն մարդիկը, որոնք հողագործութեամբ են պարապում, կոչվում են հողագործ։—Դժուար է յուսալ այն մարդկանց վրայ, որոնք շատ են խոստանում և քիչ են կատարում։ Ինչ չէր տեսել պատէն կախ՝ հիմի (այժմ) տեսաւ ճակատէն կախ։—Երբ որ Խոսրովը մեռնում էր, հրամայեց որ Անակի ցեղը տնով տեղով ջնջեն։—Երբ Տրդատը Հռոմից վերադարձաւ, բոլոր ժողովուրդը և նախարարները իբրև փրկչին ընդունեցին նորան։—Այն միջոցին, որ դուք խօսում էիք, ես մի ամբողջ գլուխ կարդացի։—Գնում եմ գիւղ որ կարգի դնեմ իմ գործերը։—Մինչև չէրը կը թրջի, հիւանդի հոգին կը թռչի։—Մինչև թուրն եկաւ, լեզուն գլուխը կտրեց։—Մինչև հերթը մեզ հասաւ, լիսը (լոյս) վրայ հասաւ։—Ես բաղդաւոր եմ երբ որ լաւ գիրք եմ կարդում։—Պարթևները, ասում է Մովսէս Խորենացին, իրենց ծագումը առնում են Աբրահամի երկրորդ կնոջից՝ Քետուրայից։

§ 18. ՊԱՐԶ ԵՒ ԲԱՂԱԴՐԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ։

Մարդիկ մահկանացու են։

Մարդիկ, որ մահկանացու են, մեծամեծ գործերի ձեռնամուխ են լինում։

Առաջին օրինակի մէջ մի ենթակայ կայ և մի ստորոգեալ, ուրեմն և մէկ նախադասութիւնից կազմուած է։ Երկրորդ օրինակը կազմուած է երկու նախադասութիւնից. *Մարդիկ մեծամեծ գործերի ձեռնամուխ են լինում* գլխաւոր նախադասութիւն է. իսկ *Որ մահկանացու են* երկրորդական յարակացուցիչ նախադասութիւն է։

Այն նախադասութիւնը, որի մէջ միայն մէկ ենթակայ կայ, մէկ ստորոգեալ, մէկ յարակացուցիչ, կոչվում է *պարզ*։ *Մարդիկ մահկանացու են* պարզ նախադասութիւն է։ Այն նախադասութիւնը, որ երկու կամ աւելի նախադասութիւնից է կազմուած, կոչվում է *բաղադրեալ*։ *Մարդիկ, որ մահկանացու են, մեծամեծ գործերի ձեռնամուխ են լինում* բաղադրեալ նախադասութիւն է։

Բաղադրեալ նախադասութիւնը կազմվում է սովորաբար մէկ գլխաւոր և մէկ կամ աւելի երկրորդական նախադասութիւններից, որոնք գլխաւորից բաժանվում են ստորակէտներով։ Բայց պատահում է որ բաղադրեալ նախադասութիւնը կազմվում է երկու կամ աւելի անկախ նախադասութիւններից, որոնք միջակէտներով են բաժանվում, եթէ ոչ մի բառով կապուած չեն. ստորակէտով եթէ եւ, բայց և ուրիշ բառերով կապուած են։ Օրօրինակ. Մայիսի գեղեցիկ գիշերներից մինն էր. օդը մեղմ էր ու հանդարտ. գիշերուան թագուհին լուսինը կամաց կամաց բարձրանում էր երկնքի կապոյտ ամպերի վրայ, և իր լուսով նսեմացնում էր անհամար աստղերը։ Այստեղ չորս նախադասութիւն կայ, չորսն էլ անկախ և այս պատճառով միջակէտներով են բաժանուած. միայն վերջինը և—ով կապուած է, ուրեմն և նախընթաց նախադասութիւնից ստորակէտով է բաժանուած։

Հետեւեալ նախադասութիւնները կապեցէք միմեանց հետ, այնպէս որ մինը գլխաւոր լինի, իսկ միւսը կամ միւսները երկրորդական։

Ծառերը ծաղկել են պարտէզում։ Այդ պարտէզը գտնվում է մեր տան մօտ։—Թուղթը բամբակից են շինում։ Այդ թղթի վրայ մենք գրում ենք։—Վայրենի ձիաները գտնվում են Ամերիկայի ու Ասիայի անտառներումը։ Այդ ձիաները իրանց ազատ կամքով թափառում են։—Հայերը այժմ ցրուած են աշխարհիս ամէն կողմերը։ Հայերը մի ժամանակ կենդրոնացած էին իրանց երկրում։—Սոխակը արդէն թռաւ։ Այդ սոխակը երգում էր մեր պարտէզումը։ Նա կը վերադառնայ մեզ մօտ գալ տարի։ Ձին փոքր է, լղար ու տգեղ։ Այդ ձիով գիւղացին գետինը վարում է։ Նա շատ թանկագին ձիաներից օգտակար է։—Սև բիբը փոքրիկ է։ Այդ բիբը գտնվում է մեր աչքի մէջտեղումը։ Մենք այդ բբով տեսնում ենք երկինքն ու երկիրը։

§ 19. ՄԻԱՒՈՐԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ։

Խնձորենին ծաղկում է գարնանը.—Տանձենին ծաղկում է գարնանը։

Այս երկու պարզ նախադասութիւնները կարելի է այսպէս կապել. Խնձորենին ծաղկում է գարնանը և տանձենին ծաղկում է գարնանը։ Բայց *ծաղկում* և *գարնանը* բառերը չկրկնելու համար՝ կարող ենք այս երկու նախադասութիւններից մէկ նախադասութիւն կազմել.—*Խնձորենին և տանձենին ծաղկում են գարնանը։*

Այն նախադասութիւնը, որ երկու կամ աւելի նախադասութիւնների միաւորութիւնից է կազմուած, կոչվում է *միաւորեալ*։—*Խնձորենին և տանձենին ծաղկում են գարնանը* նախադասութիւնը միաւորեալ է։

Միաւորեալ նախադասութեան մէջ կարող են լինել մի քանի ենթակայ կամ մի քանի ստորոգեալ, մի քանի միատեսակ յարակացուցիչ կամ մի քանի պարագայական բառեր։

Եթէ միաւորեալ նախադասութեան մէջ երկու ենթակայ կայ, երկու ստորոգեալ և այլն, որ, *և ու, կամ* բառերով կապ-

ուած են, ստորակէտով չեն բաժանվում, ինչպէս. Անգղն ու արծիւը որսկան թռչուններ են։ Մտածում ու խօսում է։ Ուրիշ ամէն դէպքերում միաւորեալ նախադասութեան մէջ մի քանի ենթականեր, ստորոգեալներ, յատկացուցիչներ և այլն բաժանվում են ստորակէտներով.—այսինքն՝ 1) եթէ ոչ մի բառով կապուած չեն, 2) եթէ կապուած են եւ-եւ, թէ-թէ, կամ-կամ, երբեմն երբեմն կրկնաւոր բառերով։

Հետեւեալ միաւորեալ նախադասութիւնների մէջ, ուր որ հարկն է, ստորակէտներ դրէք և յետոյ պարզ նախադասութիւնների փոխեցէք։

Պղինձը ոսկին ու երկաթը մետաղներ են։—(Պղինձը մետաղ է։ Ոսկին մետաղ է։ Երկաթը մետաղ է)։ Դերձակը կօշկակարը ոսկերիչը արհեստաւորներ են։—Կովը ոչխարը ձին չունը չորքոտանի կենդանիներ են։—Տիգրան Երուանդեանից յետոյ հետզհետէ թագաւորեցին Վահագն Առաւան Ներսեհ Զարեհ Արմոգ Բայգամ Վան և Վահէ։—Գիւղացին վարում է ցանում է և հնձում։—Կետը ռնգեղջիւրը և ղլփինը ապրում են ծովերում և կերակրվում են ծովային բոյսերով որդերով ու ձկներով։—Բոլոր տաք և չորս երկրներում ծովերում գետերում ու ճահիճներում կան կրիաներ։—Թէ ամառը թէ ձմեռը թէ աշնանը թէ գարնանը մենք ունինք մեր առանձին զուարճութիւնները։ Ագռաւները և հարուստները վայելում են բնութեան պարգեւները։—Մենք գնում ենք զբօսնելու երբեմն պարտէզ երբեմն դաշտ երբեմն անտառ։

2) Հետեւեալ երկու կամ աւելի պարզ նախադասութիւններից միաւորեալ նախադասութիւններ կազմեցէք։

Առիւծը անգութ է։ Վագրը անգութ է։—Ադամանդը թանկագին քար է։ Զմրուխտը թանկագին քար է։—Դեղձը համեղ միրգ է։ Ձմերուկը համեղ միրգ է։ Խաղողը համեղ միրգ է։—Դերձակը չորեր է ձեւում։ Դերձակը չորեր է կարում։—Տիգրանը բարի երեխայ է։ Տիգրանը աշխատասէր երեխայ է։—Ես այսօր վաղ վերկա-

ցայ։ Ես այսօր լուացուեցայ։ Ես այսօր աղօթք արի։ Ես այսօր պատրաստեցի իմ դասերը։—Թռչունները ամառը բնակվում են անտառներում։ Թռչունները ամառը բնակվում են մարգերում։ Թռչունները ամառը բնակվում են ճահիճներում։ Թռչունները ամառը բնակվում են լճերում։ Թռչունները ամառը բնակվում են գետերում։

§ 20. ՊԱՏՄԱԿԱՆ, ՀԱՐՑԱԿԱՆ, ՊԱՏԱՍԽԱՆԱԿԱՆ, ՊԱՐԱԳԱՑԱԿԱՆ և ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ։

Արշակն ու Տիգրանը նստած էին դասատան մէջ։

—Ի՞նչ ես անում, հարցրեց Արշակը Տիգրանին։

—Ազգային պատմութեան դաս եմ գրում։

—Ե՜րբ կըլինի որ ես էլ ազգային պատմութիւն սովորեմ։

—Աշխատէ՛, և դու էլ շուտով կը սկսես սովորել։

Այս օրինակի մէջ այլ և այլ նախադասութիւններ կան, որոնք ցոյց են տալիս թէ խօսողը ինչ նպատակով է յայտնում իր միտքը։ Առաջին նախադասութեան մէջ—Արշակն ու Տիգրանը նստած էին դասատան մէջ—պարզ կերպով պատմվում է թէ ինչ էին անում Արշակն ու Տիգրանը։ Երկրորդ նախադասութիւնը—Ի՞նչ ես անում—պարունակում է Արշակի առաջարկած հարցը Տիգրանին։ Երրորդ նախադասութիւնը—Ազգային պատմութեան դաս եմ գրում—պատասխան է Արշակի առաջարկած հարցին։ Ե՜րբ կը լինի որ ես էլ ազգային պատմութիւն սովորեմ նախադասութեամբ Արշակը իր ցանկութիւնն է յայտնում ազգային պատմութիւն սովորելու։ Աշխատէ՛, և դու էլ շուտով կը սկսես սովորել նախադասութեամբ Տիգրանը հրամայում կամ աւելի ուղիղ, յորդորում է Արշակին աշխատելու։

Այն նախադասութիւնը, որով պարզապէս պատմվում է մի բան, կամ որեւիցէ միտք է յայտնվում՝ կոչվում է պատմական։ Արշակն ու Տիգրանը նստած էին դասատան մէջ պատմական նախադասութիւն է։

Այն նախադասութիւնը, որով խօսողը հիմանալով մի բան,

կամ կասկածելով մի բանի վրայ հարցմունք է անում, կոչվում է հարցական, իսկ պատասխանը—պատասխանական։ Ի՞նչ ես անում՝ հարցական նախադասութիւն է։ Ազգային պատմութեան դասս եմ գրում—պատասխանական։

Այն նախադասութիւնը, որով խօսողը սաստիկ զգացուած լինելով՝ բացագանչում է, կոչվում է բացագանչական։—Ե՜րբ կը լինի որ ես էլ ազգային պատմութիւն սովորեմ բացագանչական նախադասութիւն է։

Այն նախադասութիւնը, որով խօսողը պահանջում է, հրամայում կամ ցանկանում է որ գործողութիւնը կատարուի՝ կոչվում է հրամայական։—Աշխատէ՛ եւ դու էլ շուտով կը սկսես սովորել հրամայական նախադասութիւն է։

Հարցական նախադասութեան մէջ հարցական նշանը դրվում է այն բառի վրայ, որի մէջ պարունակվում է հարցմունքը. բացագանչական նախադասութեան մէջ զարմացականը դրվում է բացագանչութիւն պարունակող բառի վրայ, ինչպէս վերևի օրինակներից երևում է։ Հրամայական նախադասութեան մէջ գործ է դրվում շեշտը, եթէ միայն հրաման կամ ցանկութիւն պարունակող բառը իրանից առաջ շեշտեալ բառ չունենայ. ինչպէս. գնա՛ տուն եւ տո՛ւն գնա։ Իսկ պատմական և պատասխանական նախադասութիւններից յետոյ, մտքին ու ոճերին նայելով, կարող է դրուել վերջակէտ, միջակէտ, ստորակէտ։

Պատասխանական նախադասութիւնը շատ անգամ անկատար է լինում, այսինքն պարունակում է իր մէջ միայն այն բառերը՝ որ ամենահարկաւոր են. ինչպէս. Ո՞ւր ես գնում։—Ուսումնարան։ Այսօր դաս կա՞յ։—Կայ։ Ուր աւելորդ կրկնութիւն կը լինէր ասել՝ Ուսումնարան եմ գնում։ Այո՛, այսօր դաս կայ։

Կրկնութիւն։ - Ո՞ր նախադասութիւնը կոչվում է դիմաւոր և որը անդէմ. Ո՞ր նախադասութիւնը կոչվում է գլխաւոր և որը երկրորդական։ Քանի տեսակ են լինում երկրորդական նախադասութիւնները։ Ի՞նչ է միջանկեալ նախադասութիւնը։ Ո՞ր նախադասութիւնը կոչվում է կատարեալ և որը կրճատեալ։ Ո՞ր նախադասութիւնը կոչվում է պարզ և որը բաղադրեալ։ Ո՞րն է միաւորեալ նախադասութիւնը։ Մեկնեցէ՛ք պատմական, հարցական, պատասխանական, բացագանչական և հրամայական նախադասութիւնների մէջ եղած զանազանութիւնը։ Երկրորդական լրացուցիչ նախադասութիւնը երբ և ինչ կէտերով բաժանվում է գլխաւորից։ Ե՞րբ և ինչ կէտադրութեան նշաններով են բաժանվում գլխաւորից երկրորդական ենթակայ, լրացուցիչ և պարագայական նախադասութիւնները։ Ի՞նչ նշաններով բաժանվում է միջանկեալ նախադասութիւնը գլխաւորից։ Կրճատեալ նախադասութիւնները երբ և ինչ կէտով են բաժանվում գլխաւորից։ Ի՞նչ կէտադրութեան նշաններ գործ են ածվում բաղադրեալ նախադասութեան մէջ։ Միաւորեալ նախադասութեան մէջ այլ և այլ ենթակաները, ստորոգեալները, լրացուցիչները և այլն, երբ են բաժանվում միմեանցից ստորակէտով և երբ ոչ։ Ի՞նչ առանձին նշաններ գործ են ածվում հարցական, բացագանչական և հրամայական նախադասութիւնների մէջ։

Կարդացէք մի հատուած ձեր ընթերցարանից և ցոյց տուէք իւրաքանչիւր նախադասութեան տեսակը։ Լուծեցէք իւրաքանչիւր նախադասութիւնը առանձին, յիշելով նախադասութեան գլխաւոր և երկրորդական անդամները։

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Մասունք—Բանի։

§ 21. ԲԱՌԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ·

Տղայք եօթներորդ ամսում ատամ են հանում և ութերորդ տարում փոխում են։

Այս բաղադրեալ նախադասութիւնը կազմուած է այլ և այլ բառերից, որոնք զանազան հասկացողութիւններ են պարունակում։ Տղայք բառը շնչաւոր առարկայի անուն է. եօթներորդ բառը ցոյց է տալիս թիւ. ամսում—մտաւոր առարկայ. ատամ—նիւթական առարկայ. հանում են—գործողութիւնը. և բառը կապում է երկու նախադասութիւն միմեանց հետ. ութերորդ բառը ցոյց է տալիս թիւ. տարում—վերացական առարկայ. փոխում են—գործողութիւն։

Ամենայն նախադասութիւն կազմվում է առանձին բառերից, որոնք զանազան հասկացողութիւններ են պարունակում։

Բառերը իրանց պարունակած հասկացողութիւնների համեմատ՝ այլ և այլ կարգերի են բաժանվում, որոնք քերականութեան մէջ կոչվում են մասունք-բանի, այսինքն՝ խօսքի մասեր:

Ա. Գոյական անուն։

§ 22. Ի՞ՆՉ Է ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆԸ·

Հայկազուն նահապետների ու թագաւորների պատմութեան մէջ ուշադրութեան արժանի են Արամ եւ Տիգրան Երուանդեան, երկուսն էլ նշանաւոր իրանց քաջութեամբը, հայրենասիրութեամբը և քաղաքակրթական նպատակներովը։

Այս օրինակի մէջ նշանակած բառերը—նահապետների, թագաւորների, պատմութեան (մէջ), ուշադրութեան, Արամ, Տիգրան, քաջութեամբը, հայրենասիրութեամբը, նպատակներովը—նախադասութեան զանազան անդամների պաշտօն են վարում։ (Լուծեցէք այս նախադասութիւնը և ցոյց տուէք թէ ինչ պաշտօն են վարում նշանակած բառերը)։ Բայց ըստ նշանակութեան, այդ բառերը այլ և այլ առարկաների անուններ են. այսպէս օրինակի համար՝ մինը կոչվում է նահապետ, միւսը—թագաւոր, երրորդը—Արամ, և այլն։

Իւրաքանչիւր առարկայ ունի իւր առանձին անունը, որ քերականութեան մէջ կոչվում է գոյական անուն։—Նահապետ, պատմութիւն, Տիգրան, նպատակ գոյական անուններ են։

---

1. Անուանեցէք դասատան մէջ գտնուած առարկաները։
2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ գոյական անուններով, և ցոյց տուէք թէ ո՛ր առարկաներին տալիս ենք այդ անունները։ Գոյական անունների տակ գիծ քաշեցէք։

Կօշկակար (կօշկակար կոչվում է այն արհեստաւորը, որ ոտնամաններ է կարում։) Դերձակ—ժամագործ—վաճառական—հողագործ—նկարիչ—աշակերտ—թանաքաման—աւազաման—թուղթ—գրիչ—քանոն—շուն—ձի—գայլ—մարդ։

§ 23. ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ·

Առհասարակ բոլոր առարկաները երկուսին են բաժանվում. նիւթական և մտաւոր:

Նիւթական կոչվում են այն առարկաները՝ որոնց միմեանցից որոշում ենք մեր հինգ զգայարաններով, այսինքն տեսանելիքով, լսելիքով, շօշափելիքով, հոտոտելիքով և ճաշակելիքով. զորօրինակ. ծառ, զանգակ, քար, ծաղիկ, խնձոր։

Մտաւոր ասվում են այն առարկաները՝ որ չենք տեսնում, չենք լսում, չենք շօշափում և ոչ հոտոտում ենք կամ ճաշակում, այլ միայն մտքով ըմբռնում ենք. ինչպէս. *մտածմունք, ապրուստ, իմաստութիւն:*

Նիւթական առարկաների մէջ պէտք է զանազանել շընչաւորները անշունչներից։ Առաջինները կարող են իրանց ազատ կամքովը մէկ տեղից միւսը շարժուիլ. *թռչուն, ձուկ, զազան, մարդ.* իսկ անշունչ առարկաները չեն կարող իրանց ազատ կամքովը շարժուիլ. *բոյս, քար, երկաթ:*

Այսպէս և մտաւոր առարկաների մէջ կան այնպիսինները՝ որ թէև միայն մտքով ենք ըմբռնում, բայց առանձին գոյութիւն ունին, ինչպէս. *Աստուած, հրեշտակ, հոգի.* կան էլ որոնք ուրիշ առարկաներից առած յատկութիւններ ու գործողութիւններ են, և միայն մեր մտքում ներկայանում են մեզ իբրև առանձին յատկութիւններ. այսպէս են՝ *քաջութիւն, զօրութիւն, կորուստ, հանգիստ։*

Այսպիսի մտաւոր առարկաները կոչվում են նաև *վերացական:*

---

1. Ասացէք մի քանի առարկաներ, որ կարող ենք. 1) տեսնել, 2) լսել, 3) շօշափել, 4) հոտոտել, 5) ճաշակել։

2. Ասացէ՛ք մի քանի առարկաներ, որ միայն մտքով կարող ենք ըմբռնել։

§ 24. ՅԱՏՈՒԿ ԵՒ ՀԱՍԱՐԱԿ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ.

Հայոց բուն և նախնական բնակութեան տեղն էր *Երասխի* և *Կուր* գետերի մէջ պարունակուած հովիտը, որ նշանաւոր է պատմական յիշատակարաններով։ Այդտեղ էր գտնվում *Արմաւիր*

Հայկազանց իշխանների աթոռանիստը, *Արտաշատ* քաղաքը և այլն։ Այստեղ էր նոյն-*Վաղարշապատ* կամ *Նոր քաղաքը*, գաւառը, պէս *Շիրակայ* բարեբեր նահանգը և գինաւէտ *Գողթն* գա-ւառը։

Այս օրինակի մէջ *Հայոց, Երասխ, Կուր, Արմաւիր,* և միւս նշանակած բառերը այնպիսի անուններ են, որ միայն մէկ առարկայի *յատուկ* ու սեպհական են, այդ անունը կրող ուրիշ առարկաներ չկան. Բայց այդ առարկաները ուրիշ անուններ էլ ունին. այսպէս օրինակի համար, Երասխը՝ *գետ* է, Արմաւիրը՝ *քաղաք*, Շիրակը՝ *նահանգ*. միայն *գետ, քաղաք, նահանգ*՝ այնպիսի անուններ են, որ ուրիշ գետերի, քաղաքների և նահանգների *առհասարակ* պատկանում են։

Գոյական անունները լինում են *յատուկ* և *հասարակ*։

Յատուկ կոչվում է այն անունը, որ միայն մէկ առարկայի է պատկանում։—*Երասխ, Արմաւիր, Շիրակ* յատուկ գոյական անուններ են։ *)։

Հասարակ ասվում է այն անունը, որ շատ միատեսակ առարկաների է պատկանում։—*գետ, քաղաք, նահանգ* հասարակ գոյական անուններ են։

Պատահում է, երբեմն որ շատ միատեսակ առարկաներ մէկ տեղ հաւաքուելով՝ մի ամբողջ են կազմում. ինչպէս *զունդ*

---

*) Յատուկ անուններ տալիս ենք անշունչ առարկաներին և մարդկանց։ Այս վերջինների յատուկ անունները շատ անգամ միևնոյն են լինում. շատ կան օրինակի համար, Յովհաննէսներ, Տիգրաններ, Շուշաններ։ Բայց երբ ասում ենք *Յովհաննէս, Տիգրան, Շուշան*, մեր աչքի առաջ մի նշանակած անձն ունինք, որ չէ կարելի շփոթել նոյն անունը կրող ուրիշ անձի հետ։ Միայն աւելի բացատրութեան համար՝ մարդկանց անունների մօտ աւելացնում են նոցա ազգանունները, երբեմն նաև՝ *առաջին, երկրորդ.* *Գրիգոր Մանուկեան, Արտաւազդ Արտաշէսեան, Խոսրով Ա., Տիգրան Գ.*

(զինուորների հաւաքում), *հօտ* (ոչխարների հաւաքում), *անտառ* (ծառերի հաւաքում): Այս տեսակ անունները կոչվում են հաւաքական:

1. Ո՞րն է ձեր յատուկ անունը և ո՞րն է հասարակը Ո՞րն է ձեր քաղաքի, գետի, գաւառի յատուկ անունը և ո՞րն է հասարակը: Ասացէք ձեր ծանօթ երկիրների անունները, քաղաքների անունները, գետերի անունները, մարդկանց անունները:

2. Հետևեալ յատուկ անունների մօտ դրեցէք նոցա յարմար հասարակ անուններ:

Հայաստան—Անի—Արարատ—Տիգրիս—Սևան—Տրդատ:

3. Հետևեալ հասարակ անունների մօտ դրէք նոցա յարմար յատուկ անուններ:

Գիւղ—քաղաք—գաւառ—երկիր—նահանգ—գետ—լիճ— կղզի—իշխան—թագաւոր—կայսր—կաթուղիկոս—եպիսկոպոս:

4. Գրեցէք մի քանի նախադասութիւններ աշխարհագրութիւնից, սրբազան և ազգային պատմութիւնից, այլ և այլ յատուկ և հասարակ գոյականներով: Յատուկ անունները գլխատառով գրեցէք, իսկ հասարակ անունների տակ գիծ քաշեցէք:

§ 25. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԹԻՒԸ:

Մարդս մտածող արարած է:
Մարդիկ մտածող արարածներ են:

Առաջին օրինակի մէջ *մարդս արարած* գոյականները մէկ մէկ առարկայ են ցոյց տալիս, և այս պատճառով *եզակի* են դրուած: Երկրորդ օրինակի մէջ *մարդիկ արարածներ* գոյականները շատ առարկաներ են ցոյց տալիս, և այս պատճառով *յոգնակի* են դրուած:

Գոյական անունները երկու թիւ ունին՝ *եզակի* և *յոգնակի*:

Եզակի թիւը մէկ է ցոյց տալիս, և գործ է ածվում, երբ խօսքը միայն մէկ առարկայի վրայ է:—*Մարդ, արարած* եզակի են:

Յոգնակի թիւը մէկից աւելի կամ շատ է ցոյց տալիս, և գործ է ածվում, երբ խօսքը մէկից աւելի կամ շատ առարկայի վրայ է:—*Մարդիկ, արարածներ* յոգնակի են:

Առհասարակ յոգնակի թիւը անորոշ քանակութիւն է ցոյց տալիս, ինչպէս *բաժակներ, դանակներ*: Իսկ եթէ կամենում են քանակութիւնը որոշակի յայտնել, գործ են դրվում թուական անուններ, և այն ժամանակ շատ անգամ գոյականը եզակի վերջաւորութեամբ է մնում, որովհետև յոգնակի միտքը պարունակվում է թուական անուան մէջ. *հինգ բաժակ, տասը դանակ*: Բայց կան անյոգնակի գոյականներ, այսինքն որ միայն եզակի ունին. այսպէս են յատուկ անունները, շատ մտաւոր և մի քանի նիւթական անուններ. ինչպէս. *Հայկ, Արտաշատ, սէր, նախանձ, ալիւր, ձէթ, աղ, մեղր*: Այս վերջինները յոգնակի էլ են գործ ածվում, երբ հարկ լինի զանազան տեսակները յայտնել. ալիւրներ (զանազան տեսակ ալիւր). աղեր (կերակրի, բժշկական և այլն): Իսկ անեզակի բառեր նոր լեզուի մէջ չկան:

---

1. Հետևեալ նախադասութիւնների մէջ եզակի ձևով ասածները յոգնականի փոխեցէք և յոգնակի ձևով ասածները եզականի:

Աշակերտը պատրաստում է իւր դասը:—Ընկերս կորցրել է իւր գրքերը:—Երէկ մենք մաս եկանք պարտէզում:—Այսօր նամակ գրեցի իմ բարեկամին:—Երեխայքը խնձոր են քաղում:—Աղջիկները պսակներ հիւսեցին:—Գիւղացին գետինը հերկում է:—Մշակները փայտ են կտրում.—Ջկնորսները ձուկ են բռնում:

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ աշխարհագրութիւնից, սրբազան և ազգային պատմութիւնից ձեր ծանօթ առարկաների վրայ՝ եզակի և յոգնակի գոյական անուններով:

§ 26. ՀՈԼՈՎՆԵՐԸ ԵՒ ՆՈՑԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ:

Տիգրան Բ. Աւսրոց երկրին տէր դառնալուց յետոյ, իւր յաղթական *զօրքերովը* հասաւ մինչև *Պաղեստին* և բազմաթիւ *Իսրայելացի գերիներով* վերադարձաւ իւր հայրենիքը, որոնց տեղաւորեց *Հայաստանի* զանազան *քաղաքներում*:

Այս օրինակի մէջ այլ և այլ գոյականներ կան. Տիգրան, Ասորիք, երկիր, զօրք, Պաղեստին, գերի. հայրենիք, Հայաստան և քաղաք: Եթէ այս բոլոր գոյականները իրանց սկզբնական ձևովը թողնէինք, ոչինչ չէինք հասկանալ: Ինչի համար.— Որովհետև չէինք իմանալ թէ ինչ յարաբերութիւններ ունին միմեանց հետ Տիգրան, Ասորիք, զօրք, Պաղեստին և մնացած բոլոր առարկաները: Այդ յարաբերութիւնները պարզ երևում են գլխաւորապէս գոյականների վերջին ծայրին աւելացրած աննշան մասնիկներից կամ վերջաւորութիւններից: Առաջին գոյական Տիգրանն սկզբնական ձևով է դրած, որովհետև մեր խօսակցութեան գլխաւոր առարկան է և անկախ է միւս առարկաներից. ընդհակառակն միւս բոլոր առարկաները կախումն ունին նորանից, այս պատճառով և մեծ մասը իրանց վերջը զանազան աննշան մասնիկներ են ընդունել, որոնք խօսքի ընթացքի մէջ նշանակութիւն են ստանում: Այսպէս, երկր-ին ցոյց է տալիս թէ ինչի՛ն տէր դարձաւ Տիգրան. Ասոր ոց—թէ ո՛ր երկր-ին. զօրքեր—ով ցոյց է տալիս թէ ո՛ւմնով Տիգրան հասաւ Պաղեստին. նոյնպէս և գեր ի—ներով, թէ ո՛ւմով վերադարձաւ իր հայրենիքը. քաղաք-ներ ում թէ—ի՛նչ տեղ կամ ո՛րտեղում տեղաւորեց գերիներին և այլն:

Առարկաների մէջ եղած յարաբերութիւնները ցոյց տալու համար՝ գոյական անունները իրանց վերջաւորութիւնները փոխում են, և այդ փոփոխութիւնները քերականութեան մէջ կոչվում են հոլով:—Երկրին, զօրքերով, քաղաքներում հոլովներ են:

Հայերէն լեզուի հոլովները եօթն են. Ուղղական, Հայցական, Սեռական, Տրական, Բացառական, Գործիական և Ներգոյական:

1. *Ուղղական* հոլովը անուան սկզբնական ձևն է, որ յայտնում է թէ ով է կամ ինչ է խօսակցութեան առարկան, և այս պատճառով պատասխանում է այս հարցերին. *ո՞վ* և *ի՞նչ*: Ո՞վ էր ազգի ցեղապետը.—*Հայկ*: Ի՞նչ է ոսկին.—*Մետաղ* է,—*Հայկ, մետաղ*, ուղղական հոլովներ են:

Ուղղականի նման է *կոչական* ասած հոլովը, որ միևնոյն հարցերին է պատասխանում (*ո՞վ* և *ի՞նչ*) և միայն նշանակութեամբ է զանազանվում նորանից, այսինքն եթէ ուղղականի ձևով բառը նախադասութեան մէջ ոչ ենթակայ է և ոչ ստորոգեալ, կոչական բառ է:

2. *Հայցական* հոլովը ցոյց է տալիս գլխաւորապէս թէ մէկ առարկայ ուրիշ առարկայի գործողութեանն է ենթարկվում և պատասխանում է հետևեալ հարցերին. *ո՞ւմ* և *ի՞նչ*: Ո՞ւմ սպանեց Կայէն.—*Աբէլին*: Ի՞նչ գտաւ Կոլոմբոսը.—*Ամերիկան*:—*Աբէլին, Ամերիկան*, հայցական հոլովներ են:

3. *Սեռական* հոլովը ցոյց է տալիս թէ մէկ առարկայ ո՛ւմն է կամ ինչից է առաջ գալիս, *սերվում* է, և պատասխանում է այս հարցերին. *ո՞ւմ* և *ինչի՞* կամ *ի՞նչ բանի*: Ո՞ւմն է այս պատկերը.—*Հօրեղբօրս*: Ի՞նչ բանի տերևները չորացան.—*Ծառերի*:—*Հօրեղբօրս, ծառերի* սեռական հոլովներ են:

4. *Տրական* հոլովը ցոյց է տալիս գլխաւորապէս թէ մէկ բան ո՛ւմն են ընծայում, *տալիս*, և պատասխանում է այս հարցերին.—*ո՞ւմ* և *ինչի՞* կամ *ի՞նչ բանի*: Ո՞ւմ շնորհեց Վաղարշակ թագաւորութեան իրաւունքը:—Բագրատունեանց *նախարարներին*: Ի՞նչ բանի արժանի է ծոյլ աշակերտը:—*Պատժի*:—*Նախարարներին, պատժի* տրական հոլովներ են:

5. *Բացառական* հոլովը ցոյց է տալիս թէ մէկ տեղից հեռանում ենք, կամ մէկից մէկ բան ենք ընդունում, և պատասխանում է այս հարցերին. *ումի՞ց, ինչի՞ց* կամ *ո՞րտեղից*: Ո՞ւմից ստացաւ Պարոյր թագաւորական թագը.—*Կիաքսարից*: Ո՞րտեղից գաղթեցան Մամիկոնեանք.—*Չինաստանից*:—*Կիաքսարից, Չինաստանից* բացառական հոլովներ են:

6. *Գործիական* հոլովը ցոյց է տալիս թէ ումնով, ում ձեռքով կամ ինչ *գործիքով* կատարվում է գործողութիւնը, և

պատասխանում է այս հարցերին, ո՞ւմնով կամ ո՞ւմ ձեռով և ինչո՞վ։ Ո՞ւմնով են մխիթարվում ծնողք.—Իրանց զաւակներով։ Ի՞նչով են գրում մարդիկ.—Գրչով կամ մատիտով։—Զաւակներով, գրչով, մատիտով գործիական հոլովներ են։

7. Ներգոյական հոլովը ցոյց է տալիս թէ որտեղ է կատարվում գործողութիւնը, և պատասխանում է այս հարցերին. ինչո՞ւմ, ո՞րտեղո՞ւմ։ Ինչումն են լողում ձկները.—Ջրում։ Ո՞րտեղ կամ ո՞րտեղումն են սովորում աշակերտները.—Ուսումնարանում։—Ջրում, ուսումնարանում ներգոյական հոլովներ են։

Եթէ հոլովների վրայ ուշադրութիւն դարձնենք, կը տեսնենք որ մի քանի հոլովների համար միենոյն հարցերը և հարցերի հետ միենոյն վերջաւորութիւնները գործ են ածվում. այսպէս անշունչ առարկաների համար վարուող ինչ հարցը գործ է ածվում ուղղականի, միանգամայն և հայցականի համար, որոնք միմեանց նման են, այսինքն անուան սկզբնական ձևովն են գրվում. ում և ինչի վարում են սեռականի և տրականի համար, որոնք նոյնպէս միմեանց նման են վերջաւորութեամբ։ Նոյն ում հարցը գործ է դրվում և հայցականի համար, երբ խօսքը մարդկանց անունների վրայ է, և այն ժամանակ հայցականը սեռականի և տրականի նման է վերջաւորութեամբ։ Այս նոյնավերջ հոլովները միմեանցից որոշելու միայն մի հնարք կայ—քննել թէ նոցանից իւրաքանչիւրը ինչ պաշտօն է վարում և՞կամ ինչ մտքով է նախադասութեան մէջ։

Հետեւեալ հարցերի պատասխանները գրեցէք այնպէս, որ կատարեալ նախադասութիւններ կազմուին։ Յետոյ իւրաքանչիւր գոյականի հոլովն ու թիւը նշանակեցէք համառօտ կերպով։

Ո՞վ է մեր ազգի ցեղապետը։—Ո՞ւմ յանձնեց Սկայորդին իւր իշխանութիւնը։—Ո՞ւմ երևեցաւ Աստուած Քորեբ սարի վրայ։—Ո՞ւմից ստացար այս գիրքը։—Ո՞վքեր տիրում են այսօր Հայաստանին։—Ո՞վ էր Վաղարշակ։—Ո՞ւմ ձեռքով շինուեցաւ Արտաշատ քաղաքը։—Ի՞նչ է երկաթը.—Ի՞նչ է ծաղկում գարնանը և չորանում աշնանը։—Ի՞նչ շնորհեց Աստուած Իսրայելացոց Մովսէսի ձեռով։—Ի՞նչ է լոյս տալիս ցերեկով և ինչ՝ գիշերով։—Ինչի՞ դռները բաց են։—Ինչի՞ն դիպաւ Նաւը ու խորտակուեցաւ։—Ինչի՞ց են հանում ջուրը։—Ո՞րտեղից գաղթեցաւ Հայկ նահապետը։—Ինչո՞վ են փորում հողը։—Ինչո՞վ են եփում միսը։—Ինչումն են բնակվում քաղաքացիք։—Ինչումն են՞ բնակվում գիւղացիք։

§ 27. ՀՈԼՈՎՈՒՄ։

Գոյական անունները փոփոխվում են՝ 1) հոլովով և 2) թուով։ Այս փոփոխումը կոչվում է հոլովում։ Զորօրինակ.

Եզ. թիւ։

Ծովը մեծ է քան թէ ցամաքը։	Ու. Ծով
Կուր գետը թափվում է Կասպից ծովը։	Հ. Ծով
Ծովի ջուրը աղի ու դառն է։	Ս. Ծովի
Ծովին կպած ցամաքը կոչվում է ափ։	Տ. Ծովի
Ծովից անդադար բարձրանում է գոլորշի։	Բ. Ծովից
Ծովով պատած ցամաքը կոչվում է կղզի։	Գ. Ծովով
Կետերը բնակվում են ծովում։	Ն. Ծովում

Յոգն. թիւ։

Ծովերը հեշտացնում են մարդկանց հաղորդակցութիւնը։	Ու. Ծովեր
Ծովագնացները շատ նոր ցամաքներ ու ծովեր գտան։	Հ. Ծովեր
Մի քանի ծովերի ափերը անմերձենալի են։	Ս. Ծովերի
Մեծամեծ ծովերին ովկիանոս են ասում։	Տ. Ծովերի
Ծովերից ամէն տեսակ խոշոր ձկներ են դուրս գալիս։	Բ. Ծովերից
Շատ երկիրներ ծովերով են միանում։	Գ. Ծովերով
Եւրոպական ծովերում շատ կան։	Ն. Ծովերում

Գրեցէք մի քանի նախադասութիւններ այլ և այլ գոյական անուններով։ Յետոյ այդ գոյականները հոլովեցէք եզակի և յոգնակի։

§ 28. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՕՆԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ.

Արևգակը փայլում է նախադասութեան մէջ *արևգակը* գոյական *ենթակայ է*։

Առիւծը զօրեղ գազան է նախադասութեան մէջ *գազան* (է) գոյականը *ստորոգեալ է*։

Փղի կնճիթը երկար ու կախ ընկած է նախադասութեան մէջ *փղի* գոյականը *յատկացուցիչ է*։

Տրդատ թագաւորը քաջ ու առաքինի մարդ էր նախադասութեան մէջ *թագաւորը* գոյականը Տրդատ յատուկ անուան *բացայայտիչ է*։

Բնութիւնը թռչուններին թևեր է պարգևել օդում թռչելու համար։ Այս նախադասութեան մէջ *թռչուններին թևեր* գոյականները *լրացուցիչ* են, իսկ *օդումը պարագայական բառ*։

Գոյական անունը նախադասութեան մէջ լինում է՝ ենթակայ, ստորոգեալ, յատկացուցիչ, բացայայտիչ, լրացուցիչ և պարագայական բառ։

---

1. Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետևեալ գոյականները լինին։

1) *Ենթակայ.*—սենեակ— սեղան— գրքեր — տետրակներ—քանոն —գիւղ— քաղաք— սար—ձոր —աղբիւր— գետ—ծով— անձրև—ձիւն—ցօղ—Հայկ—Վարդան—Արարատ—. 2) *Ստորոգեալ*—քար—մետաղ—բոյս—ծաղիկ—ծառ—անասուն— թռչուն — վաճառական—պատկերահան— երաժիշտ։

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետևեալ գոյականները լինին։

1) *Յատկացուցիչ.*—ընկեր—քոյր —եղբայր —հայր— մայր—պապ—թոռ—հօրեղբայր—մօրաքոյր— Արամ —Տիգրան—. 2) *Բացայայտիչ*— աշակերտ —վարժապետ—մօրեղբայր — հօրաքոյր—իշխան—թագաւոր—կայսր—նախարար — վարդապետ—եպիսկոպոս—կաթողիկոս։

3. Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետևեալ գոյականները լրացուցիչ լինին՝ երեք պատասխան։

1) *Ո՞ւմ, ի՞նչ* հարցերին.— հայր—որդի—երեխայք—ծնողք—Յիսուս—Վաղարշակ—դաս — տետրակ— ցորեն —ալիւր— կտաւ—կօշիկ։

2) *Ո՞ւմ, ի՞նչի* հարցերին.—ընկեր— բարեկամ —հարևան —աշակերտ—վարձատրութիւն —պատիժ։

3) *Ո՞ւմից, ինչի՞ց* հարցերին.—եղբայր—քոյր—հայր—մօրաքոյր—բարեկամ—վտանգ—նեղութիւն—ծուլութիւն։

4) *Ումո՞վ, ինչո՞վ.*— դուստր— փեսայ—զաւակ—Մովսէս—Քրիստոս—գրիչ—կնքամոմ—կացին —բահ — գութան— մանգաղ — ասեղ—ջուր—սապոն։

4) Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետևեալ գոյականները պարագայական բառեր լինին։

Սենեակ—տուն—փողոց—անտառ—դաշտ—շաբաթ — ամիս — տարի—տաքութիւն—ցուրտ—անձրև—ձիւն — ընթերցանութիւն — գրութիւն—նկարչութիւն։

Կրկնութիւն. Ինչից է կազմվում ամենայն նախադասութիւն։ Ի՞նչ է նշանակում մասունք-բանի։ Ի՞նչ է գոյական անունը։ Առարկաները քանի տեսակի են բաժանվում։ Ո՞ր գոյականը կոչվում է յատուկ և որը հասարակ։ Ի՞նչ է հաւաքական գոյական անունը։ Գոյական անունները քանի թիւ ունին և որոնք են։ Ի՞նչ է հոլովը։ Հայերէն լեզուն քանի հոլով ունի։ Կրկնեցէք իւրաքանչիւր հոլովի նշանակութիւնը։ Ի՞նչ է հոլովումը։ Հոլովեցէք մի բառ եզակի և յոգնակի։ Ի՞նչ պաշտօն է վարում գոյական անունը նախադասութեան մէջ։

Կարդացէք մի հատուած ձեր ընթերցարանից և ցոյց տուէք թէ իւրաքանչիւր գոյականը ի՞նչ տեսակ է, ի՞նչպիսի առարկայի անուն է, ի՞նչ թւով ու հոլովով է գործ դրած, ի՞նչ պաշտօն է վարում նախադասութեան մէջ։

Բ. Ածական անուն:

§ 29. ԻՆՉ Է ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆԸ.

Անին, Բագրատունեաց աթոռանիստը, մեծ ու գեղեցիկ քաղաք էր, ամուր պարսպով ու բարձր աշտարակներով պատած:

Այս օրինակի մէջ բոլոր նշանակած բառերը առարկաների այլ և այլ յատկութիւններն են ցոյց տալիս ու որոշում են նոցա ուրիշ նոյնատեսակ առարկաներից: Այսպէս՝ մեծ, գեղեցիկ բառերը գրուելով քաղաք գոյականի մօտ՝ ցոյց են տալիս նորա որպիսի լինելը և որոշում են նորան փոքր ու տգեղ քաղաքից. ամուր բառը գրուելով պարիսպ գոյականի մօտ՝ զանազանում է նորան թոյլ պարսպից. բարձր գրուելով աշտարակ գոյականի մօտ՝ զանազանում է նորան ցածր աշտարակից:

Այն բառերը, որոնք ցոյց են տալիս առարկաների յատկութիւնները, կոչվում են ածական անուն—մեծ, գեղեցիկ, ամուր, բարձր ածական անուններ են:

Ածական բառը կազմուած է հին ածել բառից, որ նշանակում է բերել.—որովհետև ածականը բերվում է ու դրվում է գոյականի մօտ:

---

1. Ի՞նչ յատկութիւններ կարող են ունենալ հետևեալ առարկաները:

Գիրք—գրիչ—թուղթ—թանաք—սեղան—աթոռ—ճրագ—դանակ—գդալ—աղուէս—ոչխար—առիւծ—մարդ—հող—քար—ծառ—փայտ—ցերեկ—գիշեր—հողագործ—վաճառական—աշակերտ—երաժիշտ—նկարիչ:

2. Ի՞նչ առարկաների կարող են պատկանել հետևեալ յատկութիւնները:

Սպիտակ—կարմիր—կապոյտ—փայլուն—արթուն—պինդ—կարծր—թանձր—աւազոտ—տղմոտ—արծաթէ—պղնձէ—երկաթէ—ոսկէ—բարի—խելացի—բնական—հանճարեղ:

3. Գրեցէք մի քանի նախադասութիւններ և գործ դրէք հետևեալ գոյականները ածականների հետ:

Ջանասէր աշակերտ—ծոյլ աշակերտ—բարի մարդ—աւազոտ հող—սև հող—կարմիր վարդ—պարզ երկինք—ամպած օր—մութ գիշեր—մանրամասն նկարագրութիւն—կարճառօտ պատմութիւն:

§ 30. ՅԱՏՈՒԿ ԵՒ ՀԱՍԱՐԱԿ ԱԾԱԿԱՆՆԵՐ.

Պիրենեան լեռները բաժանում են Ֆրանսիան Սպանիայից:—Գարնանային օրերը զուարճալի են:

Առաջին օրինակի մէջ Պիրենեան ածականը այնպիսի յատկութիւն է ցոյց տալիս, որ միայն նշանակած լեռների սեպհական է: Երկրորդի մէջ գարնանային ածականը այնպիսի յատկութիւն է ցոյց տալիս, որ ուրիշ շատ առարկաների կարող է պատկանել, օրինակ, կարող ենք ասել գարնանային եղանակ, գարնանային անձրև, գարնանային ծաղիկ և այլն:

Ածական անունները գոյականների պէս լինում են յատուկ և հասարակ:

Յատուկ ածական անունը ցոյց է տալիս այնպիսի յատկութիւն, որ միայն մէկ առարկայի է պատկանում. իսկ հասարակ ածական անունը ցոյց է տալիս այնպիսի յատկութիւն, որ կարող է շատ առարկաների պատկանել:—Պիրենեան յատուկ ածական անուն է, գարնանային—հասարակ:

Ինչպէս որ հասարակ գոյականները մականուն դառնալով յատուկ անուան նշանակութիւն են ստանում.—ինչպէս՝ Աշոտ Երկաթ, Արտաշէս Մանուկ,—այնպէս և հասարակ ածականները մի մասնաւոր առարկայի յատկութիւն ցոյց տալով յատուկ ածական անուան նշանակութիւն են ստանում. ինչպէս՝ Նոր Աշխարհ, Կարմիր ծով, Արա գեղեցիկ, Ռիչարդ Առիւծասիրտ:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ աշխարհագրութիւնից, սրբազան և արտաքին պատմութիւնից յատուկ ածական անուններով։

§ 31. ՈՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ։

Երկրագունդը այնպէս հարթ ու հաւասար չէ, ինչպէս մի որ և իցէ քարէ գնդակ։

Այս օրինակի մէջ հարթ ու հաւասար ածականները այնպիսի յատկութիւն են ցոյց տալիս, որ երկրագունդ առարկայի բնութիւնից առնուած է, իսկ քարէ ~~և ապակէ~~ ածականները ցոյց են տալիս թէ ինչ յարաբերութիւն ունի գունդ առարկան քարի ~~ու ապակիի~~ հետ, այսինքն թէ քարից~~, ապակիից~~ է շինած։ Այսպէս, երբ ասում ենք՝ գեղեցիկ լեզու, լաւ ժամացոյց, գեղեցիկ և լաւ ածականները ցոյց են տալիս լոկ թէ ինչպիսի են լեզուն և ժամացոյցը. իսկ եթէ ասենք՝ հայկական լեզու, ոսկի ժամացոյց, հայկական ցոյց է տալիս թէ լեզուն ումն է պատկանում, ոսկի— թէ ինչից է շինած ժամացոյցը։

Ածականները իրանց ցոյց տուած յատկութիւնների նայելով՝ երկուսի են բաժանվում. որակական և յարաբերական։

Որակական ածականը ցոյց է տալիս ածականի այն որպիսութիւնը, որ նորա բնութիւնից առնուած է, իսկ յարաբերական ածականը ցոյց է տալիս մէկ առարկայի ունեցած յարաբերութիւնը ուրիշ առարկայի հետ, այսինքն՝ նիւթը ինչից շինուած է, ում պատկանելը, ժամանակը ու տեղը, թէ ե՞րբ կամ ո՞րտեղ է գտնվում առարկան։—Հարթ, հաւասար որակական ածականներ են.—քարէ, ապակէ—յարաբերական։

Որակական և յարաբերական ածականների մէջ եղած մէկ մեծ զանազանութիւնն էլ այն է, որ առաջինների ցոյց տուած յատկութիւնը կարող է աւելի կամ պակաս երևել առարկայի մէջ. ինչպէս՝ Այս պարտէզը գեղեցիկ է, երկրորդը աւելի գեղեցիկ է. Իսկ յարաբերական ածականների ցոյց տուած յատկութիւնը չէ կարող ոչ աւելանալ, ոչ պակասել. չէ կարելի ասել աւելի ապակէ գունդ, աւելի հայկական լեզու։

1. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ որակական ածականներով, որոնք իրարու հակառակ որպիսութիւններ են ցոյց տալիս։

Աշխատասէր—ծոյլ (Աշխատասէր աշակերտը կը վարձատրուի, իսկ ծոյլը կը պատժուի)։ Մեծ—փոքր, երկար—կարճ, լայն—նեղ, բարձր—ցածր, հաստ—բարակ, ծեր—երիտասարդ, բարի—չար, զօրաւոր—տկար, հարուստ—աղքատ, տաք—սառն, ցամաք—թաց, ծանր—թեթև, սուր—բութ, հաւատարիմ—անհաւատարիմ։

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ յարաբերական ածականներով և ցոյց տուէք ածականների նշանակութիւնը։

Փայտէ կամ փայտի—երկաթէ կամ երկաթի—արծաթէ կամ արծաթի—պղնձէ—քարէ—հողէ—կաւէ—այսօրուան—երէկուան—վաղուան կամ էգուցուան—այժմեան—աշնանային—հայրական—որդիական—եղբայրական—բարեկամական—ընկերական—հայկական։

§ 32. ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ։

Իւրաքանչիւր առարկայի որպիսութիւնը երեք կերպով կարող է համեմատուիլ ուրիշ առարկաների որպիսութեան հետ։ Այս երեք կերպ համեմատութիւնից առաջ են գալիս որակական ածականների համեմատութեան աստիճանները։

Համեմատութեան աստիճանները երեք են. դրական, բաղդատական և գերադրական։

Դրական աստիճանը առարկայի որպիսութիւնը պարզապէս յայտնում է, առանց բաղդատելու նորան ուրիշ առարկաների հետ։ Այս ծառը մեծ է։ Արշակը աշխատասէր աշակերտ է։ Վագրը կատաղի գազան է։

Բաղդատական աստիճանը երկու առարկայ իրարու հետ համեմատում կամ բաղդատում է, ցոյց տալով մէկի որպիսու-

թեան առաւելութիւնը կամ նուազութիւնը. Տիգրանը աւելի աշխատասէր է քան թէ Արշակը։ Գարնանը ու աշնանը եղանակը աւելի անհաստատ է քան թէ ամառն ու ձմեռը։

Գեղագրական ատիճանը ցոյց է տալիս՝ թէ մէկ առարկայ որպիսութեան կողմից բոլոր իւր նման առարկաներից գերազանց կամ ստոր է։ Ամենաբարձր լեռները յաւիտենական ձիւնով պատած են։ Կոլիբրին ամենափոքր թռչունն է։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ բաղդատական և գերադրական ածականներով աշխարհագրութիւնից, սրբազան և ազգային պատմութիւնից և ձեր ծանօթ անձերի ու առարկաների վրայ։

§ 33. ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՕՆԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ։

Բարի գործը անվարձ չի մնալ նախադասութեան մէջ բարի ածականը գործ գոյականի յատկացուցիչն է։

Երկիրս կլոր է նախադասութեան մէջ կլոր (է) ածականը ստորոգեալ է։

Հարուստները օգնում են աղքատներին նախադասութեան մէջ հարուստները և աղքատներին ածականները գոյականաբար են վարուած և այս պատճառով առաջինը ենթակայի, իսկ երկրորդը լրացուցչի պաշտօն են վարում. Ո՞վ է օգնում աղքատներին.—Հարուստները. (այսինքն հարուստ մարդիկը։) Ո՞ւմ են օգնում հարուստները.—Աղքատներին. (այսինքն աղքատ մարդկանց։)

Ներսէս Մեծը բազմաթիւ հիւանդանոցներ հիմնեց կաղերի, բորոտների և ամէն տեսակ հիւանդների համար։ Այս նախադասութեան մէջ կաղերի, բորոտների և հիւանդների ածականները նոյնպէս ցոյց են տալիս գործողութեան նպատակը, որոնք պարագայական բառեր են։

Ածական անունը նախադասութեան մէջ լինում է գըլխաւորապէս յատկացուցիչ, երբեմն էլ ստորոգեալ։ Բարի գործը անվարձ չի մնալ։ Հայաստանի օդը բարեխառն է։

Բայց երբ որ ածականը գոյականի տեղով է վարվում, կարող է լինել ենթակայ, լրացուցիչ և պարագայական բառ։ Ներսէս Մեծը կուշտը քաղցածին մանր է բրդում (լրաց.)։ Ներսէս Մեծը բազմաթիւ հիւանդանոցներ շինեց կաղերի, բորոտների և ամէն տեսակ հիւանդների համար (պար. բառեր)։

Կրկնութիւն.—Ի՞նչ է ածական անունը։ Ո՞ր ածականը կոչվում է յատուկ և որը հասարակ։ Ի՞նչ զանազանութիւն կայ որակական և յարաբերական ածականների մէջ։ Քանի՞ աստիճան ունին որակական ածականները և որոնք են։

Կարդացէք մի հատուած ձեր ընթերցարանից և ցոյց տուէք թէ իւրաքանչիւր ածական ինչ տեսակ է, յատուկ թէ հասարակ, որակական թէ յարաբերական։ Ցոյց տուէք թէ իւրաքանչիւր ածական ինչ պաշտօն է վարում նախադասութեան մէջ։

Գ. Բայ։

§ 34. Ի՞ՆՉ Է ԲԱՅԸ։

Աշակերտները նստած են դասատան մէջ և իրանց դասերը պատրաստում են։

Այս բաղադրեալ նախադասութեան մէջ նստած են ստորոգեալը ցոյց է տալիս՝ թէ ի՞նչ դրութեան մէջ են աշակերտները, (նստած են և ոչ թէ կանգնած). իսկ պատրաստում են ստորոգեալը ցոյց է տալիս թէ ինչ գործողութիւն են կատարում աշակերտները։

Էյն բառերը, որոնք ցոյց են տալիս առարկայի գործողութիւնը կամ դրութիւնը, կոչվում են բայ։—Նստած են, պատրաստում են բայեր են.

Հայերէն բայ արմատ է բան, բառ բառերի և նշանակում է խօսք կամ ասացուած, որովհետև բայը ցոյց է տալիս թէ առարկան ինչ է անում և թէ ինչ կարող են ասել նորա վրայ։

1. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ բայերով և ասացէք թէ ո՞ր բայերը գործողութիւն են ցոյց տալիս և որոնք դրութիւն։

Սողալ—լողալ—թռչել—վազել— գնալ— զբօսնել— պառկել —նստել—քնել—սովորել—հաչել—ռռնալ—մլաւել—բառանչել—մռընչալ—խրխնջալ— բզզալ—երգել—խօսել—մտածել—գրել—կարդալ։

2։ Ի՞նչ գործողութիւններ կարող են կատարել և ինչ դրութեան մէջ կարող են գտնուիլ հետևեալ առարկաները։

Արեգակ—լուսին— աստղեր— ծով—գետ— ցամաք—ծառ—ձի —կով—ոչխար—ձուկ—ճանճ—հաւ— սոխակ— աշակերտ— վարժապետ—հողագործ—դերձակ—կօշկակար—զօրավար։

§ 35. ԲԱՅԵՐԻ ՍԵՌԸ։

Կեսարը յաղթեց Պոմպէոսին։ Պոմպէոսը յաղթուեցաւ Կե-

քաջութեամբ զնացին Պարսից
սարից։ Երեք հարիւր Սպարտացի
դէմ և բոլորն էլ ընկան իրանց հայրենիքի ազատութեան համար։

յաղթեց բայը ցոյց է տալիս
Առաջին նախադասութեան մէջ
Կեսարի գործողութիւնը, որ անցնում է Պոմպէոսի վրայ։ Երկրորդ
նախադասութեան մէջ յաղթուեցաւ բայն այնպիսի գործողութիւն
է ցոյց է տալիս, որ Պոմպէոսը կրում է ուրիշից։ Երրորդ օրինակի մէջ
զնացին բայը ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն, որ չէ անցնում ուրիշ առարկայի վրայ, այլ մնում է ներգործողների (Սպարտացոց) մէջ. իսկ ընկան բայը ոչ այնքան գործողութիւն է ցոյց
տալիս, որքան մի լոկ դրութիւն։ Ուրեմն բայերը զանազան տեսակ գործողութիւն են ցոյց տալիս և այդ գործողութեան զանազանութիւնը քերականութեան մէջ կոչվում է սեռ։

Բայերը երեք սեռ ունին. ներգործական, կրաւորական
և չէզոք։

Ներգործական բայը ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն, որ անցնում է ուրիշ առարկայի վրայ։—Յաղթեց ներգործական բայ է։

Կրաւորական բայը ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն,
որ մի առարկայ կրում է ուրիշ առարկայից։—Յաղթուեցաւ
կրաւորական բայ է*)։

Չէզոք բայը ցոյց է տալիս առարկայի դրութիւնը, կամ
այնպիսի գործողութիւն, որ չէ անցնում ուրիշ առարկայի վրայ,
այլ գործողի մէջ է մնում։—Գնացին, ընկան չէզոք բայեր են։

*) Ներգործական խօսքի մէջ միշտ երկու առարկայ կայ. մինը գլխաւոր (ենթակայ), որ դրվում է միշտ ուղղական հոլովով, իսկ միւսը երկրորդական (լրացուցիչ), որ դրվում է հայցական հոլովով. Տիգրանը նուաճեց Ասորոց երկիրը նախադասութեան մէջ Տիգրանը ուղղական հոլով է, երկիրը հայցական։

Կրաւորական խօսքի կազմութիւնը ներգործականի հակառակն է, բայց միտքը մէկ է. միևնոյն է ասել՝ Տիգրանը նուա-

ճեց Ասորոց երկիրը, և Ասորոց երկիրը նուաճեցաւ Տիգրանից կամ Տիգրանի ձեռով։ Այս օրինակից երեւում է թէ՝ 1) երբ ներգործական բայը կրաւորականի է փոխւում, ենթական դառնում է լրացուցիչ, և լրացուցիչը ենթակայ. 2) թէ ամենայն ներգործական բայ ունի իր կրաւորականը։

---

1. Հետեւեալ նախադասութիւնների մէջ ներգործական բայերը կրաւորականի փոխեցէք, այնպէս որ ամբողջ նախադասութիւններ կազմուին։ Կրաւորական բայերի տակ գիծ քաշեցէք։

Մեղուները մեղր են շինում։ (Մեղրը շինւում է մեղուներից)։ Կատուն մուկ է բռնում։—Սուրբ Մեսրոպը գտաւ հայերէն լեզուի տառերը։ (Սահակ Պարթեւը Սուրբ Գիրքը հայերէն թարգմանեց։—Կայէն սպանեց Աբէլին։—Անտոնիոսն Արտաւազդին գերի տարաւ Եգիպտոս։—Պատմաբանները ասում են թէ Հայոց նախարարները թունաւորեցին Տրդատին։

2. Հետեւեալ նախադասութիւնների մէջ կրաւորական բայերը ներգործականի փոխեցէք։ Ներգործական բայերի տակ գիծ քաշեցէք։

Երկիրը ծածկուեցաւ ձիւնով։ Երկինքն ու երկիրը ստեղծուեցան Աստուածանից։—Գալլիան նուաճեցաւ Կեսարի ձեռով։—Յովսէփ Գեղեցիկը ծախուեցաւ իւր եղբայրների ձեռով։—Երուսաղէմը պաշարուեցաւ և առնուեցաւ Տիտոսի ձեռով։— Ժան դ'Արքը այրուեցաւ Ռուան քաղաքումը Անգլիացոց ձեռով։

3. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւեալ չէզոք բայերով։

Նստել—կանգնել—վազել—պառկել—քնել—յուսալ—վախենալ—ամաչել—ուրախանալ—նայել—դողալ—աղաղակել—լռել—ծիծաղել—լալ։

---

§ 36. ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ։

Երեկոյեանները լաւ է գնալ փոքր ինչ զբօսնելու։

—Տիգրանը *գնաց* պարտէզ. *գնացէք* և դուք, ասաց մայրը Արշակին։

—Ես *կը գնայի*, պատասխանեց Արշակը, *եթէ գրելու բան չունենայի*։

—Կը սպասեմ քեզ մինչև գրելդ աւարտես, ասաց Ռուբէնը, *որ միասին գնանք*։

Այս օրինակի մէջ ենթակաների գործողութիւնը զանազան եղանակներով կամ ձեւերով է բացատրուած։ Առաջին օրինակի մէջ գործողութեան լոկ *անունը* դրուած է, առանց յայտնելու թէ ով է ներգործում կամ երբ։ Ինչ լաւ է անել երեկոյեանները.—զբօսնելու *գնալ*։ Երկրորդ օրինակի մէջ որոշակի պատմւում է թէ ինչ արաւ Տիգրանը.— *գնաց* պարտէզ։ Երրորդի մէջ մայրը հրամայելով ասում է Արշակին և Ռուբէնին.—*գնացէ՛ք* և դուք։ Չորրորդի մէջ Արշակը պայմանով է յայտնում իր խօսքը—Ես *կը գնայի*, *եթէ* գրելու բան չունենայի։ Վերջապէս հինգերորդ նախադասութեան մէջ Ռուբէնը յայտնում է իր ցանկութիւնը Արշակի հետ միասին զբօսնելու։—Կը սպասեմ, ասաց Ռուբէնը, որ միասին *գնանք*։

Առարկաների գործողութեան վրայ խօսելիս՝ մենք կարող ենք նոյն գործողութեան լոկ *անունը տալ*, կամ *որոշակի* մի բան *պատմել* նորա վրայ, կամ *հրամայել*, *խնդրել* որ գործողութիւնը կատարուի, կամ *պայմանով* յայտնել գործողութիւնը, կամ վերջապէս անորոշ խօսել, յայտնելով մեր *կամքը*, *ցանկութիւնը* գործողութիւնր կատարելու մասին։ Սորանից յառաջ են գալիս բայերի հինգ *եղանակները*, կամ միտք յայտնելու ձեւերը. *անորոշ*, *սահմանական*, *հրամայական*, *պայմանական* և *ստորադասական*։

1. *Անորոշ* եղանակը բայի սկզբնական ձեւն է, ինչպէս ուղղական հոլովը գոյականների մէջ։ Այս եղանակով առարկայի գործողութեան լոկ *անունը* յիշւում է, առանց որոշելու

թէ ո՞վ կամ ե՞րբ է ներգործում. այս պատճառով էլ կոչվում է անորոշ։ *Գնալ* անորոշ եղանակ է։

2. *Սահմանական* եղանակը *որոշ պատմում է*՝ թէ ինչպէս է կատարվում, կատարուել է կամ պիտի կատարուի առարկայի գործողութիւնը։—*Գնաց* սահմանական եղանակ է։

Այս եղանակը ունի երեք ժամանակ, երեք դէմք և երկու թիւ։

3. *Հրամայական* եղանակը յայտնում է խօսողի հրամանը կամ *խնդիրքը, խորհուրդը*, որ գործողութիւնը կատարուի։—*Գնացէ՛ք* հրամայական եղանակ է։

Այս եղանակը ունի մէկ ժամանակ և մէկ դէմք—երկրորդը, որովհետև չի կարելի որ մարդ ինքն իրան հրամայէ, այլ միայն նորան՝ ում հետ խօսում է։

4. *Պայմանական* եղանակը խօսքը պայմանի տակ է դնում, յայտնելով թէ գործողութիւնը կարող էր կատարուել, բայց մի որևիցէ պատճառով չէ կատարուել։—*Ես կը գնայի* պայմանական եղանակ է։

Այս եղանակը ունի երկու ժամանակ, երեք դէմք և երկու թիւ։

5. *Ստորադասական* եղանակը յայտնում է խօսողի կասկածը, ցանկութիւնը գործողութեան կատարուելու մասին։—*Կըսպասեմ որ միասին գնանք* նախադասութեան մէջ որ *գնանք* ստորադասական եղանակ է։

Այս եղանակը ունի չորս ժամանակ, երեք դէմք և երկու թիւ։

---

1. Ցոյց տուէք հետևեալ բայերի եղանակները։

Խմել—կեր—քնեցաւ—գրում էր—կը կարդամ—կը գրէի... եթէ—արի—գալիս եմ—աղօթել—աղօթում է—նայում ենք—նայէ—

նա կամենում է որ ես խօսիմ—կարծեմ եթէ նոքա գնան—նա կը գար... եթէ տեսնել—տես—տեսաւ—գալ—եկէք—եկան։

2. Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք բայերի եղանակները. յետոյ նոցանից նոր նախադասութիւններ կազմեցէք միացած չորս եղանակներով։ Ահաւասիկ մէկ օրինակ։ Պէտք է հաց ուտել։ (*Անորոշ եղ.*)։ Ես հաց եմ ուտում։ (*Սահմանական եղ.*)։ Հաց կե՛ր։ (*Հրամայական եղ.*)։ Ես հաց կ'ուտէի, եթէ քաղցած լինէի։ (*Պայմանական եղ.*)։ Գրիգորը ցանկանում է որ իր հետ հաց ուտեմ։ (*Ստորադասական եղ.*)։

Տիգրանը լաւ է սովորում։—Մենք կարդում ենք այդ գիրքը։—Դու չը սովորեցիր քո դասը։—Նա ամեն օր ուսումնարան է գնում։

§ 37. ԲԱՑԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ։

Արշակը նամակ է *գրում*։—Արշակը նամակ *գրեց*։—Արշակը նամակ *կը գրէ*։

Առաջին նախադասութեան մէջ խօսքը *այժմեան* կամ *ներկայ* ժամանակի վրայ է, երկրորդի մէջ—*անցած* ժամանակի վրայ, երրորդի մէջ—*ապագայ* կամ *ապառնի* ժամանակի վրայ։

Ամենայն գործողութիւն կատարվում է մի որևիցէ ժամանակ. այդ ժամանակները երեք են. *ներկայ*, *անցեալ* և *ապառնի*։

Ներկայ ժամանակը ցոյց է տալիս թէ գործողութիւնը այժմ է կատարվում։—*Գրում է* ներկայ ժամանակ է։

Անցեալը ցոյց է տալիս թէ գործողութիւնը անցեալումն է կատարուել։—*Գրեց* անցեալ ժամանակ է.

Ապառնին ցոյց է տալիս թէ գործողութիւնը յետոյ պիտի կատարուի։—*Կը գրէ* ապառնի ժամանակ է։

---

1. Հետևեալ նախադասութիւնների մէջ ցոյց տուէք բայերի ժամանակները։

Ռուբէնը այսօր լաւ է պատասխանում.— Տիգրանը էգուց պարգև կըստանայ։— Երէկ մենք ձուկ բռնեցինք։— Վաղը մենք գիւղ կը գնանք։ — Այսօր բոլոր օրը անձրև է գալիս։— Շուշանը սիրում է երաժշտութիւն։— Աշնանը մրգեր կը հասնին։— Ելակը անտառումն է բուսնում.— Գիւղացիք խոտը հնձեցին։— Գիշերը մութ կը լինի։

2. Հետևեալ նախադասութիւններից նոր նախադասութիւններ կազմեցէք անցեալ և ապառնի ժամանակներով։

Իմ եղբայրը սովորում է ազգային պատմութիւն։— Այս աշակերտը լաւ է նկարում։— Մարիամը գեղեցիկ է գործում։— Իմ ընկերները գնում են ուսումնարան։

3. Ասացէք մի քանի նախադասութիւններով. 1) թէ ինչ էք անում այժմ, 2) թէ ինչ էք արել երէկ և 3) թէ ինչ կ'անէք երեկոյեան կամ էգուց։

§ 38. ԲԱՅԻ ԴԷՄՔԵՐԸ։

Ամէնայն խօսակցութեան համար երեք բան է հարկաւոր. *նախ*՝ պէտք է որ մէկը խօսի, *երկրորդ*՝ հարկաւոր է որ մէկ ուրիշն էլ լինի նորան լսող. վերջապէս մի *երրորդ* առարկայ էլ է հարկաւոր, որի վրայ կարելի լինի մի բան ասել։ Սորանից առաջ են գալիս բայի *երեք դէմքերը*, որոնք որոշւում են միմեանցից առանձին վերջաւորութիւններով։

Առաջին դէմքով դրւում է խօսող անձը և նորա գործողութիւնը։ Ես գիրք *եմ կարդում*։

Երկրորդ դէմքով դրւում է նա՝ ում հետ առաջինը խօսում է։ Դու նամակ *ես գրում*։

Երրորդ դէմքով դրւում է այն անձը կամ առարկան, որի վրայ խօսւում է։ Աշակերտը դաս է *պատրաստում*։ Վարդենին *ծաղկում է*։

Բայց պատահում է երբեմն որ գործողը անյայտ է մնում,

և այն ժամանակ բայերը դրւում են երրորդ դէմքով՝ որ այս պատճառով կոչւում են *միադէմ* կամ *դիմազուրկ* բայեր. ինչպէս. Լուսանում է։ Մթնում է։ Անձրևում է։

1. Հետևեալ նախադասութիւնների մէջ ցոյց տուէք բայերի դէմքերը և միւս դէմքերի փոխեցէք։

Ես գնում եմ զբօսնելու։— Դու կը գնաս ուսումնարան։— Նա նկարում է։— Իմ եղբայրը սովորում է ֆրանսերէն։— Նորա ընկերը լաւ է կարդում։— Մեր բարեկամը սրինգ է ածում։— Արշակը երաժշտութիւն չէ իմանում։

2. Ասացէք մի քանի նախադասութիւններով՝ 1) թէ ինչ էք անում սովորաբար առաւօտ ու երեկոյ, 2) թէ ինչ էք անում ուսումնարանում և 3) թէ ինչ էք անում դասերից յետոյ։

3. Ասացէք ձեր ընկերներից մէկին՝ 1) թէ ինչ է անում այժմ, 2) թէ ինչ չէ իմանում և 3) թէ ինչպէս պէտք է վարւէր իրան դասատան մէջ։

4. Ասացէք մի բան ձեր ազգականների, ծանօթների և ընկերների վրայ։

§ 39. ԲԱՅԵՐԻ ԹԻՒԸ.

Բայերը անունների նման երկու թիւ ունին. *եզակի* և *յոգնակի*։

Եզակին ցոյց է տալիս մէկի գործողութիւնը։ Շունը *հաջում է*։ Ձկնորսը ձուկ է *բռնում*։

Յոգնակին ցոյց է տալիս մի կամ աւելի առարկաների գործողութիւնները։— Շները *հաջում են*։ Ձկնորսները ձուկ *են բռնում*։

1. Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք իւրաքանչիւր բայի ժամանակը, դէմքը և թիւը։ Յետոյ եզակի նախադասութիւնները յոգնակիի փոխեցէք, իսկ յոգնակիները՝ եզակիի։

Մենք երէկ գնացինք թատրոն։— Ես նամակ կը գրեմ։— Դուք

պատրաստեցէք ձեր դասը։—Նա լաւ չէ նկարում։—Աշակերտը կորցրել է իւր գիրքը։—Երեխայքը միրգ են քաղում։—Աղջիկները փնջեր են չինում։—Մշակները փայտ են կտրում։

2. Հետեւեալ եզակի գոյականների մօտ մի մի բայ դրէք ներկայ ժամանակում, այնպէս որ նախադասութիւններ կազմուին։ Յետոյ այդ եզակի նախադասութիւնները յոգնակիի փոխեցէք։

Մուկ — կատու — քաղաք — հաւ — ձի — կով — երեխայ — աշակերտ — ընկեր — բարեկամ — մարդ։

3. Հետեւեալ յոգնակի գոյականների մօտ մի մի բայ դրէք ներկայ ժամանակում։ Յետոյ այդ նախադասութիւնները եզականի փոխեցէք.

Տները — ծառերը — թռչունները — չորքոտանիքը — գազանները — ձիաները — խնձորները — տանձերը — դեղձերը։

§ 40. ԽՈՆԱՐՀՈՒՄ։

Բայերը փոփոխվում են՝ 1) եղանակներով, 2) ժամանակներով, 3) դէմքերով և 4) թուով։ Բայերի այս փոփոխութիւնը կոչվում է խոնարհում։ Օրօրինակ.

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ։

Ներկայ ժամանակ

Եզակի թիւ

Ես գիրք եմ կարդում.	1. ես կարդում եմ
Դու գիրք ես կարդում.	2. դու կարդում ես
Եղբայրս գիրք է կարդում.	3. նա կարդում է.

Յոգնակի թիւ

Մենք գիրք ենք կարդում.	1. մենք կարդում ենք
Դուք գիրք էք կարդում.	2. դուք կարդում էք
Եղբայրներս գիրք են կարդում։	3. նոքա կարդում են։

Անցեալ ժամանակ

Եզակի թիւ

Ես գիրք կարդացի։	1. ես կարդացի
Դու գիրք կարդացիր։	2. դու կարդացիր
Եղբայրս գիրք կարդաց։	3. նա կարդաց

Յոգնակի թիւ

Մենք գիրք կարդացինք։	1. մենք կարդացինք
Դուք գիրք կարդացիք։	2. դուք կարդացիք
Եղբայրներս գիրք կարդացին։	3. նոքա կարդացին

Ապառնի ժամանակ

Եզակի թիւ

Ես գիրք կը կարդամ։	1. ես կը կարդամ
Դու գիրք կը կարդաս։	2. դու կը կարդաս
Եղբայրս գիրք կը կարդայ։	3. նա կը կարդայ

Յոգնակի թիւ

Մենք գիրք կը կարդանք։	1. մենք կը կարդանք
Դուք գիրք կը կարդաք։	2. դուք կը կարդաք
Եղբայրներս գիրք կը կարդան։	3. նոքա կը կարդան

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզակի թիւ

Ես գիրք կը կարդայի, եթէ ժամ. ունենայի։	1. ես կը կարդայի
Դու գիրք կը կարդայիր, եթէ ժամ. ունենայիր։	2. դու կը կարդայիր
Եղբ. գիրք կը կարդար, եթէ ժամ. ունենար։	3. նա կը կարդար

Յոգնակի թիւ

Մ. գիրք կը կարդայինք, եթէ ժմնկ. ունենայինք։ 1. մենք կը կարդայինք
Դ. գիրք կը կարդայիք, եթէ ժմնկ. ունենայիք։ 2. դուք կը կարդայիք
Եղբ. գիրք կը կարդային, եթէ ժմնկ. ունենային։ 3. նոքա կը կարդային

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզակի թիւ

Պէտք է որ ես գիրք կարդամ։ — 1. որ ես կարդամ
Պէտք է որ դու գիրք կարդաս։ — 2. որ դու կարդաս
Պէտք է որ եղբայրս գիրք կարդայ։ — 3. որ նա կարդայ

Յոգնակի թիւ

Պէտք է որ մենք գիրք կարդանք։ — 1. որ մենք կարդանք
Պէտք է որ դուք գիրք կարդաք։ — 2. որ դուք կարդաք
Պէտք է որ եղբայրներս գիրք կարդան։ — 3. որ նոքա կարդան

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզակի թիւ

Եղբայր, գիրք կարդա։ — կարդա.

Յոգնակի թիւ

Եղբայրներ, գիրք կարդացէք։ — կարդացէք

Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետեւեալ բայերը գործ դրուին բոլոր ժամանակներով, 3 դէմքով ու 2 թուով, և յետոյ իւրաքանչիւր բայ առաջ ծին խոնարհեցէք։

Գրել—սովորել նկարել—ուտել—խմել—տալ—լուացուել—հագնուել—չինել—փակել։

§ 41. ԲԱՅԵՐԻ ՊԱՇՏՕՆԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ։

Օձերը սողում են նախադասութեան մէջ սողում են բայը ստորոգեալ է։

Աշխատելը օգտակար է նախադասութեան մէջ աշխա-
տել բայը աշխատութիւն կամ աշխատանք գոյականի տեղ է
վարուած, և այս պատճառով ենթակայի պաշտօն է վարում. Ի՞նչ է
օգտակար—աշխատելը—աշխատութիւնը։
Ես սիրում եմ աշխատել նախադասութեան մէջ աշխա-
տել բայը նոյնպէս գոյականի մօտով է վարուած և լրացնում է
սիրում եմ բայի միտքը. Ի՞նչ եմ սիրում ես.—աշխատել։
Աշխատելու ժամանակ պէտք է աշխատել նախադա-
սութեան մէջ աշխատելու բայը նոյնպէս գոյականաբար է վար-
ուած և յատկացուցչի պաշտօն է վարում.
Մարդիկ ստեղծուած են աշխատելու համար նախադա-
սութեան մէջ աշխատելու բայը ցոյց է տալիս գործողութեան
նպատակը, ուստի և պարագայական բառ է։

Բայց նախադասութեան մէջ խսկապէս ստորոգեալ է
լինում, ինչպէս. Օձերը սողում են։
Բայց շատ անգամ բայը գոյական, երբեմն նաև ածա-
կան անուան մօտով է վարվում, և այն ժամանակ լինում է
ենթակայ, լրացուցիչ, յատկացուցիչ եւ պարագայական բառ։
Այսպիսի դէպքերում վարվում է անորոշ եղանակը։
Աշխատելը օգտակար է (ենթ.)։ Ես սիրում եմ աշխա-
տել (լրաց.)։ Աշխատելու ժամանակ պէտք է աշխատել (գոյ.
յատկ.)։ Խեցձերը ուտելու համ չունին (ած. յատ.)։ Մարդիկ
ստեղծուած են աշխատելու համար (պարագ.)

Գրեցէ՛ք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ բայերը լինին՝ 1) ստորոգեալ, 2) ենթակայ, 3) յատկացուցիչ, 4) լրացուցիչ և 5) պարագայական բառեր։

Կրկնութիւն.— Ի՞նչ է բայը։ Քանի՞ սեռ ունին բայերը։ Քանի՞ եղանակ ունին։ Քանի՞ ժամանակ ունին։ Քանի՞ դէմք ունին։ Քանի՞ թիւ ունին։ Ի՞նչպէս են փոփոխւում բայերը։ Խոնարհեցէ՛ք մի բայ։ Ի՞նչ պաշտօն են վարում բայերը նախադասութեան մէջ։

Կարդացէ՛ք մի հատուած ձեր ընթերցարանից և ցո՛յց տուէ՛ք իւրաքանչիւր բայի սեռը, եղանակը, դէմքն ու թիւը։ Ցո՛յց տուէ՛ք թէ իւրաքանչիւր բայ ի՛նչ պաշտօն է վարում նախադասութեան մէջ։

Դ. Մակբայ

§ 42. Ի՞ՆՉ Է ՄԱԿԲԱՅ։

Արշակը *միշտ լաւ* է պատրաստում իր դասերը։

Այս օրինակի մէջ նշանակած բառերը ցոյց են տալիս Արշակ ենթակայի գործողութեան հանգամանքները կամ պարագաները. *միշտ* ցոյց է տալիս թէ ե՛րբ Արշակը պատրաստում է իր դասերը, *լաւ*—թէ ի՛նչպէս է պատրաստում։

Այն բառերը, որոնք ցոյց են տալիս առարկաների գործողութեան կամ դրութեան զանազան հանգամանքները, կոչւում են *մակբայ*.—*միշտ*, *լաւ* մակբայներ են։

Մ ա կ բ ա յ նշանակում է բայի վրայ դրուող բառ։ Բայց երբեմն մակբայը դրւում է ածականի և նոյն իսկ մակբայի վրայ՝ ինչպէս. Գրիգորը ս ա ս տ ի կ անհամբեր տղայ է։ Սոխակները շատ լաւ են երգում։

§ 43. ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

Մակբայները իրանց նշանակութեան համեմատ այլ և այլ

տեսակների են բաժանւում, որոնցից գլխաւորներն են. *տեղական*, *ժամանակական*, *որակական* և *քանակական*։

Տեղական մակբայները ցոյց են տալիս գործողութեան տեղը. ինչպէս. *ո՞ւր*, *հեռու*, *մօտիկ*, *այստեղ*, *այնտեղ* և այլն։

Ժամանակական մակբայները ցոյց են տալիս գործողութեան ժամանակը. *ե՞րբ*, *այժմ*, *յետոյ*, *երէկ*, *այսօր*։

Որակական մակբայները ցոյց են տալիս գործողութեան որպիսութիւնը. *ի՞նչպէս*, *այնպէս*, *սաստիկ*, *բռնի*, *կամաց*, *ակամայ* *)։

Քանակական մակբայները ցո՛յց են տալիս գործողութեան չափն ու թիւը. *ո՞րչափ*, *այսչափ*, *շատ*, *սակաւ*, *մէկ անգամ*, *երկու անգամ* և այլն։

*) Որակական մակբայները, եթէ որակական ածականներից են յառաջ եկած, նոյնպէս ունին համեմատութեան աստիճաններ. ինչպէս. ա ւ ե լ ի լ ա ւ (խօսիլ), ա մ ե ն ի ց վ ա տ (գրել)։

Գրեցէ՛ք մի քանի նախադասութիւններ հետեւեալ մակբայներով.

1) *Տեղական*. հեռու—մօտիկ—ներս—դուրս—վերև—ներքև աջ—ձախ։ 2) *Ժամանակական*.—Այսօր—երէկ—էգուց—վաղ—ուշ —միշտ—երբեմն—վաղուց—գիշեր— ցերեկ— օրէցօր— տարէցտարի. 3) *Որակական*. լաւ—վատ—ձրի—կամաւ—շուտ—ընտանեբար—հայերէն—ամենևին—բոլորովին։ 4) *Քանակական*. Ո՞րքան—որչափ —այնքան—այդչափ—շատ—քիչ—սակաւ։

§ 44. ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ՊԱՇՏՕՆԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ։

Մակբայները, ինչպէս յայտնի է, նախադասութեան մէջ գործ են ածւում միայն իբրև պարագայական բառեր. ինչպէս. *Այսօր* ես *վաղ* վեր կացայ։ Մենք *միշտ հայերէն* ենք խօսում։

Մակբայներից յետոյ դրական անուններ յաճախ վարւում են այլ և այլ պարագաներ ցոյց տալու։ Մակբայները գոյականներից գանա-

գանելու մէկ միջոցն այն է, որ նոքա միայն պարագայական բառեր են լինում, իսկ գոյականները լինում են թէ ենթակայ, թէ յատկացուցիչ և թէ լրացուցիչ։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ աշխարհագրութիւնից, սրբազան և ազգային պատմութիւնից և ձեր ծանօթ առարկաների վրայ այլ և այլ մակբայներով։

Կարդացէք մի հատուած ձեր ընթերցարանից և ցոյց տուէք մակբայների տեսակները։

Ե. Դերանուն։

§ 45. Ի՞ՆՉ Է ԴԵՐԱՆՈՒՆԸ։

—Ո՞վ առաւ իմ գրիչը, հարցրեց Տիգրանը իւր ընկերներին։

—Ես, պատասխանեց Արշակը, իմը տանը մոռացայ։

Այստեղ առաջին նախադասութեան մէջ ո՞վ բառը հարցական է և դրուած է *մարդ* գոյականի տեղ. *իմ* և *իւր* ցոյց են տալիս թէ ումն են վերաբերում գիրքն ու ընկերները—*Տիգրանին*։ *Ես*, *իմը* դրուած են *Արշակ* գոյականի տեղ։

Այն բառերը, որոնք գոյական ու ածական անունների տեղ են դրվում, կոչվում են *դերանուն*։ —*Ո՞վ*, *իմ*, *ես*, *իւր*, *իմը* դերանուններ են։

Այն դերանունները որ գոյական անունների տեղ են դրվում, ասվում են *գոյական դերանուններ*. նոքա որ ածական անունների տեղ են դրվում—*ածական դերանուններ*։

Հետևեալ նախադասութիւնների մէջ գոյական անունների տեղ, ուր որ կարելի է, դերանուններ գրէք։ Դերանունների տակը գիծ քաշեցէք։

Տիգրանն ու Արշակը գնացին պարտէզ զբօսնելու։ Տիգրանն ու Արշակը սաստիկ թրջուեցան անձրևից, այնպէս որ Տիգրանն ու Արշակը հիւանդացան։—Շուշանը աշխատասէր աղջիկ է, բայց Շուշանը իւր ընկերներից յետ է մնացել, որովհետև Շուշանը երկար ժամանակ տկար է եղել։ Մեր հայրն ու մայրը մեծ խնամք ունին մեզ վրայ. մեր հայրն ու մայրը մեծացնում են մեզ. մեր հայրն ու մայրը կերակրում են մեզ. մեր հայրն ու մայրը հագցնում են մեզ. մեր հայրն ու մայրը կրթութիւն են տալիս մեզ։—Վարդան Մամիկոնեանը եկաւ Տղմուտ գետի ափը Վարդան Մամիկոնեանի զօրքով և կռուեցաւ Պարսից դէմ։

§ 46. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ։

Դերանունները իրանց նշանակութեանը նայելով այլ և այլ տեսակների են բաժանվում. *հարցական*, *անձնական*, *ցուցական*, *ստացական*, *յարաբերական* և *անորոշ*։

1. *Հարցական* դերանունները գործ են ածվում իբրև հարցմունք գոյական և ածական անունների տեղ, ուստի և լինում են.

1) Գոյական. *ո՞վ*։—*Ո՞վ* է այս մարդը։

2) Ածական *ո՞ր*, *ո՞րպիսի*։—*Ո՞ր* պարտէզը գնանք։

3) Ածական և գոյական միանգամայն. *ի՞նչ*։—*Ի՞նչ* ես կամենում (գոյ.)։ *Ի՞նչ* փոյթ. *ի՞նչ* վնաս. *ի՞նչ* օգուտ (ած.)։

2) Անձնական դերանունները անձերի տեղ են դրվում և գործ են ածվում խօսակցութեան մէջ։

Ես, *մենք* գործ են դրվում խօսող անձերի անուան տեղ և կոչվում են անձնական դերանուններ *առաջին դէմքի*։—*Ես* եմ յարութիւն և կեանք, ասաց Քրիստոս։ *Մենք* բոլորս էլ մի հասարակաց հօր որդիք ենք։

Դու, դուք գործ են դրվում այն անձի անուան տեղ, ում հետ առաջինը խօսում է:

Դուք էք աշխարհի լոյսը:

Ինքը, նրանք գործ են դրվում այն անձի անուան տեղ, ում վրայ խօսվում է:

Նրանք են նրանց թշուառութեան պատճառը:

Անձնական դերանունները միշտ գոյական են:

3. *Ցուցական* դերանունները գործ են դրվում առարկաները ու նոցա որպիսութիւնները ցոյց տալու համար, ուստի և լինում են.

1) *Գոյական. սա, դա, նա*:—*Ո՞վ է սա որ քամին էլ, ծովն էլ հնազանդվում են սորան*:

2) *Ածական. այս, այդ, այն. այդպիսի, այնպիսի, այսքան, կամ այսչափ, այդչափ, այնքան*:

Սա, դա, նա և այս, այդ, այն ցուցական դերանունների միտքը մէկ է, բայց առաջինները գոյական են և միշտ մենակ են վարվում, իսկ երկրորդները ածական են և սովորաբար գոյականների հետ են. չէ կարելի ասել սա մարդը, նա մարդը, բայց պէտք է ասել այս մարդը, այն մարդը: Այս, այդ, այն երբեմն գոյականաբար էլ են վարվում: Այդ էր իր ուզածը:

4) *Ստացական* դերանունները գործ են դրվում ածական անունների տեղ, և յայտնում են թէ մէկ առարկայ ումն է պատկանում. *իմ, քո, իւր, մեր, ձեր, նրանց*:—*Մեր պարտէզը ձեր պարտէզից մեծ է ու գեղեցիկ*:

5) *Յարաբերական* դերանունը մէկ է—*որ*: Այս դերանունը գործ է դրվում երկրորդական նախադասութիւնը գլխաւորի հետ կապելու և ցոյց է տալիս այն առարկան, որ միևնվում է երկրորդական նախադասութեամբ:—*Այն ջուրը որ ամէն կողմից ցամաքով պատած է, կոչվում է լիճ*:

6. *Անորոշ* դերանունները վարվում են գոյական և ածական անունների տեղ անորոշ, երբեմն էլ բացասական մըտքով. *իւրաքանչիւր, ամէն, միւս, ուրիշ, ոմանք, նոյն, որքան, իբրև, ոչինչ*:

Անորոշ դերանունների մեծ մասը թէ՛ գոյականաբար են վարվում և թէ ածականաբար. գոյականաբար են՛ եթէ մենակ են, ածական են՛ եթէ գոյականի հետ են*):

Իւրաքանչիւր մարդ իր տունը գնաց (ած.): *Իւրաքանչիւրը իր տունը գնաց* (գոյ.):

*) Այս է պատճառը որ ոմանք միջական անուն են անուանում այս դերանունները:

---

1. Գրեցէք մի նախադասութիւն հարցական, անձնական և ցուցական դերանուններով:

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ ստացական դերանուններով:

3. Գրեցէք մի քանի բաղադրեալ նախադասութիւններ որ յարաբերական դերանունով:

§ 47 ԴԻՄՈՐՈՇ ԿԱՄ ԴԵՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ՅՕԴԵՐ:

Դերանունների երեք արմատական տառերը—*ս, դ, ն*, (*ը*) հոլովական բառերի վրայ դրուելով՝ որոշում են նոցա և կոչվում են *դիմորոշ* կամ *դերանուանական յօդեր*:

Ս որոշում է առաջին դէմքի վերաբերեալ բանը, *դ*—երկրորդ և *ն* կամ *ը* երրորդ դէմքը:

Եթէ դերանուանական յօդը անձնական դերանուան տեղ կամ նորա հետ գործ ածուի, կոչվում է *անձնական յօդ*. ինչպէս (ես) *ուսուցիչս*, (դու) *աշակերտդ*, (ինքը) *տէրը*:

Եթէ դերանուանական յօդը ցուցական դերանուան տեղ կամ նորա հետ վարուի, ասվում է *ցուցական յօդ*: (Այս) *մարդս*, (այն) *այգին*:

Եթէ դերանուանական յօդը ստացական դերանուան տեղ կամ նորա հետ վարուի, կոչւում է ստացական յօդ. (իմ) եղբայրս, (քո) քոյրդ, (իր) ձին։

§ 48. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՕՆԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ.

Դերանունը, իբրև գոյական ու ածական անունների տեղ վարուող մասն-բանի, նախադասութեան մէջ կարող է լինել ենթակայ, յատկացուցիչ և լրացուցիչ։ Զորօրինակ. Մեղուների փեթակի մէջ կայ մի գլխաւոր մեղու, որի (յատկ.) իշխանութեան տակ են գտնվում միւս բոլոր (ած. յատկ.) մեղուները. նա (ենթ.) չէ աշխատում, այլ միայն ձու է դնում, որոնցից (լրաց.) նոր մեղուներ են ծնւում։

Այս օրինակից երևում է, որ գոյական դերանունները փոխվում են հոլովով և թւով։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ դերանունները լինին. 1) ենթակայ, 2) յատկացուցիչ և 3) լրացուցիչ։

Կրկնութիւն.— Ի՞նչ է դերանունը։ Ի՞նչպէս են կոչւում գոյականների տեղ վարուող դերանունները և ի՞նչպէս ածականների տեղ վարուողները։ Քանի՞ են բաժանվում դերանունները և որո՞նք են այդ տեսակները։ Ո՞րոնք են դերանուանական յօդերը և ի՞նչ գործողութիւն ունին։ Ի՞նչ պաշտօն են վարում դերանունները նախադասութեան մէջ.

Կարդացէք մի հատուած ձեր ընթերցարանից և ցոյց տուէք իւրաքանչիւր դերանուան և դերանուանական յօդի տեսակը։ Ցոյց տուէք թէ իւրաքանչիւր դերանուն ի՞նչ պաշտօն է վարում.

Զ. Թուական անուն։

§ 49 Ի՞ՆՉ Է ԹՈՒԱԿԱՆ ԱՆՈՒՆԸ ԵՒ ՔԱՆԻ՞ Է ԲԱԺԱՆՎՈՒՄ.

Տարին ունի տասներկու ամիս, ամիսը չորս շաբաթ և շաբաթն եօթն օր։ Առաջին օրուայ անունն է կիրակի, երկրորդինը—երկուշաբթի, եօթներորդինը—շաբաթ։

Առաջին օրինակի մէջ տասներկու ցոյց է տալիս ամիսների թիւը, չորս՝ շաբաթների թիւը. իսկ եօթն՝ օրերի թիւը։ Երկրորդ օրինակի մէջ՝ առաջին, երկրորդ, եօթներորդ, ոչ միայն օրերի թիւն են ցոյց տալիս, նաև թէ ի՞նչ կարգով հետևում են միմեանց շաբաթուան օրերը։

Այն բառերը, որոնք ցոյց են տալիս առարկաների թիւը, կոչվում են թուական անուն։ Տասներկու, չորս, եօթը, առաջին, երկրորդ, եօթներորդ, թուական անուններ են։

Առարկաները կարելի է թուել երկու նպատակով. այսինքն՝ կամ նոցա թ ի ւ ը յայտնելու կամ նոցա կ ա ր գ ը, դասը՝ ցոյց տալու համար։ Այս պատճառով թուական անունները երկուսի են բաժանվում։

1. Քանակական, որ առարկաների պարզ թիւն են ցոյց տալիս։— Տասներկու, չորս, եօթը քանակական թուական անուններ են։

2. Դասական, որ ցոյց են տալիս թէ առարկաները ի՞նչ կարգով են հետևում միմեանց։ Առաջին, երկրորդ, եօթներորդ դասական թուական անուններ են։

---

1. Համարեցէք բոլոր քանակական և դասական թուական անունները.

2. Հետևեալ հարցերի պատասխանները գրեցէք այնպէս որ

ամբողջ նախադասութիւններ կազմուին։ Թուական անունների տակը գիծ քաշեցէք։

Քանի՞ ոտք ունի ձին։—Քանի՞ աչք ունի մարդս։—Քանի՞ ամիս ունի տարին, քանի՞ շաբաթ, քանի՞ օր։—Քանի՞ տարեկան էք։—Քանի՞ ժամ կայ օրուան մէջ։—Քանի՞ րոպէ կայ ժամուան մէջ։—Քանիսի՞ն են սկսվում ձեր դասերը, քանիսի՞ն աւարտվում—Ո՞ր թուականին էք ծնուել։

§ 50. ԹՈՒԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՕՆԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ.

Թուական անունները, իբրև հասարակ ածականներ, իսկապէս միմիայն յատկացուցիչ կարող են լինել նախադասութեան մէջ. ինչպէս. *Երկու* մարդ Հայ ազգի երախտագիտութեան արժանի եղան իբրև *հինգերորդ* դարու մտաւոր շարժման պարագլուխներ. այդ *երկու* մարդիկն էին Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը։

Բայց երբ որ թուական անունը մենակ է՝ գոյականապէս է վարվում, և այն ժամանակ կարող է ենթակայի, լրացուցչի և պարագայական բառի պաշտօն վարել. ինչպէս. *Հինգը տասնի* կէսն է (ենթ. և լրաց.)։ Հայերը քրիստոնէութիւնն ընդունեցին *երեք հարիւր մէկին* (պարագ.)։

Այս օրինակներից երևում է որ գոյականապէս վարուող թուականները փոխվում են հոլովով և թւով։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ քանակական և դասական թուական անուններ լինին. 1) յատկացուցիչ, 2) ենթակայ, 3) լրացուցիչ և 4) պարագայական բառեր։

Է. Դերբայ։

§ 51. Ի՞ՆՉ Է ԴԵՐԲԱՅՆ ԵՒ ՔԱՆԻ՞ Է ԲԱԺԱՆՎՈՒՄ։

Այնպիսի զարմանալի բան իմ օրումս *չեմ տեսած*։
Տեսած բաներս շատ զարմանալի էին։
Տեսածներս շատ զարմանալի բաներ էին։

Առաջին օրինակի մէջ *չեմ տեսած* բայ է։ Երկրորդի մէջ նոյն *տեսած* բառը *բաներս* գոյականի ածական է։ Երրորդ օրինակի մէջ *տեսածներս* ենթակայ է և գոյականի պաշտօն է վարում։

Այն բառերը, որոնք գործ են ածվում իբրև բայ և միաժամայն իբրև գոյական կամ ածական անուն, կոչվում են *դերբայ*։—*Չեմ տեսած* բայ է, *տեսած* (բաներս)—ածական, իսկ *տեսածներս* գոյական։

Դերբայները չորս են. *անորոշ*, *ներկայ*, *անցեալ*, *ապառնի*։

1. *Անորոշ* դերբայը բայի անորոշ եղանակն է, որ հոլովվում է (միայն եզակի*) և յօդ ընդունում։ Մենք գիտենք որ հարկաւոր չէ *ծուլանալ* (բայ)։ Ի՞նչ օգուտ քեզ *ծուլանալուցդ* (այսինքն՝ *ծուլութիւնիցդ*)։

*) Իսկ յոգնականում միայն ուղ. կարող է վարուիլ։ Չեմ հասկանում թէ ինչի *գնալ գալերդ* կտրեցիք մեր տանից։

2. *Ներկայ* դերբայը իբրև բայ օգնական բայով է վարվում, իբրև ածական անփոփոխ է մնում, իսկ իբրև գոյական հոլովվում է և յօդ ընդունում. ինչպէս. Ես նորա մօտ *գնացողը չեմ* (փոխանակ՝ ամենևին *չեմ գնալ*)։ Երէկուան *գնացող* մարդիկը (կամ՝ երէկուան *գնացողները*) արդէն յետ դարձան։

3. *Անցեալ* դերբայը երկու է. 1. *ած.* և 2. *եղ.* Ածանցեալը իբրև բայ օգնական բայով է վարվում, իբրև ածական

անփոփոխ է մնում, իսկ իբրև գոյական հոլովվում է և յոգ ընդունում. Պատմեմ ձեզ ինչ որ տեսած ու լսած եմ։ Պատմեմ ձեզ տեսած ու լսած բաներս, կամ տեսածներս ու լսածներս։

Իսկ ել անցեալը մենակ չէ գործ ածվում, այլ միայն օգնական բայով է վարվում՝ իբրև բայ, և երբէք չէ փոխվում. Նամակը կարդացել ու պատասխանն էլ գրել եմ։

Ել անցեալի հին ձևն է եալ, որ այժմ մի քանի դէպքերում միայն վարվում է ածականաբար. լուսաւորեալ ժողովուրդ. անցեալ տարի. ունեալ մարդ. Հանգուցեալ եւ. ննջեցեալ գոյականաբար են վարվում։

4. Ապառնի դերբայը իբրև բայ օգնական բայով է վարվում, իսկ իբրև ածական գոյականի հետ՝ անփոփոխ. ինչպէս. Այս երեկոյ թատրոն եմ գնալու (բայ)։ Գիւղ գնալու օրը իմաց տուր ինձ որ միասին գնանք (ած.)։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետևեալ դերբայները գործ դրուին իբրև ածական կամ գոյական անուններ.

Լսել — լսող — լսած — լսելու։ Գնալ — գնացող — գնացած — գնացել — գնալու։ Տեսնել — տեսնող — տեսած — տեսել — տեսնելու։ Ասել — ասող — ասած — ասել — ասելու։ Խօսել — խօսող — խօսած — խօսել — խօսելու։ Իմանալ — իմացող — իմացած — իմացել իմանալու։

Ը. Նախադրութիւն։

§ 52. Ի՞ՆՉ Է ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆԸ,

Գրիգորը Յովհաննէսի հետ գնացին պարտէզ կաղնի ծառի տակը հանգստանալու օրական աշխատանքից յետոյ։

Այս օրինակի մէջ գլխաւոր առարկան է Գրիգորը Յովհաննէսի հետ. հետ բառը դրուելով Յովհաննէս բառի մօտ, որ իր վերջաւորութիւնը փոխել է, ցոյց է տալիս՝ թէ ինչ յարաբերութիւն ունին միմեանց հետ Գրիգորն ու Յովհաննէսը—միասին են. Տակը դրուելով ծառ բառի մօտ՝ ցոյց է տալիս՝ թէ Գրիգորն ու Յովհաննէսը ինչ յարաբերութիւն ունին ծառի հետ—նորա տակն են նստած. Վերջապէս յետոյ բառը ցոյց է տալիս Գրիգորի ու Յովհաննէսի և աշխատանքի մէջ եղած յարաբերութիւնը։

Այն բառերը, որոնք ցոյց են տալիս առարկաների փոխադարձ յարաբերութիւնները, կոչվում են նախադրութիւն։— Հետ, տակ, յետոյ նախադրութիւններ են։

Արդէն գիտենք (§ 26)—և օրինակից էլ երևում է- որ հոլովներն էլ նախադրութիւնների պէս ցոյց են տալիս առարկաների մէջ եղած յարաբերութիւնները, ուրեմն հոլովների և նախադրութիւնների պաշտօնը միևնոյն է, այս պատճառով նախադրութիւնը միշտ հոլով է պահանջում, և միայն այն ժամանակ նշանակութիւն ունի, երբ գոյականի հետ է։ Միևնոյն օրինակը ցոյց է տալիս որ ոչ նախադրութիւնները առանց հոլովների, և ոչ հոլովները առանց նախադրութիւնների կարող են ցոյց տալ առարկաների մէջ եղած բոլոր յարաբերութիւնները։ Հոլովները ցոյց են տալիս առհասարակ առարկաների մէջ եղած ընդհանուր յարաբերութիւնները. իսկ նախադրութիւնները նոցա մասնաւոր յարաբերութիւնները։ Այսպէս վերևի օրինակի մէջ եղած հոլովները ցոյց կը տային մեզ միայն թէ Գ ր ի գ ո ր ը գլխաւոր առարկայ է, և մնացածները երկրորդական. իսկ նախադրութիւնները բացի սորանցից ցոյց տուին թէ որտեղ է գտնվում մի առարկայ միւսների վերաբերմամբ. մ ի ա ս ի ն, մ օ տ, տ ա կ ը, յ ե տ ո յ և այլն։ Նախադրութիւնները բաւական չեն առարկաների մէջ եղած բոլոր յարաբերութիւնները բացատրելու, այս պատճառով շատ մակբայներ ու գոյական անուններ գործ են դրվում նախադրութեան մտքով. այսպէս վերևի օրինակի մէջ տ ա կ ը գոյական անուն է. յետոյ մակբայ։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետևեալ բառերը ցոյց տան. 1) այլ և այլ պարագաներ և գործ դրուին մակբայի մտքով, 2) բառերի մէջ եղած յարաբերութիւնները և գործ դրուին իբրև նախադրութիւն.

Մէջ — դուրս — ներս — մօտ — հեռու — առաջ — յետոյ — տակ — վրայ։

Կարդացէ՛ք մի քանի հատուածներ ձեր ընթերցարանից և ցոյց տուէք նախադրութիւնները։

Թ. Շաղկապ։

§ 53. Ի՞ՆՉ Է ՇԱՂԿԱՊԸ։

Պարսիկները *եւ* արաբացիք մեծամեծ հալածանքներ հանեցին հայոց դէմ, *բայց* հայերը հաստատ մնացին իրանց հաւատին։

Այդ օրինակի մէջ երկու նախադասութիւն կայ. 1) Պարսիկները և Արաբացիք մեծամեծ հալածանքներ հանեցին Հայոց դէմ. 2) Հայերը հաստատ մնացին իրանց հաւատին. *Բայց* բառը այդ նախադասութիւնները միմեանց հետ կապում է. նոյնպէս *եւ* բառը կապում է երկու ենթակաները (Պարսիկները և Արաբացիք) միմեանց հետ։

Այն բառերը, որոնք նախադասութիւնները և նախադասութեան անդամները միմեանց հետ կապում են, կոչվում են շաղկապ։—*Եւ, բայց* շաղկապներ են։

Շաղկապները կապում են. 1) անկախ նախադասութիւններ միմեանց հետ. ինչպէս. Ձկները լողում են, իսկ թռչունները թռչում են. 2) երկրորդական նախադասութիւնը գլխաւորի հետ. Մենք գիտենք որ երկիրս կլոր է. 3) միաւորեալ նախադասութեան մէջ երկու միատեսակ անդամներ, այսինքն ենթական ենթակաի հետ, ստորոգեալը ստորոգեալի հետ, և այլն. Շունն ու կատուն չորքոտանի անասուններ են։

---

1. Գրեցէ՛ք մի քանի նախադասութիւններ հետեւեալ շաղկապներով.

Եւ — կամ — որ — թէ — իսկ — բայց — եթէ — թէպէտ, բայց — թէև, այնու ամենայնիւ — եթէ, — ուրեմն — որովհետև — վասնզի։

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ շաղկապները կապեն. 1) անկախ նախադասութիւններ միմեանց հետ, 2) երկրորդական նախադասութիւնը գլխաւորի հետ և 3) միաւորեալ նախադասութեան անդամներ։

§ 54. ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

Շաղկապները իրանց ընդհանուր նշանակութեան համեմատ՝ երկուսի են բաժանվում. *զուգորդական* եւ *ներհակական*։

Զուգորդական շաղկապները այնպիսի նախադասութիւններ են կապում, որոնք մտքի կողմից իրարու համաձայն են. *եւ, ու, այլեւ, նաեւ, միանգամայն, էլ*։—Այսօր իմ բարեկամին տեսայ ու նորա հետ խօսեցայ։

Ներհակական շաղկապները այնպիսի նախադասութիւններ են կապում, որոնք մտքի կողմից համաձայն չեն, այլ ներհակ են միմեանց. *իսկ, բայց, այլ, սակայն*։—Մարդուս մարմինը մեռնում է, *իսկ* հոգին կենդանի մնում։

Քերականները ուրիշ այլ և այլ շաղկապների անուններ են տալիս. ինչպէս են՝ պատճառական (վասն զի, որովհետև). Թէական (թէ, եթէ), մակաբերական (ուրեմն, ապա ուրեմն), մեկնական (այսինքն, այն է) և այլն։ Բայց այս երկրորդական բաժանմունքները աւելորդ ծանրաբեռնութիւն ենք համարում աշակերտների համար։

Կարդացէք մի հատուած ձեր ընթերցարանից և ցոյց տուէք թէ իւրաքանչիւր շաղկապ ինչ տեսակ նախադասութիւններ է կապում։

Ժ. Ձայնարկութիւն։

§ 55. ԻՆՉ Է ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ.

Այն հնչիւններն ու բառերը, որոնք մեր հոգու կրքերն են

արտայայտում, այսինքն զարմանքը, երկիւղը, բարկութիւնը, ուրախութիւնը, ցանկութիւնը և այլն, կոչվում են ձայնարկութիւն. ինչպէս՝ ո՜հ, ա՜խ, վա՜յ, երանի՜ թէ, ափսո՜ս, մեղք որ։

Ձայնարկութիւնները ակամայ ու րոպէական զգացմունքներ լինելով՝ յաճախ ոչինչ միտք չեն բացատրում, և այսպատճառով նախադասութեան մէջ նշանաւոր տեղ չունին։

§ 56. ՓՈՓՈԽԱԿԱՆ ԵՒ ԱՆՓՈՓՈԽ ՄԱՍՈՒՆՔ-ԲԱՆԻ.

Բանի մասունքը տասն են, որոնցից վեցը փոփոխական են, չորսը անփոփոխ։

Փոփոխական	*Անփոփոխ*
1. Գոյական անուն.	1. Մակբայ.
2. Ածական անուն.	2. Նախադրութիւն.
3. Դերանուն.	3. Շաղկապ.
4. Թուական անուն.	4. Ձայնարկութիւն.
5. Բայ.	
6. Դերբայ.	

Փոփոխական մասանց-բանի փոփոխութիւններն են՝ *հոլովում* եւ *խոնարհում*։

Հոլովում են գոյական և ածական անունները, դերանունները և թուական անունները, խոնարհում են բայերը։ Հոլովում և խոնարհում ունին միանգամայն դերբայները։

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ս Տ Ո Ւ Գ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. Հնչիւն, վանկ և բառ:

§ 1. Ի՞ՆՉ Է ՀՆՉԻՒՆԸ:

Մեր միտքը ուրիշներին հաղորդելու ժամանակ՝ գործ ենք ածում բառեր. բայց որպէս զի ուրիշները մեր ասածը լսեն, պէտք է բարձր խօսենք, այսինքն բառերը ձայնով արտաբերենք կամ հնչենք:

Ուրեմն բառերը հնչիւններ են. բայց լեզուի հնչիւնները բոլորովին զանազանվում են բնութեան մէջ լսուած ամեն տեսակ հնչիւններից, որովհետև կարող են լուծուել ամենափոքրիկ մասների: Այսպէս օրինակի համար մարդ բառի մէջ խսկապէս մէկ հնչիւն է լսվում. բայց այդ հնչիւնը կարող ենք բաժանել ամենապարզ հնչիւնների. մ-ա-ր-դ:

§ 2. Ի՞ՆՉ Է ՎԱՆԿԸ:

Սենեակ բառը արտաբերվում է երկու անգամով և բաժանվում է երկու մաս. 1) *սե* 2) *նեակ:*

Բառի այն մասը, որ մէկ անգամով է արտաբերվում, կոչվում է վանկ։—*Սենեակ* բառը երկու վանկից է կազմուած. 1) սե 2) նեակ։

Մի վանկ ունեցող բառը կոչվում է *միավանկ*, երկու վանկ ունեցողը՝ *երկավանկ*, իսկ երեք կամ աւելի վանկ ունեցողը՝ *բազմավանկ*. ինչպէս՝ *մայր, զաւակ, բարեկամ, խոնարհութիւն*։

Գրեցէք 10 միավանկ, 10 երկավանկ և 10 բազմավանկ բառ։

---

§ 3. Ի՞ՆՉԻՑ ԵՆ ԿԱԶՄՎՈՒՄ ՎԱՆԿԵՐԸ։

Աշակերտ բառի մէջ առաջին վանկը *ա* մէկ հնչիւնից է բաղկացած, երկրորդը — *շա* երկու հնչիւնից, իսկ երրորդը — *կերտ* չորս հնչիւնից. *ա*, *ե* հնչիւնները առանձին առած՝ կարող են արտաբերուել, իսկ *շ*, *կ*, *ր*, *տ* հնչիւնները մենակ չեն կարող արտասանուել։

Իւրաքանչիւր վանկ բաղկացած է մէկ կամ աւելի հնչիւնից։ Այն հնչիւնները, որոնք իրանցից կարող են արտաբերուել, ասվում են *ձայնաւոր*. նոքա, որոնք իրանք իրանցից ձայն չունին ու ձայնաւորների օգնութեամբ են արտասանվում, կոչվում են *բաղաձայն*։—*Աշակերտ* բառի մէջ *ա*, *ե* ձայնաւոր են, իսկ *շ*, *կ*, *ր*, *տ* բաղաձայն։

Իւրաքանչիւր բառի մէջ որքան ձայնաւոր լինի, այնքան էլ վանկ կունենայ այն բառը։ Բայց երբեմն երկու ձայնաւոր միասին մէկ վանկ են կազմում, և այդպիսի վանկերը կոչվում են երկբարբառ։—*Համբաւ*, *անձրեւ*, *հիւթ*, *սուր*, *կեանք* բառերի մէջ *աւ*, *եւ*, *իւ*, *ու*, *եա* երկբարբառներ են։

Կարդացէք ձեր անցկացած հատուածներից մինը և բառերը վանկերի բաժանեցէք։

Ցոյց տուէք ձայնաւորները, բաղաձայններն ու երկբարբառները։

§ 4. Ի՞ՆՉ Է ԲԱՌԸ։

Ցորեն բառի *ցո* եւ *րեն* վանկերը առանձին առած ոչինչ միտք չունին, իսկ միասին — *ցորեն* կոչվում են այն հատիկները, որոնցից շինում են ալիւր և հաց։

Մէկ կամ աւելի վանկ, որ ինքն իրան մի միտք կամ նշանակութիւն ունի, կոչվում է բառ։—*Ցո*, *րեն* վանկեր են, իսկ *ցորեն* բառ։

Կարդացէք անցկացած հատուածներից մէկը և մեկնեցէք իւրաքանչիւր բառի ներքին նշանակութիւնը։

---

§ 5. ՁԱՅՆԱՒՈՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՈՒ ԿՈՐՈՒՍՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ։

Սէր բառը փոխուելով *սիրել* բառի, նորա *է* ձայնաւորն էլ փոխվում է *ի*։

Անասուն բառը փոխուելով *անասնական* բառի, նորա *ու* երկբարբառը բոլորովին անյայտացել է։

Բառերը փոխուելու ժամանակ՝ նոցա վերջին վանկի ձայնաւորներից ոմանք փոխվում են ուրիշ ձայնաւորների, երբեմն էլ բոլորովին անյայտանում են։—*Սիրել* բառի մէջ *է* փոխուել է *ի*. *անասնական* բառի մէջ *ու* անյայտացել է։

Ձայնաւորներն ու երկբարբառները հետեւեալ կանոններով են փոխվում.

1. *Է* փոխվում է *ի* ձայնաւորի, ինչպէս. հանգէս.—հանգիսաւոր, զէնք—զինաւոր։

2. *ԵԱ* երկբարբառը փոխվում է *ե* ձայնաւորի. *մատեան*—*մատենագիր*, *կեանք* - *կենդանի*։

3. ԻՒ փոխվում է ու. թիւ—թուել, հաշիւ—հաշուատետր։
4. ՈՅ փոխվում է ու. լոյս—լուսաւոր—լուսատու։
5. Ի և ՈՒ բոլորովին անհայտանում են. ճշմարիտ—ճշմարտութիւն, ռամիկ — ռամ՚կօրէն—ռամ՚կական—ջուր — ջ՚րել, գարուն—գարնանային։

Այս կանոնից խոտորում են ի, ու ձայնաւորով սկսուող միավանկներից ոմանք. իր—իրական, ուխտ—ուխտաւոր։

Իսկ ա, ե, ո, օ ձայնաւորները անփոփոխ են մնում։

Ընտանեկան լեզուի մէջ ա երբեմն անհայտանում է կամ բաղաձայների խուռնութիւնը մեղմացնելու համար ը է փոխվում. ինչպէս. շաբաթ—շաբ՚թական, քաղաք—քաղ՚քըցի. Նոյնպէս անհայտանում է երբեմն ե. ա ս ե ղ. աս՚ղաման։

---

1. Հետեւեալ բառերից մէկ կամ աւելի բառեր կազմեցէք եւ ձայնաւորները, վերևի կանոնների համաձայն, փոխեցէք կամ դուրս թողէք.

Դէզ—կէս—տեղ—տէր—օրէնք—պէսպէս։ — Սենեակ—կեանք — վայրկեան—ատեան։— Կռիւ—հովիւ—պատիւ—անիւ։— Բոյս—լոյս —գոյն—ծոյլ—համբոյր։— Սիրտ—գիծ—երկինք—երկիր — պարսիկ. —Ջուր—սուր—աշուն—տուն—կերակուր։

2. Գտէք թէ ինչ ձայնաւոր կամ երկբարբառ փոփոխուած կամ անհայտացած է հետեւեալ բառերի մէջ.

Դիտել, դիտակ, դիտանոց. այսպիսի, այնպիսի, որպիսութիւն. կենդանի, կենսատու, կենարար. ատենաբան, ատենակալ, ատենադպիր. Թուաբան, Թուանշան. կռուել, կռուարար, կռուասէր. յունագէտ, յունական, յունարէն. տաճկերէն, տաճկական, տաճկաբան. գրել, գրաւոր, գրագէտ, գրական. տխրել, տխրութիւն. քնել, քնաթաթախ։

Բ. Բառերի կազմութիւնը և նշանակութիւնը։

§ 6. ԲԱՌԵՐԻ ԱՐՄԱՏԸ։

Շարժ-ուել, շարժ-ում, շարժ-ական, շարժ-ողութիւն բառերի մէջ շարժ վանկը մնում է անփոփոխ։

Բառի այն մասը որ անփոփոխ է մնում և որի մէջ պարունակվում է նորա բուն նշանակութիւնը, կոչվում է արմատ։ Շարժ է արմատ շարժել, շարժում, շարժական, շարժողութիւն բառերի։

Շատ անգամ ներդաշնակութեան համար արմատի ձայնաւորը կամ երկբարբառը փոխվում կամ դուրս է ընկնում։ Այսպէս՝ վերաւոր, յուսալի, լծել բառերի արմատներն են վէր, յոյս, լուծ։

Գտէք հետեւեալ բառերի արմատները.

Գովեստ, գովելի, գովական. տեսնել, տեսիլ, տեսուչ, տեսաբան. փախչել, փախուստ, փախստական. մեռնիլ, մեռել, մեռած, մեռելութիւն. պաշտօն, պաշտպան, պաշտել. գիտենալ, գիտուն, գիտութիւն. խմել, խման, խմիչք. բռնի, բռնաւոր, բռնել. ծընունդ, ծնող, ծնել. գթութիւն, գթալ, գթած. ազնուական, ազնըւութիւն, ազնուապետութիւն։

§ 7. ՆԱԽԱՏԻՊ ԵՒ ԱԾԱՆՑԵԱԼ ԲԱՌԵՐ.

Վտանգ արմատական բառ է։ Վտանգ-ա-ւոր կազմուած է վտանգ արմատական բառից, վերջումը ւոր մասնիկն ընդունելով։ Անվտանգ կազմուած է նոյն վտանգ արմատականից, սկըզբումը ան մասնիկն առնելով։

Արմատական բառը կոչվում է նախատիպ, այսինքն այնպիսի բառ որ իւր սկզբնական ձեւը կամ կերպարանքը

անփոփոխ է պահել։—Վտանգ նախատիպ բառ է։

Իսկ եթէ նախատիպ բառը վերջից կամ սկզբից այլ և այլ մասնիկներ է ընդունում, ասվում է ածանցեալ։—Վտանգաւոր, ան-վտանգ ածանցեալ բառեր են։

Ածանցեալ բառերի կազմութեան համար հետեւեալը պէտք է իմանալ. 1) Եթէ մասնիկը բաղաձայնով է սկսվում, ա-ով կապվում է բառի հետ. իսկ եթէ ձայնաւորով, ուղղակի կպչում է բառին, ինչպէս. աշխարհ-ա-կան, հանճար-եղ։ 2) Եթէ բառը—ի ձայնաւորով վերջանում է,—ի սովորաբար փոխվում է-ե, երբեմն էլ բաց է թողվում, ինչպէս տար-ե-կան, հոգ-ե-ւոր, Թեր՚ատ. (փոխանակ՝ տարիական. Թեր-ի-ատ)։ Խտորում են որդ-ի-ական և բոլոր ի-ով մասնիկները. մ-ի-ակ, թ-ի-ակ, ձ-իա-ւոր։ 3) Ք տառը, եթէ միայն արմատական չէ, ածանցման մէջ դուրս է ընկնում. ինչպէս (փառ-ք) փառաւոր, (մեղ-ք) մեղաւոր, անմեղ, (խել-ք) խելացի։ Զարտուղում են անշնոր-ք, անխել-ք, մեղ-քանալ և այն բոլոր բառերը, որոնց մէջ ք-արմատական է, քաղաք-ական, Թր-ք-ային։ 4) Կորստման և փոփոխման կանոնը ճշդութեամբ պահվում է։

Աշխատեցէք ածանցեալ բառեր կազմել հետեւեալ նախատիպ բառերից.

Աշխարհ — գաւառ — նահանգ — թագ — զէնք — ահ — վախ — ուժ — հոգի — որդի — եղբայր — մայր — հայր — հիւսիս — արեւելք — պարտէզ — դուռ — նաւ — Թռչուն — Շուշան — տեսք — գիրք։

§ 8. ՊԱՐԶ ԵՒ ԲԱՐԴ ԲԱՌԵՐ.

Հաւատարիմ բարեկամը թանկագին գանձ է մարդուս համար։

Բարեկամ բառը կազմուած է երկու նշանակութիւն ունեցող բառերից ու երկու հասկացողութիւն է պարունակում. *բարի եւ կամ*, այսինքն *բարութիւն կամեցող*։ Գանձ բառը ոչ մի բառի հետ կազմուած չէ.

Այն բառը որ ուրիշ բառի հետ բաղադրուած չէ,

կոչվում է *պարզ*։ Այն բառը որ երկու կամ աւելի նշանական բառից է կազմուած, կոչվում է *բարդ*։—Գանձ պարզ բառ է, *բարեկամ*—բարդ։

Բարդ բառերի կազմութեան մէջ միեւնոյն կանոններն են պահվում որ ածանցեալ բառերի համար յիշեցինք։ Միայն նկատելու է, որ 1. Երբեմն երկու բառ բարդվում են միմեանց հետ առանց ա-ի, ինչպէս ձեռնտու, արիւն-լուայ։ 2. Երբեմն պատահում է ա ի տեղ ու շաղկապ գործ դնել. աղ—ու—հաց, կեր-ու-խում։ 3. Ու շաղկապով բարդուած բառերի մէջ կորստման կանոնը չէ պահվում. ցի-բուցան թ-ու-քումար։

Աշխատեցէք բարդ բառեր կազմել հետեւեալ բառերից.

Բարի, սիրտ — սառն, սիրտ — զօրք, գլուխ — զօրք, պետ — փիղ, ոսկր—երկիր, գունդ—քախցր, ձայն—բարձր, հասակ—փոքր, հասակ—անց, դարձ—վար, ցան—գիրք, տուն—ժամ, գիրք։

§ 9. ԲԱՌԵՐԻ ԲՈՒՆ ԵՒ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ.

Սուր դանակ—սուր միտք։

Ի՞նչպէս ենք անուանում այն դանակը որ լաւ է կտրում.— *Սուր* դանակ. Ի՞նչպէս ենք անուանում այն աշակերտին, որ շուտ ըմբռնում և հասկանում է վարժապետի ասածը. *Սուր* միտք ունեցող կամ *սրամիտ* աշակերտ։ Ի՞նչպիսի տարբերութիւն է ցոյց տալիս *սուր* բառը, նիւթական թէ վերացական։ Ուրեմն *սուր դանակ* խօսքի մէջ *սուր* բառը իր բուն կամ սեպհական մտքով է գործ դրուած. իսկ *սուր միտք* խօսքի մէջ նոյն *սուր* բառը գոյականի նշանակութիւնը փոխել է և վերացական առարկային նիւթական առարկայի կերպարանք է տուել, որպէս զի աւելի լաւ հասկացուի։

Լեզուի մէջ բառերը գործ են դրվում իրանց *բուն* կամ *սեպհական* նշանակութեամբ և *փոխաբերական* մտքով։— *Սուր դանակ* խօսքի մէջ *սուր* բառը սեպհական նշանակութեամբ է գործ ածուած, *Սուր միտք* խօսքի մէջ—փոխաբերական մտքով։

Փոխաբերութիւնը առաջ է եկած լեզուի աղքատութիւնից. Լեզուի մէջ աւելի իմաստ կայ քան բառ, և այս թերութիւնները լրացնելու համար. 1. Նիւթական առարկաների յատկութիւններն ընծայում են վերացական առարկաներին. ինչպէս ծառի պտուղ, աշխատութեան պտուղ. 2. Շնչաւոր առարկաների յատկութիւններն ու գործողութիւնները տալիս են անշունչ առարկաներին և անշունչները շնչաւորներին. այսպէս. Երկինքը տխրում է։ Լուսինն ու աստղերը տեսնում են իրանց պատկերը ջրի մէջ։ Արեւս խաւարեցաւ։ Կեանքս թառամեցաւ։

Հետևեալ օրինակների՞ մէջ ցոյց տուէք սեպհական և փոխաբերական մտքով գործ դրուած բառերը.

Բութ կամ գուլ կացին. Բութ միտք. Սուր կացին. Սուր յիշողութիւն։ Վառ կրակ։ Վառ երևակայութիւն։ Պտուղ իմաստութեան։ Պտուղ գիտութեան։ Վարդագոյն ծաղիկ. Վարդագոյն կերպարանք։ Լուսաւոր լապտեր. Լուսաւոր միտք։ Մարդիկ քնում են. Քնում են երկինքն ու երկիրը։ Ծովի ալիքները կատաղում են. Շունը կատաղում է։ Անասունը բաց է անում իւր բերանը. Անդունդը բաց է անում իւր բերանը։ Կատուն լափում է կերակուրի մնացորդը. Կրակը ամեն բան է լափում։ Սարը բարձրացնում է իւր գլուխը։

§ 10 ՆՈՅՆԱՆՇԱՆ ԲԱՌԵՐ։

Ի՞նչպէս ենք անուանում այն մարդուն, որ ծածուկ և առանց մեր կամքի յափշտակում, տանում է մի բան մեզանից, որ իրան չէ պատկանում—Գող։ Ի՞նչպէս ենք անուանում այն մարդուն, որ գիշերով մտնում է մեր տունը, կամ ճանապարհին պատահում է մեզ, մեր ունեցածը խլում է և երբ ընդդիմութիւն ցոյց տանք, պատրաստ է մինչև անգամ զրկել մեզ կեանքից.—Աւազակ։ Ի՞նչ նմանութիւն կայ գողի ու աւազակի մէջ։—Երկուսն էլ առանց մեր կամքի յափշտակում են մեր ստացուածքը։ Ի՞նչ զանազանութիւն կայ նոցա մէջ. Գողը թաքուն անում է իր գողութիւնը, այնպէս որ մենք չիմանանք. իսկ աւազակը յայտնի, համարձակ յարձակվում է մեզ վրայ և մեր կեանքին սպառնում.

Ինչպէս որ միևնոյն բառը այլ և այլ մտքով գործ է ածվում, այնպէս էլ երբեմն երկու կամ աւելի բառեր միևնոյն նշանակութիւնն ունին։ Այս տեսակ բառերը կոչվում են նոյնանշան։—Գող և աւազակ բառերը նոյնանշան են։

Նոյնանշան բառերը միևնոյն ժամանակ թէ նման են միմեանց և թէ զանազանվում են միմեանցից։

Նոյնանշան բառերի մէջ կայ որ այլ և այլ մտքով կարող են վարուիլ, կայ էլ որ միայն մէկ մտքով. այսպէս՝ ասում ենք բարի կամ լաւ տղայ, չար կամ վատ մարդ. բայց չենք կարող ասել բարի թուղթ, չար գրիչ, այլ լաւ թուղթ, վատ գրիչ։ Երբեմն մի բառի վրայ իւր նոյնանշանը աւելանում է միայն զարդարանքի համար. ինչպէս, յոգնած, դադրած. շէնք, շնորհք. հալվել, մաշվել, կամ հալ ու մաշ լինել։

Աշխատեցէք հետևեալ բառերի նոյնանշանները գտնել.

Վարժապետ — աշակերտ —միրգ—անասուն —տունկ — ջերմ—տխուր— տխրել — քանդել — ջնջել —քննել—վերջացնել—գծալ—բանալ։

Գ. Ուղղագրութեան ընդհանուր կանոնները։

§ 11 ԳՐԵՐԸ ԵՒ ՆՈՑԱ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ ՀՆՉԻՒՆՆԵՐԻՑ։

Լեզուի իւրաքանչիւր հնչիւնը կոչվում է տառ, որ երբ թղթի վրայ ձևակերպենք, գիր է ասվում։ Գրերը առանձին պայմանական նշաններ են, որ տեսնելով ենք որոշում միմեանցից, իսկ հնչիւնները՝ լսելով։

Հայերէն լեզուն երեսունութ գիր ունի, որոնցից ութը ձայնաւոր. ա, ե, է, ը, ի, ո, ւ,—իսկ երեսունը բաղաձայն. բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ։

յ—տառը երբեմն ձայնաւոր է, երբեմն բաղաձայն և երբեմն էլ անձայն. ինչպէս մ ա-յ-ր, յաջողութիւն, կաթսա-յ:

Ուղղագրութեան համար գրերը պէտք է զանազանել հնչիւններից, որովհետև հնչիւններն ու գրերը միշտ իրարու նման չեն. արտաբերութեամբ շատ անգամ մէկ հնչիւն ուրիշի է փոխվում, իսկ ուղղագրութիւնը սովորաբար անփոփոխ է պահում բառերի արմատական հնչիւնները: Այսպէս գրում ենք՝ յարմար. զաւակ. մարդ, որդի, եղբայր, բայց կարդում ենք՝ հարմար, զավակ, մարթ, վօրթի եխպայր:

§ 12. ՁԱՅՆԱՒՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ:

Ձայնաւորների արտաբերութեան և ուղղագրութեան համար հետևեալ կանոնները իմանալու է.

1. Ա և *ո* ձայնաւորները բառերի վերջը մենակ չեն մնում, այլ միշտ անձայն *յ* են ընդունում, ինչպէս վկայ, քահանայ, կը մնայ, գլխոյ, հաճոյ: Խոտորում են յատուկ անունները. Յուդա, Ամերիկա. դերանունները. *սա*, *նորա*. *քո*, և բայերի հրամայականները. *ասա*, *կարդա*:

2. Ե և *օ* ձայնաւորները բառի վերջը չեն մնում, այլ *ե* փոխվում է *է*. զորօրինակ. կը գրեմ, կը գրես, կը գրէ: Իսկ օ-ից յետոյ միայն բաղաձայն կարող է լինել. օր, տօն, դրօշ:

Միայն օտար բառերի վերջում կարող է օ մենակ մնալ. Մոռօ, Կռան-օ, Սան օ. Թէև այս դէպքի մէջ էլ աւելի ընտիր է համարվում օ փոխել ոյ, մանաւանդ հոլովներում. Ռուս-ոյ Մօռոյ-ի. Գ-ոյ-ից գր-ոյ-ով:

3. Ե և *ո* ձայնաւորները բառերի սկիզբը արտաբերվում են իբրև *իէ* և *ուօ*, *երկիր*, *ոսպ*. բացի *ով*, *ովկիանոս* և առհասարակ օտար բառերը: Իսկ բառերի մէջ

ե և *ո* արտաբերվում են կարճ *է* և *օ*. ձմեռ, Աւետիք, նորոգել:

Առաջին դէպքում ե-ի ուղղագրութիւնը արտաբերութիւնից պարզ երևում է, իսկ երկրորդ դէպքում բառի քերականական կազմութիւնից: Այսպէս ս-ե-ռ եւ ս-է-ր նմանաձայն բառերից կազմելով ս-ե-րունդ և ս-ի-րելի բառերը, կը տեսնենք որ առաջինը ե-ով գրելու է, իսկ երկրորդը է-ով: (Ո-ի ուղղագրութիւնը միայն երկարատև կրթութեամբ կարելի է իմանալ):

4. Ե գիրը իրանից յետոյ միայն *ա* և *ւ* ձայնաւոր կարող է ընդունել և *եա*, *եւ* երկբարբառներ կազմել. մանեակ, թեւաւոր:

Մէկ երկու տեղ պատահում է ե-ից յետոյ օ-*եօ*. *եօ*թը, կարծ*եօ*ք, արդ*եօ*ք:

5. Ը ձայնաւորը միայն բազմավանկ բառերի սկիզբը կարող է լինել. *ը*նտիր, *ը*նդունակ, *ը*մբռնել, երբեմն և բառի վերջը, ուր *ն* նոր լեզուի մէջ փոխուած է *ը*. մարդը (փոխանակ մարդ*ն*), անձը, դասը:

Բառի առաջին վանկի մէջ, ուր երկու կամ երեք բաղաձայն է պատահում, առաջին բաղաձայնից յետոյ կարճ *ը* է լսվում, բայց չէ գրվում. հնազանդ (կարդա՝ հընազանդ), գլուխ, բռնել, գրպարտութիւն:

Բառի սկիզբը եթէ *ս*, *զ*, *շ* բաղաձայններից յետոյ *պ*, *կ*, *տ*, *ք*, *գ* պատահի, կարճ *ը* է լսվում, բայց նոյնպէս չէ գրվում. ինչպէս. սպանել (կարդա՝ ըսպանել), սկիհ, զբաղմունք, շտապել:

6. Յ գրից առաջ միայն *ա* և *ո* ձայնաւորները կարող են լինել և *այ*, *ոյ* երկբարբառները կազմել, որոնք բառերի մէջ կարդացվում են իբրև կարճ *ի*. հայր, եղբայր, երկայն, լոյս, մակոյկ: Իսկ բառերի վերջը, ինչպէս ասացինք, *յ* անձայն է, բացի մի քանի միավանկ բառերից. հայ, վայ, խոյ:

7. Ի գրից առաջ կարող են միայն ա, ե, ի, ո, ձայնաւորները գալ և աւ, եւ, իւ, ու երկբարբառները կազմել. թագաւոր, արեւելք, հիւսիս, ժողովուրդ։

Իւ և ու երկբարբառների արտաբերութեան համար հետևեալը գիտելու է. Իւ երկբարբառը ի ու է արտաբերվում, եթէ իրանից յետոյ բաղաձայն ունի, և իվ եթէ բաղաձայն չունի. Ինչպէս հիւր, իւրաքանչ-իւր. հաշ-իւ, հով-իւ։ Ու երկբարբառը, եթէ իրանից յետոյ ոչինչ տառ կամ բաղաձայն չունենայ, սովորական արտաբերութիւնը պահում է, իսկ եթէ ձայնաւոր, համարեա՛ վ-ի ձայն է ընդունում. Թթ-ուե-լ, լե զ-ու, լե զ-ու-ագէտ.

Հետևեալ բառերի մէջ տառասխալները ուղղեցէ՛ք.

Շղթա — ընծա — քայանա — հրէա — հըսկա — հետո — նայ — սոցայ — գնայ, — հաւատայ — Եւրոպայ — գնում ե — բընում ե — Ռուսոփ — Բօրդօյից — տերունական — փոխարէն — զէնք — էրկինք — էրկիր — անէծակ — որդէակ — արդիօք — սընունդ — սընընդարար — ծընունդ — ծընընդական — հըլու — տղայ — թըթու — թըշնամի — ըսպիտակ — ըզգայունը — զբօսանք — ընտեմարան - այխ — ծայիր — ձառագայթ — մայիր — քուիր — լուիս — ողջյն — հանձնել — հառաջաքան — հետագեմ — ագռավ — հավ — հավասար — թեթեվ — արեվ — թագավոր — կրօնավոր — թիվ — հովիվ — հիվանդ — մեղվի խայթոց — հեռվան — հաշիվը։

§ 13. ԲԱՂԱՁԱՅՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ.

Բաղաձայների ուղղագրութեան վրայ նոյնպէս մէկ երկու գիտելիք կայ։

1. Վ բաղաձայնը միայն բառերի սկիզբը կարող է գրուիլ, իսկ բառերի մէջ միայն ո ձայնաւորներից յետոյ. (ուրիշ ամէն տեղ ւ կամ ու է գրվում, ուր վ—ի ձայն է լսվում.) Վարժ, վերին, ժողովել, խորոված։

Զարտուղում են բարդ ու ածանցեալ բառերը, որոնց մէջ վ պատահմամբ կարող է ուրիշ ձայնաւորներից և

նոյն իսկ բաղաձայնից յետոյ գալ. Նաւավար (նաւ և վարել բառերից), հոգեվարք, անվաւեր։ Նոյնպէս սովորութիւն եղած է բայերի մէջ գրել հաշվում էին, կավում էին, ու երկբարբառը չկրկնելու համար։ Բայց գոյականների մէջ սովորաբար պահվում է ու. ազնուութիւն, ձեռնտուութիւն։

2. Ր տառով բառ չէ սկսվում հայերէն, այլ գրվում է հր. հրեշտակ, հրապարակ։

Զարտուղվում են՝ Րաբունի, Րաֆէ օտարազգի բառերը։

3. Ր գրից յետոյ, եթէ Ն պատահի, գրվում է միշտ ռն, թէ հայ և թէ օտար բառերում. առնել, Փառնակ, Կոռնելիոս*։

Զարտուղվում են բարդ ու ածանցեալ բառերը և հոլովները, որոնց մէջ ր-ից յետոյ պատահմամբ ն է գալիս. վերնատուն (վերին տուն), գարնանային, ընկերներ։

* Այս է պատճառը որ ամառ, ձմեռ, դուռ, ձեռ և ուրիշ սոյն նման բառերի մէջ ռ է գրվում, որ ն արմատական տառը դուրս է ընկել. հին ժամանակ ասում էին՝ ձմեռն, ամառն, ձեռն, բեռն։

4. Ռ տառով բառ չէ սկսվում հայերէն, այլ գրվում է հռ, մինչև անգամ օտար բառերի մէջ. հռչակաւոր, Հռոմ։ Բացի ռամիկ և մի քանի օտարազգի բառեր. ռաբբի, Ռուբէն, Ռոբովամ։

5. Բ. պ. փ. շրթնաձայներից առաջ պատահում է երբեմն ն տառը մ-ի փոխել. ամբաւ (փոխանակ անբաւ), ամփոփ, ուսմամբ։

6. Հայերէն լեզուի մէջ միևնոյն գիրը չէ կրկնվում, թէ ձայնաւոր լինի և թէ բաղաձայն։ Մինչև անգամ օտար անունների մէջ կրկնուած բաղաձայները հայերէն

մէկ տառով են գրվում. ինչպէս. Թաղէոս (փոխանակ Թաղղէոս), Աբաս, Թեսաղիա։

Միայն պատահմամբ կարող են երկու նոյնահնչիւն տառ միասին գրուել. գննել (զնին արմատից), աններելի, խրատտու (խրատ տալ), երրորդ, ամաններ։

Հետևեալ բառերի մէջ ուղղագրութեան սխալները ուղղեցէք.

Իարգան—ւարժապետ—ւարդապետ—զօրաւոր—օրաւար—կառաւար—անւարձ—բրնել—դարնալ—դառնանամուտ—ամարնամուտ—բերնակիր—Զմւռնիա—Ռոդոս—Ռիփսիմէ—Ռոմայեցի—անբիծ—նեղութեամբ—քաջութեամբ—Ռուսաստան—չորորդ—փթել—անման, անախանձ.

§ 14. ՏՈՂԱԴԱՐՁԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ.

Բառերը մէկ տողից միւսը փոխադրելու կանոնը կոչվում է *տողադարձ*։

Տողադարձի կանոնները հիմնվում են բառերի վանկ առ վանկ բաժանուելու վրայ։ Այս հիման վրայ՝

1. Միավանկ բառերը չեն կարող մէկ տողից միւս տողը փոխադրուել։ Այսպէս անբաժան են՝ *մարդ, սիրտ, քար, ծառ*։

2. Երկբարբառները նոյնպէս չեն բաժանվում, որովհետև մէկ վանկ են կազմում. *տուն, սիւն, եղ—բայր, գու—նաւ—որ, հայ—ե—րէն*։

3. Երկու ձայնաւորներից մինը առաջին տողի վերջում և միւսը յաջորդի սկզբումն է գրվում. *է—ակ, դի—ակ, տի—եզերք*։

4. Մի բաղաձայնը բառի մէջ միշտ փոխադրվում է. *բա—րի, ծա—ղիկ, գե—ղե—ցիկ*։

5. Երկու բաղաձայներից մինը առաջին տողի ծայրը, միւսը յաջորդի սկիզբն է գրվում. *եր-կիր, պատ—կեր, հանգիստ*։

6. Եթէ բառի մէջ երեք բաղաձայն պատահի, միայն վերջինը անցնում է յաջորդ տողը. *թարգ-ման, պաշտ-պան, քաղց-րութիւն*։

7. Եթէ բառի մէջ երկու—երեք բաղաձայնի մօտ լըսվում է ը, տողադարձի մէջ ը գիրը ներգործութեամբ գըրվում է, թէ տողի սկիզբը լինի և թէ վերջը. ինչպէս. *կը—լուխ, գըր—կանք, բըռ—նել, ծըր—տընջել, մը—կըրտել*։

8. Բառերը մէկ տողից միւսը փոխադրելու ժամանակ կապվում են այս նշանով (-), որ կոչվում է *ենթամնայ* և գրվում է տողի վերջը. *սե-ղան, տախ-տակ*։

Հետևեալ բառերը բաժանեցէք վերևի կանոնների համաձայն։

Ծով—ցամաք—ծեր—ժամ—հայ—հայեր—աղայ—ձայն—ձայնաւոր—լուսաւոր—բարեկամ—ձիւն—ձիւնապատ—ուտել—խմել—սովորել—գրկել—միաբան—որդիական—կը խօսէի—եթէ աշխատէին—ժամանակ—խորովել—խռովել—դառնալ—արդարութիւն—մասնակից—թշնամի—ընկզմել։

§ 15. ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆ.

Գրութեան, ինչպէս նաև տպագրութեան մէջ, շատ անգամ պատահում է բառի մէկ մասը միայն գրել, և այս կոչվում է համառօտագրութիւն։ Օրօրինակ. գոյ. ան. (գոյական անուն), հարց. նախադ. (հարցական նախադասութիւն)։

Համառօտագրութեան նշանն է մի պարզ կէտ (.), որ դրվում է համառօտուած բառի մօտ, ինչպէս վերևը ցոյց տուինք։

Համառօտագրութեան համար բաւական է որ բառի առաջին մասը բաղաձայնով վերջանայ, կամ միայն էական տառերը նշանակուին, իսկ ձայնաւորներն ու այլ և այլ վերջաւորութիւնները դուրս թողուին. ինչպէս *Յովհ. Մանդ.* (Յովհան Մանդակունի) *Զաք. կաթղ.* (Զաքարիա կաթողիկոս). *գրբր.* (գրաբար)։

Կան բառեր, որոնց մէջ բաւական է միայն առաջին տառը գրել. ինչպէս՝ Պ. (պարոն), Տ. (տիկին)։ Նոյնպէս *առաջին, երկրորդ* և այլն ասելու համար՝ գործ են ածվում թուանշանները կամ գրերը. գլուխ Ա. Լևոն Զ.

Համառօտեցէք հետևեալ բառերը.

Եզակի — յոգնակի — ածական անուն — մակբայ — աշխարհաբար — Ներսէս Շնորհալի — Ներսէս Լամբրոնացի — Մովսէս Խորենացի — Ղազար Փարպեցի — Յովհաննէս Կաթողիկոս — Տիգրան Երկրորդ — Արտաշէս Երրորդ — գիրք տասներորդ — գլուխ քսաներկուերորդ։

§ 16. ԳԼՈՒԽ ԵՒ ՄԱՆՐ ՏԱՌԵՐ.

Լեզուի գրերը երկու տեսակ են. ԳԼՈՒԽ կամ *մեծ* տառեր և 2. *մանր* կամ փոքր տառեր. Ա, ա, Բ, բ, և այլն։

Գլխատառով սկսում են՝

1. Իւրաքանչիւր նոր խօսքի առաջին բառը։ Օրինակ. «Հինգերորդ դարու Հայերը քաջութեամբ կռուեցան Պարսից դէմ ազգի անկախութեան համար»։

2. Ոտանաւորների մէջ իւրաքանչիւր տողի առաջին բառը։ Օրինակ.

Լեռնագագաթները
Հանգստանում են,
Ծառերի ճիւղերը
Բնաւ շարժվում չեն.
Անտառում թռչնիկը
Չէ հանում ծպտուն,
Կաց. կը հանգստանաս
Դու ևս խսկոյն։

3. Յատուկ անունները. Սահակ Պարթև, Արա Գեղեցիկ, Երասխ, Արագած, Էջմիածին և այլն։

4. Սրբազան անունները. ինչպէս նաև պատուանունները և տիտղոսները. Աստուած, Արարիչ, Փրկիչ, Պատրիարք, Կաթողիկոս, Վեհափառ Տէր, Վսեմափայլ Կոմս և այլն։

5. Գրուածների անունները. զորօրինակ, Վէրք Հայաստանի (Խաչատուր Աբովեանի), Բլբուլ Աւարայրի (Նահապետի), Պատմութիւն Վարդանանց (Եղիշէի)։

Գ. Գոյական անունների կազմութիւնը։

§ 17. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ.

Հայերէն լեզուում արմատական գոյական անուններ շատ քիչ են. այսպէս են *տուն, հող, միրգ, սիրտ, մարդ* նիւթականները և *գործ, խաղ, ծեծ, ողբ, զէն* վերացականները։ Մնացած գոյականների մեծ մասը կազմվում են՝

1. Ածական անուններից. *լայնք, դեղնուց, սպիտակուց, մեծութիւն, օգտակարութիւն*։

2. Բայերի արմատներից և բայերից. *ծալք, ընրք, գրութիւն, աշխատանք, բանալի, խաղալիկ*:

3. Գոյական անուններից. *ձեռնոց, հիւրանոց, Թագուհի, Պարսկաստան*:

4. Թուական անուններից. *միութիւն, առաջնութիւն, հինգանոց, տասանոց*:

5. Դերանուններից. *նոյնութիւն*:

§ 18. ՆԻՒԹԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԱԾԱԿԱՆ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. Արուեստ կամ պաշտօն ցոյց տուող գոյական անունները կազմվում են *որդ* և *պան* ածանցական վերջաւորութիւններով. *որսորդ, պարտիզպան*:

2. Գործիք ցոյց տուող անունները կազմվում են *ան, ոց, նոց* մասնիկներով. *գութան, սղոց, մատնոց*:

3. Տեղ ցոյց տուող գոյականները, ուր մի որ և իցէ բան կատարվում կամ գտնվում է, կազմվում են *ոց, նոց, րան, ստան* մասնիկներով, *դպրոց, աղքատանոց, ճեմարան, Հայաստան, բուրաստան*:

Ստան մասնիկը գործ է ածվում մանաւորապէս հին երկրների համար և իա նոր երկրների համար. Յունաստան, Պարսկաստան, Ռուսաստան կամ Ռուս-իա, Գերման-իա, Անգլ-իա.

4. Հայրենիք ու ծագում ցոյց տուող անունները կազմվում են *ցի, ի, կան* մասնիկներով. *երևանցի, քաղաքացի, պարսիկ, գիւղական, ռամիկ, ազնուական*:

5. Իգական գոյականները կազմվում են արականներից *ուհի* վերջաւորութեամբ. *Թագուհի, Վարդուհի*:

6. Նուազական և փաղաքշական անունները կազմվում են *ակ* և *իկ* մասնիկներով. *տնակ, որդեակ, Թռչնիկ, Շուշանիկ*:

1. Հետևեալ գոյ. ու ած. անուններից և բայերից կազմեցէք արուեստ կամ պաշտօն ցոյց տուող գոյականներ.

Դուռ—ճանապարհ—այգի—միջին—առաջին—ուղտ—ձի—բանտ—պահել—բաժանել:

2. Հետևեալ բառերից ու գոյականներից կազմեցէք գործիք ցոյց տուող անուններ.

Տափել—կտրել—քերել հաջել—քշել—կապել—խթել—ջնջել—ձեռ—գոգ—ակ:

3. Հետևեալ գոյականներից և բայերից կազմեցէք տեղ ցոյց տուող անուններ:

Ծաղիկ—ձմեռ—ամառ—որբ—հիւր—ժողովուրդ—ուսումն—բնակել—ջնջել—վարժել—վառել—Պարսիկ—Տաճիկ—կոյս:

4. Հետևեալ գոյականներից կազմեցէք հայրենիք ու ծագում ցոյց տուող անուններ.

Աշտարակ—Անի—Վան—Թիֆլիզ—Վաղարշապատ—Վեննա—Փարիզ—Անգլիա—Գերմանիա—լեառն—դաշտ—կղզի:

5. Հետևեալ արական գոյականներից իգական անուններ կազմեցէք:

Իշխան—կայսր—կոմս—դուքս—քուրմ—աշակերտ, Տիգրան:

6. Հետևեալ գոյականներից կազմեցէք նուազական ու փաղաքշական անուններ.

Նաւ—հայր—մայր—քոյր—թաթ—դրօշ—Հայկ:

§ 19. ՎԵՐԱՑԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԱԾԱՆՑԱԿԱՆ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. Վերացական գոյական անունները, եթէ որպիսութիւն են ցոյց տալիս, կազմվում են որակական ածականներից *ութիւն* մասնիկով. *մաքրութիւն, դառնութիւն, ուրախութիւն*:

2. Վերացական գոյականները, եթէ գործողութիւն և դրութիւն են ցոյց տալիս, կազմվում են բայերից զանազան մասնիկներով, որոնց վրայ հայերէն լեզուի յատկութեամբ շատ անգամ աւելանում է ք տառը: Այսպէս պատահում է.

1) Բայի արմատի վրայ լոկ ք. տեսք, դիրք, ելք։ Կամ անցեալ կատարեալի վրայ. գնացք, լուացք։

2) Ած և ուած մասնիկներից վերջինի վրայ. կոտրուած, ճլպուած, գրուած կամ գրուածք, նայուածք։

3) Լի վերջով բայածականների վրայ ք կամ բայի արմատի վրայ իք. հագնելիք, ուտելիք, կարծիք։

4. Ան և մանաւանդ անք. կարկատան, տանջանք, պարծանք։

5) Ում մասնիկի վրայ, որ այն ժամանակ փոխվում է մունք յոգնական ձևի. խաւարում, ուսում կամ ուսմունք, մտածմունք։

Իսկ ութիւն, ունդ, ուստ, ոց մասնիկները ք չեն առնում. սովորութիւն, սնունդ, խառնուրդ, կորուստ, խըշխշոց։

Բայերից առաջ եկած գոյական անունները կոչվում են բայանուն, որովհետև բայի միտք ունին. Օտարի խօսուածքը նշանակում է օտարի խօսիլը։

---

1. Հետևեալ ածականներից կազմեցէք վերացական որպիսութիւն ցոյց տուող գոյականներ։

Առողջ—հիւանդ—առաքինի—կարմիր—սպիտակ—հարուստ—աղքատ—բարի—գեղեցիկ—խոր—լայն—երկայն—ծանր—թեթև։

2. Հետևեալ բայերից կազմեցէք վերացական գործողութիւն ու դրութիւն ցոյց տուող գոյականներ։

Մտնել—խնդրել—թռչել—կտրել—խօսել—կենալ—չարչարել—աղաչել—պաղատել—զարմանալ—պարծենալ—դրկել—հալածել—բամբասել—մխիթարել—ուտել—սպառնալ—հարցնել—համոզել փարուել—զգալ—օծել—քննել—մատնել—տեսնել—ձանձրանալ—ծնել—ժողովել—փախչել—ապրել—դողդողալ—թրխթրխկալ—փսփսալ—կռկռալ։

§ 20 ԲԱՐԴ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ։

Բարդ գոյականների մէջ երկրորդ բառը միշտ գլխաւոր տեղն է բռնում. իսկ առաջինը կախում ունի նորանից և լինում է՝

1. Ցատկացուցիչ, երբ գոյականը գոյականի հետ է բարդվում. ինչպէս. երկնակամար (երկնքի կամար)։

2. Լրացուցիչ, երբ գոյականը բայի արմատի հետ է բարդվում. ինչպէս. ձկնորս (նա որ ձուկ է որսում կամ պարզ՝ ձուկ որսող)։

Այս տեսակ գոյականները շատ անգամ ածականաբար են վարվում։

Պատահում է երբեմն որ երկու գոյականները միմեանցից անկախ են, ինչպէս. ազգատոհմ (ազգ և տոհմ), թըռչնաճանճ (թռչուն և ճանճ)։ Այսպէս են մանաւանդ ու շաղկապով բարդուածները. թուքումուր, վարուցան։

Հետևեալ գոյականներից կազմեցէ՛ք բարդ գոյականներ.

Զօրք, գլուխ—պար, գլուխ—մարդ, գլուխ—տարի, գլուխ—հայր, պետ—մայր, պետ—նաւ, պետ—ժամ, գիրք—գիրք, տուն—հաւ, տուն—փիղ, ոսկր—մանուկ, դեղ—ջուր, չուն—գարի, ջուր—շոգի, նաւ—հարց, փորձ—հայր, եղբայր—մայր, քոյր—քոյր, որդի—տուն, տէր—ահ, դող—որր, այրի։

2. Հետևեալ գոյականներից ու բայերից կազմեցէ՛ք բարդ գոյականներ.

Հող, գործել—երկիր, գործել—մատեան, գրել—առակ, խօսել—նաւ, վարել—գիրք, վաճառել—օրէնք. դնել—մարդ, սպանել—ջուր, վիժել կրակ, պաշտել—կուռք, պաշտել—ջուր, օրհնել։

§ 21. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՆԵՐԸ.

Գոյական անունները երեք հոլովում ունին, որոնք միմեանցից որոշվում են գլխաւորապէս եզակի սեռականի վերջաւորութիւններով։ Միւս հոլովները ընդհանրապէս իրարու նման են, կամ շատ քիչ են զանազանվում միմեանցից, ինչպէս որ կարելի է տեսնել հետեւեալ պատկերի մէջ.

	Եզակի			Յոգնակի
	Ա. Հոլ.	Բ. Հոլ.	Գ. Հոլ.	Բոլոր հոլ.
Ուղ. Հայց.	—	ի	— ին	եր (ներ)
Սեռ. Տր.	ի	ու	ան, եան	երի
Բացառական	ից	ուց	ից	երից
Գործիական	ով	ով	ով, ամբ, եամբ	երով
Ներգոյական	ում	ում	ում	երում

Այս պատկերից երեւում է որ եզակիում հայցականը ուղղականի նման է, և տրականը սեռականի նման։ Գործիական և ներգոյական հոլովները ամէն հոլովների մէջ միակերպ են. իսկ բացառականը երկրորդ հոլովման մէջ խոտորվում է։

Յոգնակիում հոլովումների զանազանութիւն չկայ, այլ եր կամ ներ մասնիկը եզակիի վրայ աւելացնելուց յետոյ՝ բոլոր բառերը միակերպ հոլովվում են առաջին հոլովման վրայ։

Եր մասնիկը ընդունում են միավանկ բառերը. ինչպէս քար, քարեր, ծառ-ծառեր, տուն-տներ, քոյր-քոյրեր։

Ներ մասնիկ ընդունում են բազմավանկ բառերը. պատկեր-պատկերներ, բարեկամներ։

*Նոյնպէս ներ մասնիկ առնում են՝ 1) այն միավանկ բառերը, որոնց արտաբերութեան մէջ ը ձայնը մտնում ու մէկ վանկից իբր երկու վանկ է կազմում, ինչպէս. ճրագ—ճրագներ, բլուր—բլուրներ, պսակ—պսակներ, կայսր—կայսրներ։ 2) Այն միավանկերը՝ որոնց վերջին արմատական ն անյայտացել է *) դուռ—դռներ, ձեռ—ձեռներ, եզ—եզներ, մուկ—մկներ։*

* Գաւառական բարբառներում այս կարգի բառերը ընդունում են ը. եզը, դուռը, նուռը. Բայց ասում են՝ ձեռ. ոտ կամ ձեռք, ոտք։

Սորա հակառակ կան միավանկ գոյականներ, որոնք բարդ բառերի կազմութեան մէջ մտնելով՝ յոգնակիում եր մասնիկ են ընդունում։ Այսպէս են՝ կարգ, տուն, հայր, մայր, քոյր, տէր. դասակարգեր, գրատներ, հօրաքոյրեր, և այլն։

§ 22. ԱՌԱՋԻՆ ՀՈԼՈՎՈՒՄ Ի ՍԵՌԱԿԱՆՈՎ.

	Եզակի	Յոգնակի	Եզակի	Յոգնակի
Ուղ. Հայց.	Բանտ	Բանտեր	Սեղան	Սեղաններ
Սեռ. Տրակ.	Բանտի	Բանտերի	Սեղանի	Սեղանների
Բացառական	Բանտից	Բանտերից	Սեղանից	Սեղաններից
Գործիական	Բանտով	Բանտերով	Սեղանով	Սեղաններով
Ներգոյական	Բանտում	Բանտերում	Սեղանում	Սեղաններում

Այսպէս հոլովվում են գոյական անունների մեծ մասը։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւեալ գոյականներով և հոլովական վերջաւորութիւնների տակ գիծ քաշեցէք։

Բաժակ—դանակ—կացին—սղոց—խարտոց—մանգաղ—բլուր—անտառ—տերև—թռչուն—ագռաւ—սոխակ—վանդակ—աղուէս—փիղ—գունդ—զօրք—բանակ—պատերազմ—զինուոր—զօրավար—երգ—ձայն—երաժիշտ—բժիշկ—պատկերահան։

§ 23. ԵՐԿՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ ՌԻ ՍԵՌԱԿԱՆՈՎ.

	Եզակի	Յոգնակի	Եզակի
Ուղ. Հայց	Մատանի	Մատանիք, մատանիները	ձի
Սեռ. Տրակ.	Մատանու	Մատանիների	ձիու
Բացառական	Մատանուց	Մատանիներից	ձիուց
Գործիական	Մատանով	Մատանիներով	ձիով
Ներգոյական	Մատանում	Մատանիներում	ձիում

Այս հոլովման մէջ հոլովւում են բոլոր ի վերջացած բառերը. միավանկերը ի տառը պահում են։

Կան մի քանի ի վերջացած բազմավանկ բառեր, որոնք ի պահում են և հոլովւում են առաջին հոլովման վրայ՝ այսպէս. հայելի, ածելիով, բանալից և այլն. որ եթէ կանոնաւոր հոլովենք՝ ածելու, բանալով, կարող են շփոթուիլ ածել և բանալ բայերի հետ.

Այսպէս հոլովւում են հայ և մանաւանդ օտարազգի յատուկ անունները. Անիի հազար ու մէկ եկեղեցին. Գարիբալդիի հայրենասիրութիւնը. Նապոլիից է գալիս։

Գրեցէ՛ք մի քանի նախադասութիւններ հետևեալ գոյականներով և հոլովական վերջաւորութիւնների տակ գիծ քաշեցէ՛ք.

Կենդանի—աղաւնի — ծերունի—եկեղեցի— քաղաքացի—որդի—գինի—թշնամի—խնձորենի—տանձենի — իշխանուհի —թագուհի——կայսրուհի — աշակերտուհի · Վահան Ամատունի — Գարիբալդի—Ռոսինի—Նապոլի։

§ 24. ԵՐՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ ԱՆ ԵՒ ԵԱՆ ՍԵՌԱԿԱՆՈՎ.

Եզակի

Ուղ. Հայց.	Ձուկ	Հարցում	Ընկերութիւն
Սեռ. Տրակ.	Ձկան	Հարցման	Ընկերութեան

Բացառական	Ձկնից	Հարցումից	Ընկերութիւնից
Գործիական	Ձկնով	Հարցմամբ	Ընկերութեամբ, թիւնով
Ներգոյական	Ձկնում	—	—*

Յոգնակի

Ուղ. Հայց.	Ձկներ	Հարցումներ	Ընկերութիւններ
Սեռ. Տրակ.	Ձկների	Հարցումների	Ընկերութիւնների
Բացառական	Ձկներից	Հարցումներից	Ընկերութիւններից
Գործիական	Ձկներով	Հարցումներով	Ընկերութիւններով
Ներգոյական	Ձկներում	—	—

* Ութիւն վերջացած գոյականների ներգոյականների տեղ վարւում է սովորաբար սեռական հոլովը մէջ նախադրութեամբ. ինչպէս. ուսման մէջ, նեղութեան մէջ, տէրութիւնների մէջ։

Ձուկ բառի պէս հոլովւում են նախ՝ ուն վերջացած բառերը, ինչպէս տուն, գարուն։ Խոտորւում են հուն և քուն միավանկները, նոյնպէս և այն գոյականները, որոնց մէջ ուն արմատական չէ, այլ ածանցական մասնիկ. ինչպէս. թռչուն, սողուն։

Երկրորդ, այն գոյականները, որոնց վերջին արմատական ն տառը անյայտացել է, ինչպէս. դուռ (դուռն), դռան, մկան, լեռան թոռան, նռան և այլն։

Այս կարգի բառերի մէջ կան որ խառն հոլովւում են առաջին և երկրորդ հոլովման վրայ միանգամայն. վերջին ձևը երևում է աւելի ընտանեկան լեզուի մէջ։ Այսպէս ասում են՝ փռան հաց և փռնի հաց. գառան միս և գառնի միս։ Կան էլ որ միատեսակ հոլովւում են առաջին հոլովման վրայ, բայց յոգնականում ն տառը կրկին երևում է։ Ահաւասիկ այդ բառերի ցանկը. ոտ, ձեռ, մատ, անձ, մազ, եզ—ոտի, ոտներ, մատի, մատներ, եզներ։

Հարցում բառի պէս հոլովւում են ում (ումն) վերջա-

ցած բառերը, որոնք կարող են անխտիր հոլովիլ եւ առաջին կանոնաւոր հոլովման վրայ. վերջինը աւելի ընտանեկան լեզուի մէջ. օծման եւ օծումի, խաւարման եւ խաւարումի, խոստմամբ եւ խոստումով։ Ամէն մարդ ճանաչում է ուսման օգուտը։ Որդուս ուսումի տուի։

Բայց աւելի սովորական է այս տեսակ բառերին ունք յոգնական վերջաւորութիւնը տալ եզակիանում, եւ յետոյ ներ աւելացնելով՝ կրկին հոլովել յոգնակի. զգացում— զգաց'մունք, զգաց'մունքներ, հարց'մունք, հարց'մունքներ, վար'մունք, վար'մունքներ։ Ահաւասիկ մի օրինակ այսպիսի հոլովման.

	Եզակի	Յոգնակի
Ուղ. Հայց.	Մտածմունք	Մտածմունքներ
Սեռ. Տրակ.	Մտածմունքի	Մտածմունքների
Բացառական	Մտածմունքից	Մտածմունքներից
Գործիական.	Մտածմունքով	Մտածմունքով

Ընկերութիւն բառի պէս հոլովում են բոլոր ութիւն վերջացած գոյականները։

Յարութիւն, Համբարձում և սոցա նման մարդկանց յատուկ անունները Ա հոլովման վրայ են հոլովում. Յարութիւնի գիրքը. Համբարձումի գրիչը։—Իսկ եկեղեցական մտքով ասում են Յարութեան օրը, Համբարձման տօնը։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւեալ գոյականներով և հոլովական վերջաւորութիւնների տակ գիծ քաշեցէք.

Ձուկ—մուկ—փուռ—դառ—լեռ—նուռ—ուսում—օծում—խոստմունք—վարմունք—մտածմունք—կարդացմունք—առաքինութիւն—նեղութիւն—տէրութիւն—պաշտպանութիւն։

§ 25. ԺԱՄԱՆԱԿ ՑՈՅՑ ՏՈՒՈՂ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ.

	Եզակի	Յոգնակի
Ուղ. Հայց.	Օր	Օրեր
Սեռ. Տրակ.	Օրուան օրուայ	Օրերի
Բացառական	Օրուանից	Օրերից
Գործիական	Օրով	Օրերով
Ներգոյական	Օրում	Օրերում

Ժամանակ ցոյց տուող բառերը հոլովում են երրորդ հոլովման վրայ, փոքր ինչ փոփոխութեամբ, այսինքն՝ սեռ. ուան կամ ուայ, բացառ. ուանից. ունեն նաեւ առաջին կանոնաւոր հոլովման պէս։ Այսպէս անխտիր գործ է ածվում ամսի եւ ամսուան, շաբաթի եւ շաբաթուան, կէսօրի եւ կէս օրուան, գիշերից եւ գիշերուանից։ Իսկ յոգնակին բոլորովին կանոնաւոր է։

Առհասարակ ուան վերջաւորութեամբ վարուողները ածականի զօրութիւն ունին. ինչպէս. Ամառուան շոգը (փոխանակ ամառնային շոգը). գիշերուան անձրեւը. այս տարուան առատութիւնը։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւեալ գոյականներով և հոլովական վերջաւորութիւնների տակ գիծ քաշեցէք.

Ձմեռ—ամառ—գիշեր—ցերեկ—տարի—ամիս—շաբաթ—ժամ—առաւօտ—իրիկուն—կէսօր—կէս գիշեր.

§ 26 ԱԶԳԱԿՑՈՒԹԻՒՆ ՑՈՅՑ ՏՈՒՈՂ ԲԱՌԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ.

	Եզակի		Յոգնակի	
Ու. Հ.	Հայր	Քոյր	Հայրեր	Քոյրեր
Ս. Տ.	Հօր	Քրոջ	Հայրերի	Քոյրերի
Բցռ.	Հօրից	Քրոջից	Հայրերից	Քոյրերից
Գործ.	Հօրով	Քրոջով	Հայրերով	Քոյրերով

Այլակերպութիւն ցոյց տուող գոյականների սեռականը ըստ մեծի մասին անկանոն է լինում—օր կամ ոջ, որոնցից կազմվում են բացառական եւ գործիական հոլովները։ Յոգնակին կանոնաւոր է։

Հայրերով, քոյրերով և մանաւանդ հօրով, քրոջով գործիականները շատ չեն գործածվում, այլ ասվում է հօր հետ, քրոջ հետ. Առհասարակ շնչաւոր առարկաների գործիականի համար հետևեալը նկատելու է. Եթէ գործողութիւնը շնչաւոր առարկայի ձեռով կամ միջնորդութեամբ է կատարվում, բուն գործիական է գրվում. Իսկ եթէ շնչաւոր առարկան գործողութեան մասնակից է, այն ժամանակ հետ նախադրութեամբ սեռական է վարվում. Ինչպէս. Յովսէփ իր եղբայրների հետ թարգմանով էր խօսում։ Այսպէս դարձեալ ձիով (այսինքն ձի նստած) վազ տալ և ձիու հետ վազ տալ։—Բայց ընտանեկան լեզուի մէջ գործածական է հօրով մօրով ապրիս.—փոխանակ հօրդ հետ, մօրդ հետ ապրիս։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ գոյական անուններով, և հոլովական վերջաւորութիւնների տակ գիծ քաշեցէք.

Հայր — մայր—քոյր—եղբայր — կին— տէր—աներ— սկեսուր —հօրեղբայր—մօրեղբայր — հօրաքոյր— մօրաքոյր — նախահայր — կնքահայր— կնքամայր—ատնտէր—տանտիկին—տալ— ընկեր։

§ 27. ԲԱՂԱԴՐԵԱԼ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ.

Նշանի

Ո. Հ.	Հաց ու ջուր	Ողբ ու լաց
Ս. Տ.	Հացի ու ջրի	Ողբ ու լացի
Բցռ.	Հացից ու ջրից	Ողբ ու լացից
Գործ.	Հացով ու ջրով	Ողբ ու լացով

Նոյն կամ մօտիկ նշանակութիւն ունեցող (ըստ մեծի մասին միավանկ) գոյականները ու շաղկապով կազմում

են բաղադրեալ գոյականներ, որոնք եթէ իբրև առանձին բառեր նկատուին, կարող են երկուսն էլ հոլովվիլ, իսկ եթէ իբրև մէկ բառ ընդունուին՝ միայն վերջինը, որ աւելի սովորական է։ Այս տեսակ բառերը ընդհանրապէս յոգնակի չեն գործածվում, այլ յոգնականի մտքով եզակի են վարվում. Ինչպէս. Ականջ դիր քո հօր խօսք ու խրատին (փոխանակ խօսքերին ու խրատներին)։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ բաղադրեալ գոյականներով, փոխելով երկու բառն էլ, կամ միայն վերջինը, նայելով թէ որ ձևը յարմար է.

Սուգ ու լաց—լաց ու կոծ—ազգ ու տակ—խոփ ու արօր—լուծ ու կամ—օր ու գիշեր—չափ ու սահման — հարց ու պատասխան — ձող ու բաժինք— ղուստր ու փեսայ։

§ 28. ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄ.

Յատուկ անունները առհասարակ հոլովվում են առաջին հոլովման պէս։ Բայց կան յատուկ անուններ, որոնց մի քանի հոլովները գրաբար ձևով են լինում։ Սորանով մեկընվում են այն անկանոն ձևերը, որ երևում են երբեմն հասարակ գոյականների և գլխաւորապէս անձների անունների մէջ։

1. Մարդկանց և քաղաքների յատուկ անունները հոլովվում են առաջին հոլովման վրայ. Ինչպէս. Գրիգորի, Յովհաննէսին, Ամբատից, Թիֆլիսից, Էջմիածնում։

Բայց հայ պատմական անունները սովորութիւն է եղել հին ձևով էլ հոլովել, այսինքն այ սեռականով, նոյնպէս և մի քանի ծանօթ քաղաքների անունները այ և ու սեռականով. այսպէս.

Եզակի

Ու. Հ.	Տրդատ	Երևան	Թաւրիզ
Ս. Տ.	Տրդատայ*	Երևանայ**	Թաւրիզու
Բցռ.	Տրդատից	Երևանից	Թաւրիզուց
Գործ.	Տրդատով	Երևանով	Թաւրիզով
Ներգ.	—	Երևանում	Թաւրիզում

* Հայցականը սովորաբար տրականի պէս է լինում (տես § 31)։

** Գաւառական բարբառներում բացառականը սեռականի պէս է լինում հին ձևով. Երևան-աչ, Աշտարակ-աչ է գալի, այսինքն Երևան-ից, Աշտարակ-ից։

2. Ազգերի յատուկ անունները, բացի կանոնաւոր հոլովումից, յոգնականում ունին և մի անկանոն հոլովում, ուղղականի և հայցականի համար ք, իսկ սեռ. և տր. հոլովների համար ոյ, ից, աց վերջաւորութիւնները։ Ահաւասիկ երեքից էլ մէկ մէկ օրինակ.

Յոգնակի

Ու. Հ.	Յոյնք (Յոյներ)	Հայք	Հրէայք
Ս. Տ.	Յունաց	Հայոց	Հրէից
Բացռ.	Յոյներից	Հայերից	Հրէաներից
Գործ.	Յոյներով	Հայերով	Հրէաներով

Հասարակ գոյականներից Յոյնք բառի պէս հոլովում է ծնողք, ծնողաց, իսկ Հայք բառի պէս՝ տղայք (տղայոց), երբեմն նաև՝ երեխայք, երեխայոց։

3. Ցեղի ու հայրենեաց յատուկ անունները յոգնակի ուղղական հոլովում ունին այս վերջաւորութիւնները. եանք, ունիք, ցիք (ացիք, եցիք), սեռ. և տր. հոլովներում եանց, եաց, ցոց. ինչպէս.

Յոգնակի

Ուղ.	Մամիկոնեանք	Արշակունիք	Կարնեցիք
Ս. Տ.	Մամիկոնեանց	Արշակունեաց	Կարնեցոց

Հասարակ գոյականներից Մամիկոնեանք բառի պէս հոլովում են՝ մարդ, կին, աղջիկ, երբեմն և երեխայ բառերի յոգնակին. մարդիկ, մարդկանց, մարդկանցից. կանայք, կանանց, կանանցից, աղջկանցից, երեխանցով։

Արշակունիք բառի պէս հոլովում են՝ ընտանիք, ընտանեաց, նախնիք, նախնեաց, հայրենիք, հայրենեաց։

Կարնեցիք բառի պէս հոլովում են բոլոր ցի վերջացած յատուկ և հասարակ գոյականները. քաղաքացիք, քաղաքացոց, տնեցոց, երկրացոց, Երևանցոց, Ագուլեցոց. նոյնպէս և որդիք, որդոց։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հնեռեալ յատուկ ու հասարակ գոյականներով և հոլովական վերջաւորութիւնների տակ գիծ քաշեցէք։

Արամ—Տիգրան—Սահակ—Մեսրոպ—Արտաշատ—Վաղարշապատ—Թիֆլիզ—Ռուս—Տաճիկ—տղայք—երեխայք—մարդիկ—կանայք—Արծրունիք—նախնիք—դաշտեցիք—Վանեցիք—որդիք։

§ 29. ԿՈՐՈՒՍՄԱՄԲ ԵՒ ՓՈՓՈԽՄԱՄԲ ՀՈԼՈՎՈՒՄ։

Ձայնաւորների կորուսման և փոփոխման կանոնը գոյականների հոլովման մէջ մի քանի խոտորմունքներ ունի.

1. Ի ձայնաւորը եզականում միշտ դուրս է ընկնում, իսկ յոգնականում միայն միավանկ բառերի մէջ, իսկ բազմավանկների մէջ սովորաբար պահվում է. ինչպէս.

	Եզակի		Յոգնակի	
Ո. Հ.	Սիրտ	Անկողին	Ս'րտեր	Անկողիններ
Ս. Տ.	Ս'րտի	Անկող'նի	Ս'րտերի	Անկողինների
Բցռ.	Ս'րտից	Անկող'նից	Ս'րտերից	Անկողիններից
Գործ.	Ս'րտով	Անկող'նով	Ս'րտերով	Անկողիններով
Ներգ.	Ս'րտում	Անկող'նում	Ս'րտերում	Անկողիններում

Խոտորում են ի վերջացած միավանկերը. ձի, ձիու, ձիով, որոնց յոգնակին անկանոն ձևով լինում է՝ ձիան, կամ ձիաներ, ձիաներից, ձիաներով։

2. Ու երկբարբառը միավանկ բառերի մէջ միշտ դուրս է ընկնում. բազմավանկերի մէջ միշտ ազատ է պահել կամ չպահել եզակիում, իսկ յոգնականում գրեթէ միշտ պահվում է. զորօրինակ.

	Եզակի		Յոգնակի	
Ո. Հ.	Ջուր	Թռչուն	Ջ'րեր	Թռչուններ
Ս. Տ.	Ջ'րի	Թռչ'նի, Թռչունի	Ջ'րերի	Թռչունների
Բցռ.	Ջ'րից	Թռչ'նից, Թռչունից	Ջ'րերից	Թռչուններից
Գործ.	Ջ'րով	Թռչ'նով, Թռչունով	Ջ'րերով	Թռչուններով
Ներգ.	Ջ'րում	Թռչ'նում	Ջ'րերում	Թռչուններում

Խոտորում են ու վերջացած բառերը. ինչպէս. լեզու, լեզուի, մեզուով. որոնցից միավանկերի յոգնակին անկանոն է. ձու, ձուաներից, լու, լուաներով։

3. Ա և այ մի քանի գործածական բառերում դուրս են ընկնում, և այն միայն եզականում. այսպէս են՝

	Եզակի		Յոգնակի	
Ո. Հ.	Բերան	Փեսայ	Բերաններ	Փեսաներ
Ս. Տ.	Բեր'նի	Փես'ի	Բերանների	Փեսաների

Բացռ.	Բեր'նից	Փես'ից	Բերաններից	Փեսաներից
Գործ.	Բեր'նով	Փես'ով	Բերաններով	Փեսաներով
Ներգ.	Բեր'նում	—	Բերաններում	—

Այ երկբարբառի յ պահվում է յոգնականում միայն գրաբար հոլովման մէջ. տղ այ-ոց, երեխ-այ ոց։

4. Իւ երկբարբառը եզականում փոխվում է ու, իսկ յոգնականում անփոփոխ է մնում. բացի թիւ, թուեր։

	Եզակի	Յոգնակի
Ո. Հ.	Հաշիւ	Հաշիւներ
Ս. Տ.	Հաշուի	Հաշիւների
Բացռ.	Հաշուից	Հաշիւներից
Գործ.	Հաշուով	Հաշիւներով
Ներգ.	Հաշւում*	Հաշիւներում

* Եզակի ներգոյականում սովորութիւն է եղել գրել ւում փոխանակ ուում. ու երկբարբառը չկրկնելու համար։

5. Է, եա, ոյ առհասարակ անփոփոխ են մնում. հանդէս, հանդէսի, հանդէսներ, սենեակ, սենեակի, սենեակներ. վարագոյր, վարագոյրի, վարագոյրներ։ Բայց սէր. յոյս, և լոյս միավանկերը սովորութիւն է եղել գրաբարի ձևով, այսինքն փոփոխմամբ հոլովել. սիրոյ, սիրով. յուսոյ, յուսով. լուսոյ, լուսով։ Այսպէս երբեմն և կեանք, կենաց (բաժակ)։

Գրեցէ՛ք մի քանի նախադասութիւններ հետևեալ գոյականներով։

Գիրք—միս—գետին—երկինք—մարմին—թուղթ — պտուղ — օգուտ—կերակուր—ժողովուրդ—մեղու—քաղաք—Աստուած — տղայ —երեխայ—թիւ—հաշիւ—հանդէս—ծէս—վայրկեան — խնճոյք—յոյս —լոյս—սէր։

§ 30. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՅՕԴԸ.

Յօդ ասվում է այն տառը կամ մասնիկը, որ գոյական անուան վրայ դրուելով՝ որոշ նշանակութիւն է տալիս նորան և ընդհանուր միտքը մասնաւորի է ամփոփում։ Այսպէս ընդհանուր միտք կունենան գոյականները, եթէ ասենք՝ Ես *գիրք* եմ կարդում. Քոյրս *սոխակ* ունի, որովհետև չէ իմացվում թէ որ գրքի կամ սոխակի վրայ է խօսքը, կամ կարող է հասկացուել թէ ես գիրք եմ կարդում, քոյրս սոխակներ ունի։ Բայց միևնոյն գոյականների միտքը որոշվում և մասնաւորի է ամփոփվում, եթէ ասենք՝ Ես քո տուած գիրքն եմ կարդում։ Քոյրս *մի* սոխակ ունի։

Երկու տեսակ յօդ կայ՝ *որոշեալ յօդ*, որ գոյականից յետոյ է գրվում, և *անորոշ յօդ*, որ գոյականից առաջ է գրվում։

Որոշեալ յօդն երկու է՝ *ն* և *ը*. առաջինը ձայնաւոր տառով վերջացած բառերի վրայ է դրվում, երկրորդը բաղաձայնով վերջացածների վրայ. ինչպէս. ձին, բազէն, երեխան*, ծովը, տունը, անտառը։

* Ն յօդը բաղաձայնով վերջացած բառերի վրայ էլ է դրվում, երբ յաջորդ բառը ձայնաւորով է սկսվում. օրինակ. Այն մարդն է գովութեան արժանի, որ իր յոյսն ուրիշի վրայ չէ դնում։ Այսպիսի դէպքերում կարող է ը յօդ գործ դրուիլ, եթէ հարկ լինի խօսքին աւելի որոշութիւն տալ, կամ երբ յօդ ունեցող բառը յաջորդ բառի հետ կից չէ. Ուստի սխալ չի լինիլ, եթէ ասենք՝ Այն մարդը է գովութեան արժանի, որ իր յոյսը ուրիշների վրայ չէ դնում։ Նոյնպէս՝ Բարեկամները բաժանուեցան ու գնացին՝ որը աջ, որը ձախ։

Որոշեալ յօդը գործ է ածվում. 1) երբ խօսքը ծանօթ ու յայտնի առարկայի վրայ է. օրինակ. Հայոց լեզուն շատ հին է։ Այստեղ խօսքը ծանօթ (Հայոց) լեզուի վրայ է, որ անկարելի է շփոթել ուրիշ լեզուի հետ։ 2) Երբ հարկ է ցոյց տալ թէ առարկան մի առանձին ցեղի կամ դասի ներկայացուցիչ է. ինչպէս. Հայը աշխարհիս ամեն կողմերը ցրուած է. այսինքն Հայ ազգը առհասարակ, բոլոր հայերը ցրուած են։

Անորոշ յօդն է *մի*, որ գործ է ածվում այն ժամանակ՝ երբ հարկ է առարկայի վրայ եղած ընդհանուր հասկացողութիւնը մասնաւորի ամփոփել. օրինակ. *Մի* իտալացի գտաւ Նոր Աշխարհը՝ և *մի* գերմանացի տպագրութեան արհեստը.—այսինքն մի անհատ այն ազգից որ կոչվում է իտալական, գերմանական ազգ։

Սորանից պարզ երևում է որ *մի* և *ն* (*ը*) յօդերը միևնոյն ժամանակ չեն կարող գործ դրուիլ՝ կամ որոշեալ բառը անյօդ թողնել. չէ կարելի ասել *Մի* մշակը կամ երեկուան *մշակ* եկաւ, այլ *մի* մշակ, երեկուան մշակը։

§ 31. ՈՐՈՇԵԱԼ ՅՕԴՈՎ ՀՈԼՈՎՈՒՄ.

	Եզակի	*Յոգնակի*
Ո. Հ.	Պարտէզը	Պարտէզները
Սեռակ.	Պարտէզի	Պարտէզների
Տրական	Պարտէզին	Պարտէզներին
Բացառ.	Պարտէզից	Պարտէզներից
Գործիակ.	Պարտէզով	Պարտէզներով
Ներգոյակ.	Պարտէզում	Պարտէզներում
Ուղղական	Որսորդը	Որսորդները
Սեռական	Որսորդի	Որսորդների

Տր. Հայց.	Որսորդին	Որսորդներին
Բացառ.	Որսորդիցը	Որսորդներիցը
Գործիակ.	Որսորդովը	Որսորդներովը

Որոշեալ յօդով հոլովման վրայ մի քանի հարկաւոր գիտելիք կայ.

1. Սեռական հոլովը երբէք որոշեալ յօդ չէ ընդունում. ինչպէս. *պարտէզի դուռը. որսորդի հրացանը։*

2. Միւս հոլովները առանց բացառութեան կարող են յօդ առնել. միայն գրաւոր լեզուի մէջ բացառական, գործիական և ներգ. հոլովները աւելի անյօդ են վարվում, քան թէ յօդով. զորօրինակ. Իմ բարեկամը մարդասիրական *ընկերութիւնից* օգնութիւն ստացաւ։ Հողագործները կերակրվում են դաշտերի *բերքերով* և ծառերի *պտուղներով*։ Աշակերտները խաղում են ուսումնարանի *բակում*։

Ուրիշ են գերանուանական յօդերը, որ ամեն հոլովների վրայ դրվում են անխտիր, ինչպէս որ յետոյ կը տեսնենք։

3. Յատուկ անունները իրանք իրանցից որոշուած լինելով՝ միշտ որոշեալ յօդ են պահանջում. Գրիգորը գնաց։ Մարիամին պատահեցանք։ Արագածը գեղեցիկ սար է։ Բայց գրաբար ձևով հոլովող բառերը առհասարակ որոշեալ յօդ չեն ընդունում. Վաղարշակը նոր օրէնքներ տուեց *Հայոց* (և ոչ *Հայոցը*)։ Իշխանի մահը յայտնեցին *քաղաքացոց*։ Աբրահամը յօժար էր իր միակ որդուն նուիրել *Աստուծոյ* (*կամ Աստծուն*)։

4. Բաղադրեալ բառերի մէջ (§ 27) անորոշ յօդ շատ անգամ միայն առաջինի վրայ է դրվում, և որոշեալ յօդ վերջինի վրայ։ *Մի* տղայ ու աղջիկ ունի որ աշխարհի հետ չի փոխիլ։ Խեղճի օրը ու լացը։ Գնալ գալը կտրեց մեր տանից։ (Վերջին օրինակի մէջ *ու* շաղկապը դուրս է ընկած)։

5. Անձի անունները որոշեալ յօդով հոլովելիս՝ հայցականը տրականի հետ նոյնանում է։ Այսպէս ասում են՝ հայրը սիրում է *որդուն*։ Կիրակոսը տեսաւ *Մարկոսին*. որ եթէ ասէինք՝ Կիրակոսը տեսաւ *Մարկոսը*, չէր իմացուիլ թէ *Կիրակոսն* է տեսնողը թէ *Մարկոսը*։

Գրեցէք ձեզանից մի քանի նախադասութիւններ և գործ դրէք որոշեալ և անորոշ յօդերը։

Ե. Ածական անունների կազմութիւնը։

§ 32 ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ.

Արմատական ածական անունները, ինչպէս և գոյականները, շատ սակաւ են. ինչպէս՝ *մեծ, ծանր, խոր. ծոյլ, սեւ*։ Մնացած ածականների մեծ մասը կազմվում են.

1. Բայերի արմատներից. *շարժուն, վախկոտ, ազդու, ընդունակ*։

2. Գոյական անուններից. *նախանձոտ, եղբայրական, տնային, խելացի*։

3. Ածական անուններից. *փոքրիկ, կարմրագոյն*։

4. Մակբայներից. *այժմեան. երեկուան. հեռաւոր*։

§ 33 ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԱԾԱՆՑԱԿԱՆ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

1. Որակական ածականները, եթէ հասարակ որպիսութիւն են ցոյց տալիս, կազմվում են բայերի արմա-

ներից և գոյական անուններից ուն, ուր, կան մասնիկներով. գիտուն, զօրաւոր, բանական։

Ուն և ուր մասնիկներով կազմուածներից գործական են այժմ Թռչուն, զինւոր, Թագաւոր։

2. Որակական ածականները, եթէ որպիսութեան սաստկութիւն են ցոյց տալիս, կազմվում են.

1. Բայերի արմատներից ան, ուկ, կան, կոտ մասնիկներով. հարբան, քնուկ, մոռկան, ամաչկոտ։

2. Գոյական անուններից ոտ, եղ, աւէտ մասնիկներով. կրակոտ, զօրեղ, պտղաւէտ։

3. Որակական ածականները, եթէ փոքրութիւն և փաղաքշանք են ցոյց տալիս, կազմվում են իկ մասնիկով. փոքրիկ, հեզիկ, քաղցրիկ.

---

1. Հետևեալ բայերից ու գոյականներից կազմեցէք հասարակ որպիսութիւն ցոյց տուող ածականներ։

Շարժել—աճել—գնալ—սահել—փայլել—սիրել—խօսել—բաղդ—նշան—փառք—Թոյն—ահ—տաղանդ—հանճար—պատիւ—(ուր և կան մասն.)—բան—ուսում։

2. Հետևեալ գոյականներից ու բայերից որպիսութեան սաստկութիւն ցոյց տուող ածականներ կազմեցէք.

Աճել—կչկչալ—քնել—խրտնել—կռուել—լալ—մրսել—վախենալ (լուկ և կոտ մասն)—երկնչել—պարծենալ—մոռանալ—ամաչել—եղ—արիւն—միս—ոխ—ժահր—աւազ—ճահիճ—ժայռ—քար—ժանգ, հիւանդ—ոյժ—զօր—ահ—համ—հանճար—շահ—օգուտ—խոտ—պտուղ—ծաղիկ—կանաչ։

§ 34 ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԱԾԱՆՑԱԿԱՆ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Յարաբերական ածականները, եթէ ազգանուն են ցոյց տալիս, կազմվում են հօր կամ ուրիշ յատուկ անուն-

ներից, նոյնպէս և հասարակ անուններից և մինչև ածականներից եան, եանց վերջաւորութիւններով. Տիգրան Երուանդեան, Գրիգոր Հայրապետեանց, Ստեփան Կապուտիկեան։

Այս եան, եանց գրոց եզ. և յոգ. սեռ. վերջաւորութիւններ են։

2. Յարաբերական ածականները, եթէ ցոյց են տալիս թէ մէկ բան ումն է պատկանում, կամ ինչ անձի և իրի է վերաբերում, կազմվում են յատուկ և հասարակ գոյականներից կան, ային, ուր, անի մասնիկներով. հայկական, աստուածային, մարմնաւոր. երեք մատնանի (եղան). մեծ գլխանի (երեխայ)։

Անի մասնիկով կազմուած ածականները իրանցից առաջ միշտ մի Թուական անուն կամ ածական են պահանջում։ Գրաբար կայ երկսայրի սուր (երկու բերնանի սուր)։

3 Յարաբերական ածականները, եթէ ցոյց են տալիս թէ մէկ բան ինչ նիւթից է շինուած, կազմվում են գոյական անուններից ի, է (գրբր. եայ), եղէն մասնիկներով. երկաթի, պղնձէ, հողեղէն։

Եղէն մասնիկով աշխարհաբար լեզուի մէջ կազմվում են շատ գոյական անուններ. կերակրեղէն, ձկնեղէն, կաթնեղէն, մսեղէն, հացեղէն և այլն։

4. Յարաբերական ածականները, եթէ ցոյց են տալիս թէ մէկ բան որ տեղի կամ ժամանակի է վերաբերում, կազմվում են գոյական անուններից ու մակբայներից եան, ուան (ուայ), ին մասնիկներով. արևմտեան, վաղուան, երկնային, վերջին։

---

1. Հետևեալ գոյականներից կազմեցէք պատկանելութիւն ցոյց տուող ածականներ.

Հայր—մայր—որդի—բարեկամ—ընկեր—քրիստոնեայ—հեթանոս—յոյն—պարսիկ—Ֆրանսիա—Անգլիա—Գերմանիա—հոգի—մարմին—միտք—գիր—երկինք—երկիր—երկու բերան (թուր)—մեծ պոչ (ձի)—վեց թև (հրեշտակ)—երկու երես (մարդ)—հարիւր գլուխ (հրէշ)։

2. Հետևեալ գոյականներից կազմեցէք նիւթ ցոյց տուող ածականներ.

Երկաթ—պղինձ—ոսկի—ապակի—փայտ—բուրդ—մազ—փուշ—ծաղիկ—կաւ—հող—հուր—բոց։

2. Հետևեալ գոյականներից և մակբայներից կազմեցէք տեղ ու ժամանակ ցոյց տուող ածականներ։

Արևելք—արևմուտք—հիւսիս—հարաւ—գարուն—աշուն—ձմեռ—ամառ—երկինք—երկիր—դաշտ—լեռ—անտառ—տուն—երէկ—այսօր—վաղը—էգուց—հիմա—առաջ—յետ—վերջ—վերև—ներքև։

§ 35. ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ԱԾԱՆՑԱԿԱՆ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. Ներկայ դերբայը կազմւում է. 1) *ող* մասնիկով պարզ արմատից, եթէ Ա և Բ վերջաւորութեան բայ է, և 2) անցեալ կատարեալից, եթէ Գ և Դ վերջաւորութեան բայ է. ինչպէս. *սպասել—սպասող, խօսիլ-խօսող, գնալ, գնացի-գնացող, խոստանալ, խոստացայ-խոստացող*։

Նել և *իլ* վերջացած բայերի մէջ *ն*, *չ*, *ցն* եկամուտ տառերը պահւում են. *գտնել-գտնող, փախչիլ-փախչող, կորցնել-կորցնող*։

2. Անցեալ դերբայն կազմւում է *ել* և *ած* մասնիկներով. 1) Ա և Բ վերջաւորութեան բայերում պարզ արմատից. 2) Գ և Դ վերջաւորութեան բայերում կատարեալից. *ապտել, ապտած. բնակիլ, բնակել**-*բնակած.—խաղալ, խաղացի-խաղացել, խաղացած. հասկանալ, հասկացայ-հասկացած*։

Եկամուտ տառերը դուրս են ընկնում. *տեսնել—տեսել, տեսած. կորչիլ-կորել, կորած. զարմացնել—զարմացել, զարմացած*։

3. Ապառնի դերբայը կազմւում է *ու* մասնիկը աւելացնելով անորոշ դերբայի վրայ. *գովել, գովելու, աշխատել, աշխատելու, մնալ-մնալու, լուանալ-լուանալու, մտնել—մտնելու, թռչիլ-թռչելու*։

* Բ վերջաւորութեան բայերում ի ձայնաւորը փոխւում է ե։

Հետևեալ բայերից կազմեցէք ներկայ, անցեալ և ապառնի դերբայներ.

Լսել—հանել — կանչել — գովել — բռնել — ուտել — խմել — աշխատիլ — նստիլ — համարիլ — բնակիլ — խաղալ — մնալ — գնալ — խաղալ — հազալ — դողանալ — իմանալ — տեսնիլ — գտնիլ — հասնիլ — հագնիլ — մտնիլ — կպչիլ — թռչիլ — դպչիլ — մեծացնել — չորացնել — սովորցնել — վերցնել — մոռացնել։

§ 36. ԲԱՑԱՍԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՆԵՐԸ.

Բացասական մասնիկները դրուելով ածական անունների վրայ հակառակ նշանակութիւն են տալիս նոցա և շատ անգամ ածականից գոյական են կազմում։

Բացասական մասնիկներն են.

1. Ան. *անմիտ, անխոհեմ, անհոգ (անհոգութիւն)*։
2. Ապ. *ապուշ, ապերախտ (ապերախտութիւն)*։
3. Տ. *տգէտ, տհաս, տմարդի (տմարդութիւն)*։
4. Դժ. *դժգոհ, դժբաղդ (դժբաղդութիւն)*։

Հետևեալ բառերից բացասական ածականներ կազմեցէք, ածականներից էլ, եթէ կարելի է, (բացասական) գոյականներ.

ա) Ան, հոգի — մարմին — սիրտ — հայր — մայր — զաւակ — պտուղ — արժանի — վախ — երկիւղ — մեղք — օրէնք — կարգ — շարժել — չափել — թառամել — վնասել. — բ) Ալ, արդիւնք — օրէնք, — գ) Ու, կարող — գեղեցիկ — ձև։

§ 37. ԲԱՐԴ ԱԾԱԿԱՆՆԵՐ.

Ածական անունների բարդութեան համար երկու գլխաւոր կանոն կայ.

1. Ածականը գոյականի հետ կամ երկու գոյական իրար հետ բարդուելով մի ածական են կազմում, որ նշանակում է *ունեցող*. ինչպէս *բարեսիրտ* (բարի սիրտ ունեցող), *առիւծասիրտ* (առիւծի սիրտ ունեցող)։

2. Ածական անունը բայի արմատի հետ բարդուելով մի ածական է կազմում, ածականը մակբայի միտք է ստանում, իսկ բայի արմատը դերբայի միտք. *արագաշարժ* (արագ շարժող)։

Հետևեալ բառերից բարդ ածականներ կազմեցէք.

Արի, սիրտ — թոյլ, սիրտ — մեծ, սիրտ — հաստ, գլուխ — բաց, բերան — քաղցր, ձայն — թերի, հաւատ — սուր, միտք — բարի, հոգի — վեհ, փառք — բարձր, հասակ — օձ, լեզու — չար, խօսել — քաղցր, խօսել — դանդաղ, շարժել — արագ, սանել — թանձր, հոսել — հեռու, տեսնել — սուր, տեսնել։

§ 38 ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՐԱԴՐԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ.

Որակական ածականների համեմատութեան աստիճանների կազմութեան վրայ հետևեալ գլխաւորները կան.

1. Դրական աստիճանը ածականի սկզբնական ու անփոփոխ ձևն է. ինչպէս. Տիգրանը *բարի* երեխայ է։ Ծիծեռնակը *գեղեցիկ* թռչուն է։

2. Բաղդատական աստիճանը կազմվում է դրականից

առաջ դնելով *աւելի* մակբայը. ինչպէս. Տիգրանը *աւելի* բարի է քան թէ Արշակը։ Ծիծեռնակը *աւելի* գեղեցիկ է քան թէ ճնճղուկը։

Բայց շատ անգամ բաղդատական աստիճանը վարվում է դրականի ձևով, և այն ժամանակ բաղդատուող առարկաներից մէկը սովորաբար բացառական հոլով է դրվում, իբրև ածականի լրացուցիչ. Ծիծեռնակը ճնճղուկից *գեղեցիկ* է։ Վիեննան *Փարիզից* փոքր է։

3. Գերադրական աստիճանը կազմվում է դրականի սկիզբը դնելով *ամենա* մասնիկը. Աստուած *ամենաբարի* է։ Կէտը *ամենամեծ* ձուկն է։ Կոլիբրին *ամենափոքր* թռչունն է։

Քիչ անգամ պատահում է գերադրական կազմել գոյն մասնիկներով, ուր որ ամենա մասնիկը անյարմար է. գերագոյն էակ, բարձրագոյն իշխանութիւն, ծայրագոյն պատրիարք։

Գերադրականի տեղ էլ դրական ածականը վարվում է այլ և այլ սաստկացուցիչ բառերով. ինչպէս. Առիւծը *շատ* զօրաւոր գազան է։ Տորք իշխանը *սաստիկ* տգեղ մարդ էր։ Շուշանը *չափազանց* երկչոտ աղջիկ է։

Այս երկու տեսակ ձևերը **բացարձակ** գերադրական են, որովհետև չեն ցոյց տալիս ուրիշների համեմատութեամբ ամենից աւելի զօրաւորը, կամ տգեղը։ Բայց կայ համեմատութեամբ — **գերադրական** էլ, որ կազմվում է դրականից առաջ դնելով *ամենից* բառը և ածականի կամ գոյականի վրայ դերանուանական յօդ. այսպէս. *ամէնից* ընտիրը. *ամէնից* հաւատարիմը. *ամէնից* սուրը։ Պէքինը աշխարհիս *ամէնից* բազմամարդ քաղաքն է (այսինքն ամէն քաղաքներից աւելի բազմամարդ քաղաք)։

Վերջապէս կայ մի տեսակ գերադրական էլ, որ կազմվում է դրական ածականից առաջ դնելով նոյն ածականի յոգնակի սեռական հոլովը իբր յատկացուցիչ. *վատերի վատ*,

անալիտանների անկիտան. լեռների լանջը. ոժքաղների դժբաղդը. կամ հեգնական ձեւով՝ խելօքների խելօքը։ Եւ նմանութեամբ գոյականը ածականի տեղ՝ օձերի օձ (փոխանակ խորամանկների խորամանկ)։

Հետեւեալ որակական ածականներից կազմեցէ՛ք բաղդատական և գերադրական աստիճաններ վերևը յիշուած ձևերով.

Ծեր — բաղդաւոր — դժբաղդ — օգտակար — զուարճալի — բարակ — հաստ — թանձր — բարձր — զօրաւոր — տկար — խեղճ — մաքուր — կեղտոտ — խիստ — հպարտ — աղքատ — կորուստ։

---

§ 29. ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ.

Ածականը միշտ իր գոյականից առաջ է դասվում եւ հոլովման մէջ անփոփոխ է մնում թէ եզակի և թէ յոգնակի. զօրօրինակ։

	Եզակի	Յոգնակի
Ո. Հ.	Լայն հրապարակ	Լայն հրապարակներ
Ս. Տ.	Լայն հրապարակի	Լայն հրապարակների
Բացո.	Լայն հրապարակից	Լայն հրապարակներից
Գործիակ.	Լայն հրապարակով	Լայն հրապարակներով
Ներգոյակ.	Լայն հրապարակում	Լայն հրապարակներում

Նոյնպէս որոշեալ յօդը միայն գոյականի վրայ է դրըվում, իսկ անորոշը ածականից նախադաս. այսպէս. Ազնիւ մարդը. գեղեցիկ խնձորները. սիրելի բարեկամներին. մի ծանր գործ. մի հաստ փայտով, և այլն։

Բայց եթէ ածականը մենակ է, յօդով կամ առանց յօդի, գոյականի զօրութիւն ունի և հոլովում է նայելով իր վերջաւորութեան. այսպէս.

	Եզակի	Յոգնակի
Ո. Հ.	Աղքատ	Աղքատներ
Ս. Տ.	Աղքատի	Աղքատների
Բացո.	Աղքատից	Աղքատներից
Գործ.	Աղքատով	Աղքատներով
Ուղ.	Ողորմելին	Ողորմելիքը
Սեռ.	Ողորմելու	Ողորմելիների
Տ. Հ.	Ողորմելուն	Ողորմելիներին
Բացո.	Ողորմելուցը	Ողորմելիներիցը
Գործ.	Ողորմելովը	Ողորմելիներովը

Ածականը գոյականաբար վարվում է՝ 1) երբ գոյականը մտքով է իմացվում, կամ մի անգամ յիշուելով միւս անգամ զօրութեամբ է իմացվում. զորօրինակ. Քաղաքակիրթ մարդը կամ քաղաքակիրթը ամէն բանով զանազանվում է անկիրթից։ 2) Երբ առարկայի վրայ վերացական կերպով է խօսվում. ինչպէս. Պէտք է նախադասել օգտակարը զուարճալից—այսինքն օգտակար բանը կամ ինչոր օգտակար է, զուարճալի է։

Գոյականաբար վարուող ածականները հոլովվում են Ա և Բ հոլովման պէս։ Երրորդ հոլովման պէս հոլովող ածական չկայ)։

Բայց շատ անգամ անսովոր է ըի վերջացած ածականները Բ հոլովման պէս հոլովել. այսպէս. Զուարճալի, սիրելի ածականները հոլովվում են զուարճալիի, զուարճալիից, սիրելիից և այլն, և ոչ զուարճալու, սիրելուց, որ շատ անգամ հոլոված անորոշ դերբայի հետ կարող է շփոթուիլ։

Կան ածականներ, որոնք չեն կարող հոլովել. այսպէս են՝ քաջի, ՙժանգ, առաջինի և այլն։

Հետևեալ նախադասութիւնների մէջ գծագրուած ածականները պէտք եղած հոլովով ու թուով դրէք.

Աշխատասէր աշակերտը կը վարձատրուի, ծոյլ կը պատժուի։—Հարուստ պարտական են օգնել խեղճ։—Իմաստուն հետ քար կրէ, յիմար հետ փլաւ մի ուտիլ (առած)։—Խնձոր միս (սամ), անխնձոր քանի կուզես (տր.)։ Փոքր (բցռ.) սկսիր որ մեծ հասնիս։—Կոյր չեն կարող տեսնել, կաղ չեն կարող ման գալ, համր չեն կարող խօսիլ։—Եւրոպայում կոյր և համր համար ուսումնարաններ կան։—Տգէտ սովորութիւնն է գիտնական չհաւանել (ցզ.)։—Գեղարուեստի մէջ ճշմարիտ գեղեցիկ է, սուտ տգեղ է։—Նիւթական աչքով ենք տեսնում, վերացական մտքով ըմբռնում։—Սեւ ու սպիտակ մէջ մեծ տարբերութիւն կայ։—Ազնիւ պէտք է զանազանել ստոր (բցռ.), գեղեցիկը տգեղ։

Գ. Թուական անունների կազմութիւնը։

§ 40. ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՒ ԴԱՍԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ.

Թուական անունները երկու գլխաւոր տեսակի են բաժանվում.

1. Քանակական	2. Դասական
1. Մէկ, մի	Առաջին, (մէկերորդ)
2. Երկու	Երկրորդ
3. Երեք	Երրորդ
4. Չորս	Չորրորդ

5. Հինգ	Հինգերորդ
6. Վեց	Վեցերորդ
7. Եօթը	Եօթներորդ
8. Ութ, ութը*	Ութերորդ
9. Ինը	Իններորդ
10. Տասը	Տասներորդ
11. Տասնումէկ, տասնևմէկ	Տասնումէկերորդ
12. Տասներկու	Տասներկուերորդ
13. Տասներեք	Տասներեքերորդ
14. Տասնուչորս	Տասնուչորսերորդ
15. Տասնուհինգ	Տասնուհինգերորդ
16. Տասնուվեց	Տասնուվեցերորդ
17. Տասնուեօթը	Տասնուեօթերորդ
18. Տասնեութը	Տասնութերորդ
19. Տասնուինը	Տասնիններորդ
20. Քսան	Քսաներորդ
21. Քսանումէկ և այլն	Քսանումէկերորդ և այլն
30. Երեսուն	Երեսուներորդ (երեսներորդ)
40. Քառասուն	Քառասուներորդ
50. Յիսուն	Յիսուներորդ
60. Վաթսուն	Վաթսուներորդ
70. Եօթանասուն	Եօթանասուներորդ
80. Ութսուն	Ութսուներորդ
90. Իննսուն	Իննսուներորդ
100. Հարիւր	Հարիւրերորդ
101. Հարիւր մէկ և այլն	Հարիւրմէկերորդ
200. Երկու հարիւր	Երկու հարիւրերորդ
500. Հինգ հարիւր	Հինգ հարիւրերորդ
1000. Հազար	Հազարերորդ
1001. Հազարու մէկ և այլն	Հազարումէկերորդ և այլն
10000. Տասը հազար	Տասը հազարերորդ
100000. Հարիւր հազար	Հարիւր հազարերորդ
1000000. Միլիոն	Միլիոներորդ

1. Քանակական թուականները մէկ-ից մինչև տասը, նոյնպէս և քսան, հարիւր, հազար միլիոն պարզ են, տասնումէկից մինչև տասնուինը բարդ. իսկ երեսուն, քառասուն, յիսուն և այլն, թէպէտ իսկապէս բարդ են, այսինքն երեք տասը, հինգ տասը, բայց որովհետև երկու բառերը որոշ չեն երևում, կարող են ածանցեալ համարուիլ։

2. Դասական թուականները, բացի առաջին, ածանցվում են քանակական թուականներից երորդ մասնիկով*. հինգերորդ, եօթներորդ, հարիւրերորդ։ — Մէկերորդ գործ է ածվում միայն ուրիշ թուականի հետ. քսանումէկերորդ, ութսունումէկերորդ։

* Երկրորդ, երրորդ, չորրորդ ընդունում են րորդ մասնիկ։

3. Քանակական թուականները ն յօդ և էլ մասնիկ ընդունելով կազմում են նոր ձևով թուականներ. երկուսն էլ, չորսն էլ, տասն էլ, հազարն էլ և այլն, որ նշանակում է՝ երկուսը միասին, հազարը միասին։

Գրբ. երկոքեան կամ երկոքին, չորեքին, երկոտասանեքին։

4. Քանակական թուականները նոց մասնիկ ընդունելով կազմում են արժէք ու չափ ցոյց տուող անուններ. երեքանոց, հնգանոց, հարիւրանոց.

Հետևեալ թուանշանները տառերով գրեցէք և ցոյց տուէք ուղղագրութեան առանձնութիւնները.

1. 1 ին. 2. 2-րդ. 30. 30-րդ. 4. 4-րդ. 40. 40-րդ. 5. 5-րդ. 50. 50 րդ. 6. 60-րդ. 7. 70-րդ. 8. 80 րդ 9. 9-րդ. 90. 90 րդ. 10. 15. 17 18. 18-րդ. 19-րդ։

§ 41 ԹՈՒԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ.

Թուական անունները, իբրև հասարակ ածականներ, գոյականից առաջ են դասվում և անփոփոխ մնում. Եր-

կու մարդու. Եօթը գլխուորից. Հարիւր հոգով. Տասներորդ օրը։

Իսկ եթէ մենակ մնան, գոյականի զօրութիւն ունին և հոլովւում են առաջին հոլովման պէս։ Միայն նկատելու է որ՝

1. Մի թուականը՝ եթէ յօդ ունենայ կամ հոլովի, ն տառն է ընդունում, իսկ երկու — ս տառը. մինի, մինից, մինով, մինում. երկուսը, երկուսի, երկուսից երկուսով։

2. Եօթը և ութը թուականները հոլովելիս ը տառը կորչում են. եօթի, ութի, ութից։

3. Ինը, տասը թուականները ը տառը փոխում են ն. ըննի, տասնի, տասնով։

4. Երկու և աւելի բառից բաղկացած դասական թուականներից առաջինը քանակականի ձև է ընդունում, վերջինը երորդ մասնիկ է առնում և հոլովւում է. Հարիւր — քսանութ-երորդին. Հազար — վեցհարիւր-երորդից։

5. Բացարձակ թուականները դասականների տեղ վարվում են տարեթիւ և ամսաթիւ ցոյց տալու համար. ինչպէս. Լևոն Զ մեռաւ Փարիզում հազար երեք հարիւր իննսուն և երեքին, նոյեմբերի տասնուիններին (փոխանակ 1393-րդին, նոյեմբերի 19-րդին)։

Հետևեալ նախադասութիւնների մէջ թուանշանով գրած թուականները տառերով գրեցէք.

2 × 2=4, 7 × 7=49։ Հինգը 10-ի կէսն է։ — 50-ի կէսը 25 է։ Ժամը $9\frac{1}{2}$*է։ Պատարագը սկսվում է $10\frac{1}{2}$-ին։ Մենք ճաշ ենք ուտում ճիշտ 2-ին։ Թատրոնը սկսվում է սովորաբար երեկոյեան $7\frac{1}{4}$-ին։ Շաբաթուան մէջ 6 օր աշխատում ենք և 7-րդ օրը հանգստանում։—Զատկի 40-րդ օրը Համբարձում է, իսկ 50 րդ օրը Հոգեգալուստ։—56-ը որ 7-ով բաժանենք, կը ստանանք 8։—99-ին 1 պակաս է որ 100 ստանանք։—Մեծ Մա-

ափը 16000 ոտնաչափ բարձրութիւն ունի։—12-ը 2 անգամ աւելի է 6-ից, 4 անգամ աւելի է 3-ից և 6 անգամ աւելի է 2-ից։—Կոլոմբոսը գտաւ Ամերիկան 1492 թուականին։—Տպագրութիւնը գտնուեցաւ 1440-ին։

* Շատերը սովորութիւն են արել $9^1/_2$-ը (ինն ու կէս) կարդալ տասնի կէս, որ սխալ է։

Ի. Դերանունների կազմութիւնը։

§ 42. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ.

Դերանունները գործ են ածվում հարցական, պատասխանական և պատմական նախադասութիւնների մէջ։ Հարցական նախադասութիւնների մէջ գործ են դրվում հարցական դերանունները, իսկ պատասխանական և պատմական նախադասութիւնների մէջ նոցա համապատասխանող անձնական ցուցական, ստացական և անորոշ դերանունները։

Հարցական	Պատասխանական
	Անձնական
Ո՞վ, ի՞նչ.	ես, դու, ինքը.
	Ցուցական
	սա, դա, նա.
	Անորոշ
	ոքմին, իքմին, ոմանք.
	Բացասական
	ոչոք, ոչինչ.
Ո՞ր.	**Ցուցական**
	այս, այդ, այն,
	Անորոշ
	միա, ուրիշ, իւրաքանչիւր, ամէն, ամենայն, նոյն, միեւնոյն, որեւիցէ։

	Ստացական
(Ո՞ւմ.)	իմ, քո, իւր, մեր, ձեր, իրանց.
	Անորոշ
	միմեանց, մէկմէկու, իրարու.
Ո՞րպիսի.	այսպիսի, այդպիսի, այնպիսի, նոյնպիսի, որպիսի եւ իցէ.
Ո՞րքան, քանի՞.	այսքան, այդքան, այնքան, նոյնքան, մի քանի։

Բացի սորանից երկրորդական նախադասութիւնների մէջ գործ է ածվում որ յարաբերական դերանունը, երբ որ երկրորդական նախադասութիւնները կապում է գլխաւորների հետ։

§ 43. ԳՈՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ.

1. Հարցական

Եզակի (անչոքնական)

Ո.	Ո՞վ	Ի՞նչ
Հայց.	Ո՞ւմ	Ի՞նչ
Մ. Տ.	Ո՞ւմ	Ինչի, ինչին
Բացռ.	Ումնից, ումից	Ինչից
Գործ.	Ումնով	Ինչով
Ներգ.	— »	Ինչում

2. Անձնական

Եզակի

	1-ին դէմք	2-րդ դէմք	3-րդ դէմք
Ուղ.	Ես	Դու	Ինքը*
Սեռ.	Իմ	Քո	Իր, իւր
Տ. Հ.	Ինձ	Քեզ	Իրան

Բացռ.	Ինձանից, ինձնից	Քեզանից, քեզնից	Իրանից
Գործ.	Ինձանով	Քեզանով	Իրանով
Ներգ.	Ինձանում	Քեզանում	Իրանում

* Ինքը, իրանք անձնականների մտքով գործ են ածվում յաճախ նա, նոքա ցուցականները։

Յոգնակի

Ուղ.	Մենք	Դուք	Իրանք
Սեռ.	Մեր	Ձեր	Իրանց
Տ. Հ.	Մեզ	Ձեզ	Իրանց
Բացռ.	Մեզանից, մեզնից	Ձեզանից, ձեզնից	Իրանցից
Գործ.	Մեզանով	Ձեզանով	Իրանցով
Ներգ.	Մեզանում	Ձեզանում	Իրանցում

3. Ցուցական

	Եզակի		Յոգնակի	
	(Նոր ձև)	(Հին ձև)	(Նոր ձև)	(Հին ձև)
Ուղ.	Սա*	Սա	Սրանք	Սոքա
Սեռ.	Սրա	Սորա	Սրանց	Սոցա
Տ. Հ.	Սրան	Սորան	Սրանց	Սոցա
Բացռ.	Սրանից	Սորանից	Սրանցից	Սոցանից
Գործ.	Սրանով	Սորանով	Սրանցով	Սոցանով
Ներգ.	Սրանում	Սորանում	Սրանցում	Սոցանում

Այսպէս հոլովում են դա և նա ցուցականները։

* Երկու ձևն էլ անխտիր գործ են ածվում, առաջինը աւելի ընտանեկան լեզուի մէջ, երկրորդը գրաւորի մէջ։

Գոյական դերանունների հոլովման և գործածութեան վրայ հետևեալ գիտելիքները կան.

1. Ո՞վ և ինչ հարցականները յոգնակի չունին, միայն ուղղականները երբեմն գործ են ածվում։ Ո՞վքեր եկան մեզ մոտ։ Ի՞նչեր չանցան գլխովս։

2. Անձնական դերանունների տրականը երբեմն կրկնութեամբ գործ է ածվում. ինձ ու ինձ, քեզ ու քեզ, իրան իրան, մեզ ու մեզ, ձեզ ու ձեզ, իրանց իրանց։ Ինձ ու ինձ մտածում էի անցած օրերիս վրայ։

3. Անձնական դերանունների տրականը գործ է ածվում երբեմն ստացական դերանունների հետ. իմը ինձ, քոնը քեզ, իրանը իրան. մերը մեզ, ձերը ձեզ, իրանցն իրանց։ Մինչև որ այս բանը գլուխ հանեմ, իմը ինձ կը հասնի։

4. Ինքը երրորդ դէմքը դերանուանական յոդով վարվում է միւս հոլովների հետ էլ եզակի և յոգնակի, խոսքին աւելի ույժ տալու համար. ես ինքս, դու ինքդ. մենք ինքներս, դուք ինքներդ։ Մենք ինքներս լաւ ենք իմանում մեր օգուտն ու վնասը։ (Զօրութեամբ իմացվում է՝ ձեր խորհրդին կարօտ չենք։)

Նոյն գործածութիւնը երևում է երբեմն և ցուցական դերանունների հետ. սա, ինքը, նա ինքը, նոքա իրանք։

5. Անձնական և ցուցական դերանունների մոտ աւելադրութեամբ գործ են ածվում երբեմն եմ՛ բայի ներկան ու անց. անկատարը որ յարաբերականով, խոսքին աւելի որոշութիւն տալու համար. ես եմ՛ որ, մենք ենք որ, դոքա են որ, և այլն։ Դուք էք որ ամէն բանի առաջ դժուարութիւններ էք հանում։ Սա է որ մեզ այնքան վնասներ հասցրեց։ (Այսինքն դուք և ոչ ուրիշները, սա և ոչ մի այլ մարդ։)

6. Անձնական և ցուցական դերանունների գործիականը վարվում է, երբ հարկ է ցոյց տալ թէ գործողութիւնը ում ձեռով կամ միջնորդութեամբ է կատարվում.

ինչպէս. Եղբայրս քեզանով կամ նրանով փրկուեցաւ վտանգից։ Իսկ եթէ պէտք լինի գործողութեան մասնակցութիւնը ցոյց տալ, վարվում են սեռ. և տրակ. հոլովները հետ նախադրութեամբ. Եղբայրս քեզ հետ կամ նորա հետ փրկուեցաւ վտանգից։

7. Անձնական և ցուցական դերանունների յոգնակի ներգոյականը գործ է ածվում երբեմն անշունչ առարկաների վերաբերութեամբ։ Մեզանում ամառը աւելի շոգ է լինում քան թէ ձեզանում։ Նրանցում լաւ մրգեր կան։—այսինքն մեր, ձեր երկրում, նրանց պարտէզում։

8. Անձնական դերանունների տեղ կամ նոցա հետ միասին գոյականների վերջին ծայրը աւելացնում են երբեմն ս, դ, ն, դիմորոշ յօդերը. 1) խօսքին աւելի ոյժ տալու համար. ինչպէս. Արարածներս չենք կարող պատմել Արարչի բոլոր փառքն ու մեծութիւնը.—այսինքն՝ մենք արարածներ։ Ես ուսուցիչս քանի ու քանի անգամ պատուիրեցի ձեզ աշակերտներիդ որ ժամանակին ուսումնարան գաք։ 2) Համեստութիւն ցոյց տալու համար, այսպէս ասում են՝ անարժանս, մեղաւորս. խեղճիս գլխին ինչե՞ր բերաւ։

Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք իւրաքանչիւր դերանուան տեսակը և հոլովը։

Ո՞ւմ վրայ էք խօսում։ Ո՞վքեր եկան մեզ մօտ։—Ո՞ւմ մօտ էք գնում։—Ո՞ւմ հետ գնացիք ուսումնարան։—Դու ինձ հետ տանը կը մնաս։ Ինչո՞վ էք պարապում։—Ինչի՞ց էք վախենում։—Ո՞ւմից ստացար այդ գրքերը։—Ինչե՞ր խօսեցան ինձ վրայ։—Ես կ'ուղարկեմ քեզ հայերէն գրքեր, իսկ դու ինձ ուղարկէ ֆրանսերէն գրքեր։—Ես ձեր մասին շատ լաւ բաներ եմ լսել։—Մի խնդրէք մեզ. ձեզ համար առանց խնդրելի պատրաստ ենք ամէն բան անելու։—Մենք գնում ենք զբօսնելու. դուք չէք կամենում ինձ հետ գալ։—Նա խնդրում է քեզ որ իրան շուտ շուտ նամակ գրես։—Իրանք էլ չեն իմանում թէ ինչ են անում։ Դուք ինքներդ էք ձեր թշուառութեան պատճառը։—Թող ամէն մարդ իւր համար խօսի։—Քեզանից չէի սպասում այդպիսի ապերախտութեան։—Ի՞նչ յանցանք տեսար նրանում։—Նստիր նորա կողքին։—Դորանից կարող ես իմանալ մեր գործի դրութիւնը։—Ես իմ բոլոր գործերը յանձնեցի սոցա և նոցա։—Դոցա համար է իմ բոլոր աշխատանքը։—Դորա՞ն տեսար թէ դորա եղբօրը։

§ 44. ԱԾԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ.

Ածական դերանունները, հասարակ ածականների պէս, գոյականից նախադաս են վարվում և հոլովման մէջ անփոփոխ են մնում. իսկ եթէ մենակ մնան, գոյականի զօրութիւն ունին և հոլովվում են։ Այսպէս՝

1. Ո՞ր հարցականը յօդով կամ անյօդ գոյական է պահանջում. ո՞ր մարդը, ո՞ր մարդու, ո՞ր մարդով. ո՞ր տները, ո՞ր տներից և այլն։

Ուղղականը և հայցականը գոյականաբար են վարվում. եզակին յօդով, իսկ յոգնակին անյօդ. Ո՞րն է ձեր եղբայրը։ Ո՞րը տամ, ո՞րը պահեմ։ Որո՞նք են ձեր բարեկամները։

2. Ո՞ր հարցականից առաջ է գալիս որ յարաբերական գոյական դերանունը, որ հոլովվում է այսպէս.

Ո. Հ.	Որ	Որոնք
Սեռ.	Որի	Որոնց
Տրակ.	Որին	Որոնց
Բացառ.	Որից	Որոնցից
Գործ.	Որով	Որոնցով
Ներգ.	—	Որոնցում

Այս, այդ, այն ցուցականների գոյականը որոշեալ յօդ է պահանջում և ոչ դերանուանական (ցուցական). ուստի չէ ասվում այս գիրքս, այս գրքիս, այս գրքիցս, այլ՝

Այս գիրքը	Այս գրքերը
Այս գրքի	Այս գրքերի
Այս գրքին	Այս գրքերին
Այս գրքիցը	Այս գրքերիցը
Այս գրքովը	Այս գրքերովը
Այս գրքումը	Այս գրքերումը

Քիչ անգամ է պատահում ցուցական դերանուան և որոշեալ յօդի տեղ դերանուանական յօդ դնել սաստկութեան համար. ինչպէս. Աշխարհիս փառքն ու պատիւները անցաւոր են։ Երկիրս պտտում է ինքն իր վրայ և արեգակի շուրջը։ Նոյնպէս. այսօրուան օրս, այժմեան ժամանակս։

Այս, այդ, այն շատ անգամ մենակ էլ են վարվում իբրեւ գոյական, բայց միշտ անփոփոխ են մնում. Այս է ձեր հաշիւը։ Այդ էր իմ ուզածը։ Այս թող, այն տար։

3. Ստացական դերանունները որոշեալ յօդով գոյական են պահանջում, որ միայն հոլովում է այսպէս.

1. Իմ, քո, իւր եզակի ստացականները եզակի գոյական են պահանջում, եթէ ստացուածը մէկ է. իմ այգին, իւր այգին. յոգնակի գոյական՝ եթէ ստացուածը շատ է. իմ այգիքը, իւր այգիքը։

2. Մեր, ձեր, իրանց յոգնակի ստացականները եզակի գոյական են պահանջում, եթէ ստացուածը մէկ է. մեր այգին, ձեր այգին, իրանց այգին. յոգնակի գոյական՝ եթէ ստացողն էլ, ստացածն էլ շատ է. մեր այգիքը, ձեր այգիքը, իրանց այգիքը։

Աւելի բացայայտութեան համար դնենք այստեղ ստացական ածականների հոլովման պատկերը իրանց գոյականների հետ։

1. Իմ. Քո, Իւր.

Եզակի (եզ. ստացող և եզ. ստացուած)

Ո. Հ.	Իմ	Քո	Իւր	Գիւղը
Ս. Տ.	Իմ	Քո	Իւր	Գիւղին*
Բացռ.	Իմ	Քո	Իւր	Գիւղիցը
Գործ.	Իմ	Քո	Իւր	Գիւղովը
Ներգ.	Իմ	Քո	Իւր	Գիւղումը

Յոգնակի (եզ. ստացող և յոգնակի ստացուած)

Ո. Հ.	Իմ	Քո	Իւր	Գիւղերը
Ս. Տ.	Իմ	Քո	Իւր	Գիւղերին
Բացռ.	Իմ	Քո	Իւր	Գիւղերիցը
Գործ.	Իմ	Քո	Իւր	Գիւղերովը
Ներգ.	Իմ	Քո	Իւր	Գիւղերումը

2. Մեր, Ձեր, Իրանց

Եզակի (յոգ. ստացող և եզ. ստացուած).

Ո. Հ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղը
Ս. Տ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղին
Բացռ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղիցը
Գործ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղովը
Ներգ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղումը

Յոգնակի (յոգն. ստացող և յոգն. ստացուած)

Ո. Հ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղերը
Ս. Տ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղերին
Բացռ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղերիցը

Գործ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղերովը
Ներգ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղերումը

Ն որոշեալ յօդը այս եւ յաջորդ օրինակների մէջ տրականին է վերաբերում եւ ոչ սեռականին (§31)

Շատ անգամ բաւական է համարվում իմ, քո, իւր ստացականների տեղ միայն դերանուանական (ստացական) յօդ դնել գոյականի վրայ. ինչպէս. գիւղս, գիւղերս, փոխանակ իմ գիւղը, իմ գիւղերը*)։

Ահաւասիկ այս տեսակ հոլովման ամբողջ օրինակը.

Եզակի

Ո. Հ.	Գիւղս	Գիւղդ	Գիւղը (այսինքն իւր գիւղը)
Ս. Տ.	Գիւղիս	Գիւղիդ	Գիւղի
Բացռ.	Գիւղիցս	Գիւղիցդ	Գիւղիցը
Գործ.	Գիւղովս	Գիւղովդ	Գիւղովը
Ներգ.	Գիւղումս	Գիւղումդ	Գիւղումը

Յոգնակի

Ո. Հ.	Գիւղերս	Գիւղերդ	Գիւղերը
Ս. Տ.	Գիւղերիս	Գիւղերիդ	Գիւղերին
Բացռ.	Գիւղերիցս	Գիւղերիցդ	Գիւղերիցը
Գործ.	Գիւղերովս	Գիւղերովդ	Գիւղերովը
Ներգ.	Գիւղերումս	Գիւղերումդ	Գիւղերումը

* Աւելորդ կրկնութիւն է ստացական յօդի հետ ստացական դերանուն գործ դնել. Իմ տունս ծախեցի։ Քո հօրիցդ լուր ունիս։

Իսկ մեր, ձեր, իրանց ստացականների գոյականը միայն այն ժամանակ կարող է այս ձեւով վարուել, երբ նախադասութեան միւս բառերից իմացվում է թէ որ դերանունը զօրութեամբ է իմացվում. ինչպէս. ճանապարհին աւազակներ պատահեցան մեզ եւ ունեցածներս ձեռնե-

րիցս խլեցին. այսինքն մեր ունեցածները մեր ձեռներիցը։

Ստացական դերանունները, եթէ մենակ մնան, գոյականի զօրութիւն ունին և յօդ առնելով հոլովւում են այսպէս.

Իմս կամ իմը, իմին, իմիցը, իմովը, իմումը, իմերը, իմերին, իմերիցը, իմերովը, իմերումը։

Քոնդ կամ քոնը, քոնին, քոնիցը, քոնովը, քոնումը, քոները և այլն։

Իւրը կամ իրանը, իրանին, իրանիցը, իրանովը, իրանումը, իրանները և այլն։

Մերը, մերին, մերիցը, մերովը, մերումը, մերերը և այլն։

Ձերը, ձերին, ձերիցը, ձերովը, ձերումը, ձերերը և այլն։

Իրանցը, իրանցին, իրանցիցը, իրանցովը, իրանցումը, իրանցները և այլն։

Այսպէս ասում են՝ Իմն ու քոն տուն է քանդում։
Մենք մերովը գոհ ենք, դուք էլ ձերովը։

Բայց սորանից, մեր, ձեր առանձին ձեւով յոգնակի են լինում. մերոնք, մերոնց, մերոնցից. ձերոնք, ձերոնց ձերոնցից։—Այսօր մերոնք գիւղ գնացին. այսինքն՝ մեր ընտանիքը կամ մերձաւորները։

Հետեւեալ նախադասութիւնների մէջ գտէք իւրաքանչիւր դերանուան տեսակը և հոլովը.

Ո՞ր աշակերտը կամ աշակերտներից ո՞րը արժանացաւ առաջին մրցանակը ստանալու—Ո՞ր բարեկամները կամ բարեկամներիցդ ո՞րո՞նք այստեղ են։ Այս գրքերից ո՞րն առնեմ, ո՞րը տամ։ Ահա այն զօրավարը, որին պարտական է քաղաքը իւր ազատութիւնը։—Մեր պարտէզումը շատ պտղատու ծառեր կան,

որոնց մեծ մասը հօրս տնկածն են։—Բարեկամս, որից ստացայ այս նամակը, արժանաւոր մարդ է։ Ես պատիւ չունիմ ճանաչելու ոչ ձեր հօրը, ոչ ձեր մօրը։—Իմ գրիչը քոնիցը լաւ է գրում։—Ձեր կալուածները ծախու են։—Այս տունը իմն է։ —Ձերոնց հետ տեսնուեցայ ու խօսեցայ։—Իմ թուղթը պրծաւ, տո՛ւր ինձ քոնիցը մէկ-երկու թերթ։ Իմ գրածի մէջ աւելի սխալ կայ քան թէ քոնի մէջ։—Այս գիրքը ի՞մն է թէ քոնն է։ Մե՞րն են թէ ձերն են այս մատիտները։

§ 45. ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Անորոշ դերանունների մէջ կան որ գոյական են, կան որ ածական են, կան էլ որ միանգամայն գոյական և ածական են, այսինքն կարող են թէ գոյականաբար և թէ ածականաբար վարուել.

1. Գոյական անորոշ դերանուններ. *ոքմին* (կարդա *օքմին*), *իքմին, ոչոք, ոչինչ, ոմանք, իրար, մէկզմէկ, միմեանց*։

	Եզակի		Հոգնակի	
Ո. Հ.	Ոքմին	Իքմին	Ոքմիններ (մներ)	Իքմիններ (մներ)
Ո. Տ	Ոքմինի (մնի)	Իքմինի (մնի)	Ոքմինների	Իքմինների
Բացռ.	Ոքմինից	Իքմինից	Ոքմիններից	Իքմիններից
Գործ.	Ոքմինով	Իքմինով	Ոքմիններով	Իքմիններով
Ներգ.	—	—	—	—

	Եզակի (անհոգնական)		Հոգնակի (անեզական)
Ո. Հ.	Ոչոք	Ոչինչ	Ոմանք
Ս. Տ.	Ոչոքի	Ոչնչի	Ոմանց
Բացռ.	Ոչոքից	Ոչնչից	Ոմանցից
Գործ.	(Ոչոքով)	Ոչնչով	—
Ներգ.	—	Ոչնչում	—

Եզականի տեղ գործ է ածվում *մէկը* կամ երբեմն նաև *մարդ* գոյականը. Մարդ չէ իմանում թէ ինչ խօսի։

	Եզակի		Հոգնակի
Հայց.	Իրար	Մէկզմէկ	Միմեանց
Ս. Տ.	Իրարու	Մէկզմէկու	Միմեանց
Բացռ.	Իրարուց	Մէկզմէկուց	Միմեանցից
Գործ.	Իրարով	Մէկզմէկով	Միմեանցով

2. Ածական անորոշ դերանունները իրանցից յետոյ միշտ գոյական են պահանջում ու երբէք չեն հոլովում. ինչպէս. *Ամենայն* մարդ պէտք է իր վերջը մտածէ։ Աշխատելու է *որևիցէ* կերպով վերջ տալ այս գործին։ *Որևիցէ* գործեր։

3. Մնացած բոլոր անորոշ դերանունները ածական են՝ եթէ գոյականի հետ են, գոյական են՝ եթէ մենակ են. և այն ժամանակ որոշեալ յօդ են առնում և հոլովում են այսպէս.

Միւսը, ուրիշը, իւրաքանչիւրը կանոնաւոր են հոլովում, վերջինը միայն եզակի. Միւսը, միւսին, միւսիցը, միւսովը, միւսումը, միւսները և այլն։

Ուրիշը, ուրիշին, ուրիշիցը, ուրիշովը, ուրիշումը, ուրիշները և այլն։

Ամէն կամ *ք*-ով *ամէնքը* հոլովում է եզակի, բայց յոգնակի միտք ունի. Ամէնը, ամէնին, ամէնից կամ ամէնքիցը.

Որպիսի, այսպիսի և այլն միայն յոգնակի են հոլովում։ Այսպիսիքը կամ այսպիսիները, այսպիսիներիցը, այնպիսիքը, այնպիսիներին, նոյնպիսիներիցը։

Որքանը, այսքանը, նոյնքանը հոլովում են եզ. և յոգն.

Մի քանի, քանի յօդից առաջ ը տառ են ընդունում և հոլովում են եզակի և յոգնակի, բայց միշտ յոգնակի նշանակութիւն ունին։

Մի քանիսը, մի քանիսին, մի քանիսից, մի քանիսո-վը, մի քանիսումը. քանիսները, քանիսներին, քանիսներից, քանիսներովը, քանիսներումը։

Նոյնը, միեւնոյնը սովորաբար միայն ուղղական և հայցական են գործ ածվում։

Հետևեալ նախադասութիւնների մէջ անորոշ դերանուններին հոլովները ցոյց տուէք.

Ալէքսանդրապօլի նոր եկեղեցին համարեա ոչնչով չէ զանազանվում Անիի մայր եկեղեցուց։—Ոքմինի հետ տեսնուեցար այսօր։—Իքմինի վրայ խօսեցար նորա հետ։—Ոչոքի չեմ տեսել և ոչնչի վրայ չեմ խօսել։—Երէկ ես տեսայ ոմանց կամ մէկ քանիսին իմ առաջուան ընկերներից։—Քանի՞վ գնեցիր այս գիրքը։—Այս երեխայքը զանազանվում են միմեանցից կամ մէկմէկուց թէ բնաւորութեամբ, թէ ընդունակութեամբ։—Աշակերտներից մի քանիսին պատժեցին, միւսներին ներեցին։—Քանի՞սը կան որ տառերը չեն իմանում։—Իւրաքանչիւրից իւր կարողութեան չափ է պահանջվում։

Ը. Բայերի կազմութիւնը։

§ 46. ԲԱՅԵՐԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ.

Բայերը ցոյց են տալիս գործողութիւն և դրութիւն, կամ նաև որպիսութիւն որ հետզհետէ փոխվում է, ուստի և կազմվում են.

1. Բայերի արմատներից. բերել, կարդալ, խոստանալ։
2. Գոյական անուններից. ջրել աղալ, փրփրել, լուսանալ։

3. Ածական անուններից, ղեղնել, կարմրել, ծերանալ։
4. Մակբայներից. հեռանալ, մօտենալ, ուշանալ։

§ 47. ԲԱՅԵՐԻ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.—ՊԱՐԶ, ԲԱՐԴ ԵՒ ԲԱՂԱԴՐԵԱԼ ԲԱՅԵՐ.

Բայերը ունին չորս վերջաւորութիւն. ել, իլ, ալ, անալ. որոնց վրայ հիմնվում են բայերի չորս կանոնաւոր խոնարհմունքը։ Այս վերջաւորութիւնները դրուելով բայերի արմատների վրայ՝ կազմվում են.

1. Պարզ բայեր. ինչպէս. գովել, բնակել, կարդալ, բարկանալ։

2. Բարդ բայեր. ինչպէս. պատուասիրել, կառավարել, վարձատրել։

3. Բաղադրեալ բայեր, որոնք կազմվում են գոյականով և մանաւանդ բայի արմատով ու բայով. օրօրինակ. ծայն տալ, աչք ածել, պար գալ, կուլ գնալ և այլն։

Շատ անգամ բայի արմատի ու վերջաւորութեան մէջ զանազան տառեր ու մասնիկներ են մտնում և կազմում են ածանցեալ բայեր. այսպէս.

1) ն տառը, որ անցեալ ժամանակում, հրամայականում և անցեալ դերբայում դուրս է ընկնում. ինչպէս. գտնել, գտայ, գտիր, գտել, գտած։

2) չ տառը, որ միենոյն ժամանակներում դուրս է ընկնում. փախչիլ, փախայ, փախիր, փախել, փախած։

3) ցն մասնիկը, որ չէզոք բայից ներգործական է կազմում. խաղալ-խաղացնել, չորանալ-չորացնել, իսկ ներգործական բայից կրկին ներգործական կամ անցողական. մոռանալ-մոռացնել, սովորիլ-սովորեցնել։

4) ոտ, տ մասնիկները, որ ցոյց են տալիս գործողու-

թեան մանր կրկնողութիւնը կամ թէ գործողութիւնը, որ շատ միատեսակ առարկաների վրայ է կատարւում. քննտել, մոլթոտել, կոտրտել, կտրտել։

Շատ անգամ նոյն մտքով բայերի արմատն է կրկնվում. այսպէս են՝ ծգծգել, թափթփել, չափչփել. և մանաւանդ հնչիւնների նմանողութեամբ. խշխշալ, մռմռալ, փսփսալ, մրթմրթալ, վնգվնգալ, ղմզմզալ։

Նկատելու է որ բարդ բայի երկրորդ մասը պարզ արմատ պիտի լինի. այսպէս՝ կարգադրել բարդուած է կարգ գոյականով և դնել բայով, որի արմատն է դր. լրտեսել բարդուած է լուր գոյ. և տեսնել բայով, որի արմատն է տես։

Բաղադրեալ բայերի մէջ կան որ պարզ ձևով էլ գործ են ածվում, բայց նշանակութիւնները փոխվում է. այսպէս են թափել և թափ տալ, քաշել և քաշ տալ։

---

1. Հետևեալ արմատներից պարզ բայեր կազմեցէք.

Աս—խօս կար—գործ—շարժ—ծեծ—բեր—սպան—հան—շէն—սէր—տեղ—գիծ—գին—լուծ—սուր—ջուր—կախ—հաշիւ—թիւ—հաւան—նիստ—աշխատ—խաղ—խեղճ—զեղջ—հող—ողբ—մեծ—փոքր—ծանր—զօր—գող—սև։

2. Հետևեալ արմատներից ու բայերից կազմեցէք ածանցեալ բայեր.

Տես—հաս—գետ—մուտք—մեռ—հատ—(Ն տառով)—փախ—կոր—սառ—հալ—(Չ տառով)—կարդալ—ուտել—խմել—ճանաչել—մոռանալ—հաւանել—մեծանալ—չորանալ—տաքանալ—(ցնել մասն.)։

3. Հետևեալ բայերից կազմեցէք գործողութեան կրկնողութիւն ցոյց տուող բայեր.

Կապել—բռնել—նստել—պոկել—խօցել—կտրել—կոտրել—պատռել—(ռռ, տ մասն.)—ձգել—քաշել—թափել—վազել—չափել—կապել—ծակել—ճաքել—տրաքել—(արմատի կրկնութեամբ)։

4. Ցոյց տուէք հետևեալ պարզ ու բաղադրեալ բայերի նշանակութիւնը.

Քաշել, քաշ տալ—թափել, թափ տալ—շաղել, շաղ տալ—մանել, ման ածել—դիմել, դէմ անել։

§ 48. ԲԱՅԵՐԻ ՊԱՐԶ ԵՒ ԲԱՂԱԴՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ։

Բայերը երկու տեսակ ժամանակ ունին՝ պարզ և բաղադրեալ։

Պարզ ժամանակները կազմվում են բայի արմատի վըրայ այլ և այլ վերջաւորութիւններ աւելացնելով. ինչպէս. սպասեցի, սպասէ, սպասող։

Բաղադրեալ ժամանակները կազմվում են դերբայներով և եմ ու լինիմ չէզոք բայերով, որ այս պատճառով կոչվում են օժանդակ կամ օգնական բայեր. սպասել եմ, սպասելու էի, սպասած կը լինի։

Ահաւասիկ պարզ և բաղադրեալ ժամանակների անունները իրանց խոնարհման կարգով.

Ա. Սահմանական եղանակն ունի եօթը ժամանակ.

1. Ներկայ. Ես տեսնում եմ։
2. Անցեալ անկատար. Ես տեսնում էի։
3. Անցեալ կատարեալ. Ես տեսայ։
4. Վաղակատար. Ես տեսել եմ։
5. Գերակատար. Ես տեսել էի։
6. Ապառնի պարզ. Ես կը տեսնեմ։
7. Ապառնի բաղադրեալ կամ անցեալ. Ես տեսած կը լինիմ։

Բ. Պայմանական եղանակն ունի երկու ժամանակ.

1. Ներկայ. Ես կը տեսնէի։
2. Անցեալ. Ես տեսած կը լինէի։

Գ. Հրամայական եղանակն ունի միայն մի ժամանակ, որ թէ ներկայի և թէ ապառնիի միտք ունի. Տես, տեսէք։

Դ. Ստորադասական եղանակն ունի չորս ժամանակ.

1. Ներկայ կամ ապառնի. Նա կամենում է որ ես տեսնեմ։

2 Անկատար. Նա կամենում էր որ ես տեսնէի:

3. Կատարեալ. Նա կասկածում է որ ես տեսած լինիմ։

4. Գերակատար. Նա կասկածում էր որ ես տեսած լինէի։

Ե. Դերբայն ունի երեք ժամանակ.

1. Ներկայ. Տեսնող. 2. Անցեալ. Տեսել, տեսած։ 3. Ապառնի. Տեսնելու։

Սահմ. ներկ. և անց. անկատարի ում մասնիկը գոյ. անուններին ներգոյականի վերջաւորութիւնն է, այնպէս որ ես տեսնում եմ, իսկապէս նշանակում է ես տեսնելու մէջ եմ, ես տեսնելու էի.—ես տեսնելու մէջ էի։

Ապառնի և պայմ. ժամանակների կը մասնիկը առաջ եկած է համարվում կամ բայի եղ. 3-րդ դէմքից ու շաղկապով, այսինքն կայ ու, որ կրճատուել, եղել է նախ կ'ու, կու և վերջապէս կը.— Ձայնաւորով սկսող բայերից առաջ ը դուրս է ընկնում և նորա տեղը ապաթարց դրվում. կ'երթամ, կ'ասէի։

Բաղադրեալ ժամանակների օգնական բայերը կարող են բուն բայից բաժանուել, յետ ու առաջ դասուել, բաց թողուել, որով խօսքը առանձին ոյժ ու կենդանութիւն է ստանում.

Առհասարակ եթէ խօսողը կամենում է խօսքի բոլոր ոյժը գործողութեան մէջ կենդրոնացնել, բուն բայն առաջ է դասվում և օժանդակը յետոյ. ինչպէս Ես տեսել եմ քո եղբօրը և նորա հետ խօսել (եմ)։ Իսկ եթէ խօսքի զօրութիւնը ուրիշ որևիցէ բառի մէջ է կենդրոնացած, այն բառը օժանդակ բայի հետ նախադասվում են, իսկ բուն բայը յետադաս է մնում. Ես քո եղբօրն եմ տեսել և նորա հետ (եմ) խօսել. այսինքն քո եղբօրն եմ տեսել և ոչ մի

ուրիշի։ Այս է պատճառը որ հարցական, բացագանչական և բացասական նախադասութիւնների մէջ հարցական և բացասական բառերը օժանդակ բայի հետ առաջ են դասվում, և բուն բայը յետոյ. ինչպէս. Ո՞ւր ես գնում։ Ո՞վ է եկել։ Ինչե՞ր եմ լսում։ Չեմ իմանում թէ ի՞նչ է կամենում։

§ 49. Եմ և լինել ԲԱՅԵՐԸ ՈՒ ՆՈՑԱ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ.

Եմ և լինել բայերը, որ ըստ սեռի չէզոք են, նախադասութեան մէջ կրկնակի պաշտօն են վարում. երբեմն ստորոգեալ են, երբ առարկայի էութիւնը կամ գոյութիւնն են յայտնում, և այն ժամանակ կոչվում են էական բայեր. ինչպէս. Ո՞վ է. ես էի. նա կը լինի: Երբեմն էլ ենթական ու բայն իրարու հետ կապակցում են, կամ օգնում են միւս բայերը խոնարհելու, և այն ժամանակ կոչվում են օժանդակ կամ օգնական բայեր։

Միւս բայերի խոնարհմանը ծանօթանալուց առաջ հարկաւոր է իմանալ օգնական բայերի խոնարհումը, նախ՝ որովհետև միւսներից աւելի գործածական են և երկրորդ՝ որ բոլոր բայերի խոնարհման մէջ մտնում են։ Ահաւասիկ նոցա խոնարհմունքը։

Ա. Եմ.

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

Եզակի	Ես եմ, դու ես, նա է.
Յոգնակի	Մենք ենք, դուք էք, նոքա են։

Անցեալ անկատար

Եզակի	Ես էի, դու էիր, նա էր.
Յոգնակի	Մենք էինք, դուք էիք, նոքա էին։

Բ. Լինել

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ Ես լինում եմ, դու լինում ես, նա լինում է.
Մենք լինում ենք, դուք լինում էք, նոքա լինում են։

Անցեալ անկ. Ես լինում էի, դու լինում էիր, նա լինում էր.
Մենք լինում էինք, դուք լինում էիք, նոքա լինում էին։

Անցեալ կատ. Ես եղայ, դու եղար, նա եղաւ.
Մենք եղանք, դուք եղաք, նոքա եղան։

Վաղակատար Ես եղել եմ, դու եղել ես, նա եղել է.
Մենք եղել ենք, դուք եղել էք, նոքա եղել են։

Գերակատար Ես եղել էի, դու եղել էիր, նա եղել էր.
Մենք եղել էինք, դուք եղել էիք, նոքա եղել էին։

Ապառ. պարզ Ես կը լինիմ, դու կը լինիս, նա կը լինի.
Մենք կը լինինք, դուք կը լինիք, նոքա կը լինին։

Ապ. բաղադր. Ես եղած կը լինիմ, դու եղած կը լինիս, նա եղած կը լինի.
Մենք եղած կը լինինք, դուք եղած կը լինիք, նոքա եղած կը լինին։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ Ես կը լինէի, դու կը լինէիր, նա կը լինէր.
Մենք կը լինէինք, դուք կը լինէիք, նոքա կը լինէին։

Անցեալ Ես եղած կը լինէի, դու եղած կը լինէիր, նա եղած կը լինէր.
Մենք եղած կը լինէինք, դուք եղած կը լինէիք, նոքա եղած կը լինէին։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկ. կամ ապառ. Եղիր դու, եղէք դուք։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ (որ) Ես լինիմ, դու լինիս, նա լինի.
(որ) Մենք լինինք, դուք լինիք, նոքա լինին։

Անկատար (որ) Ես լինէի, դու լինէիր, նա լինէր։
(որ) Մենք լինէինք, դուք լինէիք, նոքա լինէին։

Կատարեալ (որ) Ես եղած լինիմ, դու եղած լինիս, նա եղած լինի.
(որ) Մենք եղած լինինք, դուք եղած լինիք, նոքա եղած լինին։

Գերակատար (որ) Ես եղած լինէի, դու եղած լինէիր, նա եղած լինէր.
(որ) Մենք եղած լինէինք, դուք եղած լինէիք, նոքա եղած լինէին։

Դ Ե Ր Բ Ա Յ

Անորոշ. Լինել. *Ներկ.* եղող. *Անց.* եղել, եղած. *Ապռ.* լինելու։

Հետեւեալ նախադասութիւնները լրացրէք իւրաքանչիւրին մօտ աւելացնելով *հիւանդ լինել* ստորոգեալը.

Երբ Արշակը աշխատում է, հիւանդ է լինում։ Վաղը եթէ Արշակը աշխատէր... Եթէ Արշակը աշխատում էր... Արշակը չատ կը ձանձրանար. . Արշակը միշտ ձանձրացել է, երբ որ... Արշակը միշտ կը ձանձրանայ, երբ որ... Բարեկամ, դու չատ ես ձանձրանում, երբ... Դու չատ էիր ձանձրանում, երբ որ... Որպէս զի Արշակը ձանձրանայ, պէտք է... Որպէս զի Արշակը ձանձրանար, պէտք է...

§ 50. ԱՌԱՋԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ *ԵՎ* ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ.

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	*Ազատում եմ, ազատում ես, ազատում է.* *Ազատում ենք, ազատում էք, ազատում են:*
Անցեալ անկ.	*Ազատում էի, ազատում էիր, ազատում էր.* *Ազատում էինք, ազատում էիք, ազատում էին:*
Անցեալ կատ.	*Ազատեցի, ազատեցիր, ազատեց.* *Ազատեցինք, ազատեցիք, ազատեցին:*
Վաղակատար	*Ազատել եմ, ազատել ես, ազատել է.* *Ազատել ենք, ազատել էք, ազատել են:*
Գերակատար	*Ազատել էի, ազատել էիր, ազատել էր.* *Ազատել էինք, ազատել էիք, ազատել էին:*
Ապառնի պարզ	*Կ'ազատեմ, կ'ազատես, կ'ազատէ:* *Կ'ազատենք, կ'ազատէք, կ'ազատեն:*
Ապ. բաղադր.	*Ազատած կը լինիմ, ազատած կը լինիս, ազատած կը լինի.* *Ազատած կը լինինք, ազատած կը լինիք, ազատած կը լինին:*

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	*Կ'ազատէի, կ'ազատէիր, կ'ազատէր.* *Կ'ազատէինք, կ'ազատէիք, կ'ազատէին:*
Անցեալ	*Ազատած կը լինէի, ազատած կը լինէիր, ազատած կը լինէր.* *Ազատած կը լինէինք, ազատած կը լինէիք, ազատած կը լինէին:*

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկ. և ապառնի Ազատէ՛ կամ ազատի՛ր, ազատեցէ՛ք:

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	*(որ) Ազատեմ, ազատես, ազատէ.* *(որ) Ազատենք, ազատէք, ազատեն:*
Անկատար	*(որ) Ազատէի, ազատէիր, ազատէր.* *(որ) Ազատէինք, ազատէիք ազատէին:*
Կատարեալ	*(որ) Ազատած լինիմ, ազատած լինիս, ազատած լինի.* *(որ Ազատած լինինք, ազատած լինիք, ազատած լինին:*
Գերակատար	*(որ) Ազատած լինէի, ազատած լինէիր, ազատած լինէր.* *(որ) Ազատած լինէինք, ազատած լինէիք, ազատած լինէին:*

Դ Ե Ր Բ Ա Յ

Անցեալ. Ազատել. Ներկ. ազատող. Անց. ազատել, ազատած, Ապառնի ազատելու:

Այսպէս խոնարհվում են պարզ և վերջացած ներգ. և չէզոք բայերը, որոնց անց. կատարեալը լինում է եցի, հրամայականը է և եցէք. իսկ ապառնիի, պայմանականի և ստորադասականի պարզ ժամանակները կազմվում են եմ բայի ներկ. և անց. անկատար ժամանակներով:

---

1. Հետևեալ եզակի նախադասութիւնները յոգնակի փոխեցէք.

Կատուն մլաւում է։—Շունը հաչում է։—Կովը բառաչում է։—Երեխան աղաղակում է։—Սոխակը երգում է։—Մարդս մտածում է։—Այս մատաղ գառը մայում է, մայում էր, մայեց, մայել էր։—Ես պատմում էի և դու լսում էիր։—Իզուր յանդիմանեցիր այս աշակերտին։—Ցանկանում եմ որ փորձես այս գրիչը։—Կը ցանկայի որ փորձէիր այս գրիչը։—Ես աղօթում եմ, ես աղօթում էի, ես աղօթեցի, ես աղօթել եմ, ես միշտ կ՚աղօթեմ Աստծուն, դու էլ աղօթէ։

2. Հետևեալ յոգնակի նախադասութիւնները եզակի փոխեցէք։

Ձիաները խրխնջում են։—Առիւծները մռնչում են։—Տերևները խշխշում են։—Հողագործները արտերը վարում, ցանում և հնձում են։—Թոյլ աշակերտները սիրում են խաղալ և ատում են ուսումը։—Դերձակները ձևեցին և կարեցին մեր շորերը։—Տասն անգամ չափեցէք, մէկ անգամ կտրեցէք։—Նամակը գրեցինք, կընքեցինք և ուղարկեցինք։—Անկարելի է որ այսպէս շուտ գրած լինիք ձեր նամակը։—Պէտք էր որ մինչև այժմ պատրաստած լինէիք ձեր դասերը։

§. 51 ԵՐԿՐՈՐԴ ԽՈՆԱՐՀՈՒՄ *իլ* ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ։

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ Համարում եմ, համարում ես, համարում է.
Համարում ենք համարում էք, համարում են։

Անցեալ անկ. Համարում էի, համարում էիր, համարում էր.
Համարում էինք, համարում էիք, համարում էին։

Անցեալ կատ. Համարեցայ, համարեցար, համարեցաւ.
Համարեցանք, համարեցաք, համարեցան։

Վաղակատար. Համարել եմ, համարել ես, համարել է.
Համարել ենք, համարել էք, համարել են։

Գերակատար Համարել էի, համարել էիր, համարել էր.
Համարել էինք, համարել էիք, համարել էին։

Ապառնի պարզ. Կը համարիմ, կը համարիս, կը համարի.
Կը համարինք, կը համարիք, կը համարին։

Ապառնի բաղադր. Համարած կը լինիմ, համարած կը լինիս, համարած կը լինի.
Համարած կը լինինք, համարած կը լինիք, համարած կը լինին։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ Կը համարէի, կը համարէիր, կը համարէր։
Կը համարէինք, կը համարէիք, կը համարէին։

Անցեալ Համարած կը լինէի, համարած կը լինէիր, համարած կը լինէր.
Համարած կը լինէինք, համարած կը լինէիք, համարած կը լինէին։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ Համարէ կամ համարիր, համարեցէք։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ (որ) Համարիմ, համարիս, համարի.
(որ) Համարինք, համարիք, համարին։

Անկատար (որ) Համարէի, համարէիր, համարէր.
(որ) Համարէինք, համարէիք, համարէին։

Կատարեալ (որ) Համարած լինիմ, համարած լինիս, համարած լինի.
(որ) Համարած լինինք, համարած լինիք, համարած լինին։

Գերակատար	(որ) Համարած լինէի, համարած լինէիր, համարած լինէր.
	(որ) Համարած լինէինք, համարած լինէիք, համարած լինէին։

ԴԵՐԲԱՅ

Աներոշ. համարիլ (համարել). *Ներկ*. համարող. *Անց*. համարել, համարած. *Ապռ*. համարելու։

Այսպէս խոնարհվում են *իլ* վերջացած ըստ մեծի մասին չէզոք բայերը, որոնց անց. կատարեալը լինում է *եցայ*, հրամ. է, *եցէք*։ Աներոշ դերբայը սովորութիւն է եղել առաջին խոնարհման բայերի պէս *ել* վերջաւորել*. *ընակել*, *ապրել*, *աշխատել*. փոխանակ *ընակիլ*, *աշխատիլ*։

*) Այս է պատճառը որ ոմանք պարզ ապառնին և ստորադասական ներկան առաջին խոնարհման պէս եմ են վերջացնում, կը խօսեմ, որ բնակեմ. փոխանակ կը խօսիմ, որ բնակիմ։ Իսկ անց. կատարեալ շատ անգամ առաջին խոնարհման պէս են վարվում. համարեցի, խօսեցիր, ապրեցինք, աշխատեց։

---

1. Հետևեալ եզակի նախադասութիւնները յոգնակի փոխեցէք.

Ծառը կանաչում է։—Ծաղիկը ծաղկում էր։—Երեխան չուքից քրտնեցաւ ու կարմրեցաւ։—Դաշտը սպիտակել է ձիւնից։—Ես սովորած չեմ այդպիսի անգործ կեանք վարել։—Եթէ աշխատած լինէիր, այժմ կը վայելէիր։—Ես չեմ կարծում որ դու յաջողիս քո ձեռնարկութեան մէջ։—Եթէ պատահիմ, հետը կը խօսիմ։—Եթէ պատահած լինէի, հետը խօսած կը լինէի։—Քանի փոքր ես՝ աշխատէ՛ որ երբ մեծանաս, կորցրած ժամանակիդ համար չցաւիս։

2. Հետևեալ յոգնակի նախադասութիւնները եզակի փոխեցէ՛ք.

Մենք նստած ենք։—Դուք պառկած էք։—Մեր բարեկամները յոգնած են։—Կամաց գնացէք որ չը դղրդէք։—Մենք պարապում ենք, պարապեցանք և միշտ կը պարապինք մեր գործով։—Պարապեցէք ձեր դասերով։—Մենք կը պարապէինք մեր դասերով, եթէ դադրած չլինէինք։—Եթէ հետը խօսած լինէիք, կը հաւանէիք նորան։

§ 52. ԵՐՐՈՐԴ ԽՈՆԱՐՀՈՒՄ *ալ* ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ.

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	Կարդում եմ, կարդում ես, կարդում է.
	Կարդում ենք, կարդում էք, կարդում են։
Անցեալ անկատար	Կարդում էի, կարդում էիր, կարդում էր.
	Կարդում էինք, կարդում էիք, կարդում էին։
Անցեալ կատարեալ	Կարդացի, կարդացիր, կարդաց.
	Կարդացինք, կարդացիք, կարդացին։
Վաղակատար	Կարդացել եմ, կարդացել ես, կարդացել է.
	Կարդացել ենք, կարդացել էք, կարդացել են։
Գերակատար	Կարդացել էի, կարդացել էիր, կարդացել էր.
	Կարդացել էինք, կարդացել էիք, կարդացել էին։
Ապառնի պարզ	Կը կարդամ, կը կարդաս, կը կարդայ.
	Կը կարդանք, կը կարդաք, կը կարդան։
Ապռ. բաղադրեալ	Կարդացած կը լինիմ, կարդացած կը լինիս, կարդացած կը լինի.
	Կարդացած կը լինինք, կարդացած կը լինիք, կարդացած կը լինին։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	Կը կարդայի, կը կարդայիր, կը կարդար.
	Կը կարդայինք, կը կարդայիք, կը կարդային։

Անցեալ Կարդացած կը լինէի, կարդացած կը լինէիր, կարդացած կը լինէր․
Կարդացած կը լինէինք, կարդացած կը լինէիք, կարդացած կը լինէին։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Կարդա՛․ կարդացէ՛ք։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ (որ) Կարդամ, կարդաս, կարդայ․
(որ) Կարդանք, կարդաք, կարդան։

Կատարեալ (որ) Կարդայի, կարդայիր, կարդար․
(որ) Կարդայինք, կարդայիք, կարդային։

Անկատար (որ) Կարդացած լինիմ, կարդացած լինիս, կարդացած լինի․
(որ) Կարդացած լինինք, կարդացած լինիք կարդացած լինին․

Գերակատար (որ) Կարդացած լինէի, կարդացած լինէիր, կարդացած լինէր։
(որ) Կարդացած լինէինք, կարդացած լինէիք, կարդացած լինէին։

ԴԵՐԲԱՅ

Անորոշ կարդալ․ *Ներկ.* կարդացող․ *Անց.* կարդացել, կարդացած, *Ապռ.* կարդալու։

Այսպէս խոնարհվում են ալ վերջացած ներգ. ու չէզոք բայերը, որոնց անց. կատարեալը լինում է անց, հրամ. ու եւ ացէ՛ք։

1. Հետեւեալ եզակի նախադասութիւնները յոգնակիի փոխեցէք․

Ով կը խաղայ, նա կը կաղայ։—Առաջ կարդա՛, յետոյ խաղա՛։—Դու կը խաղաս, եթէ տանը մնաս։—Ջաղացպանը ցորենը աղում է, աղաց, կ՚աղայ։—Խղճա՛ քո նմանին, որ ուրիշն էլ քեզ խղճայ։—Եթէ դու գնաս, ես կը մնամ, եթէ դու մնաս, ես կը գնամ։—Գնա՛ ուր պիտի գնայիր, ես կը մնամ այստեղ։

2. Հետեւեալ յոգնակի նախադասութիւնները եզակի փոխեցէք․

Մշակները ցորենը աղացին։—Մենք գնացինք պարտէզ։—Դուք ինչի՞ տանը մնացիք։ Մենք գիրք կը կարդանք, եթէ տանը մնանք։—Մենք գիրք կը կարդայինք, եթէ .. Մենք գիրք կարդացած կը լինէինք, եթէ... Պէտք է գնանք ուսումնարան։—Պէտք է գնայիք եկեղեցի։ Պէտք է տուն գնային։

§ 53. ՉՈՐՐՈՐԴ ԽՈՆԱՐՀՈՒՄ *անալ* ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ։

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ Խոստանում եմ, խոստանում ես, խոստանում է․
Խոստանում ենք, խոստանում էք, խոստանում են։

Անցեալ անկ. Խոստանում էի, խոստանում էիր, խոստանում էր․
Խոստանում էինք, խոստանում էիք, խոստանում էին։

Անցեալ կատ. Խոստացայ, խոստացար, խոստացաւ․
Խոստացանք, խոստացաք, խոստացան։

Վաղակատար Խոստացել եմ, խոստացել ես, խոստացել է․
Խոստացել ենք, խոստացել էք, խոստացել են։

Գերակատար Խոստացել էի, խոստացել էիր, խոստացել էր․
Խոստացել էինք, խոստացել էիք, խոստացել էին։

Ապառնի պարզ Կը խոստանամ, կը խոստանաս, կը խոստանայ․
Կը խոստանանք, կը խոստանաք, կը խոստանան։

Ապռ. ըաղաղ. Խոստացած կը լինիմ, խոստացած կը լինիս, խոստացած կը լինի.
Խոստացած կը լինինք, խոստացած կը լինիք, խոստացած կը լինին։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ Կը խոստանայի, կը խոստանայիր, կը խոստանար.
Կը խոստանայինք, կը խոստանայիք, կը խոստանային։

Անցեալ Խոստացած կը լինէի, խոստացած կը լինէիր, խոստացած կը լինէր.
Խոստացած կը լինէինք, խոստացած կը լինէիք, խոստացած կը լինէին։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Խոստացի՛ր. խոստացէ՛ք։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ (որ) Խոստանամ, խոստանաս, խոստանայ.
(որ) Խոստանանք, խոստանաք, խոստանան։

Անկատար (որ) Խոստանայի, խոստանայիր, խոստանար.
(որ) Խոստանայինք, խոստանայիք, խոստանային.

Կատարեալ (որ) Խոստացած լինիմ, խոստացած լինիս, խոստացած լինի.
(որ) Խոստացած լինինք, խոստացած լինիք, խոստացած լինին։

Գերակատար (որ) Խոստացած լինէի, խոստացած լինէիր, խոստացած լինէր.
(որ) Խոստացած լինէինք, խոստացած լինէիք, խոստացած լինէին։

ԴԵՐԲԱՅ

Անորոշ. խոստանալ, Ներկ. խոստացող. Անցեալ խոստացել, խոստացած. Ապառնի խոստանալու։

Այսպէս խոնարհվում են անալ և մի քանի ենալ վերջաւորուած ներգ. և չէզոք բայեր, որոնց անցեալ կատարեալը լինում է ացայ, հրամ. ացի՛ր, ացէ՛ք։

---

1. Հետեւեալ եղանակի նախադասութիւնները յոգնակիի փոխեցէք.

Ուսուցիչը ցանկանում է որ միշտ լաւ իմանամ իմ դասերը։—Ցանկալի կը լինէր որ ես նամակ ստանայի, որ դու աւելի հասկանայիր, որ նա ամեն դատարկ բանից չվախենար։—Ծերանաս, ծերի զարդը իմանաս։—Եթէ բարեկամս եկած լինէր, մինչև հիմա իմացած կը լինէի։ Այս երկիրը հարստացաւ վաճառականութեամբ։

2. Հետեւեալ յոգնակի նախադասութիւնները եզակի փոխեցէք.

Փիլիսոփաները քչով բաւականանում են։—Ինչ որ խոստացել ենք՝ կը կատարենք։—Եթէ կամենում էք որ ձեզ խնայեն, խնայեցէք ուրիշներին։—Հարուստները աղքատացան, աղքատները հարստացան։—Հարուստները աղքատացած են, աղքատները հարստացած են։—Հարուստները կ՚աղքատանան, աղքատները կը հարստանան։

§ 54. ԿՐԱՒՈՐԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ.

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ Ազատվում եմ, ազատվում ես, ազատվում է.
Ազատվում ենք, ազատվում էք, ազատվում են։

Անցեալ անկ. Ազատվում էի, ազատվում էիր, ազատվում էր.
Ազատվում էինք, ազատվում էիք, ազատվում էին։

Անցեալ կատ. Ազատուեցայ, ազատուեցար, ազատուեցաւ.
Ազատուեցանք, ազատուեցաք, ազատուեցան։

Վաղակատար Ազատուել եմ, ազատուել ես, ազատուել է.
Ազատուել ենք, ազատուել էք, ազատուել են։

Գերակատար Ազատուել էի, ազատուել էիր, ազատուել էր.
Ազատուել էինք, ազատուել էիք, ազատուել էին։

Ապառնի պարզ Կ՚ազատուիմ, կ՚ազատուիս, կ՚ազատուի.
Կ՚ազատուինք, կ՚ազատուիք, կ՚ազատուին։

Ապառ. քաղաք. Ազատուած կը լինիմ, ազատուած կը լինիս, ազատուած կը լինի.
Ազատուած կը լինինք, ազատուած կը լինիք, ազատուած կը լինին։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ Կ՚ազատուէի, կ՚ազատուէիր, կ՚ազատուէր.
Կ՚ազատուէինք, կ՚ազատուէիք, կ՚ազատուէին։

Անցեալ Ազատուած կը լինէի, ազատուած կը լինէիր, ազատուած կը լինէր.
Ազատուած կը լինէինք, ազատուած կը լինէիք, ազատուած կը լինէին։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ազատուէ *կամ* ազատուիր. ազատուեցէք։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ (որ) Ազատուիմ, ազատուիս, ազատուի.
(որ) Ազատուինք, ազատուիք, ազատուին։

Անկատար (որ) Ազատուէի, ազատուէիր, ազատուէր.
(որ) Ազատուէինք, ազատուէիք, ազատուէին։

Կատարեալ (որ) Ազատուած լինիմ, ազատուած լինիս, ազատուած լինի.
(որ) Ազատուած լինինք, ազատուած լինիք, ազատուած լինին։

Գերակատար (որ) Ազատուած լինէի, ազատուած լինէիր, ազատուած լինէր.
(որ) Ազատուած լինէինք, ազատուած լինէիք, ազատուած լինէին։

Դ Ե Ր Բ Ա Յ

Անորոշ Ազատուիլ. *Ներկ.* ազատուող. *Անց.* ազատուել, ազատուած. *Ապառ.* ազատուելու։

Կրաւորական բայերը կազմվում են ներգործականներից անորոշ դերբայի *ել, իլ, ալ, անալ* վերջաւորութիւնները փոխելով *ուիլ*, (վիլ), միայն երրորդ և չորրորդ վերջաւորութեան բայերում *ուիլ* մասնիկը դրվումէ է անցեալ կատարեալի վրայ. այսպէս.

Ներգ.	Ազատել	Կրաւ.	Ազատուիլ
»	Համարիլ	»	Համարուիլ
»	Կարդալ, կարդացի	»	Կարդացուիլ
»	Խոստանալ, խոստացայ	»	Խոստացուիլ։

Կրաւորական բայերը խոնարհվում են միակերպ երկրորդ խոնարհման պէս, անորոշ դերբայի *ուի* մասնիկը պահելով բոլոր ժամանակների մէջ։

Միայն ած անցեալ դերբայը կարող է ներգործական ձեւով վարուել. գոյնզգոյն ներկած դարբասներ. նոր կոխած գինի. ծաղիկներով զարդարված սրահ։ (Փոխանակ՝ ներկուած, կոխուած, զարդարուած։)

Որոշ հեռու գաւառական բարբառներում ել վերջացած բայերը խոնարհվում են միակերպ ել վերջացածների պէս, այսինքն եց՝ փոխանակ եցայ (կանգնեցի, խօսեցի, ապրեց, ծնեց), կրաւորականներն էլ լինում են առհասարակ ուեցի. կնքուեցի, քանդուեցին, օծուեց։

Գրեցէք ձեզանից մի քանի նախադասութիւններ հետեւեալ կրաւորական բայերով.

Բռնուել—փորձուել — տանջուել—չարչարուել—պատրաստուել —ուղարկուել— բերուել —կարդացուել — մոռացուել — իմացուել — խոստացուել։

§ 55. ԲԱՑԱՍԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ։

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	Չեմ խօսում, չես խօսում, չէ խօսում.
	Չենք խօսում, չէք խօսում, չեն խօսում։
Անցեալ անկատար	Չէի խօսում, չէիր խօսում, չէր խօսում.
	Չէինք խօսում, չէիք խօսում, չէին խօսում։
Անցեալ անկատար	Չխօսեցայ, չխօսեցար, չխօսեցաւ.
	Չխօսեցանք, չխօսեցաք, չխօսեցան։
Վաղակատար	Չեմ խօսել, չես խօսել, չէ խօսել.
	Չենք խօսել, չէք խօսել, չեն խօսել։
Գերակատար	Չէի խօսել, չէիր խօսել, չէր խօսել.
	Չէինք խօսել, չէիք խօսել, չէին խօսել։

Ապառնի պարզ	Չեմ խօսիլ, չես խօսիլ, չի խօսիլ.
	Չենք խօսիլ, չէք խօսիլ, չեն խօսիլ։
Ապառ. բաղադրեալ	խօսած չեմ լինիլ, խօսած չես լինիլ, խօսած չի լինիլ։
	խօսած չենք լինիլ, խօսած չէք լինիլ, խօսած չեն լինիլ։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	Չէի խօսիլ, չէիր խօսիլ, չէր խօսիլ։
	Չէինք խօսիլ, չէիք խօսիլ, չէին խօսիլ։
Անցեալ	խօսած չէի լինիլ, խօսած չէիր լինիլ, խօսած չէր լինիլ.
	խօսած չէինք լինիլ, խօսած չէիք լինիլ, խօսած չէին լինիլ։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Մի խօսիր կամ մի խօսիք։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	(որ) Չխօսիմ, չխօսիս, չխօսի.
	(որ) Չխօսինք, չխօսիք, չխօսին։
Անկատար	(որ) Չխօսէի, չխօսէիր, չխօսէր.
	(որ) Չխօսէինք, չխօսէիք, չխօսէին։
Կատարեալ	(որ) խօսած չլինիմ, խօսած չլինիս, խօսած չլինի.
	(որ) խօսած չլինինք, խօսած չլինիք, խօսած չլինին։
Գերակատար	(որ) խօսած չլինէի, խօսած չլինէիր, խօսած չլինէր.
	(որ) խօսած չլինէինք, խօսած չլինէիք, խօսած չլինէին։

ԴԵՐԲԱՅ

Անորոշ Չխօսել. Ներկ. չխօսող. Անց. չխօսած. Ապառ. չխօսելու։

Այս օրինակից երեւում է որ՝

1. *Բացասական բայը կազմվում է ընդհանրապէս խւրաքանչիւր ժամանակի սկիզբը չ դնելով, պարզ ժամանակներում բուն բայի վրայ, բաղադրեալներում օգնական բայի վրայ. չխօսիմ, չեմ խօսում, խօսած չլինիմ կամ չլինիմ խօսած*

2. *Միայն պարզ ապառնին եւ պայմ. ներկան կազմվում են կը մասնիկի տեղ դնելով եմ բայի բացասական ձեւերը եւ բուն բային իր սկզբնական ձեւը տալով. չեմ խօսիլ, չեմ գնալ*, չէի իմանալ**։*

3. *Մի եւ ոչ բացասական մասնիկները կարող են աւելի սաստկութեան համար բայից յետոյ էլ դասուիլ. ուտիլ մի՛, ամաչիլ մի՛, մեռնիս ոչ, եկաւ ոչ, խօսում չէ, գտել չէ։*

4. *Բացասական բայերի կրաւորականը հասարակ կրաւորականների կանոնով է խոնարհվում. չեմ համարվում, չէի համարվում, չհամարուեցայ, չեմ համարուիլ, մի՛ համարուիլ կամ մի՛ համարուիր, որ չհամարուիմ, չհամարուեալ, չհամարուող։*

* Ապառնիի եզ. 2-րդ դէմքը լինում է չի խօսիլ, չի գնալ (եւ ոչ թէ՝ չէ խօսիլ, չէ գնալ)։ Գաւառական բարբառներում չի ձեւը երեւում է եւ ուրիշ ժամանակներում. չի խօսում, չի լսեցի, չի մնացել, թող չի նեղանայ։

** Գաւառական բարբառներում երբեմն լ տառը բաց է թողվում. չեմ խօսի, չեմ ուշանայ, չէի ասի, չէի գնայ, մի գնալ, վազի,—սրանք գրաւորի մէջ էլ են գործածում։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւեալ բացասական բայերով.

Ձլսել — չապանել — չգովել — չաղատել — չխօսիլ — չհաւանիլ — չապրիլ — չաշխատիլ — չդադարիլ — չմնալ — չխաղալ — չիմանալ — չվախենալ։

§ 56. ՆԻԼ ԵՒ ՉԻԼ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԱԾ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ։

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	*Հասնում եմ եւ այլն*	*Փախչում եմ եւ այլն*
Անցեալ անկ.	*Հասնում էի եւ այլն*	*Փախչում էի եւ այլն*
Անցեալ կատ.	*Հասայ*	*Փախայ*
	Հասար	*Փախար*
	Հասաւ.	*Փախաւ.*
	Հասանք	*Փախանք*
	Հասաք	*Փախաք*
	Հասան.	*Փախան.*
Վաղակատար	*Հասել եմ եւ այլն*	*Փախել եմ եւ այլն*
Գերակատար	*Հասել էի եւ այլն*	*Փախել էի եւ այլն*
Ապառնի պարզ	*Կը հասնիմ եւ այլն*	*Կը փախչիմ եւ այլն*
Ապառ. բաղ.	*Հասած կը լինիմ եւ այլն*	*Փախած կը լինիմ եւ այլն*

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	*Կը հասնէի եւ այլն*	*Կը փախչէի եւ այլն*
Անցեալ	*Հասած կը լինիմ եւ այլն*	*Փախած կը լինէի եւ այլն*

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Հասիր. հասէք։ *Փախիր. փախէք։*

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	*(որ) Հասնիմ եւ այլն*	*(որ) Փախչեմ եւ այլն*
Անկատար	*(որ) Հասնէի եւ այլն*	*(որ) Փախչէի եւ այլն*
Կատարեալ	*(որ) Հասած լինիմ եւ այլն*	*(որ) Փախած լինիմ եւ այլն*
Գերակատար	*(որ) Հասած լինէի եւ այլն*	*(որ) Փախած լինէի եւ*

ԴԵՐԲԱՅ

Անորոշ Հասնիլ. Ներկ. հասնող. Անորոշ Փախչիլ, Ներկ. փախ-
Անցեալ Հասել. հասած. Ապառնի չող, Անց. փախել, փախած.
հասնելու Ապառ. փախչելու։

Նիլ և չիլ վերջաւորուած չէզոք բայերը և մի քանի նել վերջով ներգործականներ խոնարհվում են երկրորդ վերջաւորութեան բայերի պէս, ն և չ տառերը դուրս թողնելով անց. կատարեալում, հրամայականում և անց. դերբայներում։

Կրաւորականները կանոնաւոր են. տեսնուիլ տեսնուեցայ, տեսնուել եմ, տեսնուած։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ բայերով.
Գտնել—տեսնել—մտնել—դառնալ—հասնիլ—հագնել—մեռնիլ—թռչել—գիպչել—կպչել։

§ 57. ՑՆԵԼ ՎԵՐՋԱՑԱԾ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ։

Սահմ. անց. կատար. Հագցրի, հագցրիր, հագցրեց (հագցրուց*).
Հագցրինք, հագցրիք, հագցրին։

Հրամայական Հագցրու. հագցրէք։
Դերբայ անցեալ Հագցրել, հագցրած։

* Կան գրողներ նոյնպէս հագցրեցի, հագցրեցինք և հրամ. հագցրեցէք։ Միւս ժամանակները կանոնաւոր են. հագցնում եմ, կը հագցնեմ, հագցնող։

Ցնել վերջացած բայերը խոնարհվում են առաջին վերջաւորութեան բայերի պէս ն տառը ր փոխելով անց. կատարեալում, հրամայականում և անց. դերբայներում։

Չէզոք բայերի մեծ մասը ցնել առնելով ներգործական են դառնում. ինչպէս՝ վերցնել, մեծացնել, ծաղկեցնել, յոգնեցնել։

Իսկ ներգործականներից քիչ բայ ցնել մասնիկ ընդունելով անցողական է դառնում. այլ սովորաբար նոյն մտքով վարվում է ներգործական բայը տալ բայով. կանչել տալ, կարել տալ, բերել տալ, դնել տալ։ Իսկ եթէ հարկ լինի յայտնել թէ գործողութիւնը երրորդի ձեռով է կատարվում, տալ բայը կրկնվում է. գրել տալ տուի, կարել տալ տուինք։

Ցնել վերջաւորութիւնից առաջ իբրև յօդակապ կարող են պատահել ա և ե ձայնաւորները. եցնել կը լինին Ա և Բ վերջաւորութեան բայերից կազմուածները. ուտեցնել, խօսեցնել, ացնել,— Գ-ից և Դ-ից կազմուածները. կարդացնել, տաքացնել. Պարզ ցնել լինում են նիլ, չիլ բայերից կազմուածները. հասցնել, թռցնել.

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ բայերով.
Խմեցնել — աշխատեցնել — կարդացնել — դարձնել — ամաչեցնել — վախեցնել — խաղացնել — թռցնել — սովորեցնել։

§ 58 ԿՐԿԻՆ ԿԱՏԱՐԵԱԼ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ։

Կան մի քանի բայեր, որոնց անց. կատարեալը և նորանից կազմուած ժամանակները ոչ միայն անկանոն են, այլ և երկու ձև կատարեալ ունին։
Ահաւասիկ նոցա ցուցակը.

Բերել կրաւորական բերուիլ։

Անցեալ կատ. (Բերի, բերիր, բերաւ, բերինք, բերիք, բերին։
Բերեցի, բերեցիր, բերեց. բերեցինք, ցիք, ցին։

Հրամայ. եղ. Բեր. բերէ՛ք. Մի բերել կամ մի բերիր. մի բերէք.
Դերբայ Ներկայ բերող. Անցեալ բերել, բերած։

Դնել կրաւորական դրուիլ։

Անցեալ կատ. { Դրի, դրիր, դրաւ. դրինք, դրիք, դրին։
Դրեցի, դրեցիր, դրեց. դրեցինք, դրեցիք, դրեցին։

Հրամայ. եզ. Դիր. Դրէք. Մի դնել կամ մի դնիր. մի դնէք։
Դերբայ Ներկայ դնող. Անցեալ դրել, դրած։

Անել՝ կրաւորական չունի։

Անցեալ կատ. { Արի, արիր, արաւ. արինք, արիք, արին։
Արեցի, արեցիր, արեց. արեցինք, արեցիք, ցին։
Հրամայ. եղ. Արա. արէք. Մի անիլ կամ մի անիր. մի անէք։
Դերբայ Ներկայ անող. Անցեալ արել, արած։

Ասել կրաւորական ասուիլ

Անցեալ կատ. { Ասի, ասիր, ասաւ, ասինք ասիք. ասին։
Ասացի, ասացիր, ասաց. ասացինք, ասացիք, ցին։
Հրամայ. եղ. Ասա. ասէք կամ ասացէ՛ք. Մի ասիլ կամ մի ասիր. մի ասէք.
Դերբայ Ներկայ ասող. Անցեալ ասել, ասած։

Թողնել կրաւորական թողնուիլ։

Անցեալ կատ. { Թողի, թողիր, թողաւ. թողինք, թողիք, թողին։
Թողեցի, թողեցիր, թողեց. թողեցինք, ցիք, ցին։

Հրամայական Թող. Թողէք։ Մի թողնիլ կամ մի թողնիր. մի թողնէք։
Դերբայ Ներկայ թողնող. Անցեալ թողել, թողած։

Տալ կրաւորական տրուիլ։

Անցեալ կատ. { Տուի, տուիր, տուաւ. տուինք, տուիք, տուին։
Տուեցի, տուեցիր, տուեց. տուեցինք, ցիք, ցին։
Հրամայ. եղ. Տուր, տուէք։ Մի տալ կամ մի տար. մի տաք։
Դերբայ Ներկայ տուող. Անցեալ տուել, տուած։

Սկսել կրաւորական սկսուիլ։

Անցեալ կատ. { Սկսայ, սկսար, սկսաւ. սկսանք, սկսաք, սկսան։
Սկսեցի, սկսեցիր, սկսեց. սկսեցինք, ցիք, ցին։
Հրամայ. եղ. Սկսէ, (սկսիր). սկսէք (սկսեցէք). մի սկսիլ կամ մի սկսիր. մի սկսիք։

Դերբայ Ներկայ սկսող. Անցեալ սկսել, սկսած։

Առնել կրաւորական առնուիլ։

Անցեալ կատ. { Առայ, առար, առաւ. առանք, առաք, առան*։
Առի, առիր, առեց։ առինք, առիք, առին։
Հրամայական Ա՛ռ. առէք։ Մի առնիլ կամ մի առներ. մի առնէք։
Դերբայ Ներկայ առնող. Անցեալ առել, առած։

Տանիլ կրաւորական տարուիլ

Անցեալ կատ. { Տարայ, տարար, տարաւ. տարանք, րաք, րան։
Տարի, տարիր, տարեց. տարինք, տարիք տարին։
Հրամայ. եղ. Տար, տարէք։ Մի տանիլ կամ մի տանիր. մի տանիք։
Դերբայ Ներկայ առնող. Անցեալ տարել, տարած։

Առաջին ձևը ժողովրդական բարբառներում գործ է ածվում դնել բայի մօքով։

Թէև անցեալ կատարեալի երկու ձևն էլ անխտիր վարվում են, բայց աւելի սովորական է առաջին ձևը, միայն եզ. երրորդ դէմքում *եց* վերջաւորութեամբ. *բերի, բերիր, բերեց, բերինք* և այլն։ *Դրի, դրիր, դրեց, դրինք* և այլն։

Կրաւորականների մէջ կան որ կանոնաւոր են. ինչպէս. *բերել, բերուիլ, առնել, առնուիլ.* կան էլ որ անկանոն են՝ *տալ, տրուիլ. դնել, դրուիլ:* Բայց խոնարհումները կանոնաւոր են. *բերվում եմ, բերուեցայ, կը բերուիմ, բերուող բերուած։ Դրվում եմ, դրուեցայ, դրուող, դրուիլ։*

Բոլորովին անկանոն խոնարհում ունին *գալ* և *ուտել* բայերը, որոնց կատարեալի արմատը ներկայի արմատի հետ ոչինչ՝ նմանութիւն չունի։

Գալ։

Անցեալ կատ. Եկայ, եկար, եկաւ. եկանք, եկաք, եկան։
Հրամայ. եզ. Եկ, կամ արի, եկէք՝
Դերբայ *Ներկայ* եկող. *Անցեալ* եկել, եկած։

Ուտել կրաւորական ուտուիլ:

Անցեալ կատ. Կերայ, կերար, կերաւ. կերանք, կերաք, կերան։
Հրամայ. եզ. Կեր, կերէք։
Դերբայ *Ներկայ* ուտող. *Անցեալ* կերել, կերած։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ վերոյիշեալ բայերի անկանոն ժամանակներով։

§ 59. ԱՆԴԷՄ ԲԱՅԵՐ

Անդէմ կամ միադէմ կոչվում են այն բայերը, որոնք միայն եզ. դէմքով են վարվում։

Կան *բուն անդէմ բայեր*, և կան *պատահական անդէմներ*.

1. *Բուն անդէմ* են այն բայերը որ միայն եզ. երրորդ դէմք ունին. ինչպէս. պէտք է, հարկ է, բաւ է, հերիք է, մեղք է, և այլն։

2. *Պատահական անդէմ* կոչվում են այն դիմաւոր բայերը, որոնք առանձին մտքով վարվում են իբրև անդէմ. այսպէս են բնութեան երևոյթները և կենդանիների ձայները. *ամպել, անձրևել, որոտալ, փայլատակել, մլաւել, բառաչել, մռնչել, զռալ։* Բայց նմանութեամբ կարող են ամէն դէմքերով գործածուիլ։

Կան չէզոք և մանաւանդ կրաւ. բայեր որ անդէմի մտքով վարվում են. այսպէս են՝ *երևում է, թվում է, մնում է, հետևում է, ասվում է, լսվում է, կարծվում է։*

§ 60. ԳԻՏԵԼԻՔ ԲԱՅԵՐԻ ՎՐԱՅ

1. *Գալ, տալ, լալ,* միավանկ բայերի ներկան ու անցանկատարը լինում են *իս* վերջաւորութեամբ, որ անորոշ դերբայի ներգոյականն է. *գալիս եմ, տալիս է, լալիս էին։* Հարցական և բացասական նախադասութիւնների մէջ եմ օգնական բայը նախադասելով *ս* տառը բաց է թողվում, բայց և կարող է պահուիլ։ Այսպէս ասում են՝ *Ո՞վ է գալիս* և *Ո՞վ է գալի։ Չեմ տալիս* և *Չեմ տալի։*

2. *Եմ, կամ, ունիմ, գիտեմ,* բայերի սահմ. ներկան և անցեալ անկատարը գրաբար ձևով է լինում. *կամ, կաս, կայ, կանք, կաք, կան։ Ունիմ, ունիս. ունէինք, ունէիք։ Գիտեմ, գիտենք. գիտէի, գիտէինք։* Երբեմն նաև՝ *Ասացէք խնդրեմ։ Կարծեմ թէ իրաւունք ունիմ։ Ցուցամ թէ խոստմունքդ կը կատարես։* (Փոխանակ՝ խնդրում եմ, կարծում եմ)։

Սրա նմանապէս պակասաւոր են և լրանում են իրանց նոյնանշաններով. եմ, լինել էական բայով. կամ—կենալ, ունիմ—ունենալ, գիտեմ—գիտենալ, որոնք խոնարհվում են Դ վերջաւորութեան բայերի պէս.

3. Բաղադրեալ բայերի մէջ բուն բայն է խոնարհվում և կը մասնիկ ընդունում. անց եմ կենում. ման կ՚ածէի. ծափ կը տամ. շաղ կը տայինն, և այլն։ Միայն պիտի կամ պէտք է անդէմ բայը միշտ առաջին բառի վրայ է դրվում. պիտի շաղ տանք, պիտի ման գայինք։

4. Ներգործական և կրաւորական բայերը չէզոքի միտք են ընդունում, եթէ իրանցից յետոյ լրացուցիչ բառեր չունեն. ինչպէս. Շարունակ կարդում է։ Մարդիկ ուտում ու խմում են։ Այս տունը ծախվում է։ Արմաւիրը շինուեցաւ Երասխի վրայ։

5. Կրաւորականի ուիլ մասնիկը ընդունում են մի քանի ներգործական բայեր, որոնք ցոյց են տալիս. 1) փոխադարձ գործողութիւն, որով երկու կամ աւելի առարկայ միմեանց վրայ ներգործում են. տեսնուիլ, թակուիլ (ծեծուիլ), այսինքն միմեանց տեսնել, թակել։ Այս տեսակ բայերը կոչվում են փոխադարձ։ 2) Այնպիսի գործողութիւն, որով առարկան ինքն իր վրայ է ներգործում. ինչպէս. սրբուիլ, սանդրուիլ, լուացուիլ, խեղդուիլ, այսինքն ինք իրան սրբել, խեղդել։ Այս տեսակ բայերը կոչվում են անդրադարձ։

Փոխադարձ և անդրադարձ բայերը խոնարհվում են կրաւորական բայերի պէս։

Թ. Մակբայների կազմութիւնը։

§ 61. ԲՈՒՆ ՄԱԿԲԱՅՆԵՐԸ.

Բուն մակբայները կամ պարզ բառեր են, ինչպէս՝ ե՞րբ, ո՞ւր, այո, ո՛չ, կամ պարզ բառերից առաջ եկած են այլ և այլ մասնիկներ ու հին հոլովական վերջաւորութիւններ ընդունելով։

1. Եմն, էք մասնիկները ժամանակական մակբայներ են կազմում. երբեմն, ոչ երբէք։

2. Բար, օրէն, պէս, կի մասնիկները որակական մակբայներ են կազմում, եղբայրաբար, հայերէն, վերջապէս, յանկարծակի։

3. Ու, աւ, ով գործիականի վերջաւորութիւնները որակական մակբայներ են կազմում. հազիւ, կամաւ, շտապով, բարով։

4. Անց, ուց բացառականի վերջաւորութիւնները որակական և ժամանակական մակբայներ են կազմում. սրտանց, երեսա՛նց, վաղուց, հնուց։

§ 62. ԱՆՈՒՆՆԵՐԻՑ ՈՒ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻՑ ԱՌՆՈՒԱԾ ՄԱԿԲԱՅՆԵՐ.

Հայերէն լեզուի մակբայների մեծ մասը փոխ են առած գոյական ու ածական անուններից և դերանուններից, որոնցից շատը յօդ են ընդունում և հոլովում են։

1. Գոյական անուններից առնուած մակբայները, եթէ տեղական են, կարող են յօդ ընդունել և հոլովել Ա. հոլովման պէս եզ. և յոգ. ինչպէս վերեւ կամ վերևը, վե-

երիցը, վերևումը. ներքև, ներքևից, ներքևով, ներքևում. դուրս կամ դուրսը, դրսիցը, դրսումը, դրսովը. ետևները, ետևներիցը, ետևներովը, ետևներումը*։ Նոյնպէս և տեղ ու կողմ գոյականներով և այս, ո՞ր դերանուններով ու մէջ նախադրութեամբ. այստեղ, ո՞րտեղ կամ որ տեղ, որ տեղից կամ որ տեղաց. այն տեղից. մէջ տեղը, մէջ տեղից, մէջ տեղումը. մէջ տեղերը, մէջ տեղերից, և այլն։

* Սոցա սեռականներից կազմվում են ածականներ. Նաւաստակի առաջի ու ետևի տները. դէմուդէմի տունը. վերևի յատակը. դրսի պատուհանը։

Ժամանակականները հոլովում են միայն եզ. բացառական ուանից վերջաւորութեամբ. այսօր, այսօրուանից. երէկ, երէկուանից. վաղը, վաղուանից. հիմա հիմիկուանից։

2. Ածական անունները բայի վրայ դրուելով մակբայ են դառնում, առանց ուրիշ որևիցէ փոփոխութեան. ուղիղ խօսել կամ ծանր լսել. խոր քնել. բարակ մտածել. բարձրաձայն աղաղակել. կերպ գոյականի գործիական հոլովով. խելացի կերպով գործ կատարել. ծանր կերպով քննել։

3. Դերանուններից կազմուած մակբայները սակաւ են։ Այսպէս են՝ այս, այդ, այն դերանուններից՝ այսպէս, այդպէս, այնպէս, որոնք և գործիական հոլովով վարվում են. այսպէսով, այդպէսով այնպէսով։ Իսկ սոյն, նոյն դերանուններից՝ սոյնպէս, նոյնպէս։

Գաւառական բարբառներում կան բազմաթիւ դերանուանական մակբայներ, որոնք գրաւոր լեզուի մէջ մուտք չեն գտել, կամ շատ հազիւ գործ են ածվում։ Այսպէս են. ճօրէս, ճօրէդ, ճօրէն կամ կրճատուած. ճրէս, ճրէդ, ճրէն, (գրոց աստիկ, աստեղիկ, աստնէկ). էստի, էնդի, (այսր, անդր, կամ աստ, անդ). էսդհից, էնդհից (աստի, անդի). դէս, դէն կամ դէսուդէն (կրճատուած և ամփոփուած գրոց 'ի այս, 'ի այն, այսինքն՝ ընդ այս, ընդ այն, նախադրիւ հոլովներից)։

4. Վերջապէս կան գոյ. ու ած. անուններ և նոյն իսկ մակբայներ, որ կրկնութեամբ են վարվում, անփոփոխ կամ հոլոված գրաբարի ձևով. տեղ տեղ նստել. կարգ կարգ շարուել. թել թել բաժանել. մանր մանր կտրել. մեծ մեծ խօսել. կամաց կամաց շարժել. շուտ շուտ առաջ գնալ.— օրէցօր, ծայրէ ի ծայր, դռնէ դուռ, հետզհետէ, դէմ առ դէմ և այլն։

§ 63. ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ.

Մակբայները գործ են ածվում հարցական, պատմական և պատասխանական նախադասութիւնների մէջ։ Հարցական նախադասութիւնների մէջ գործ են դրվում հարցական մակբայները. պատասխանականների մէջ նոցա համապատասխանող պատասխանական մակբայները։

Հարցական	Պատասխանական
1. Տեղական	
ա) Ո՞ր կամ ո՞րտեղ.	այս տեղ, այն տեղ, շատ տեղ. ամէն տեղ, ոչ մի տեղ. վերև, ներքև, դուրս, ներս, ետև, առջև, տակը, վրան, և այլն։
բ) Ո՞ր տեղից.	այս տեղից, այն տեղից, ամէն տեղից, հեռուից, ներքևից, դրսից, ներսից, և այլն։
2. Ժամանակական.	
ա) Ե՞րբ.	այժմ, միշտ, երբեմն, վաղ, ուշ, կա-

	նախ, արդէն, առաջուց, յետոյ, երբեք, ոչ երբեք։
բ) Ո՞ր ժամանակից.	հերուանից, այսօրուանից, առաջուանից, առաւօտուանից։
գ) Մինչև ո՞ր ժամանակ.	մինչև այժմ կամ մինչև հիմա, մինչև վաղը։
3. Որակական.	
Ինչպէս.	այսպէս, նոյնպէս, յայտնի, հայրաբար, կամայ ակամայ, սիրով, արագ արագ, ծուռ ծուռ, և այլն։
4. Քանակական։	
Քանի՞, ո՞րչափ.	այնքան, այնչափ, նոյնքան, շատ, սակաւ, քիչ քիչ, շատ շատ։

Բայց սորանից հարցական մակբայները գործ են ածվում իբրև յարաբերական մակբայներ, երբ որ երկրորդական նախադասութիւնները կապում են գլխաւորների հետ. ինչպէս. Որ տեղ գնաս, այն տեղի գդակը ծածկիր։

Ժ. Նախադրութիւնների կազմութիւնը։

§ 64. ԲՈՒՆ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Հայերէն լեզուի մէջ բուն նախադրութիւն շատ քիչ կայ, և դասվում են ոմանք հոլովական բառերից յետոյ, ոմանք էլ առաջ։

1. Յետադաս նախադասութիւնները տրական հոլով բառ են պահանջում իրանցից առաջ. այսպէս.

Այս գրքերը քեզ համար են։ Ինձ պէս տկարին յաղ-

թեց։ Ո՞ւմ հետ տեսնուեցար։ Մեզ մօտ է բնակվում։ Կամ տրացական յօդով՝ հետս, հետդ, հետը. մօտս, մօտդ, մօտը, կամ մօտին. հետներս, մօտներդ։

Ձեր ուզածին չափ*։ Նրա պատուէրներին համեմատ։ Բազմութեան կամքին հակառակ։

* Կան գրողներ սեռականով մեր համար, ձեր մօտ, ձեր պէս, իմ չափ։

2. Նախադասները նոյնպէս տրական հոլով են պահանջում. ոմանք ուրիշ հոլովներ էլ։

Առանց ինձ չգնաք։ Առանց բան ասելու հեռացաւ։ Փոխանակ օտարին տալու։ Դէպի մեզ են գալիս։ Մինչև քեզ կը հասնի։

Դէպի, մինչև, մինչի նախադրութիւնների հոլովը, եթէ գոյական է կամ անորոշ դերբայ, հայցական է դրվում. գնացին դէպի տուն։ Մինչև ձեր գալը, մինչի գիշեր սպասեցինք։

Բացի պահանջում է բացառական հոլով. Ամէնքը թողին ու գնացին, բացի ինձանից ու ձեզանից։

Իբրև, ինչպէս՝ խօսքի իմաստին նայելով կարող են ամէն հոլով առնել. Իբրև կամ ինչպէս թշնամի վարուեցաւ։ Իբրև օտարից հեռանում է։ Նուիրում եմ ձեզ իմ աշխատանքը, իբրև ամենամօտ բարեկամի։

§ 65. ԳՈՅԱԿԱՆԻՑ ՈՒ ՄԱԿԲԱՅԻՑ ԱՌՆՈՒԱԾ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Կան շատ գոյական անուններ ու մակբայներ որ նախադրութեան տեղով են վարվում.

1. Գոյական անուններից առնուած նախադրութիւնները իրանցից առաջ սեռական հոլով են պահանջում և կարող են յօդ առնել ու հոլովել, զորօրինակ.

Անտառի մէջը, անտառի միջի (ծառերը), անտառի միջին, անտառի միջից, անտառի միջով, անտառի միջումը։

Նոյնպէս և յոգնակի. անտառի մէջերը, տան ետևները, պարտէզների վրաներից, քաղաքների առաջներումը և այլն։

Ահա և ուրիշ օրինակներ. տան մէջ, տան ետևը, եպարտէզի վրայ, սեղանի տակ։ Կամ ստացական յօդով՝ ետևս, մէջդ, տակդ, վրաները։

2. Մի քանի հոլոված գոյականներ կան (գործիական հոլովով), որ նախադրութեան մտքով են վարվում. զօրօրինակ.

Աստուածաշնչի մեծ մասը թարգմանուեցաւ սուրբ Սահակի ձեռով։

Լրագրների միջոցով հրատարակուած լուրերը միշտ չեն ճշմարտվում։

Վիճակագրական տեղեկութիւններին նայելով, Հայոց թիւը հասնում է մինչև չորս ու կէս միլիոն։

3. Մակբայներից առնուած նախադրութիւնները իրանցից առաջ բացառական հոլով են պահանջում*. ինչպէս. Խօսելուց առաջ պէտք է մտածել։ Ճաշից յետոյ սովորութիւն ունի հանգստանալու։ Դռնից ներս մտաւ։ Քաղաքից դուրս փախաւ։ Օգուտից աւելի ոչինչ վնաս չկրեց։ Ամէն բանից հեռու է։ Մօրից ծածուկ ճանապարհ ընկաւ։

* Սորանով զանազանվում են նախադրութիւնները մակբայներից։

ԺԱ. Շաղկապների կազմութիւնը։

§ 66. ԱՐՄԱՏԱԿԱՆ ԵՒ ԱԾԱՆՑԵԱԼ ՇԱՂԿԱՊՆԵՐ.

Շաղկապների պաշտօնն է նախադասութիւնները միմեանց հետ կապել։

Ըստ կազմութեան շաղկապները լինում են արմատական եւ ածանցեալ։

Արմատական շաղկապներն են՝ եւ, ու, էլ, որ, թէ, կամ, բայց, իսկ։

Ուրաքանչիւր մասն-բանի շաղկապի նշանակութիւն է ստանում, եթէ խօսքը խօսքի հետ կապում է։ Այս պատճառով շաղկապները ածանցվում են.

1. Գոյական անուններից՝ անփոփոխ կամ հոլոված նախադրութիւններով. անգամ, ըստ մասին, զօրօրինակ։

2. Դերանուններից և թուական անուններից. այսինքն, այնուամենայնիւ, ըստ որում, առաջին, երկրորդ և այլն։

3. Բայերից. կարծես թէ, ասես թէ, թող թէ։

4) Մակբայներից. այսպէս, ինչպէս որ, այնպէս որ։

5. Նախադրութիւններից. իբրեւ թէ, որպէս թէ։

§ 67. ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ.

Շաղկապների գործածութիւնը կախուած է նախադասութիւնների նշանակութիւնից։ Բայց կան մի քանի հարկաւոր գիտելիքներ ամենագործածական շաղկապների վրայ.

1. Եւ, ու.—Այս շաղկապները ընդհանրապէս նոյնանշան են. բայց կայ տեղ, որ աւելի մէկն է գործածվում, և կայ տեղ որ միւսը։

Եւ շաղկապը սովորաբար նախադասութիւն նախադասութեան հետ է կապում, իսկ ու նախադասութեան անդամները իրարու հետ. ինչպէս. Թագուհին գիւղից քաղաքից դուրս, եւ մարդ ու կին, մեծ ու փոքր անհամբերութեամբ սպասում էին գիւղացիների իշխանին։

Ու շաղկապը գործ է ածվում մանաւանդ ն յօդով բա-

ների հետ. Մարդն ու կենդանին. Ձեռն ու ոտը. Օգտակարն ու զուարճալին։

Միևնոյն բայը կրկնելով ու շաղկապով, կապւում է գործողութեան կրկնութիւնը յայտնելու համար, այսպէս. Պարապ նստած խօսում է ու խօսում։ Խեղճերը կերան ու կերան մինչև լաւ կշտացան։ Գնաց ու գնաց։ Փախաւ ու փախաւ։

2. Թէ և ո՛ր շաղկապները շատ անգամ միմեանց տեղ կարող են փոխուիլ, բայց առհասարակ սահմանական եղանակի հետ թէ է վարվում. ստորադասականի հետ որ, ինչպէս. Խոստացաւ թէ կը գայ, կը տեսնէ մեզ։ Խոստացաւ որ գայ, տեսնէ մեզ։

Եւ, այլ շաղկապներից յետոյ, որ գլխաւոր նախադասութեան բայի զօրութեամբ է իմացվում, թէ շաղկապ է դրվում՝ թէև խօսքը որ շաղկապով սկսած լինի. այսպէս. Ճշմարիտ է որ ամենակատաղի գազաններն անգամ կերակրում են իրանց ձագերը, և թէ մօր պէս են հոգում նոցա բոլոր պիտոյքը։ (Այսինքն՝ ճշմարիտ է որ մօր պէս...)

3. Շաղկապները խօսքի մէջ գործ են ածվում մէկ մէկ, ինչպէս եւ, էլ, որ, և այլն. կամ երկու նոյն և նման շաղկապներ կրկնվում են. *ոչ—ոչ, թէ—թէ, կամ—կամ, եւ—եւ*. և կամ վերջապէս ուրիշ ուրիշ շաղկապներ երկու երկու են դրվում, այնպէս որ նոցանից մինը պատասխանում է միւսին. *եթէ—ուրեմն, թէպէտ եւ—բայց, ոչ միայն—այլեւ*, և այլն։

4. Միևնոյն շաղկապը դասաւորութեան նայելով այլ և այլ նշանակութիւն կարող է ունենալ. ինչպէս. Անօգնական մնացինք և՛ ես, և՛ դու, կամ ես էլ, դու էլ, (այսինքն թէ՛ ես, թէ՛ դու)։ Իսկ դուք ո՞ւր էիք։ Թշնամին

իսկ խոստովանում է նորա արժանաւորութիւնները (այսինքն՝ թշնամին անգամ)։

Էլ (գրբ. այլ) շաղկապ է, եթէ յետադաս դրուի, եւ մակբայ՝ եթէ նախադաս. տեսայ էլ, ճանաչեցի էլ։ Էլ չտեսայ ձեր ասած մարդուն (այսինքն այլ եւս)։

ԺԲ. Ձայնարկութիւնների կազմութիւնը։

§ 68. ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ։

Ձայնարկութիւնները, իբրև բոպէական զգացմունքներ բացատրող հնչիւններ, իսկապէս ոչինչ իմաստ չեն պարունակում. նոքա ակամայ հնչիւններ են՝ նման թռչունների երգին, շան հաչելուն, մլաւելուն և այլն։ Այս վերջին հնչիւններն էլ մենք ընդունում ենք և ձայնարկութիւններով արտայայտում։ Սորանից առաջ են գալիս երկու տեսակ ձայնարկութիւններ. *նմանաձայն* և *բացագանչական* ձայնարկութիւններ.

1. Նմանաձայն ձայնարկութիւններով մենք արտայայտում ենք անշունչ առարկաների և կենդանիների հնչիւնները. ինչպէս. *չը՛խկ, թը՛խկ, ծ՛ռռ, շը՛խկ, զ՛նգ—զ՛նգ, ղա՛ռ* (ագռաւի), *հա՛ւ* (շան), *մի՛աւ* (կատուի), և այլն։

2. Բացագանչական ձայնարկութիւնները արտայայտում են մարդուս այլ եւ այլ զգացմունքները, այսինքն ուրախութիւն. *ո՛հ, ա՛հ*։ Տրտմութիւնն ու ափսոսանքը.— *վա՛յ, վա՛յ, վա՛խ, ո՛հ, ա՛հ, ա՛ւաղ, ափսո՛ս*։ Ցանկութիւնը.— *երանի՛, երանի՛ թէ, երնե՛կ, ո՛ւր է թէ*։ Բարկութիւնը.

—ա՛յ, հա՛յ։ Զզուանք.—ո՛հ, է՛հ։ Կոչական ձայնարկութիւններ.—ո՛, ո՛վ, ա՛, է՛։ Ցուցական՝ անձ և ընտանեկան լեզուի մէջ՝ հօրէ՛ս, հօրէ՛ն։

§ 69. ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄՏՔՈՎ ԳՈՐԾ ԴՐՈՒԱԾ ՄԱՍՈՒՆՔԲԱՆԻ.

Իւրաքանչիւր ձայնարկութիւն կարող է մեկնուել մի որևիցէ նշանական բառով և մինչև ամբողջ նախադասութեամբ։ Զորօրինակ. ղէ՛նը.—նշանակում է՝ «գնա՛ այստեղից». ճ՛—«արի այստեղ». հը՞—«ինչ ես ասում». սո՛ւս — «լռիւ կաց»։

Այս պատճառով ձայնարկութիւնների մտքով շատ անգամ վարւում են

1. Գոյական անուններ. մե՛ղք, զարմա՛ցք, ողջո՛յն, լռութի՛ւն։
2. Ածական անուններ. անպիտա՛ն, պիղծ, բարև։
3. Բայեր. ապրի՛ս, մե՛ղայ, կեցցէ՛ (գրբր. կեալ բայից)։
4. Մակբայներ. հեռո՛ւ, ղէնը՛, դո՛ւրս, առա՛ջ։
5. Դերանուններ. ի՛նչ (ինչ ես ասում)։
6. Ամբողջ նախադասութիւններ. Աստուած տար։ Փա՛ռք Աստուծոյ։

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Բ Ա Ղ Դ Ա Ս Ո Ւ Թ Ի Ւ Ն.

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԲԱՂԴԱՍՈՒԹԻՒՆ

§ 1. ԲԱՂԴԱՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՈՐԱ ԲԱԺԱՆՈՒՄԸ.

Ստուգաբանութիւնը իւրաքանչիւր մասն-բանի առանձին առած քննում է ու նորա կազմութիւնը ցոյց տալիս. բայց թէ ինչպէս պէտք է բառերը կարգաւորել որ հասկանալի խօսք կազմուի, այդ ուսուցանում է մեզ բաղդասութիւնը։

Ուրեմն բաղդասութիւնը քերականութեան այն մասն է, որ ուսուցանում է թէ ինչպէս պէտք է առանձին բառերը միմեանց հետ կապակցել, որ հասկանալի ու կարգաւորեալ նախադասութիւն կազմուի, նախադասութիւններից էլ ամբողջ խօսք։

Առանձին բառերից ու նախադասութիւններից հասկանալի խօսք կազմելու համար, լեզուն երկու միջոց է տալիս մեզ. 1. փոփոխական մասանց-բանի վերջաւորութիւնները փոխել, և 2. շաղկապները ու նոցա տեղով գործ դրուած դերանունները և մակբայները։ Առաջին միջոցը տեղի ունի գլխաւորապէս պարզ նախադասութիւնների մէջ, երկրորդը—բաղադրեալ նախադասութիւնների մէջ։

Այս հիման վրայ բաղդասութիւնը բաժանվում է

երկու գլխաւոր մաս։ Առաջին մասը ցոյց է տալիս՝ թէ երբ և ինչի համար պէտք է փոխել փոփոխական մասանց-բանի վերջաւորութիւնները։ Ճայդասութեան այս մասը կոչվում է Կապակցութիւն մասանց-բանի։ Երկրորդ մասը ուսուցանում է՝ թէ երբ և ինչ շաղկապներ (դերանուններ և մակբայներ) պէտք է գործ դնել նախադասութիւնները յարմարաւոր կերպով կապելու համար։ Համաձայնութեան այս մասը կոչվում է Կապակցութիւն նախադասութիւնների։

Բայց բառերը միմեանց հետ կապվում են երկու եղանակով. կամ մէկ բառ միւսի հետ համաձայն է դրվում թուով, հոլովով կամ դէմքով, և կամ պահանջում, խնդրում է որ իրանից կախում ունեցող բառը այս կամ այն հոլովով դրուի։ Այս պատճառով մասանց-բանի կապակցութիւնը բաժանվում է երկու առանձին մաս. 1. Համաձայնութիւն մասանց-բանի, և 2. Խնդրառութիւն մասանց-բանի։

Այսպէս և նախադասութիւնների կապակցութիւնը երկու տեսակ է լինում, նայելով թէ բաղադրեալ նախադասութիւնը կազմուած է մի գլխաւոր և մի կամ աւելի երկրորդական նախադասութիւններից, թէ այնպիսի նախադասութիւններից, որոնք քերականօրէն կախում չունին միմեանցից, այլ ընդհակառակն իւրաքանչիւրն առանձին առած՝ ամբողջ ու անկախ միտք է պարունակում իր մէջ։ Այս պատճառով նախադասութիւնների կապակցութիւնը բաժանվում է նոյնպէս երկու մաս. 1. Երկրորդական նախադասութիւնների կապակցութիւնը, 2. Անկախ նախադասութիւնների կապակցութիւնը։

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Կապակցութիւն մասանց-բանի։

Ա. Համաձայնութիւն Մասանց-Բանի։

§ 2. ԲԱՅԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԵՆԹԱԿԱՆԵՐԻ ՀԵՏ ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ.

1. Պարզ նախադասութեան մէջ* բայը համաձայնում է ենթակայի հետ դէմքով և թուով. այսինքն՝

Ա. Եթէ ենթական առաջին դէմքի է, բայն էլ առաջին դէմքով է դրվում, եթէ երկրորդ կամ երրորդ դէմքի է, նոյնպէս բայն էլ երկրորդ կամ երրորդ դէմքով է դրվում. օրօրինակ. Ես գնում եմ գիւղ։ Դու կը մնաս այստեղ։ Լեւոն Զ մեռաւ Փարիզում։

Բ. Եթէ ենթական եզակի է, բայն էլ եզակի է դրվում, իսկ եթէ յոգնակի է՝ յոգնակի. ինչպէս. Արեգակը խաւարեցաւ։ Գարնանը ծառերը ծաղկում են.

* Պարզ ասելով այստեղ հասկանում ենք և այնպիսի նախադասութիւն, որ կազմուած է երկու կամ աւելի նախադասութիւնից, որոնցից իւրաքանչիւրը մէկ ենթակայ ունի և մէկ ստորոգեալ (բայ)։

2. Հաւաքական բառերը, թէև յոգնակի նշանակութիւն ունին, սովորաբար եզակի բայ են պահանջում. ինչպէս. Մեծ բազմութիւն հաւաքուեցաւ փողոցում։ Ժողովուրդը ոտի կանգնեցաւ և իւր շնորհակալութիւնը յայտնեց նախագահին։

Բայց երբեմն յոգնակի է դրվում բայը, մանաւանդ

Եթէ ենթակայի մօտ յոգնակի սեռ. յատկացուցիչ լինի. օրինակ. Բոլոր ժողովուրդը միաբերան բողոքեցին դատաւորի անիրաւութեան դէմ: Աշակերտների կէսը վարձատրութիւն ստացան: Հայոց պատմագրների մեծ մասը թարգմանուած են եւրոպական լեզուներով:

3. Եթէ եզակի ենթակայի հետ թուական անուն լինի, բայը կարող է գրուել թէ՛ եզակի և թէ՛ յոգնակի. ինչպէս. Երկու մարդ բանտից փախան: Հինգ թնդանօթ առնուեցաւ թշնամիների ձեռից: Վարդանանց պատերազմում հազար երեսունվեց հոգի ընկան հայոց ազգի անկախութեան համար:

4. Եթէ եզակի ենթակայի մօտ երկրորդական առարկայ լինի հետ նախադրութեամբ սեռական հոլովով, որ գլխաւոր առարկայի գործողութեան մասնակցութիւն ունենալն է ցոյց տալիս, բայը յոգնակի է գրւում, եթէ կամենանք որոշակի յայտնել երկրորդական առարկայի մասնակցութիւնը, եզակի՝ եթէ բոլոր գործողութիւնը կենդրոնացնում ենք ենթակայի մէջ. ինչպէս: Հայրս մօրս հետ գիւղ գնացին: (Այսինքն՝ հայրս ու մայրս գնացին): Եղբայր եղբօր հետ հաշտ չէ ապրում կամ չեն ապրում:

---

1. Հետևեալ նախադասութիւնները գրաբարից աշխարհաբար թարգմանեցէք և ցոյց տուէք երկու լեզուների համաձայնութեան մէջ եղած նմանութիւններն ու զանազանութիւնները:

Հովիւք արածեն զխաշինս.—Արեգակն լուսաւորէ զամենայն տիեզերս: Աւուրք իմ որպէս հովանի անցին և ես որպէս խոտ ցամաքեցայ: —Դուք էք աղ երկրի. ապա թէ աղն անհամի, բ(ի)ւ ցաղիցի: Միտք զբանս քննեն և քիմք զկերակուրս ճաշակեն:— Ի բառնալ ազգին Արշակունեաց տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանեանց Պարսից:— Ամենայն մարդ աչօք բացօք տեսանէին: Ժողովուրդն ակն ունէր Զաքարիայ եւ զարմանային ընդ յամենալն նորա: Հինգ ճագ երկուց դանգաց վաճառին: Էին անդ երկոտասան աղբիւր ջրոց:—Քաջալերէր զիւրաքանչիւր ոք ի մեծամեծ աւագանոյն Հայոց սուրբ Ղեւոնդ հանդերձ երանելեաւն Յովսէփաւ: — Մարմնոյ ի սուրբ օդս վայելեալ առողջագոյն լինի:—Թողեալ ձեր զԱստուած քարանց պաշտօն մատուցանէիք:

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ ենթակայի ու բայի համաձայնութեան պարզ նախադասութեան մէջ:

§ 3. ԲԱՅԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ ՄԻԱՒՈՐԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ:

1. Միաւորեալ նախադասութեան մէջ, ուր երկու և աւելի եզակի կամ յոգնակի ենթականեր կան, բայը յոգնակի է գրւում, եթէ բոլոր ենթականերին է վերաբերում. այսպէս. Աղքատն ու հարուստը հաւասարապէս վայելում են բնութեան պարգևները: Հայոց նախարարներն ու հոգևորականները մեծամեծ արտօնութիւններ ունէին:

2. Երկու և աւելի եզակի ենթակաների բայը եզակի է գրւում.

Ա. Երբ ենթակաները նոյն կամ նման նշանակութիւն ունին. ինչպէս. Մարդու կեանքն ու զօրութիւնը հանգամանքներից է կախուած: Ամէն բանի մէջ չափ ու սահման կայ:

Բ. Երբ հետզհետէ դասուած ենթակաները պարունակւում են վերջին ենթակայի մէջ, որ սովորաբար անորոշ դերանուն է լինում. այսպէս. Փառք, պատիւ, հարստութիւն՝ բոլորը կորաւ: Հարուստ, աղքատ, մեծ կամ փոքր՝ ոչ ոք ազատ չէ մահից:

Գ. Երբոր ենթակաները կապուած են ոչ միայն—այլև, կամ-կամ, թէ-թէ և այլն շաղկապներով, որովհետև այդպի-

սի տեղերում բայը միւս ենթակաների մօտ զօրութեամբ է իմացվում. Ոչ միայն *Եւրոպան*, այլ և *Ասիան ճանաչեց* Հռոմայեցոց իշխանութիւնը։ (Այսինքն՝ ոչ միայն Եւրոպան ճանաչեց)։ *Պատմութիւնը*, ինչպէս նաև *բնագիտութիւնը* տասնվեցերորդ դարու վերջերից *սկսաւ* մշակուիլ։

3. Եթէ ենթակաները զանազան դէմքի են, զորօրինակ՝ առաջին և երկրորդ դէմքի միանգամայն, բայը գրվում է յոգնակի առաջին դէմքով. եթէ երկրորդ կամ երրորդ դէմքի են, բայը գրվում է յոգնակի երրորդ դէմքով. ինչպէս. *Դու*, *ես* և *եղբայրդ* որսի *կը գնանք*։ Յոյս ունիմ թէ *դուք* և *ձեր ծանօթը կը գաք* մեր տունը։

4. Բայց եթէ այլադէմ ենթակաները կապուած լինին ոչ-ոչ, թէ-թէ, ոչ միայն-այլեւ և այլն շաղկապներով, բայը համաձայնում է մօտիկ ենթակայի հետ. Ոչ *նոքա դասերը գիտեն* և ոչ *դու*։ Թէ *դու պարգև կըստանաս* և թէ *մենք*։ Կամ *ես*, կամ *դուք* պարտէզ *պիտի գնանք*։

---

1. *Թարգմանութիւն*։—Գինի և *արբեցութիւն ապականեն* զայս իմաստունս։—*Գողն* եւ *զողակիցն* ի միում պատժին։—*Մտին Մովսէս* և Ահարոն առաջի Փարաւոնի և *ասեն* ցնա։—*Եկն* Ագրիպպաս և Բերենիկէ բազում երևելի սպասուք և *մտին* յատեանն։—*Դու* և *նա մի էք*։—Պատիւ և շատ պարգեւս *զաւանեմք* յարքայէն *ես* և *դու* և *մեք*։ *Նա* և *դու* և ամենայն *բազմութիւնդ աշակերտեսցուք* աստուածային գրոյ։—*Մեղար դու* և ամենայն *տուն* քո. զի ոչ *խօսեցարուք* առաջի իմ ճշմարիտ.

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ ենթակայի ու բայի համաձայնութեան միաւորեալ նախադասութեան մէջ։

---

§ 4. ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ։

1. Սահմանականի *ներկան* գործ է ածվում՝ 1) երբ հարկ է յայտնել թէ գործողութիւնը մեր խօսակցութեան ժամանակն է կատարվում. ինչպէս. Ձեր հայրը *գալիս է*։ Նա *բնակվում է* մեր տան մօտ։ 2) Երբ հարկ է յայտնել մի ընդհանուր ճշմարտութիւն, մի սովորական բան. ինչպէս. Մարդիկ մահկանացու *են*։ Ծառերը ձմեռը *հանգստանում են*, գարնանը *ծաղկում են*, ամառը պտուղ *բերում* և աշնանը *հասցնում են*։

2. Ներկայ ժամանակը գործ է ածվում նոյնպէս *անցեալ կատարեալի* տեղ պատմական նկարագրութիւնների մէջ, երբ կամենում ենք անցեալ գործողութիւնը իբր աչքի առաջ բերել, որով խօսքը աւելի կենդանութիւն է ստանում։ Զորօրինակ. Այն միջոցին երբ դաշնակիցները անհոգ կացած իրանց յաղթութեան վրայ էին ուրախանում, յանկարծ թշնամին *է վրայ հասնում* ու անխնայ *ջարդում*, *կոտորում է* առաւօտեան յաղթողներին։

3. Ներկան վարվում է և *ապառնիի* տեղ, երբ հարկ լինի մերձաւոր ապագայ գործողութեան ստուգութիւնը յայտնել. ինչպէս. Այսօր ճանապարհ *եմ ընկնում*։ Էգուց մայր եկեղեցում մեծ հանդէս *կայ*։

4. *Անցեալ անկատարը* գործ է ածվում երբ կամենում ենք յայտնել այնպիսի գործողութիւն որ տեւում էր տակաւին, երբ մի ուրիշ գործողութիւն սկսաւ ու ընդհատեց նորան. զորօրինակ. Մենակ նստած գիրք *էի կարդում*, երբ որ բարեկամս ներս մտաւ։ Աշակերտները *խաղում էին*, երբ որ ուսուցիչն եկաւ։

5. Անկատարը վարվում է նոյնպէս երկու կամ աւելի

ժամանակակից գործողութիւններ յայտնելու, որոնց ոչ սկիզբը յայտնի է և ոչ տևողութիւնը. ինչպէս. Ծաղիկ էր քաղում և ընտրում, բաժանում էր բոլոր ծանօթներին։

6. Անկատարը գործ է ածվում պարձեալ երբ հարկ է նկարագրել բնութեան տեսարանները, մարդկանց և իրերի յատկութիւնները, բարքն ու սովորութիւնները, և այլն։ Երկիրս այդ միջոցին մի գրաւիչ տեսարան էր ներկայացնում, լուսինը թափանցում էր ծառերի տերևների միջով և ամենաթանձր մթութեան մէջ լոյս էր տալիս։—Վարդան Մամիկոնեանը քաջ զօրավար էր և առաքինի մարդ։ Հայք շատ հին ժամանակ պաշտում էին արևգակն ու լուսինը։

7. Անկատարը վարվում է երբեմն կատարեալի տեղ մերձաւոր անցեալը յայտնելու համար։ Ի՞նչ էի ասում։ Փոքըր ինչ առաջ ձեր եղբայրը այստեղ էր։

8. Անցեալ կատարեալը գործ է դրվում պատմական նկարագրութիւնների մէջ, երբ հարկ է հետզհետէ շարել պատահած անցքերը, որոնց սկիզբն ու վերջը որոշվում է. ինչպէս.

Օրն էր տարաժամ. մարդիկ դադարած,
Փողը հնչեցին՝ մարտին կատարած.
Մութը տարածուեց, աստղը ցոլացին.
Երկնից ցօղն իջաւ արնալից գետնին..։
Յետ դարձան Պարսիկք իրանց բանակը
Նորից նոր սրել սուրն ու դանակը...

9. Անց. կատարեալը վարվում է վաղակատարի տեղ, երբ հարկ է յայտնել մի պատմական իրողութիւն առանձին առած, որի ժամանակը ճիշդ յայտնի է. Քրիստո-

նէութիւնը տարածուեցաւ Հայաստանում չորրորդ դարու սկզբում։ Գրիգոր Լուսաւորիչը ծնաւ 257-ին։ Սահակ Մեծը մեռաւ 440-ին։ (Փոխանակ՝ տարածուել է, ծնել է; մեռել է)։

10. Վաղակատար ժամանակը կազմվում է եմ և ած անցեալ դերբայներով։ Սրանից առաջինը վարվում է երբ անցած բանի վրայ օտարի վկայութեամբ է խօսվում, կամ թէ անցեալ գործողութեան հետևանքը ներկայումս երևում է. այսպէս. Լսեցի թէ հայրդ եկել է։ Ասում են թէ իշխանը հիւանդացել է։ Այս երեխան շատ վատ բաներ է սովորել։ Իսկ երկրորդը ցոյց է տալիս թէ գործողութիւնը մի ժամանակ անշուշտ կատարուած է կամ չէ կատարուած. Բոլոր գործերս աւարտած եմ։ Իմ օրումը այս տեսակ բան ոչ տեսած եմ, ոչ լսած։

Եմ օժանդակի տեղ երբեմն կամ բայն է վարվում սովորաբար հարցական ձևով. Տեսած կա՞ս այսպիսի գեղեցիկ դեղձեր։ Գնացած կա՞ս Ա. քաղաքը։ (Այսինքն՝ պատահել է քեզ գնալ, տեսնել)։

Արևմտեան լեզուի մէջ այսպիսի դէպքերում գործ է ածվում ունիմ բայը։ Այսպէս նոյն մտքով ասում են. Տեսած ունի՞ս այսպիսի գեղեցիկ դեղձեր։

11. Երկու գերակատար ժամանակները վարվում են հեռաւոր անցեալ ժամանակը յայտնելու, առաջինը անորոշ մտքով, իսկ երկրորդը որոշեալ. թէև երբեմն երկուսն էլ միմեանց փոխանակ դրվում են։ Նոյն է ասել՝ Տուն էի գնացել և Տուն էի գնացած։ Բարեկամներս եկել էին ինձ տեսնելու։ Լսել էի թէ այս երկրումը մեծ անձրևներ են գալիս, բայց չէի տեսած։

Առաջին գերակատարը երբեմն պայմանականի մտքով

է վարվում, թէ, որ շաղկապներով կամ առանց այդ շաղկապների. ինչպէս. Եթէ իմացել էի թէ դու այստեղ ես, վազ կը գայի։ Մէկ էլ հետս խօսել էր, բանը գլուխ կը գար։

12. Պարզ ապառնին գործ է ածվում սովորական ապագայ գործողութիւնը բացատրելու, ինչպէս.

Բայց ախ, երբ որ կ'անցնի ամիս ու տարի,
Կը մամռոտի գերեզմանը այն բարի,
Հետքը անգամ չի մնալու իմ խաչին,
Իմ անունը, իմ յիշատակը կը կորչին։

Կը մասնիկի տեղ գործ է դրվում պիտի կամ պէտք է անդէմ բայը, երբ հարկ է յայտնել թէ գործողութիւնը անշուշտ կատարուելու է. Այս ամառ երկար ճանապարհորդութիւն պիտի անենք։ Պէտք է գնամ տուն։

13. Ապառնին գործ է ածվում երբեմն հրամայական եղանակի տեղով, երեք դէմքով էլ. զորօրինակ. Կ'երթաս արհեստաւորին կ'ասես որ գործիքները բերէ, և երկուսդ կը սպասէք մինչև որ ես գամ։

14. Եթէ ապառնին հարցական ձևով է, կամ իրանից առաջ ունի ո՞ւր, ո՞վ, ի՞նչ, ինչպէ՞ս և այլն հարցականները կամ որ թէական շաղկապը, կը մասնիկը շատ անգամ բաց է թողվում։ Այսպէս ասում են՝ Գնա՞նք թէ քիչ էլ սպասենք։ Որ գնանք լաւ կը լինի։ Ի՞նչ խօսինք ձեր ասած մարդուն։

15. Պայմանական եղանակը յայտնում է մի գործողութիւն որ մի ուրիշի պայմանից կախում ունի. և այն ժամանակ եթէ, թէ որ շաղկապներից յետոյ կը մասնիկը բաց է թողվում։ Զորօրինակ. Ուսուցիչը կը ներէր աշակերտներին, եթէ իրանց յանցանքը խոստովանէին։ Եթէ թուղթ

ու գրիչ ունենայի, իսկոյն կը պատասխանէի նորան։

Նոյն ձևով ու մտքով գործ է ածվում և ապառնին. Կը գամ ձեզ մօտ, եթէ ժամանակ ունենամ։

Երբեմն երկրորդական նախադասութիւնը զօրութեամբ է իմացվում, և այն ժամանակ պայմանականը ցանկութիւն կամ փափագ է յայտնում. Կը ցանկանայի իմանալ թէ ինչ է ձեր տխրութեան պատճառը։ (Այսինքն կը ցանկանայի, եթէ հնար լինէր։) Կ'ուզէի գնալ տեսնել նորան։

16. Ապառնիի ու պայմանականի բաղադրեալ ժամանակները արտայայտում են մի գործողութիւն, որ ներկայի վերաբերութեամբ ապառնի է, բայց անցեալ է՝ ուրիշ ապառնի ժամանակի վերաբերութեամբ։ Այս երկու ժամանակները շատ անգամ թէականի կամ պայմանականի միտք ունին։ Սխալ գաղափար տուած կը լինինք մեր նախնեաց կեանքի վրայ, եթէ վերացական դատողութիւններով բաւականանք և չենք նորոգիլ մեր մէջ անցեալ ժամանակների յիշատակները։ Եթէ երէկ ճանապարհ ընկած լինէինք, այժմ ձեր տեղը հասած կը լինէինք։

Երբեմն ապառնի բաղադրեալը ենթադրութիւն կամ կարծիք է ցոյց տալիս. ինչպէս. Անշուշտ մեր նամակը ստացած ու կարդացած կը լինի։

17. Ստորադասական եղանակը գործ է ածվում՝ 1) կամք և զգացմունք յայտնող բայերի հետ. ինչպէս. Ցանկանում եմ որ ինձ հետ գաք։ Վախենում եմ որ անձրև չգայ և չստիպուինք գիշերն անցկացնել այս խրճթի մէջ։ 2) Անդէմ և բացասական նախադասութիւնների հետ.—Չեմ կարծում որ ձեր քոյրը ձեր ձայնը լսած լինի։ Անկարելի է պատասխանած չլինի ձեզ։

18. Ստորադասական ներկան համապատասխանում է

սահմանական ներկային և ապառնիին, իսկ ստորադասական անկատարը սահմ. անկատարին ու պայմանականին. ինչպէս. Խնդրում եմ (կամ կը խնդրեմ) որ գաս ինքդ ամէն բան քո ձեռովը կարգի դնես։ Մարդ չկայ որ պակասութիւններից ազատ լինի։ Մենք չէինք ցանկանում (կամ չէինք ցանկանալ) որ թշնամին անցնէր ու յարձակուէր մեզ վրայ։

Բայց առհասարակ նկատելու է որ ստորադասական անկատարի տեղ գրեթէ միշտ ներկան է վարվում, մանաւանդ յոգնականում. Սպասում էինք որ գան, մեզ տեսնեն (եւ ոչ գային, տեսնէին)։ Նոյնպէս սահմ. անցեալ ժամանակների հետ ստորադասական ներկայ է դրվում. Դատաւորը հրամայեց (հրամայել է, հրամայել էր) որ վկաների ասածները լսեն, քննեն և այնպէս վճիռը տան։

19. Ստորադասականը գործ է ածվում երբեմն հրամայականի նշանակութեամբ. Գնա՛մ տեսնե՛մ կամ գնա՛նք տեսնե՛նք թէ ինչ են անում։ Ի՞նչ ես նստել. վեր կենաս, գրքերդ հաւաքես։

Բայց շատ անգամ աւելի սաստկութեան համար աւելացնում են թող շաղկապը, մանաւանդ անկատարի հետ. Թո՛ղ կարդան ու գրեն։ Թո՛ղ իրանց գլխին բան չբռնէին։

20. Եթէ, թէ որ շաղկապների հետ ապառնիի ու պայմանականի տեղ վարվում են ստորադ. ներկան ու անկատարը՝ թէականի նշանակութեամբ. ինչպէս. Եթէ չգամ ու չտեսնեմ քեզ, ինքդ արի ինձ մօտ։ Պատմէր իր գլխի անցքը, վախենում էր որ հօր սիրտը չվշտացնէ, թէ չպատմէր՝ գիտէր որ բանը ծածուկ չի մնալ։

---

1. Եւ մինչդեռ անցանէր (Յիսուս), ետես այր մի կոյր ի ծնէ. և հարցանէին զնա աշակերտքն նորա և ասեն. Ռաբբի, ո՞ր մեղաւ, սորա թէ հօր և թէ մօր իւրոյ, զի կոյր ծնցի։ Պատասխանի ետ Յիսուս. Ոչ դորա և ոչ հօր և մօր իւրոյ, այլ զի յայտնի լինիցին գործքն Աստուծոյ ի դմա. Զայս ասաց, եթուք ի գետին, և արար կաւ ի թքոյն, և ծեփեաց զկաւն ի վերայ աչաց կուրին և ասէ ցնա. Երթ, լուա յաւազանին Սելովմայ, որ թարգմանի առաքեալ։ Չոգաւ, լուացաւ, եկն և տեսանէր։ Իսկ դրացիքն որոց տեսեալ էր զնա յառաջագոյն թէ մուրացիկ էր, ասէին. Ո՞չ սա էր որ նստէրն և մուրանայր։ Կէսքն ասէին. Նա է, այլքն ասէին. Ոչ, այլ նման է նմա. և ինքն ասէր թէ, Ես եմ։

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ բայի զանազան եղանակներով ու ժամանակներով։

§ 5. ԴԻՐԲԱՅՆԵՐԻ ԿԱԶՄԱԾ ՈՒՐԻՇ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ.

1. Եղել անցեալ դերբայն վարվում է գլխաւոր բայի ժամանակների հետ, երբ առարկայի գործողութեան վրայ օտարի վկայութեամբ է խօսվում. Տեսնում է եղել. Տեսած է եղել. Կը տեսնէ կամ պիտի տեսնէ եղել — նշանակում է՝ Ասում են թէ տեսնում է, տեսել է, պիտի տեսնէ։ — Ամէն առաւօտ ու երեկոյ գնում է եղել լողանալու։

2. Լիս վերջաւորութեամբ անորոշ դերբայի ներգոյականը լինել օժանդակ բայի ժամանակներով վարվում է գործողութեան հաւանականութիւնը ցոյց տալու։ Կարդալիս է լինում. կարդալիս է եղել. կարդալիս կը լինի (ներկ. և ապառ.). Որ կարդալիս լինի — նշանակում է՝ հաւանական է որ կարդում է, կը կարդայ և այլն։

Նոյն մտքով գործ է ածվում ներկայի ում վերջաւորութիւնը։ Միևնոյն է ասել՝ Նա այժմ հաց ուտելիս կը լինի, կամ Նա այժմ հաց կը լինի ուտում։

3. Ող ներկայ դերբայն եմ բայի բացասական ձևով գործ է ածվում երբեմն ներկայի և ապառնիի տեղ. Ես նորա հետ խօսողը չեմ—նշանակում է՝ այժմեան կամ որքէք չեմ խօսիլ:

4. Լու ապառնի դերբայն գործ է դրվում եմ և լինիմ բայերի զանազան ժամանակներով, երբ կամենում ենք յայտնել թէ դիտաւորութիւն կայ գործողութիւնը կատարելու. Գնալու եմ. Գնալու էի. Գնալու կը լինիմ. Թէ գնալու լինէի և այլն, նշանակում է՝ դիտաւորութիւն ունիմ, ունէի, կ'ունենամ գնալու։—Թէ գիւղ գնալու լինիս, բեզ իմաց կը տամ:

Երբեմն էլ հարկադրականի մտքով է վարվում, մանաւանդ եթէ բայն բացասական է. Երբ և իցէ մեռնելու ենք։ Աշխարհս մեզ մնալու չէ։

5. Ած անցեալ լինիմ բայով կազմում է միատեսակ հրամ. անցեալի նշանակութեամբ. Տեսած եղիր. Տեսած եղէք։—Գնա, դու էլ հանդէսը տեսած եղիր։ Ինձ հետ այդ մասին խօսած մի՛ լինիք:

6. Նոյն ած անցեալը պիտի կամ պէտք է անդէմներով վարվում է անորոշ դերբայի տեղ՝ խօսքին աւելի որոշութիւն տալու համար. օրօրինակ. Ի՞նչ պէտք է արած։ Մեղաւորը պէտք է պատժած։ Գաս օրին միս չպէտք է կերած (փոխանակ՝ չպէտք է ուտել)։

Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ վերոյիշեալ ձևերով:

§ 6. ԲԱՅԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ԱՆԴԷՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ:

1. Անդէմ նախադասութեան մէջ առհասարակ գործ է ածվում անդէմ բայն՝ 1. Ստորադասական եղանակով. ինչպէս. Պէտք է որ տուն գնամ, դասերս պատրաստեմ։ 2. Անորոշ եղանակով, և այն ժամանակ ենթական շատ անգամ տրական հոլովի ձև է ստանում. Հարկաւոր է վաղ քնել և վաղ զարթել։ Ամօթ է մեզ մեր ձեռից եկած օգնութիւնը չանել խեղճերին:

Երևանեայ բարբառին յատուկ ձև է դիմաւոր բայի մօտ անորոշ դերբայի տեղ ստոր. եղ. գործ դնել. ինչպէս. Ուզում եմ գնամ, տեսնեմ իմ բարեկամներին։ Պատրաստ է հոգին տայ քեզ համար:

2. Անդէմ բայի մտքով գործ է ածվում երբեմն՝ 1) դիմաւոր բայի յոգնակի 3-րդ դէմքը, երբ որ զօրութեամբ է իմացվում ոմանք կամ շատ մարդիկ ենթական. ինչպէս. Կարծում են թէ լուսնի վրայ բնակիչներ կան։ Ասել են ձու ու տուր, ոչ թէ ձու ու կուլ։ 2) Դիմաւոր բայի եզ. 2-րդ դէմքը, երբ որ զօրութեամբ է իմացվում բոլոր մարդիկ կամ իւրաքանչիւր մարդ ենթական. ինչպէս. Սգաւոր մարդ տեսնելիս՝ ուզում ես մխիթարել նորան, բայց չես իմանում թէ ինչ ասես կամ որ տեղից սկսիս:

Գաւառական բարբառներում ունիմ բայի ենթական տրական հոլովի փոխանելով, անդէմ նախադասութիւն է կազմվում. Այսպէս ասում են. Խեղճին հաց չունի ուտելու։ Իմ երկու եղբայր ունիմ և մէկ քոյր։ Այս մտքով գրբր. գործ է ածվում եմ բայը, որի ենթական սեռ. հոլովի ձև է ստանում. Են իմ եղբարք հինգ:

---

1. Թարգմանութիւն։—Պարտ է մանկանց ունել բարեաչափաւոր և հեզ։—Բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յարքայութիւն երկնից։—Անհնար է խոտոյ և ջրոյ ի միա-

սին կեալ։—Զհայկակ ասեն լինել առ Բելոքոսիւ։—Քանի՞ որդիք իցեն նորա։ Ո՞ ոք քո անտ բարեկամ։—Անն ուրումն էին գանձք բազումք։—Զնն նորա ծնողք։

2. Գրեցէք ձեզանից մի քանի անդէմ նախադասութեան օրինակներ։

§ 7 ԲԱՂԱԴՐԵԱԼ ԲԱՅԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԵՆԹԱԿԱՅԻ ՀԵՏ։

1. Բաղադրեալ բայի մէջ ածականը կամ գոյականը սովորաբար անփոփոխ են մնում և միայն օգնական բայը համաձայնում է ենթակայի հետ դէմքով և թւով. ինչպէս. Ես հայ եմ։ Հայաստանի օդը բարեխառն է։ Դուք մեղաւոր էք։ Ծառայ ենք քո տէրութեանը։

Մեր քերականները այս տեսակ նախադասութիւնները այսպէս են մեկնում. «Ես մարդ եմ»—ես տէր բայի (ենթ.), եմ բայ (ստորոգ.), մարդ ուղ. հոլովով խնդիր (լրաց.)։ Բայց այդ ճիշդ չէ. որովհետեւ այսպիսի տեղերում գլխաւոր միտքը գոյականի կամ ածականի մէջ է, և ոչ եմ բայի մէջ, որ միայն գոյ. և ածականին բայի ձեւ է տալիս, և այս պատճառով օգնական բայ է, և ոչ էական։

2. Բայց շատ անգամ բաղադրեալ բայի գոյականը թւով համաձայնում է ենթակայի հետ, այսինքն յոգնակի է գրվում, թէ մէկ յոգնակի ենթակայ լինի և թէ շատ եզակի ենթականեր. օրինակ. Հայկազեանց առաջին իշխանները լոկ նահապետներ էին։ Առիւծն ու վագրը կատաղի գազաններ են։

3. Միաւորեալ նախադասութեան մէջ ուր երկու կամ աւելի բաղադրեալ բայեր կան, օգնական բայն բաւական է միայն մի անգամ յիշել սկզբումը կամ վերջումը. ինչպէս. Մեր քաղաքների փողոցները երկար են ու լայն։ Մովսէս Խորենացին Հայոց գրականութեան փառքն

ու պարծանքն է։ Երաժշտութիւնը մարդու համար օգտակար, հարկաւոր ու զուարճալի է։

4. Բաղադրեալ բայի մէջ օգնական բայի պաշտօն են վարում, բացի եմ բայից, լինել, դառնալ, մնալ եւ ուրիշ սոյն նման բայեր. Պարոյրը թագաւոր եղաւ։ Քոյրդ մեծ աղջիկ դառաւ։ Խեղճը սառած մնաց։

---

1. Թարգմանութիւն։—Սաղ է կենդանի։—Փափուկ և դիւրադարձ է լեզու։—Յորժամ պտղալից իցէ ծառ, յայնժամ գեղեցիկ է։—Աշխարհ Հայոց մեծ է և արգաւանդ։ Վարդապետք էիք առաքելական քարոզութեանցն, արդ աշակե՛րտք լինիցիք մոլար խաբէութեանն։ Ուսուցիչք էիք ճշմարտութեանն, արդ ուսուցանիցէք զպատիր խաբէութիւն մոգաց։ Քարոզք էիք արարչական զօրութեանն, արդ զտարերս աստուածս խոստովանիք։ Ժառանգ էիք արքայութեանն, արդ անձամբ դանձինս արարէք ժառանգ գեհենոյն։—Լե՛ր դու ինձ յորոր։—Եղիջիք դուք մեզ ի ծառայս։ Եղիցին ամենայն գժուարինք ի դիւրինս և առապարքն ի դաշտս։

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ բաղադրեալ բայի համաձայնութեամբ։

§ 8 ԱԾԱԿԱՆ ՅԱՏԿԱՑՈՒՑՉԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ ՅԱՏԿԱՑԵԱԼԻ ՀԵՏ։

1. Ածական յատկացուցիչը միշտ իր յատկացեալից առաջ է գրվում և անփոփոխ մնում. ինչպէս. Բարի մարդը իւր բարի գործերից է ճանաչվում։

2. Եթէ նախադասութեան մէջ այլ և այլ ածականներ լինին, առաջ դասվում են աւելի որոշեալները, ինչպէս են ցուցական և ստացական դերանունները և թւական անունները, յետոյ անորոշ դերանունները, որակ. և յարաբ. ածականները. այսպէս. Մեր գեղեցիկ քարաշէն տունը ծախեցինք։ Այս մի քանի ազատ օրերը անգործ պիտի

մնանք։ Իմ բոլոր սրտակից բարեկամները այստեղ են։ Առաջին լաւ համբաւը մեզ կը հասնի։

3. Ածականը կարող է երբեմն իր գոյականից յետոյ դասուել, կրճատեալ նախադասութեան ձեւով. այսպէս. Մի շուն ունիմ զարմանալի հաւատարիմ։ Սայլեր տեսանք ամեն տեսակ մրգերով լի։ (Այսինքն՝ մի շուն որ հաւատարիմ է. սայլեր որ լի են)։

4. Առանձին ձեւով ածականը երբեմն իր գոյականից յետոյ է դասվում տեսակ ցոյց տալու համար, եւ այն ժամանակ գոյականը սեռ. յատկացուցչի ձեւ է ստանում. այսպէս ասում են՝ Դեղձի ընտիրը Երեւան կը գտնես։ Կտաւի լաւը Հոլանդիայումն են գործում։ (Այսինքն՝ ընտիր դեղձը, լաւ կտաւը։

5. Շատ անգամ յոգնակի գոյականի մօտ միեւնոյն ածականը կրկնվում է սաստկութեան համար, այսպէս. սուր սուր խօսքեր. ծանր ծանր գանգատներ. մանր մանր հատիկներ. մեծ մեծ խոստմունքներ. լայն լայն փեշեր։

Նոյն մտքով եւ գոյական անունն է վարվում կրկնուած՝ տեսակ տեսակ բոյսեր. գոյն գոյն ծաղիկներ. շարք շարք մարգարիտներ։

6. Եթէ հետզհետէ երկու ածական լինին, երկրորդը գոյականի զօրութիւն ունի եւ հոլովում է ու յօդ ընդունում. Խեղճ ողորմելիքը օրուան հացի կարօտ են։

7. Եթէ գոյականը զօրութեամբ է իմացվում, ածականը նորա հոլովը ու թիւն ընդունում է. ինչպէս Կարմիր վարդերը աւելի ախորժելի են քան թէ սպիտակները ու դեղինները։

8. Ածականի տեղ շատ անգամ վարվում են գոյական անունները այլ եւ այլ մտքով.

Ա. Պարզ ածականի մտքով. այսպէս ասում են՝ ցուրտ

եղանակ. շուաք տեղեր. սուտ վկայութիւն. ծակ ամաններ։

Բ. Չափ ու ձեւ ցոյց տուող գոյականները՝ առաջինները թուական անունով միասին. երկրորդները ածականով. այսպէս. մի բաժակ չայ. երկու լիտր շաքար. տասը կանգուն կտաւ. մի քանի սայլ խոտ. նոր տեսակ ճարտարապետութիւն. հին ձեւ զարդարանքներ։

Գ. Նմանութեամբ և փոխաբերական մտքով. ծաղիկ հասակ. ապառաժ բարեր. կրակ մարդ. հրէշ մարդ։

---

1. Թարգմանութիւն.—Երկոքեան կողմանքն էր սրտմտութեամբ և մեծաւ քաջութեամբ զարմանալին և զազանացեալ զօրութեամբ փրեալս յարձակէին երկոքեան և ամբոխ աղաղակին ելևոցունց կողմանց իբրև ի մէջ ամպոց շփոթելոց ճայթմունս գործէր։—Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցօքն ոչ սակաւ նախճիրս գործեաց ի տեղւոջն, յորում անդուոջ և ինքն իսկ արժանի եղև առնուլ զկատարեալ նահատակութեանն պսակ։—Խոստովան լիցուք զգաղտնիս սրտից մերոց ծածկագէտին Աստուծոյ։ Աւաղ փառացս անցաւորի։—Պսակաւն փշեայ զարդարեցին զգլուխ Թագաւորին երկնաւորի։—Աբէլ ի հարազատէն իւրմէ սպանաւ յանօրէն։—Ի վերայ այդր վիմի (կամ վիմիդ այդորիկ) շինեցից զեկեղեցի իմ։—Որ ելանէ ի բերանոյ, ի սրտէ անտի գայ։—Ընդէր տեսանեմք զարև յետ մերոց սիրելեացն։

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ ածական յատկացուցչի գործածութեան վրայ։

§ 9. ԳՈՅԱԿԱՆ ՅԱՏԿԱՑՈՒՑՉԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ ՅԱՏԿԱՑԵԱԼԻ ՀԵՏ։

1. Գոյական յատկացուցիչը ածականի պէս յատկացեալից նախադաս է վարվում, և յատկացեալը մտքին նայելով կարող է ստացական յօդ առնել և չառնել. ինչպէս. Հայաստանի կլիման բարեխառն է։ Մեր պարտէզի ծառերը պտղատու են։ Մարիամը վարդերի ու մեխակների մարգեր ունի։

2. Գոյական յատկացուցիչը երբեմն կարող է իր յատկացեալից յետոյ դասուել. օրինակ. Մովսէս Խորենացին իրաւամբ կոչվում է հայր պատմութեան հայոց: Նոյնպէս և գրքերի անունները՝ Պատմութիւն Յունաց. Աշխարհագրութիւն Հայաստանի:

Միայն եթէ յատկացեալը որոշեալ է, այս տեսակ դասաւորութիւնը անընդունելի է. ուստի չէ կարելի ասել՝ Եղիշէի պատմութիւնը Վարդանանց հին հայկաբանութեան օրինակ է, այլ՝ Եղիշէի Վարդանանց պատմութիւնը:

3. Գոյական յատկացուցիչը ցոյց է տալիս գլխաւորապէս թէ մէկ առարկայ ումն է պատկանում կամ վերաբերում. այսպէս. Իմ եղբօր գրատան մէջ (այսինքն՝ այն գրատան մէջ, որ իմ եղբօրն է պատկանում) շատ օգտակար գրքեր կան: Հայրենեաց փուշը քաղցր է քան թէ օտարի վարդը: (Այսինքն՝ հայրենեաց վերաբերող փուշը):

Այս տեսակ սեռական յատկացուցիչը յարաբերական ածականի միտք ունի. Նոյն է ասել՝ մօր օրհնութիւն և մայրական օրհնութիւն. հայոց լեզու և հայկական լեզու:

Միայն ածական ձևը միշտ չէ կարող գործ ածուել, չէ կարելի ասել շնչաւոր առարկայի վերաբերութեամբ յունական թագաւոր, պարսկական Շահ.— այլ Յունաց թագաւոր. Պարսից Շահ: Այս բանիս ուշք դարձնելու է օտար լեզուներից թարգմանելու ժամանակ:

4. Գոյական յատկացուցիչը երբեմն ցոյց է տալի մէկ որևիցէ առարկայի որպիսութիւնը. ինչպէս. Այս մարդը զարմանալի յատկութիւնների տէր է: Երկուսն էլ մէկ հասակի մարդիկ են: Հպարտութիւնը յետինաստիճանի անմտութիւն է:

Այս տեսակ սեռական յատկացուցիչը որակական ածականի միտք ունի, և այս պատճառով միայն որակական ածականով կարող է գործ ածուել. ազնիւ բնաւորութեան. լաւ վարքի տէր. ստորին կարգի մարդիկ:

Եթէ ուղղական կամ հայցական հոլովով յատկացեալը զօրութեամբ է իմացվում, յատկացուցիչը ստանում է նորա յօդը և հոլովական վերջաւորութիւնը. Այս գիրքը Պետրոսինն է. այսինքն՝ Պետրոսի գիրքն է: Գետերի ջուրը աւելի համեղ ու առողջարար է քան թէ աղբիւրներինը:

Նկատելու է, որ այս դէպքում յօդից առաջ Ն տառն է աւելացվում:

---

1. Թարգմանութիւն.—Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր և այնպէս աներկիւղս առնէ զմարդիկ, իբրև զանմարմին զօրս հրեշտակաց:—Ետ հրաման (Յազկերտ) յափշտակել զքրիստոնէից զինչս և զստացուածս, որ էին ի մէջ Պարսկաց աշխարհին:—Դրդեցին, ժողովեցին զբազմութիւն արանց և կանանց, շինականաց և ազատաց, զքահանայից և զմիանձանց, խրատ եդին, պնդեցին և արարին զամենեսեան զինուորս Քրիստոսի:—Զիարդ ոչ է զօրաւոր գինի. զի զամենայն մարդիկ որ ըմպեն զնա՝ յիմարացուցանէ զմիտս, և զթագաւորաց և զտառապելոց մի միտս առնէ. նոյնպէս զտեառն և զծառայի, զմեծատանց եւ զաղքատաց, և զամենայն միտս դարձուցանէ և չքէ յուրախութիւն:—Սատակեցի զնոսա բանիւ բերանով իմով:—Ոչ էր արբեալ նորա այնչափ յօրէ ծննդենէ իւրմէ:

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ գոյական յատկացուցչի գործածութեան վրայ:

§ 10. ԲԱՑԱՅԱՅՏՉԻ ԵՒ ԲԱՑԱՅԱՅՏԵԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ:

1. Բացայայտիչը եթէ մէկ բառով է արտայայտվում, միշտ բացայայտեալից յետոյ է դասվում և ինքը միայն ըն-

գունում որոշեալ յօդ ու հոլովական վերջաւորութիւն. Ինչպէս. Թիֆլիզ քաղաքը Կուր գետի վրայ է։ Հայկ նահապետը Հայկազանց հարստութեան հիմնադիրն է։

2. Երկու կամ աւելի բառից բաղկացած բացայայտիչը կարող է բացայայտեալից նախադաս էլ վարուիլ, յետադաս էլ.

Ա. Եթէ բարդ բացայայտիչը յետադաս է, երկուսն էլ ընդունում են յօդ և հոլովական վերջաւորութիւն։ Անին, Բագրատունեաց մայրաքաղաքը, նշանաւոր էր իւր ճարտարապետութեամբը։ Աղէքսանդր Մակեդոնացին բարկութեան ժամանակ սպանեց Կլիտոնին՝ իւր հաւատարիմ զօրավարին*։

Բ. Եթէ բացայայտիչը նախադաս է, սովորաբար նոյնպէս բացայայտեալի համաձայն է դրվում, թէև երբեմն անհամաձայն է մնում. այսպէս. Մեր հին վիպասանները երգեցին Տիգրանի կրտսեր որդու Վահագնի քաջութիւնները։ Արայի որդին Կարդոսը (կամ Արայի որդի Կարդոսը) գերի ընկաւ Ասորեստանցոց ձեռքը։ Սուրէն զօրավարը Կրասոսի գլուխն ուղարկեց Հռոմայեցոց ոխերիմ թշնամուն Տիգրանին (կամ Հռոմայեցոց ոխերիմ թշնամի Տիգրանին)։

3) Առանձին ոճով երբեմն բացայայտեալը սեռական հոլովով է դրվում, գոյական յատկացուցչի ձևով. օրօրինակ. Եգիպտոսի երկիրը լի է պատմական յիշատակարաններով։ Սահարայի անապատում փչում է դառնաշունչ Սամում քամին։ Գեղարքունի ծովը դուրս է գալիս Սևանայ լճից։

* Բայց երբեմն նախադաս բացայայտեալը աւելի յարմար է անյօդ թողնել. Յուսուփ, Արաբացոց ոստիկանը, մեծ-վնասներ հասցրեց Հայոց։

---

1. Թարգմանութիւն. Յասոն եղբայր Ոնեայ, ցանկացաւ հանել (խլել) զքահանայապետութիւն յՈնեայ։— Որդիք սորա Յուսկանն Պապ և Աթանագինէս մահ անձանց նիւթեցին։— Ասէ Հռագուել ցՀեգնա ցկին իւր.— Տեսանես զի նմանի պատանեակս Տուբիթայ եղբօր որդւոյն իմոյ։ Պետրոս էր ի Հռոմ քաղաքէ։— Առ Ներոնիւ կայսերբ գլխատեցաւ Պօղոս ի Հռոմ քաղաքի։

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ բացայայտչի գործածութեան վրայ։

Բ. Խնդրառութիւն Մասանց-Բանի։

§ 11. ԽՆԴՐԱՌՈՒ ԵՒ ԽՆԴԻՐ ԲԱՌԵՐ.

Այն բառերը որոնք մի որևիցէ հոլով են պահանջում, կոչվում են *խնդրառու*. իսկ այն բառերը որոնք կախում ունին խնդրառու բառերից և այս կամ այն հոլովով են գործածվում, կոչվում են *խնդիր*։ Զօրօրինակ. Փայտը կտրում են կացինով նախադասութեան մէջ *կտրում են* խնդրառու բառ է, իսկ *փայտը* և *կացինով* խնդիր։

Խնդիր պահանջում են գլխաւորապէս *բայերը*, ինչպէս նաև անունները և նախադրութիւնները։ Իսկ խնդիր լինում են գլխաւորապէս *գոյական անունները*, նոյնպէս և ածականները ու դերանունները, երբ որ գոյականի մտքով են վարվում, և անորոշ դերբայը։

Խնդիրների մէջ պէտք է զանազանել գլխաւորները երկրորդականներից։ Գլխաւոր խնդիր են լրացուցիչ բառերը, որոնք անհրաժեշտ են նախադասութեան մէջ. իսկ երկրորդական խնդիր պարագայական բառերն են, որոնք սերտ կապակցութիւն չունին բայի հետ և կարող են նա-

խաղաղութիւնից դուրս թողուիլ։ Այսպէս այս նախադասութեան մէջ՝ *Տարեմտին* հայրս *ինձ մի գիրք* պարգեւեց— *ինձ մի գիրք* գլխաւոր խնդիրներ են, *Տարեմտին*—երկրորդական։

§ 12. ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ ԽՆԴԻՐ․

1. Հայցական հոլովով խնդիր դրվում է գլխաւորապէս այն առարկան, որի վրայ անցնում է ենթակայի գործողութիւնը. այս պատճառով բոլոր ներգործական բայերը պահանջում են միշտ հայցական։ Զօրօրինակ. Հերոստրատ այրեց Եփեսոսի *տաճարը*։ Տրդատ մէկ հարուածով *սպանեց* Բասլայ թագաւորին։ Փոքրիկ առուները կազմում են մեծամեծ *գետեր*։

2. Հայցական հոլովով խնդիր առնում են՝ *ծնել, մեռնել. ընտրել* և *ընտրուիլ. կարգել* և *կարգուիլ. դառնալ, օծել, պսակել, անուանել* և սոյն նման ներգ. կրաւ. և չէզոք բայերը, որոնք ցոյց են տալիս առարկայի դրութեան փոփոխութիւնը. ինչպէս Նապոլէոն Ա. ծնաւ հասարակ *քաղաքացի*, դարձաւ *կայսր* և մեռաւ *գերի*։ Վաղարշակը Բագրատ իշխանին *թագադիր* կարգեց։ 885-ին Աշոտ Ա. մեծ հանդէսով *թագաւոր* օծուեցաւ։ Մենք Հայկի անունով կոչվում ենք Հայ։

Նկատելու է որ այս հայցականը միշտ անորոշ է, ուստի և անխնդիր է վարվում։

3. Հայցական հոլով պահանջում են *շարժում* ցոյց տուող բայերը իբրև պատասխան *ո՞ւր* հարցման, երբ մի տեղ գնալ-գալ են նշանակում. ինչպէս. Բարեկամս Հայաստան է գնացել։ Գնա *տուն* և գիրքս բեր *ուսումնարան*։ Մթնեցաւ թէ չէ, ամէն մարդ իւր *տունը* քաշուեցաւ։

Այս հայց. համապատասխանում է գրոց նախդրիւ տրականին. Ե՛րթ *ի տուն, յուսումնարան*։

4. Հայցականը գործ է ածվում երբեմն ներգոյականի տեղ յօդով, եթէ հասարակ անուն է, և առանց յօդի՝ եթէ յատուկ. այսպէս. Մեր *կողմերը* ամենեւին ձիւն չէ գալիս։ Ո՞ւր տեղ էր բնակվում, *Երեւան* թէ *Էջմիածին*։ (Փոխանակ՝ մեր կողմերումը, Երեւանումը)։

5. Հայցական խնդիր դրվում է ամեն տեսակ բայերի մօտ՝ ժամանակի տեւողութիւնը ցոյց տալու, իբրև պատասխան *ո՞րքան ժամանակ* հարցման. ինչպէս. *Ամբողջ գիշերը* չարչարուեցաւ։ *Վեց օր* աշխատէ, և եօթներորդ օրը հանգստացիր։ *Գիշեր ցերեկ* իր գործի հետ է լինում։ Բագրատունեաց թագաւորութիւնը տեւեց 160 *տարի*։

Յաճախ է դրվում հայցականը՝ եթէ գործողութեան կրկնութիւն է ցոյց տալիս. ինչպէս. *Երեկոյեանները* պարապում էինք ընթերցանութեամբ։

6. Հայցական խնդիր պահանջում են բաղդատական ածականները քան թէ բառերով. Սարը աւելի մեծ է քան թէ *քարը*։ Ասիան աւելի ընդարձակ է քան թէ *Եւրոպան*։

---

1. *Թարգմանութիւն* —Այր ոմն էր մեծատուն և ագանէր *բեհեզս* և *ծիրանիս* —Թագաւոր ոմն արար *հարսանիս* որդւոյ իւրում. և առաքեաց *զծառայս* իւր կոչել *զհրաւիրեալսն ի հարսանիս* և ոչ կամէին գալ։ Դարձեալ առաքեաց այլ *ծառայս* և ասէ. Ասացէք հրաւիրելոցն. Ահաւասիկ *զճաշն իմ* պատրաստեցի, եկայք *ի հարսանիսս*։ Եւ նոքա *յուլացեալ* գնացին ոմն *յագարակ* իւր, ոմն *ի վաճառ* իւր, և այլք կալեալ զծառայս իւր, թշնամանեցին և սպանին։ — Անուն աշխարհիս մերոյ կոչի յանուն նախահօրն մերոյ Հայկայ *Հայք*։ Իմաստասէրք *զմարդ փոքր աշխարհ* ասացին։—*Անարգ* և *անօգուտ զքաջութիւնն* համարիմ և առ ոչինչ *զպարգևսն զքաջացն*։—*Զվեց օր* գործեսցես և արասցես *զամենայն գործս քո*, զի *զվեց օր* արար Աստուած *զերկինս* և *զերկիր*.—Եկն Ջրհեղեղ *զքառասուն տիւ* և *զքառասուն գիշեր*։—Ակն կարեւորագոյն է *քան զամենայն անդամս*։—

Հատն մանանխոյ փոքր է կամ փոքրագոյն է, քան զամենայն սերմանիս. բուսանի և լինի մեծ քան զամենայն բանջար։

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ հայց. խնդիրներով։

§ 13. ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ ԽՆԴԻՐ։

1. Սեռական հոլովով խնդիր պահանջում են ներգործական և կրաւորական բայերից առաջ եկած բայանունները. ինչպէս. *Գրքերի ընթերցումները* ամեն հասակի համար օգտակար է։ *Փոքր երեխաների խնամքը* ծնողաց է յանձնուած։ Աստուած է *խեղճերի մխիթարութիւնը*։ *Մարդկային ազգի Փրկիչը* ծնաւ Բեթղեհէմում։ Միութիւնը *լաւութեան ծնող* է*։ Յուսահատութիւնը *փոքրոգութեան ծնունդ* է։

* *Ող* ներկայ դերբայն, եթէ իբրև գոյական առնուի, միշտ սեռական հոլովով խնդիր է պահանջում. իսկ եթէ իբրև բայ առնուի, իւր պէտք եղած հոլովն է ընդունում։ Այսպէս կարելի է ասել՝ *Երկնքի ու երկրի* Ստեղծողը, և *երկինքն ու երկիրը* Ստեղծողը։—*Մեր* ծառայողները և *մեզ* ծառայողները (տր)։

2 Սեռական հոլով առնում են նոյնպէս *առնելու* և *տալու* բայերը, երբ հարկ է նիւթի քանակութիւնը ցոյց տալ. ինչպէս. Հայրս *տասը մանէթի* փայտ գնեց։ Երէկ *հարիւր մանէթի* գիրք ծախեցի։ *Վաթսուն մանէթի* ալիւր առաւ, որից *քսան մանէթի* ինձ տուեց։

---

1. Թարգմանութիւն։—Սկիզբն ուսմանց *զրոց* աշխատութեամբ լինի։ – Անասունք ի սպասաւորութիւն *մարդկան* եղեն։—Քրիստոս եկն յաշխարհ ի խնդիր *մոլորեալ ոչխարին*:—Յետ վախճանին Յովսէփայ նեղէին Եգիպտացիքն զԻսրայէլ ի շինուած *քաղաքաց* և ի գործս *դաշտաց*:—Միտք են *մարմնոյ* և *հոգւոյ* կառավար։

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ սեռ. խնդրով։

§ 14. ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ ԽՆԴԻՐ։

1. Տրական հոլովով խնդիր պահանջում են առհասարակ ներգ. և չէզոք բայերը՝ երբ որ մէկ առարկայի գործողութիւնը միւսին *օգուտ* կամ *վնաս* է բերում. ինչպէս. Ուսուցիչը *աշակերտներին* գրքեր ընծայեց։ Ողորմեցէք *աղքատներին*, որ Աստուած էլ փոխարէնը տայ *ձեզ*։ Լաւ չէ *ուրիշներին* նախանձել։ Անձրև օրը *հաւերին* ջուր տուող շատ կը լինի։ (Առած.)։

2. Կան մի քանի ներգործական բայեր, որոնք հայցական խնդրի տեղ տրական խնդիր են պահանջում. այսպէս են՝ *յաղթել*, *տիրել*, *խնդրել*, *ասել* (*անուանել* բայի մտքով), *սպասել*, *օգնել*, *ծեծել* և այլն. Արամը *Նիւքարին* յաղթեց։ Տիգրան Բ. *Ասորոց երկրին* տիրեց։ Օգնեցէք *չքաւորներին*։ *Պղպեղին* շատ տեղ տաքդեղ են ասում։ (Այստեղ *Նիւքարին*, *երկրին* և այլն, տրական են՝ և ոչ սեռական)։

3. Տրական հոլով պահանջում են այն բայերը, որոնք ցոյց են տալիս մի առարկայի *դիպչելը*, *խփուելը* ուրիշ առարկայի. ինչպէս. Նաւը *ժայռին* խփուեցաւ և խորտակուեցաւ։ Ոտս *ծառին* դիպաւ։ Գլուխս *քարին* տուի։ Սարը *սարին* չի դիպչիլ, մարդը *մարդուն* կը դիպչի (Առած)։

Այս ձևով կազմուած են հետևեալ դարձուածները գոյների նրբութիւնները բացատրելու համար. *կարմրին տալ*, *դեղնին տալ*, *սևին տալ*, և այլն։

4. Տրական հոլով առնում են *շարժում* ցոյց տուող բայերը, բայց միշտ առանց յօդի, երբ գործողութեան նպատակն են յայտնում. օրօրինակ. Դատաւորը իր օգնականներին *խորհրդի* կանչեց։ Այսօր հօրեղբօրս մօտ *ճաշի* են հրաւիրուած։ Զօրքը *պատերազմի* գնաց։

5. Նոյնպէս *ձգտում* ցոյց տուող բայերը տրական են

պահանջում սովորաբար յօդով. Երկար աշխատանքից յետոյ վերջապէս նպատակիս հասայ։ Տկարը զօրաւորի օգնութեանն է դիմում։ Աղուէսի ռունչը խաղողին չհասաւ, ասաւ խակ է։ (Առած)։

6. Տրականը, որոշեալ կամ դերանուանական յօդով, շատ անգամ գործ է ածվում ներգոյականի տեղ կամ *մէջ*, *վրայ*, *մօտ* նախադրութիւններով սեռականի փոխանակ։ Օրինակ. Վասակը Պարսից թագաւորի պալատը գնում էր *գլխին* ոսկի թագ ծածկած, *մէջքին* ականակուռ և մարգարտաշար գօտի, *շլնքին* գումարտակ կցած, *ուսերին* սամոյր և *ականջներին* օղեր։ Աղքատը եկեղեցու *դրան* կանգնած ողորմութիւն էր խնդրում։ Սուրը *ձեռիս* և հրացանը *ուսիս* առաջ վազեցի։ *Ճանապարհին* հանդիպեցայ իմ բարեկամին։ Ծիտն է *ծառին*, հաւն է *թառին*։ (Փոխանակ՝ գլխի վրայ, դրան մօտ, ձեռումս, ճանապարհումը, թառի վրայ)։

7. Տրականը որոշեալ յօդով դրվում է դարձեալ ներգոյականի տեղ՝ գործողութեան *ժամանակը* յայտնելու։

Ա. *Ամիսները*, *տօները*, և առհասարակ բոլոր ժամանակ ցոյց տուող անունները, երբ որ պատասխանում են *ե՞րբ* հարցմանը. ինչպէս. *Օգոստոսին* արտերը հնձում են, *սեպտեմբերին* խաղողը քաղում։ Ամենամեծ ցրտերը յունվար և փետրվար *ամիսներին* են լինում։ *Ծնունդին* խաչը ջուրն են ձգում։ Կարմիր ձուն *Զատկին* կը սազի։ (Առած)։ *Իրիկնապահին* եկաւ հասաւ։ *Կէսօրին* արևը խաւարեցաւ։ Այդ *միջոցին* ամէն բան վերջացած էր։

Բ. *Տարեթիւ*, *ամսաթիւ* և օրուան *ժամերը* յայտնող բառերը, երբ որ պատասխանում են *քանիսի՞ն* հարցմանը։ Հայոց տոմարը նորոգուեցաւ 553-*ին*։ Կարոլոս Ե. վախճանեցաւ 1500-*ին* փետրվարի 24-*ին*։ Ամէն իրիկուն ժամը *տասին* քնում

եմ, և առաւօտեան *հինգ ու կէսին* զարթնում եմ։

8. Տրական հոլովով խնդիր առնում են մի քանի ստորակական ածականներ՝ *արժանի*, *ընդունակ*, *կարօտ*, *օգտակար*, *դիւրին*, *յարմար* և ընդհանրապէս *լի* վերջացածները. ինչպէս են՝ *սիրելի*, *ցանկալի* և այլն։

Աշխատասէր աշակերտները *վարձատրութեան* արժանի են։ Խեղճ մարդը *օգնութեան* կարօտ է։ Այս սենեակը *երկուսիս* բաւական է։ Անձնասէրը *ամէնին* ատելի է։

---

1. Թարգմանութիւն.—Կոյր *կուրի* յորժամ առաջնորդէ՝ սխալէ և երկոքին ի խորխորատ անկանին։ Մարմին մեր *հանապազօրեայ կերակրոյ* պէտս ունի։ Բարի արարէք *ատելեաց ձերոց*։—Եհար զոտն *զքարի*։—Ած զօտի *ընդ մէջ* քո։ Երևեցան ամենեքեան զինեալք և սաղաւարտեալք (սաղաւարտները գլխներին), սուր *ընդ մէջ* և վահան *ի ձեռին*՝ ոչ միայն արանց քաջաց, այլ և կանանց առնականց (մարդ ունեցող)։—Ի *տօնին մեծի* արարին ճաշ մեծ։—Է ձեր սովորութիւն զի զմի ոք արձակեցից ձեզ *ի զատկի*. արդ կամիք զի արձակեցից *ձեզ* զթագաւորն Հրէից։ Սահակ Պարթև նստաւ յաթոռ հայրապետութեան *յամի* 390-րդի և վախճանեցաւ *յամի* 440-րդի։—Իսկ զունդն Հայոց ամենայն օգնականօքն հանդերձ և մոգացն բազմութեամբ *յամսեանն չորրորդի* եկին հասին յաշխարհն Հայոց։—Պետրոս և Յովհաննէս ելանէին ի տաճար անդր *յիններորդ ժամու* աղօթիցն։—Ամբարտաւանութիւն ատելի է *Աստուծոյ և մարդկան*։

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ տրակ. խնդրով։

§ 15. ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ ԽՆԴԻՐ։

1. Բացառական հոլովով խնդիր դրվում է նախ կրաւորական բայերի մօտ, և ցոյց է տալիս թէ ենթական ումից է *կրում* գործողութիւնը. օրօրինակ. Աբէլ սպանուեցաւ *Կայէնից*։ Մեծամեծ գետերը կազմվում են

փոքր առուներից։ Պոմպէոսը յաղթուեցաւ Կեսարից։ Յիսուս Հրէաներից խաչուեցաւ։

Այս բացառականը շատ գործածական չէ մեր լեզուում, այնպէս որ յաճախ անսովոր ձևեր է կազմում, երբեմն նաև խօսքի մթութեան պատճառ է լինում. զորօրինակ. թէ ասենք՝ Հռոմ քաղաքը առնուեցաւ Գալլիացիներից, կարող է հասկացուիլ թէ Հռոմ՝ առնուեցաւ Գալլիացիների ձեռքով կամ սորա հակառակ՝ Հռոմ առնուեցաւ Գալլիացիների ձեռից։ Այս պատճառով կրաւորական նախադասութիւնները շատ անգամ ուրիշ ձևերով են արտայայտւում. այսպէս.

փոխանակ ասելու	ասում են
Անձնասէրը ատվում է ամէնից.	Անձնասէրը ատելի է ամէնին.
Որդին սիրվում է հօրից.	Հայրը սիրում է որդուն.
Արմաւիրը շինուեցաւ Արամայիսից.	Արմաւիրը շինուեցաւ Արամայիսի ձեռով.
Դաշտերը ծածկուեցան ձիւնից.	Դաշտերը ծածկուեցան ձիւնով։

2. Բացառական հոլովով խնդիր պահանջում են ընդհանրապէս ամեն տեսակ բայերը, երբ որ ցոյց են տալիս գործողութեան ուղղութիւնը իբրև պատասխան ումի՞ց, ինչի՞ց, ո՞րտեղից, հարցերին. ինչպէս. Լուսինն իր լոյսը առնում է արեգակից։ Եղբօրիցս նամակ ստացայ։ Անհնազանդ որդին զրկուեցաւ հօր ժառանգութիւնից։ Ով որ մահից վախենում է, չի կարող զինուոր լինել։ Ոչ թէ աղքատութիւնից պէտք է ամաչել, այլ մոլութիւններից։

Այս մորով բացառական հոլով են առնում՝ ազատ, զուրկ, հեռու, տարբեր, անյոյս և սոցա նման ածականները. Հոգսերից ազատ եմ։ Այդպիսի կասկածանքից հեռու եմ։ Ամէն մխիթարութիւնից զուրկ ենք։

3. Բացառական հոլով պահանջում են շինել, կազմել,

կառուցանել և այլն, երբ որ ցոյց են տալիս թէ ինչ նիւթից շինվում է մի բան. ինչպէս. Գինին քամում են խաղողից։ Սիւների կէսը հասարակ քարից շինել տուաւ, կէսն էլ մարմարիոնից։ Կապեցէք մի փունջ այս ծաղիկներից։

4. Բացառական հոլովով խնդիր պահանջում են անորոշ դերանունները և թուական ու գոյական անունները ամբողջի մասը ցոյց տալու համար. ինչպէս. Մէզանից ոչ ոք այնտեղ չէր։ Աշակերտներից ոմանք ուսումնարան չեկան։ Նոցանից երկուսը մեր ծանօթներն են։ Այս տանձերից մի մասը ծախու են։

5. Բաղդատական ածականները քան թէ բառերով հայցականի տեղ բացառական հոլովով խնդիր են առնում, որ աւելի սովորական է. նոյնպէս և գերադրական ածականները, երբ որ ուրիշների համեմատութեամբ ամենից գերազանցը կամ ստորին են ցոյց տալիս. ինչպէս. Պատիւը հարստութիւնից թանգ է։ Ասիան Եւրոպայից ընդարձակ է։ Տիգրանը ամէնից աշխատասէր աշակերտն է։

6. Բացառական խնդիր պահանջում են չէզոք բայերը, երբ որ գործողութեան կամ դրութեան պատճառն են յայտնում. ինչպէս. Ահուդողից լեզուն կապուեցաւ։ Մարդս անգործութիւնից հիւանդի պէս է լինում։ Ծաղիկները թառամեցան ցրտից։ Շատ լալուց աչքերը կուրացան։

Գաւառական բարբառներում այս բացառականը երբեմն տրականի ձև է ստանում. Այսպէս ասում են. Նրա ղարղու չկամ. Ահու, ամօթու մեռաւ։—Գրբր. ճիշտ նոյն ձևն երևում է առ նախադրութեամբ, առ ահի, առ ամօթոյ։

7. Բացառական հոլովը վարվում է մինչև նախադրութեամբ հայցականի հետ տարածութիւն և ժամանակի

սահմանը որոշելու մէկ նշանակեալ կէտից մինչև նշանակեալ կէտը, իբրև պատասխան այս հարցերի. ո՞ր ժամանակից, կամ ո՞ր տեղից, կամ մինչև ո՞ր ժամանակ կամ ո՞րտեղ։ Զօրօրինակ. Հայաստանի սահմանները տարածվում էին Վրաստանից մինչև Ատրպատական և Փոքր Ասիայից մինչև Պարսկաստան: Հայկից մինչև Վահէ երկու հազար և աւելի տարի են հաշվում։ Ինը ժամից այստեղ եմ։

Նոյնպէս բացառական է գրվում, եթէ հարկ է ցոյց տալ գործողութեան վերջը մի նշանակեալ ժամանակից հաշուելով. Երեք ժամից տեղերս կը հասնինք։ Մի քանի օրից ծնողացս նամակ կը գրեմ։ Կամ նաև յետոյ, յետ նախադրութիւններով. Մէկ երկու տարուց յետոյ բոլոր գործերս կ'աւարտեմ։

1 Թարգմանութիւն.—Յիսուս խաչեցաւ ի Հրէից։—Կրասոս պարտեցաւ ի զօրաց Տիգրանայ արքայի Հայոց։—Ընդ ելանելն Յիսուսի ի նաւէ անտի, պատահեաց նմա այր մի ի գերեզմանացն զոր ունէր այս պիղծ։ Իբրև ետես զՅիսուս ի հեռաստանէ, ընթացաւ և երկիր եպագ նմա։—Մարիամ Մագդաղենացի տեսանէ զվէմն բարձեալ ի դրանց գերեզմանին և ասէ ցաշակերտսն. Բարձին զՏէր ի գերեզմանէ անտի։—Դատաւոր մի էր ի քաղաքի միում, յԱստուծոյ ոչ երկնչէր և ի մարդկանէ ոչ ամաչէր։—Մի ոմն յազգէս մերմէ, որոյ թափեալ են ոտք նորա և անկեալ պճղունք նորա՝ կայ ի հրապարակի անդ մեռեալ։—Հինգքն ի կուսանացն իմաստունք էին և հինգն՝ յիմարք։—Մեծն ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր։—Տիգրան Երուանդեան ամենեցուն թագաւորացն մերոցն հարստագոյն և խոհեմագոյն էր։—Շնորհ յոյժ ունիմ զբարերարութենէ ձերմէ։

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ բացառ. խնդրով։

§ 16. ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ ԽՆԴԻՐ

1. Գործիական հոլովով խնդիր պահանջում են ամէն սեռի բայերը, երբ հարկ է ցոյց տալ թէ ո՞ւմ ձեռով, ի՞նչ գործիքով կամ ի՞նչ միջոցով է կատարվում գործողութիւնը. Հողագործները երկիրը վարում են գութանով։ Փայտը կտրում են կացինով։ Ծնողքը իրանց զաւակներովն են մխիթարվում։ Այս պատկերը նկարուած է մատիտով։

2. Գործիական հոլովով խնդիր առնում են տանելու և տալու բայերը նիւթի արժողութիւնը ցոյց տալու համար. ինչպէս. Քանի՞ով առաք այս ձին։ Իմ բարեկամը մի տուն գնեց 15,000 մանէթով։ Ապրանքս լաւ գնով ծախեցի։

3. Գործիական հոլովը վարվում է առարկաների և նոցա գործողութեան որպիսութիւնը ցոյց տալու համար։

Ա. Բայի մօտ՝ սովորական որպիսութիւն յայտնելով, իբրև պատասխան ինչպէս հարցման. զորօրինակ. Բարեկարգ ընկերութիւնների մէջ ամէն գործ վճռվում է օրէնքով։ Զգուշութեամբ գնա, որ ճանապարհդ չկորցնես։ Բարկանալով է խօսում։ Հայկ նահապետը տնով տեղով գաղթեցաւ Հայաստան։

Բ. Ածականների մօտ՝ առարկաների որպիսութիւնը յայտնելով. Այս աշակերտը առաջինն է ջանասիրութեամբը, յառաջադիմութեամբն ու բարի վարքովը։ Տարիքով մեծ է, բայց խելքով տկար։

Գ. Գոյականների մօտ՝ ազգ, արուեստ, ծագում և կրօնք ցոյց տալով. Գրիգոր Լուսաւորիչը ազգով Պարթև էր և ցեղով Պահլաւ։ Մխիթարը հայրենիքով Սեբաստացի էր, իսկ կոչմամբ հոգևորական։

4. Գործիական հոլովը վարվում է եզակի՝ ժամանակի անպատեհութիւնը ցոյց տալու, յոգնակի՝ ժամանակի եր-

կարողութիւնը ցոյց տալու համար։ Այսպէս ասում են՝ Գիշերով ուր գնամ։ Ցերեկով քնում է։ Մթնով եկաւ—Ժամերով նստած շարունակ պարապում է։

5. Գործիականը ցոյց է տալիս դարձեալ ճանապարհի ուղղութիւնը, նոյնպէս և տեղի տարածութիւնը, ինչպէս. Ո՞ր ճանապարհով պիտի գնանք. ծովո՞վ թէ ցամաքով։ Փողոցների երկայնութեամբը ծառեր տնկեցին։

Գաւառական բարբառներում կայ մի ուրիշ գործիական էլ գրոց բացառականի ձևով։ Այսպէս սովորական է ասել. մէկի ճտովն կամ շլինքովն ընկնել. ոտներովը փաթաթուել. գլխովը ման տալ։ Աշխարհ աշխարհքով էր դիպչում։ (Այսինքն զպարանոցաւ՝ զոտիւք, զաշխարհաւ։) Գրաբար լեզուի մէջ այս ձևի տեղ գործ են ածվում հայց. և տրակ. հոլովները. — ոտներն ընկնել, շլինքին փաթաթուել։

---

1. Թարգմանութիւն. — Մարիամ օծ զՏէրն իւղով և ջնջեաց զոտս նորա հերով իւրով։ — Յիսուս ի ձայն մեծ աղաղակեաց և ասէ. Ղազարէ, արի եկ արտաքս, և ել մեռեալն ոտիւք կապելովք և ձեռօքն երիզապնդօք և երեսօքն վարշամակապատօք։ Այր մի Լիւստրացի տկար յոտից նստէր, կաղ յորովայնէ մօր իւրոյ։— Հրեայ ոմն Ապեղէս անուն աղէքսանդրացի յազգէ, զօրաւոր էր գրովք։—Վաճառեցին զՅովսէփ Իսմայէլացւոցն երեսուն դահեկանի։ Մարթ էր գիւղդ այդ վաճառել երկերիւր դահեկանի։ Ազով և տոհմութեամբ երթային զերկայնութիւն ճանապարհին։ Պնդեցան արքն զկնի նորա զճանապարհն Յորդանանու։ ԶՏարոնն զձեւ և զօրինակ Բաբելոնի շինէր։ Ադամ անէծ զԿայէն անէծս ցաւագինս։—Խնդացին յոյժ ուրախութիւն մեծ։— Հայրն անկեալ զպարանոցաւ անառակ որդւոյն համբուրեաց զնա։

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ գործ. խնդրով։

§. 17 ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ ԽՆԴԻՐ։

1. Ներգոյական հոլովով խնդիր դրվում է ամէն տեսակ բայերի մօտ գործողութեան կամ դրութեան տեղը ցոյց տալու համար. ինչպէս. Մենք նստած էինք պարտէզում, երբ որ անձրևը սկսաւ։ Ի՞նչ պակասութիւններ տեսար նորանում։ Ձկները լողում են ջրում։ Այն մարդիկը որ Ամերիկայումն են բնակվում, կոչվում են Ամերիկացիք։

2. Ներգոյականը ցոյց է տալիս նոյնպէս ժամանակի միջոցը։ Այս գիրքը երկու օրում կը կարդամ։ Երկիրս իր վրայ պտըտում է 24 ժամում։ Իմ օրումը այսպիսի բան չէի լսած։

Սորանից կազմուած է միջոցում նախադրութիւնը, որ սեռ. հոլովով է վարվում. երկու շաբաթուան միջոցին մի ամբողջ գիրք թարգմանեց։

---

1. Թարգմանութիւն.—Գտանին լերինք բարձունք որպէս ի ցամաքի նոյնպէս և ի ծովու։—Աղեղն ձգի յամպս յաւուրս անձրևայինս։—Կայէն սպան զեղբայր իւր ի դաշտի։—Տղայք բնաւորեցան յօթներորդում ամսեան հանել զատամունս և յութ ամին փոխել։—Յերուսաղէմ ի Պրոպատիկէ աւազանին անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց։—Էին իսկ այնպիսիքն բնակեալ ի կեանս իւրեանց իբրև ի թանձրամած խաւարի և ոգիքն արգելեալք ի մարմնի իբրև զկենդանի ի գերեզմանի։

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ ներգ. խնդրով։

§ 18. ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԽՆԴԻՐՆԵՐ։

Շատ անգամ բայերը նախադրութիւնների միջնորդութեամբ խնդիր են առնում. այսպէս. Ծնողքը ուրախանում են իրանց որդւոց յառաջադիմութեան վրայ։ Ուսուցիչը եղ-

ջօր այս է վարվում աշակերտների հետ։ Գնանք ղէպի տուն։ Որ եթէ նախադրութիւնները վերցնէինք կամ ամենևին միտք չէր լինիլ, ինչպէս երկու առաջին օրինակների մէջ, կամ գոնէ միտքը կը փոխուէր, ինչպէս վերջին օրինակի մէջ։

Նախադրութիւնների սկզբնական պաշտօնն էր ցոյց տալ նիւթական առարկաների մէջ եղած զանազան յարաբերութիւնները, այսինքն թէ մէկ առարկայ ո՛ր տեղ է գտնվում, միւսի վրայ կամ տակը, մէջ, մօտին, կողքին, հետը, առաջը, ետևը, և այլն. ինչպէս. Գրքերը դրած են պահարանի մէջ, սեղանի վրայ, ընկած են սեղանի տակ։ Մուկը վազվզում է անկողնի առաջ կամ ետև, վազում է ղէպի անկողինը կամ մինչև անկողինը և այլն։ Այս է նախադրութիւնների բուն պաշտօնը և նշանակութիւնը։ Բայց յետոյ նախադրութիւնները սկսան գործ ածուիլ վերացական առարկաների հետ, և այսպէսով փոխաբերական միտք ստացան։ Այսպէս ասում են. գործի վրայ մտածել, պաշտպանութեան տակ գտնուիլ, ուսման մէջ յառաջանալ. թէև գործ, պաշտպանութիւն, ուսում վերացական առարկաներ են։

Հայերէն լեզուի առանձին յատկութեամբ նախադրութիւնները հոլովում են՝ (բ. § 63), երբ հարկ է առարկաների մէջ եղած յարաբերութիւնները աւելի որոշ կերպով արտայայտել, և գոյականը դրվում է սեռ. հոլովով. այսպէս. Թռչնակը թռաւ վանդակի միջից (փոխանակ վանդակից)։ Զօրքը կամրջի վրայով անցաւ (կամրջով)։ Մենք կանգնած էինք անտառի միջին կամ միջում (անտառում)։ Հողի տակից մետաղներ են հանում։

---

1. Թարգմանութիւն.—Հրէայք չարախօսէին զՅիսուսէ (մասին, վրայ)։ Հրէայք առ Նախանձու մատնեցին զՅիսուս (բցռ.) Առ Նոյիւ եղեւ ջրհեղեղ մեծ (ժմնկ.)։ Զայսու ժամանակաւ

թագաւորեաց Յունաց ամբարիշտն Յուլիանոս։—Զաւակ անարգ է, որ անցանէ զպատուիրանաւ ծնողաց։—Պատեցին զքաղաքաւն պարանս։—Խաղաց գնաց յԱնտիոք քաղաքէ, և անց նա (Անտիոքոս) ընդ գետն մեծ ըստ Եփրատ և երթայր ընդ կողմն վերնագաւառացն։—Որ ինչ մտանէ ընդ բերան, ոչ պղծէ զմարդ։—Առ Տիգրանաւ առաջնով Մարք անկան ընդ իշխանութեամբ Հայոց։—Բանակեցաւ մերձ յԵրուսաղէմ։—Մոգպետն ինքնին մոգօքն հանդերձ հասանէր մեծաւ զօրութեամբ քակել զԴրունս եկեղեցւոյն յաւուր միաշաբաթուն։

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ նախադրութեամբ խնդրով։

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Կապակցութիւն նախադասութիւնների։

Ա. Երկրորդական նախադասութիւնների կապակցութիւնը։

§ 19. ՑԱՏԿԱՑՈՒՑԻՉ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ։

1. Ցատկացուցիչ նախադասութիւնները կապվում են գլխաւորի հետ որ յարաբերական դերանունով, որին ներգործութեամբ կամ զօրութեամբ պատասխանում են գըլխաւոր նախադասութեան մէջ այն, այնպիսի ցուցական դերանունները։ Զօրօրինակ. Այն ցամաքը որ ամէն կողմից ջրով պատած է, կոչվում է կղզի։ Ցոյց տուր մի (այնպիսի) մարդ, որին կարելի լինի յանձնել այս գործը։ Ի՞նչպէս է կոչվում այն ջուրը որ ամէն կողմից ցամաքով է պատած։

2. Եթէ յատկացուցիչ նախադասութիւնը այնպիսի բառեր է յարաբերում գլխաւոր նախադասութեան մէջ, որ տեղ կամ ժամանակ են ցոյց տալիս, որ յարաբերականի տեղ կարող են գործ ածուել տեղական և ժամանակական մակբայներ. ինչպէս. Մինչև այսօր ցոյց են տալիս Խոր վիրապը, ուր (փոխանակ որի մէջ) ձգուեցաւ Սուրբ Գրիգորը Տրդատ թագաւորի հրամանով։ Կար (ի՞նչպիսի) ժամանակ՝ երբ այժմեան ծաղկած քաղաքների տեղ անթափանցելի անտառներ էին բուսնում։

3. Որ յարաբերական դերանունը դրվում է այն հոլովով, որ պահանջում է երկրորդական նախադասութեան բայը, իսկ թիւը կախուած է գլխաւոր նախադասութեան այն բառից, որին որոշում է երկրորդական նախադասութիւնը. այսպէս. Ես վստահութիւն ունիմ այն մարդոց վրայ, որոնք խղճմտանքով են կատարում իրանց գործը։ Սոկրատ, որին դատաւորները դատապարտել էին մոլեխինդ խմելու, առաքինի քաղաքացի էր։

Միայն ուղ. երբեմն նաև հայց. հոլովում յարաբերական դերանունը կարող է յոգնակիի տեղ եզակի վարուել, եթէ միայն յարաբերեալից բաժանուած չէ. ինչպէս. Այն մարդիկը որ մեր դէմ ու դէմը նստած են և որոնք միմեանց հետ խօսում են, մեր բարեկամներն են։

4. Եթէ յարաբերեալը զօրութեամբ է իմացվում, յարաբերականի հետ վարվում է երբեմն որ շաղկապը, և այն ժամանակ յարաբերականը եզակիում ն յօդն է ընդունում, իսկ յոգնակիում անյօդ է մնում. այսպէս. Որն որ, որին որ, որոնք որ, որոնց որ։ Ահա օգտակար գրքեր. ընտրէ որնոր կամենում ես։—Փոխանակ ընտրէ այն գիրքը որ կամենում ես. կամ պարզապէս յարաբերականի վրայ յօդ դնելով՝ ընտրէ որը կամենում ես։

5. Ընտանեկան լեզուի մէջ ուղ. հոլովով որ յարաբերականը շատ անգամ ամէն հոլովների տեղ է վարվում՝ եզակի և յոգնակի, և իրանից յետոյ պէտք եղած հոլովով մի դերանուն է դրվում. այսպէս. Որ նրան կամ որ իրան, փոխանակ որին որ նրանցով կամ որ իրանցով. փոխանակ որոնցով և այլն. ինչպէս. Կան մարդիկ որ ամէն բան դժուարացնում է նրանց։ Այսինքն՝ կան մարդիկ որոնց... Արշակն ու Տիգրանը այնպիսի աշակերտներ են որ բոլոր ուսուցիչները պարծենում են նրանցով։ Այսինքն՝ որոնցով պարծենում են։

6. Երկու կամ աւելի նոյնահոլով յարաբերականներից վերջինը սովորաբար դուրս է թողվում. այսպէս. Արաբացիք, որոնց ձիանքը յարգի են և ուղտերը օգտակար, մինչև այսօր թափառական կեանք են վարում։—Այսինքն և որոնց ուղտերը։

---

1. Թարգմանութիւն.—Մեղու՝ որ քան զամենայն տկար է, զերկասիրութիւն պատուէ։—Ամենայն տուն և թագաւորութիւն որ յանձն իւր բաժանի, ոչ կարէ կալ հաստատուն։—Տեղի որ աւազին է, յատակ և քաղցրահամ բղխէ զջուր։—Են ոմանք որ ոչ գիտեն բնաւ թէ զինչ իցեն զիրք եւ կամ յինչ պէտս շարադրեցան։—Եւ իբրև եկն (Պօղոս), կային շուրջ զնովաւ որ յԵրուսաղէմէ իջեալ էին Հրէայք։—Ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից։—Հասին այնմ աւետեաց որում ցանկացեալ էին։—Մըտցուք առ Աստուած կենդանի, որ ոչ եւս ելանելոց եմք ի նմանէ։—Այրն այն Մովսէս որ եհան զմեզ յԵգիպտոսէ ոչ գիտեմք զի՞ եղև նմա։

2. Գրեցէք ձեզանից մի քանի բաղադրեալ նախադասութիւններ երկրորդական յատկացուցիչ նախադասութիւններով։

§ 20. ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ։

1. Յատկացուցիչ նախադասութիւնը կրճատուելիս՝ ածական յատկացուցիչ է փոխվում, երբոր ստորոգեալը

կազմուած է ածականից ու օժանդակ բայից. ինչպէս. Հին գինին աւելի յարգի է քան թէ նորը. (Փոխանակ ասելու՝ Այն գինին որ հին է)։

2. Յատկացուցիչ նախադասութիւնը կրճատուելիս՝ բացայայտիչ է փոխվում, երբ նորա ստորոգեալը կազմուած է գոյականից ու օժանդակ բայից. այսպէս. Աբգարը որ առաջին քրիստոնեայ թագաւորն է, շատ քաղաքագէտ ու խելացի մարդ էր.—Աբգար, առաջին քրիստոնեայ թագաւորը, շատ քաղաքագէտ ու խելացի մարդ էր։ Անին, որ Բագրատունեաց մայրաքաղաքն էր, այժմ աւերակ դարձած է.—Անին, Բագրատունեաց մայրաքաղաքը կամ Բագրատունեաց մայրաքաղաքը՝ Անին այժմ աւերակ դարձած է։

3. Յատկացուցիչ նախադասութիւնը ներկայ, անցեալ կամ ապառնի դերբայի է փոխվում, երբ ստորոգեալը սահմ. ներկայ, անցեալ կամ ապառնի ժամանակներումն է։ Միեւնոյն ժամանակ անցեալ և ապառնի դերբայների ենթական, եթէ գոյական է՝ սեռ. յատկացուցիչ է դառնում, եթէ դերանուն է՝ ստացական. իսկ խնդիրը դառնում է յատկացեալ՝ ստացական յօդով։ Օրինակ. Այն մարդը որ ընկերին օգնում է, չէ կարող միայն իր անձի վրայ մտածել.—Ընկերին օգնող մարդը չէ կարող միայն իր անձի վրայ մտածել։ Այն գիշերն որ Աղեքսանդրը ծնաւ, Հերոստրատ այրեց Եփեսոսի տաճարը.—Աղեքսանդրի ծնած գիշերը Հերոստրատ այրեց Եփեսոսի տաճարը։ Ո՞ւր են այն աշակերտները որ դու գովում էիր (կամ գովեցիր, գովել ես, գովել էիր).—Ո՞ւր են քո գոված աշակերտները, կամ պարզապէս՝ Ո՞ւր են գոված աշակերտները։ Այն օրն որ նաւ պիտի նստիք, կը գամ ձեզ ճանապարհ դնելու։—Ձեր նաւ նստելու օրը... Բաւական ընդարձակ է այն սրահը, ուր (որի մէջ) թատրոնական ներկայացումներ պիտի տրուին (կամ պիտի տրուէին)։—

Բաւական ընդարձակ է թատրոնական ներկայացումներ տրուելու սրահը։

Երբեմն ներկայ դերբայի տեղ անցեալն է գործ դրվում. այսպէս. Մեր բնակած տունը շատ հին է. այսինքն՝ այն տունը, որի մէջ բնակվում ենք։

Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ կրճատեալ յատկացուցիչ նախադասութիւններով։

§ 21. ԵՆԹԱԿԱՅ ԵՒ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ.

1. Երկրորդական ենթակայ նախադասութիւնը կապվում է գլխաւորի հետ ով կամ ով որ դերանունով և թէ, որ շաղկապներով, որոնց գլխաւոր նախադասութեան մէջ ներգործութեամբ կամ աւելի զօրութեամբ պատասխանում են նա, այն ցուցական դերանունները։ Օրինակ. Ով կը խաղայ, նա կը կաղայ։ Ով որ իր վիճակից գոհ է, նա բաղդաւոր է։ Յայտնի է որ բոլոր մետաղները հալվում են։

2. Երկրորդական լրացուցիչ նախադասութիւնը կապվում է գլխաւորի հետ ինչ կամ ինչ որ, որ դերանուններով և թէ, որ շաղկապներով, որոնց գլխաւոր նախադասութեան մէջ ներգործութեամբ կամ զօրութեամբ պատասխանում են այն, նա ցուցական դերանունները։ Նա, այն ցուցական դերանունները զօրութեամբ իմացուող գոյականի հոլովն են ընդունում, իսկ յարաբերական դերանունը դրվում է այն հոլովով, որ պահանջում է երկրորդական նախադասութեան բայն, ուրեմն և ցուց. դերանուան հոլովից իմաց-

վում է թէ երկրորդական նախադասութիւնը ինչ հոլովի տեղ դրուած է։ Օրինակ. Ինչ կը ցանես, այն կը հնձես (հայց.)։ Լսեցի թէ շուտով ճանապարհ էք ընկնում (հայց.)։ Երանի նորան որ իր վիճակից գոհ է (տր.)։ Բաւականացիր նորանով (այն բանով), որ տալիս են քեզ (գործ.)։ Հեռու կաց նորանից (այն մարդուց), որի չար օրինակը կարող է գայթակղութիւն պատճառել քեզ։

3. Օտարի վկայութիւնը, որ խօսքի մէջ բերվում է, լրացուցիչ նախադասութեան միտք ունի և ոչինչ բառով չէ կապվում գլխաւոր նախադասութեան հետ՝ եթէ խօսողի սեպհական բառերն է պարունակում, այլ միջակէտով և չակերտներով բաժանվում է գլխաւորից. թէ և որ շաղկապներով է կապվում, եթէ նորա խօսքերի բովանդակութիւնն է յիշվում. ինչպէս. Քրիստոս ասաց. «Ես չեմ եկել օրէնքները լուծելու, այլ լրացնելու»։

---

1. Թարգմանութիւն։—Որ զմահ ոչ գիտէ, երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ ոչ երկնչի ի նմանէ։—Որ փախչէր վասն անուն յաշխարհի երևէր, և անողորմ մահ ի նմանէ գտանէր. իսկ որ քաջութեամբ յառաջ մատչէր քաջանուն ազգի ժառանգէր, և պարգևս մեծամեծս յանցաւոր և ի մահկանացու թագաւորէն ընդունէր։—Որ իբրև զհանդերձ կարծէր ունել մեզ զքրիստոնէութիւն, արդ իբրև զգոյն ի մարմնոյ չկարէ շրջել։—Մեք գիտեմք զի զերկիր շուրջ ջուր պատէ։—Որոյ ոչինչ գոյր զօրականին՝ յանձնէր և լընկերաց մատուցանէր (Վարդան), որոյ զէն չէր, զէն պատրաստէր, և որում հանդերձ պիտոյ էր՝ հանդերձ զգեցուցանէր, և որում երիվար՝ երիվար տայր։—Որում խնդրէ ի քէն՝ տուր, և որ կամի փոխ առնուլ ի քէն՝ մի դարձուցանէր զերեսս։

2. Գրեցէք ձեզանից մի քանի նախադասութիւններ երկրորդ. ենթ. և լրաց. նախադասութիւններով։

§ 22. ԵՆԹԱԿԱՅ ԵՒ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ.

1. Երկրորդական ենթակայ նախադ. որ գլխաւորի հետ կապուած է ով կամ ով որ դերանունով, կրճատուելիս ներկայ դերբայի է փոխվում. իսկ եթէ կապուած է թէ, որ շաղկապներով անդէմ բայի հետ, անորոշ դերբայի է փոխվում։ Օրինակ. Ով որ փող ունի, խելք չունի. ով որ խելք ունի, փող չունի.—Փող ունեցողը խելք չունի, խելք ու-
Ամենին յայտնի է երկրի շարժումը։
նեցողը փող չունի։

2. Երկրորդական լրացուցիչ նախադասութիւնները կրճատուելիս փոխվում են գոյական անուան կամ անորոշ ու անցեալ դերբայների, վերջինը որոշեալ կամ ստացական յօդով. ինչպէս. Մեզ գրեցին թէ նա մեռել է։—Մեզ գրեցին նորա մահուան մասին։ Խորհուրդ են տալիս ինձ որ գիտութիւններով պարապեմ.—Խորհուրդ են տալիս ինձ գիտութիւններով պարապելու։ Ահա պատմեմ քեզ բոլորը ինչ որ տեսայ ու լսեցի.—Ահա պատմեմ քեզ բոլոր տեսածս ու լսածս։ Կեանքիս մէջ չեմ յիշում թէ սուտ խօսած լինիմ.—Կեանքիս մէջ սուտ խօսածս չեմ յիշում։

Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ կրճատեալ ենթակայի և լրացուցիչ նախադասութիւնների։

§ 23. ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ.

Երկրորդական գոյական նախադասութիւնները ցոյց են տալիս գլխաւոր նախադասութեան ենթակայի գործողութեան տեղը, ժամանակը, որպիսութիւնը, պատճառը և այլն։ Պարագայական նախադասութիւնները կապվում են

գլխաւորների հետ այլ և այլ շաղկապներով ու մակբայներով։

1. Տեղական նախադասութիւնները կապվում են գլխաւորների հետ ուր, ուր որ, որտեղ կամ ինչ տեղ, որ տեղից կամ ինչտեղից մակբայներով, որոնց գլխաւոր նախադասութեան մէջ ներգործութեամբ կամ զօրութեամբ պատասխանում են այն տեղ, այն տեղից, ամէն տեղից, ոչ մի տեղ և այլն։ Օրինակ. Ինչ տեղ պանիր, այն տեղ բանիր։ Ուր որ երթաս, ամէն տեղ հետդ կը լինինք։ Գնա (այն տեղ) ուր պատիւդ ու պարտքդ կանչում են քեզ։ Գընում եմ (այնտեղ) որտեղից եկել եմ։

2. Ժամանակական նախադասութիւնները կապվում են գլխաւորների հետ այլ և այլ մակբայներով ու շաղկապներով, նայելով թէ երկրորդական նախադասութեան գործողութիւնը գլխաւորի հետ միասին է կատարվում, թէ նորանից առաջ կամ յետոյ։

Ա. Եթէ երկրորդ. նախադ. գործողութիւնը գլխաւորի հետ միասին է կատարվում, հետեւեալ մակբայներով է կապվում. Երբ կամ Երբ որ, որ ժամանակ,—այն ժամանակ (սահմ. ներկ. և անց. անկատար. հետ), մինչեւ այն ժամանակ,—մինչեւ որ, այն միջոցին որ. Ինչպէս. Երբ որ անձրև էր գալիս, (այն ժամանակ) մենք նստած էինք հովանոցում։ Այն միջոցին որ դուք խօսում էիք, ես մի ամբողջ գլուխ կարդացի։ Մինչեւ դուք պատրաստուիք, (մինչեւ այն ժամանակ) ես նամակը կը վերջացնեմ։

Բ. Եթէ երկրորդ. նախադ. գործողութիւնը գլխաւորից առաջ է կատարվում, հետեւեալ մակբայներով է կապվում. Երբ որ—այն ժամանակ (անց. կատ. և ապռ. հետ). Հազիւ թէ—որ, հէնց—որ կամ հէնց—որ. Ինչպէս. Երբ որ անձրեւը դադարեցաւ, (այն ժամանակ) վերադարձանք

պարտէզ. Երբ որ ժամանակ կ'ունենամ, (այն ժամանակ) կը պարապեմ ձեզ հետ։ Հազիւ թէ տուն հասայ, որ սաստիկ անձրեւ սկսաւ։ Հէնց որ մթնեցաւ, ամէն մարդ իր տունը քաշուեցաւ։

Հազիւ թէ, հէնց որ մակբայների տեղ յաճախ գործ են ածվում թէ չէ, որ չէ բացասական ձևերը. Մթնեցաւ թէ չէ ամէն մարդ իր տուն քաշուեցաւ։ Աչքդ որ բաց չես անում, մէկ էլ տեսնում ես որ.... (Այսինքն հէնց որ մըթնեցաւ. Հազիւ թէ աչքդ բաց ես անում։)

Գ. Եթէ երկրորդ. նախադ, գործողութիւնը գլխաւորից յետոյ է կատարվում, հետեւեալ բառերով է կապվում. մինչեւ չէ, դեռ չէ—որ, քանի որ դեռ չէ, առաջ քան թէ. Ինչպէս. Դեռ չէի ստացել այս նամակը, որ բարեկամիս մահուան լուրը առել էի։ Քանի որ դեռ ոչինչ հասկացողութիւն չունէի, կարծում էի թէ արեգակը պտտւում է երկրի շուրջը։ Առաջ քան թէ կը սկսիս մի գործ, մտածէ որտեղից կամ ինչպէս սկսիս։ (Աւելի լաւ է կրճատեալ նախադասութեամբ ասել. Մի գործ սկսելուց առաջ...)

3. Որակական նախադասութիւնները կապվում են գըլխաւորների հետ ինչպէս-այնպէս, ինչպէս որ—այնպէս, այնպէս-իբրու թէ, այնպէս որ մակբայներով—երբ մի գործողութիւն կամ դրութիւն որպիսութեան կողմից համեմատվում է ուրիշ գործողութեան կամ դրութեան հետ. որքան-այնքան, որչափ-այնչափ քանակական մակբայներով—երբ համեմատութիւնը լինում է քանակութեան կողմից։ Ինչպէս կը սկսիս գործդ, այնպէս էլ գլուխ կը գայ։ Որքան ծանր է աշխատանքը, այնքան մեծ կը լինի վարձը։

4. Պատճառական նախադասութիւնները ցոյց են տալիս գործողութեան պատճառը, առիթը, նպատակը, կապվում են գլխաւորների հետ վասն զի, որովհետեւ, որպէս

զի, որ շաղկապներով. ինչպէս. Հին ազգերը պաշտում էին արեգակը, լուսինն ու աստղերը, վասն զի կարծում էին թէ երկնքի լուսաւորները հոգի ու կեանք ունին։ Չկարողացայ գալ ետեւից, որովհետեւ շատ էի շտապում։ Սաստիկ նեղացած է ինձ վրայ որ վաղուց չեմ եղել իւր մօտ։ Պարտէզը ոռոգեցէք (ինչ նպատակով) որ ծաղիկները չչորանան։ Մահը միշտ աչքիդ առաջ ունեցիր, որպէս զի չվախենաս նորանից։

5. Պայմանական նախադասութիւնները կապվում են գլխաւորի հետ եթէ, թէ որ-ուրեմն շաղկապներով. ինչպէս. Եթէ կամենում ես երաժշտութիւն սովորել, պէտք է շատ աշխատիս որ լաւ երաժիշտ դառնաս։ Թէ որ ձեզ մօտ եկած չլինէի, այսքան բազմութիւն տեսնելու առիթը չէի ունենալ։ Մարդս որ ցանկութիւն ունենայ (փոխանակ՝ եթէ մարդս ցանկութիւն ունենայ), ամենադժուար գործը կարող է յաջողութեամբ գլուխ տանել։

Աւելի սաստկութեան համար պայմանական նախադասութիւնը երբեմն հարցականի ձեւ է ստանում, այսպէս. Կամենում ես որ ես քեզ միշտ բարի խորհուրդներ տամ, ասածներս կատարէ։—Այսինքն՝ եթէ կամենում ես։

6. Տեղատուական նախադասութիւնները, որ տեղի են տալիս գլխաւոր նախադասութեան գործողութեանը, կապվում են հետեւեալ շաղկապներով. թէպէտ, թէեւ-բայց, սակայն, այնուամենայնիւ. օրօրինակ. Թէեւ շատ արգելքների պատահեցաւ, այնուամենայնիւ հասաւ իր նպատակին։ Թէպէտ չեմ կարող խոստանալ, բայց կ՚աշխատեմ խնդիրքդ կատարել։

Շատ անգամ թէեւ, թէպէտ եւ շաղկապների տեղ գլխաւոր բայի մօտ դրվում է նոյն բայի անորոշ դերբայն գործիական, նաեւ ուղղական հոլովով՝ խօսքին աւելի հաս-

տատութիւն տալու համար. ինչպէս։ Ուտելով ամեն բան ուտում է, բայց չէ կարող մարսել։ Ցաւելով շատ եմ ցաւում, բայց հնար չունիմ օգնելու։ Խոստանալ ամէնքը խոստանում են, բայց ոչ ամէնքը կատարում են։—Այսինքն՝ թէ եւ ուտում է, թէպէտ խոստանում են։

Երբեմն այս ձեւերը գործ են ածվում նաեւ անկախ նախադասութեան մէջ, այսինքն ուր թէեւ-բայց շաղկապները չկան։ Մեռնել ամէնքս պիտի մեռնինք։ Հրաժարուելով հրաժարվում ենք այդպիսի անվայել գործողութիւնից։

---

1. Թարգմանութիւն։—Ուր եսն եմ, անդ և պաշտօնեայք իմ եղիցին։ Ուր մարմին է, անդր և արծուիք ժողովեսցին։—Եւ մինչդեռ անդէն ի ձմեռոցին էր թագաւորն, առեալ հարցափորձի հրամայէր լինել։—Իբրեւ յերկարեցաւ ամբաստանութիւն զաւուրս բազումս, պարտաւորեցաւ կոչ ուրացելոյն։—Մինչեւ հաւու խօսեալ իցէ, երիցս ուրասցիս զիս։—Որպէս մեծ է հոգի քան զմարմին, այնպէս մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոյ։—Բայց քանզի անկեալ էր մեծ սպարապետն Հայոց ի պատերազմին, ոչ ոք գոյր այնուհետեւ ի մէջ գլխաւոր՝ յոր յեցեալ (թեք ընկնիլ) ժողովէին զունդ միացելոցն։—Թէպէտեւ բազում այն էր որ ապրեցան՝ քան թէ որ մեռանին, սակայն ցանեալ ցրուեցան (ցիր ու ցան եղան), և հասեալ անկանէին ի տեղիս յամուրս (բերդ) աշխարհին։—Թէպէտեւ գ՚նա եղև, չկարաց հասանել։—Որպէս չիք յանիրաւութենէ արդարութիւն, այսպէս ի ստութենէ ճշմարտութիւն։—Ունել ունէր պարծանս, այլ ոչ առ Աստուած։—Ընթանալ ամենեքին ընթանան, բայց մի ոք առնու։—Շինեալ լինէին զաշտարակն ի պաշտօն դիւաց։

2. Գրեցէք ձեզանից մի քանի բաղադրեալ նախադասութիւններ երկրորդ. պարագ. նախադասութիւններով։

§ ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ։

Երկրորդական պարագայական նախադասութիւնները կրճատուելիս փոխվում են պարագայական բառերի դեր. եւ գոյ. անուան ձեւով.

1. Տեղական նախադասութիւնները փոխվում են անց.

և ապա. դերբայների ածականաբար վարուած տեղ գոյականի հետ, որ գերադասական յօդ է ընդունում. ինչպէս՝ Արեւմուտքն այն տեղ է, որ արեւը մայր է մտնում.—Արեւմուտքն է արեւի մայր մտած տեղը: Գնա՝ ուր գնալու էիր: — Գնա գնալու տեղդ:

2. Ժամանակական նախադասութիւնները փոխվում են. 1) Ներգոյական և հայց. հոլովներով անորոշ դերբայի կամ երբեմն նաեւ գոյականի երբ որ կապերի հետ կապվում են երբ որ, այն միջոցին որ, մինչեւ կամ մինչեւ որ բառերով. ինչպէս. Երբ որ գիրք էր կարդում, քունը տարաւ.—Գիրք կարդալիս կամ գիրք կարդալու ժամանակ քունը տարաւ: Երբ մի չնչին բան է պատահում, յուսահատվում ես.—Մի չնչին բան պատահելիս կամ մի չնչին բան պատահելու ժամանակ յուսահատվում ես: Այն միջոցին որ դուք խօսում էիք, ես մի ամբողջ գլուխ կարդացի.- Ձեր խօսակցութեան միջոցին (կամ ժամանակ) ես մի ամբողջ գլուխ կարդացի: Սպասեցէք այստեղ մինչեւ մենք գանք.—Սպասեցէք այստեղ մինչեւ մեր գալը: 2) Սեռ. հոլովով անորոշ ու անց. դերբայների պէս նախադրութեամբ, երբ կապվում են հազիւ թէ, հէնց որ մակբայներով: Հազիւ թէ տուն հասայ, որ սաստիկ անձրեւ սկսաւ.—Տուն հասնելուս պէս կամ տուն հասածիս պէս սաստիկ անձրեւ սկսաւ: Հէնց որ մթնեցաւ, ամէն մարդ իր տունը քաշուեցաւ.—Մթնելուն պէս և այլն: Հէնց որ տեսնես, կը ճանաչես նորան.—Տեսնելուդ պէս կամ տեսածիդ պէս կը ճանաչես նորան: 3) Անցեալ դերբայի բացառակ. ձեւով, երբ որ կապվում են դեռ չէ, քանի որ դեռ չէ, առաջ քան թէ բառերով. Արեգակը դեռ չէ ծագում, որ նա արդէն ոտի վրայ է.-Արեգակը դեռ չծագած՝ նա արդէն ոտի վրայ է: Դեռ չէի ստացել այս նամակը, որ բարեկամիս մահուան լուրը առել էի.—Այս նամակը դեռ չստացած՝ և այլն:

Վերջին տեսակ նախադասութիւնները կրճատվում են նաեւ բաց. հոլովով անորոշ դերբայի առաջ նախադրութեամբ. իսկ եթէ ժամանակական նախադասութեան գործողութիւնը գլխաւորից յետոյ է կատարվում, յետոյ նախադրութեամբ. այսպէս. Գնալուցդ առաջ չմոռանաս գալ մեզ մօտ: Աշխատելուց յետոյ պէտք է հանգստանալ:

3. Որակական նախադասութիւնները փոխվում են գործ. հոլովով գոյականի, իսկ ենթական սեռ. յատկացուցչի. ինչպէս. Այնպէս է շարժվում, ինչպէս ուրիշները խորհուրդ տուին.—Ուրիշների խորհրդովն է շարժվում:

Համեմատական նախադասութիւնների մէջ, եթէ երկու տարբեր միմեանց հետ համեմատվում են որպիսութեան կողմից, երկրորդ. նախադ. ենթական փոխվում է սեռ. հոլովի՝ պէս նախադրութեամբ կամ նման ածականով. իսկ եթէ քանակութեան կողմից՝ բայը փոխվում է գոյականի՝ չափ նախադրութեամբ. ինչպէս. Առիւծի պէս յարձակեցաւ թշնամու վրայ: Վահագնի աչքերը, ասում է երգը, արեգակի նման էին փայլում: Որքան կարողացայ, այնքան սովորեցայ.—Կարողացածիս չափ կամ կարողութեանս չափ սովորեցայ:

Անորոշ դերբայի գործ. հոլովը վարվում է որակական կրճատեալ նախադասութեան տեղ, բայց կատարեալ նախադասութիւնից չէ կազմուած, և չէ կարող կատարեալ նախադասութեան փոխուիլ. օրօրինակ. Երեխանց ապականում են՝ (ինչպէս) նոցա բոլոր ուզածները կատարելով: Մարդս (ինչ եղանակով) ճանապարհորդելով շատ բան է սովորում:

Երբեմն այս մտքով վարվում է անցեալ դերբայը. Մայրը որդիքը հետն առած՝ եկեղեցի է գնում: Ծերու-

նու ձեռքը ըռնած փողոցներումը ման էր գալիս։

4. Պատճառական նախադասութիւնները կրճատուելիս փոխվում են ըացառական և համար նախադրութեամբ սեռական հոլովով զոյ. անուան և անորոշ դերբայի. վերջինը վարվում է գործիական հոլովով. օրօրինակ. Ծաջինը վարվում է զործիական հոլովով. զորօրինակ. Ցաջինը

մառութիւնիցդ ամէն բան կորցրիր։ Չափազանց աշխատեմառութիւնիցդ ամէն բան կորցրիր։ Չափազանց աշխատելուց տկարացաւ։ (Որովհետև յամառ ես. որովհետև չափազանց աշխատում է։)Ջատ ուրախացայ քեզ այս տեղ տեսնելուս համար (կամ լոկ տեսնելուս)։ Ձես ցաւում այդպիսի յարմար առիթ կորցնելուդ համար։ (Այսինքն՝ որ տեսել եմ, որ կորցրել ես)։ Ամէնքը գնացին զբօսնելու*։ Ինչ նեղութիւն առեց յանձն առի նորա փրկութեան համար։ Ձկարողանալով հետաքրքրութիւնս զսպել՝ ներս մտայ։ Մերոնց կողմից անօգնական մնալով՝ ստիպուեցանք անձնատուր լինել։

Այս գործ. հոլովով անորոշ դերբայն վարվում է երբ երկրորդ նախադասութեան գործողութիւնը գլխաւորի հետ միասին է կատարվում. իսկ եթէ գլխաւորից առաջ է կատարվում, գործ է ածվում անորոշ դերբայի կատարեալ ձևը նոյնպէս գործիական հոլովով։ Զորօրինակ. Տեսնելով (այժմ) ձեր ջանասիրութիւնը՝ վարձատրում եմ ձեզ. —Տեսած լինելով (վաղուց) ձեր ջանասիրութիւնը՝ վարձատրում եմ ձեզ։

Երբեմն այսպիսի դէպքերում օժանդակ բայն դուրս է ձգվում. Այս համբաւովն ուրախացած՝ բոլոր ցաւերս մոռացայ։

* Անորոշ դերբայի սեռականը ւտացական յօդ է ընդունում, եթէ գործողութեան պատճառն է ցոյց տալիս, և անյօդ է մնում, եթէ գործողութեան նպատակն է ցոյց տալիս։

Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ կրճատեալ պարագայական նախադասութիւններից։

Բ. Անկախ նախադասութիւնների կապակցութիւնը։

§ 25. ԱՆԿԱԽ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

Անկախ կոչվում են այն նախադասութիւնները, որոնք քերականօրէն միմեանցից ամենեւին կախում չունին, այլ իւրաքանչիւրը առանձին առած մի ամբողջ միտք է պարունակում իւր մէջ։

Անկախ նախադասութիւնները կապակցվում են՝ 1. բաղհիւսական շաղկապներով, երբ որ համաձայն մտքեր են պարունակում, և 2. ներհակական շաղկապներով, երբ անհամաձայն կամ հակառակ մտքեր են պարունակում։ Առաջին տեսակ կապակցութիւնը կոչվում է բաղհիւսական, երկրորդը՝ ներհակական։

Անկախ նախադասութիւնների մէջ շաղկապների մըտքով գործ դրուած մակբայները կարող են դուրս ձգուել, եթէ նախադասութիւնների բովանդակութիւնից երեւում է թէ ինչ յարաբերութիւն ունին միմեանց հետ։

§ 26. ԲԱՂՀԻՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ.

1. Բաղհիւսական նախադասութեան մէջ մտնում են իբրև մի ամբողջի մասեր, որոնք սովորաբար միմեանց հետ կապվում են եւ կամ ու շաղկապով։ մասնաւոր ու անկախ նախադասութիւններ՝

2. Եւ շաղկապը երբեմն դուրս է ձգվում, երբեմն էլ

կրկնվում է, նայելով թէ խօսքին կամենում ենք աւելի արագութիւն տալ, թէ աւելի ոյժ ու ծանրութիւն. ինչպէս. Եկէք թաղեցէք, փախէք, գնացէք. էս դառն աշխարքից ոտներդ քաշեցէք ու ձեր ամբաղդ մօր հողին յիշեցէք:

Թասով գինին խմելիս՝ Հայք միշտ Աստուած յիշում են
Խռովարկու հարբողին խնջոյքից քշում են.
Երգ սիրում են—հովեւը, խաղ սիրում են,—բայց անմեղ,
Միով բանիւ եւ ըզգաստ եւ խելօք են ամեն տեղ:

Բայց առհասարակ եւ-եւ կրկնաւոր շաղկապի տեղ գործ են ածվում թէ-թէ, էլ-էլ. իսկ բացասական նախադասութիւնների մէջ՝ ոչ-ոչ. ինչպէս. Թէ մեզ համար զգալի եղաւ նորա դժբաղդութիւնը եւ թէ նորա բոլոր բարեկամների համար: Ձեր ուղարկած ընծաները ստացանք էլ, վայելեցինք էլ: Ոչ մեր բարեկամական խորհուրդները կարողացան համոզել նորան, ոչ իւր սեպհական ձախորդութիւնները կարողացան կոտրել նորա յամառութիւնը:

3. Եթէ երկու համաձայն մտքերից հարկ լինի մէկին աւելի ոյժ տալ, գործ են ածվում ոչ միայն—այլեւ շաղկապները. այսպէս Տիգրանը ոչ միայն խելացի, այլեւ բարեսիրտ երեխայ է: Ոչ միայն տեսայ նորան, այլեւ խօսեցայ հետը:

4. Եթէ կամենաք ցոյց տալ թէ ինչ կարգով հետեւում են միմեանց առարկաները կամ գործողութիւնները, գործ են դրվում հետեւեալ մակբայները. նախ կամ նախ եւ առաջ, յետոյ, վերջապէս և այլն: Առաջ առաջ քաղաքապետը դիմաւորեց իշխանին, յետոյ քաղաքի պաշտօնատէրերը, ամէնից վերջը ժողովուրդը: Նախ եւ առաջ եկեղեցի գնացէք, յետոյ փոքր ինչ զբօսեցէք եւ վերջապէս ամէնքդ միասին տուն եկէք:

5. Իսկ եթէ հարկ լինի ցոյց տալ թէ գործողութիւնը փոփոխակի կրկնվում է, վարվում են հետեւեալ կրկնաւոր բառերը. երբեմն-երբեմն, մէկ-մէկ. Զորօրինակ. Երբեմն ոտով էինք զբօսնում, երբեմն կառքով: Մէկ հանդարտ էր գնում, մէկ շուտ շուտ վազում:

Գրեցէք մի քանի օրինակներ բաղհիւսական կապակցութեան:

§ 27 ՆԵՐՀԱԿԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ:

1. Ներհակական կապակցութեան մէջ մտնում են անհամաձայն, երբեմն նաեւ իրարու հակառակ նախադասութիւններ, որոնք սովորաբար կապվում են բայց, իսկ, սակայն, այլ շաղկապներով, երբեմն էլ ընդհակառակն, միայն մակբայներով: Զորօրինակ. Ջայլամը թեւեր ունի, բայց չէ կարող թռչել: Անդրանիկ եղբայրս երեսուն տարեկան է, իսկ քոյրս տասնուվեց տարեկան:

Միայն մակբայը գործ է ածվում առ հասարակ, երբ հակառակ իմաստը զօրութեամբ է իմացվում: Միայն դուք կարող էիք այդ բանը անել: (Զօրութեամբ իմացվում է՝ Ուրիշ ոչոք չէր կարող այդ բանը անել),

2. Ներհակական կապակցութեան վերաբերում են և այնպիսի իմաստների կապակցութիւնը, որոնցից մինի ընդունելովը միւսը հերքվում է: Այս տեսակ իմաստները կապվում են կամ-կամ եւ կամ շաղկապներով. ինչպէս. Կամ դու տանը մնա՝ և ես գնամ, կամ ես տանը մնամ՝ և դու գնա: Կամ ճշմարիտը կը խօսիմ, և կամ բոլորովին կը լռեմ:

3. Ներհակական կապակցութեան մէջ պատահում է, երբեմն որ նախադասութիւններից մինը կրճատվում է՝ փո-

խուսելով բայց և փոխանակ կամ տեղ նախադրութիւններով բղա. և սեռ. խնդիրների, ինչպէս. Մեզ մօտ ուշք չկար. կար միայն քո եղբայրը.—Մեզ մօտ ոչ որ չկար բացի քո եղբօրից։ Ոչ թէ ուրախութիւն էր սպասում մեզ այնտեղ, այլ ամենամեծ տրտմութիւն.—Ուրախութեան տեղ ամենամեծ տրտմութիւն էր սպասում մեզ այնտեղ։

4. Շատ գործածական է մեզանում նոյնպէս այն ձևը՝ որով պայմանական նախադասութիւնը դուրս է ձգվում և մնում նորա համապատասխան գլխաւոր նախադասութիւնը թէ չէ, ապա թէ ոչ շաղկապներով, որ այսպէսով անկախ նախադասութեան զօրութիւն է ստանում. ինչպէս. Ճշմարիտն ասա, թէ չէ՝ կը պատժուիս։ (Այսինքն՝ եթէ չես ասիլ, կը պատժուիս)։ Գիտութեան մէջ չպէտք է ոչինչ արհամարհես, ապա թէ ոչ՝ ամենահասարակ ճշմարտութիւններից զուրկ կը մնաս։

Գրեցէք մի քանի օրինակներ ներհակական կապակցութեան.

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0248164

7212